

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ  
2011թ.  
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ՝  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ  
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
2011թ. ԸՆԴՈՒՆԱԾ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Հունվար - 2012թ., ք. Երևան

ՀՏԴ 34.25 (479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ) 01  
Հ-189

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության  
սահմանադրական դատարանի 2012թ. հունվարի 17-ի որոշմամբ

Հ -189

«Հաղորդում ՀՀ ՍԴ 2011թ. ընդունած որոշումների  
կատարման վիճակի վերաբերյալ»  
Եր.: «ՀՀ ՍԴ աշխատակազմ», 2012, 292 էջ:

ԳՄԴ 6799 (2Հ) 01

ISBN 978.99930.66-48-4

© «ՀՀ ՍԴ աշխատակազմ», 2012

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է  
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
2012թ. ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ՍԳԱՌ - 1  
ՄՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ  
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 67 ՀՈԴՎԱԾԻ ՊԱՀԱՆՁԻ**

**ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱՅԻ ՊԱՏԿԵՐԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ**

2011 թվականին ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվել է սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 361 դիմում, ինչպես նաև այդպիսի իրավասություն չունեցող անձանց 1681 դիմում:

Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 50 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ - 0 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 1 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ - 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք - 287 դիմում,
7. իրավաբանական անձինք – 15 դիմում,
8. դատարաններ – 1 դիմում,
9. գլխավոր դատախազ - 0 դիմում,
10. մարդու իրավունքների պաշտպան – 2 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), պատգամավորության թեկնածուներ՝ ընտրությունների արդյունքներով կայացված որոշումների հետ կապված վեճերով – 0 դիմում:

Թվով 302 անհատական դիմումներից 207-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 95 անհատական դիմում (94 անհատական դիմում մուտքագրվել է 2011 թվականին, իսկ 1-ը՝ 2010 թվականի վերջին, սակայն դատական կազմի կողմից քննության է առնվել 2011

թվականին): Դրանցից քննության է ընդունվել 41 դիմում, մերժվել՝ 53-ը, 1-ը տեղափոխվել է դատարանի լիազումար նիստ:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստում քննարկվել է 1 անհատական դիմումի քննության ընդունման հարց: Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունվել<sup>1</sup> անհատական դիմում:

## **ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՅ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

### **ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և դրանց կատարումը**

2011 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2011թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննված 50 միջազգային պայմանագրերի (որից 5-ը՝ 2010թ. ներկայացրած դիմումների հիման վրա) թվում են 17 բազմակողմ (4 համընդգրկուն և 13 տարածաշրջանային) և 33 երկկողմ (14-ը՝ օտարերկրյա պետությունների և 19-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ) համաձայնագրեր: Քննության առարկա դարձած պայմանագրերից 40-ը՝ միջպետական, 9-ը՝ միջկառավարական և 1-ը միջգերատեսչական են:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 50 պայմանագրերից 35-ն արդեն վավերացվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից, թվով 15 պայմանագիր դեռևս չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետին համապատասխան, կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել<sup>1</sup>:

Անդրադառնալով 2011թ. ընթացքում քննության առնված ՀՀ միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկային՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ քննության ներկայացված մի շարք միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տեքստերն էական բովանդակային շեղումներ են ունեցել բնագրերից: Նախորդ տարիների օրինակով, սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Առանձին դեպքերում, ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ միջազգային պայմանագրերի իրավակիրառական պրակտիկայի բնականոն ապահովման նպատակով, իր որոշումներում (մասնավորապես, ՍԴ-Ո-982 և ՍԴ-Ո-987 որոշումները)

<sup>1</sup> Տվյալները ներկայացված են 2012թ. հունվարի 6-ի դրությամբ:

նույնիսկ արձանագրել է, որ համապատասխան միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տեքստերում առկա են էական բովանդակային շեղումներ: Այդուհանդերձ, նման փաստերը վկայում են միջազգային պայմանագրերի՝ հատկապես ֆինանսավարկային համաձայնագրերի, համապատասխան ներպետական ընթացակարգերի և, մասնավորապես, վավերացման նախապատրաստման որակի բարձրացման անհրաժեշտության մասին:

Բացի նշվածից, ինչպես ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է իր նախորդ հաղորդումներում, ՀՀ միջազգային պայմանագրերում ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթների էությունն իրապես արտացոլող միասնական եզրույթների (հայերեն համարժեքների) բացակայությունը գործնականում ևս խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն դրանցում ամրագրված պարտավորությունների ծավալն ու բովանդակությունը պարզելու և ՀՀ Սահմանադրությանը դրանց համապատասխանությունը որոշելու, այլև դրանց հստակ կիրառման տեսանկյունից: Նման դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է առավել հստակեցնել ՀՀ երկկողմ համաձայնագրերի դրույթների բովանդակությունը՝ երաշխավորելով դրանց իրավական որոշակիությունը և բացառելով հակասահմանադրական իրավիճակների առաջացումը:

Նախորդ տարիների իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրել, որ այդպես էլ չի ձևավորվել ՀՀ միջազգային պայմանագրերի կապակցությամբ արված վերապահումների և հայտարարությունների իրավաբանական բնույթի ու նշանակության միատեսակ իրավական ընկալում: Բազմակողմ պայմանագրերի վերաբերյալ կատարված վերապահումների նկատմամբ շատ հաճախ ցուցաբերվում է անկանխատեսելի մոտեցում, փորձ չի արվում պարզելու դրանց կատարման պատճառները, չի հիմնավորվում նման վերապահումների առնչությամբ առարկություններ ներկայացնելու անհրաժեշտությունը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն այս կամ այն պայմանագրով ստանձնում է ավելի մեծ ծավալի միջազգային պարտավորություններ, քան տվյալ պայմանագրի՝ վերապահում կատարած այլ մասնակիցները: Միաժամանակ անհրաժեշտ է, որպեսզի բազմակողմ միջազգային պայմանագրերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության վերապահումներին եւ այլ վերապահումների վերաբերյալ առարկություններին ներկայացվող պահանջներն առավել խստացվեն ու հստակեցվեն:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի նաև ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի մանրամասնվածության պատշաճ մակարդակի ապահովման հիմնախնդիրը: Անցյալ տարիների ընթացքում քննության առնված ֆինանսավարկային պայմանագրերում և դրանց հավելվածներում ներկայացված ֆինանսավորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով մանրամասնեցված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերի ուղղությունները: Հաճախ նման համաձայնագրերում նկարագրված ծրագրերը ձևակերպված են անորոշ և ոչ հստակ, ինչն արձանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. հա-

մապատասխան որոշումներում (մասնավորապես ՄԳ-Ռ-952, ՄԳ-Ռ-953): Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ նախորդ տարիների հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին (ՄԳ-Ռ-952): Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր ֆինանսական համաձայնագրի հիմքում պետք է դրված լինի ՀՀ կառավարության կողմից հաստատված հստակ ծրագիր՝ ներառելով այդ ծրագրի համար վարկային միջոցների ներգրավման համակողմանի հիմնավորումներ: **Առանց նման ծրագրի առկայության՝ վարկային համաձայնագիրը չի կարող ներկայացվել վավերացման: Այս հանգամանքի վրա անհրաժեշտ է հրավիրել ՀՀ կառավարության ուշադրությունը:**

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր է համարում, որպեսզի ՀՀ միջազգային պայմանագրերով վարկային պարտավորություններ ստանձնելիս գնահատվեն համապատասխան ձեռնարկների արդյունավետությունն ու վարկային միջոցների վերադարձնելիության հիմնավորվածությունը: Հակառակ դեպքում սերունդների վրա կթողնվեն չհիմնավորված պարտքեր, ինչը պատճառ կդառնա նրանց իրավունքների անհամաչափ սահմանափակման (ՄԳ-Ռ-999):

Ֆինանսավարկային պայմանագրերով ստանձնված միջազգային իրավական պարտավորությունների բարեխիղճ կատարումը, վարկային միջոցների նպատակային օգտագործումը և դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտությունը պահանջում են նշված պայմանագրերի դրույթների որոշակիության և հստակության ապահովում: «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով ՀՀ արտաքին գործերի նախարարությունը մեծ պարտականություն ունի այդ պայմանագրերի նախապատրաստման և կնքման հարցերում: Անհրաժեշտ է, որպեսզի նախարարությունը շարունակական ուշադրություն դարձնի հատկապես հիշյալ օրենքի 3-րդ գլխի պահանջների հստակ կատարմանը:

### **ՀՀ կառավարության դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ ՀՀ կառավարության կողմից ներկայացված միակ դիմումը սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ ընդունվել է քննության:

«ՀՀ կառավարության դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի եւ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-

տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն իր՝ 11.10.2011 թվականի ՍԳ-Ո-991 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Այստեղ էական նշանակություն ունեն այդ իրավական դիրքորոշումներն ու դրանց հիման վրա օրենսդրական հետագա զարգացումներին ներկայացվող պահանջները:

Մասնավորապես, որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործնական խնդիրները, որոնք առաջանում են աշխատանքային հարաբերությունների կարգավորման պրակտիկայում, պայմանավորված են իրավակարգավորման համակարգային մոտեցման թերացումներով, որոնք առնչվում են նաեւ աշխատանքային տարիքում եւ կենսաթոշակային տարիքում անձի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները հետետղականորեն հաշվի չառնելուն:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել շեշտել, որ «կենսաթոշակային տարիք» հասկացությունն ունի կարեւոր սոցիալ-իրավական բովանդակություն: Վերջինս դրսևորվում է նրանում, որ որոշակի տարիքում տեղի է ունենում անձի աշխատունակության որոշակի նվազում: Հետեւաբար, օրենսդիրը, հիմք ընդունելով կոնկրետ աշխատանքի առանձնահատկությունը եւ բնույթը, երաշխավորելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական իրավունքի իրացման հնարավորությունը, սահմանում է նվազագույն համապատասխան տարիք այդ իրավունքն իրացնելու համար, եւ դա ինքնանպատակ չէ: ՀՀ օրենսդրության ժամանակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը կենսաթոշակ սահմանելիս միշտ հիմք է ընդունել որոշակի տարիքային սահմանագիծ, որին հասնելով՝ տեղի է ունենում անձանց աշխատունակության ենթադրյալ էական նվազում:

Տվյալ հանգամանքը հաշվի առնելով եւ նկատի ունենալով, որ կենսաթոշակը սահմանվում է ոչ թե քաղաքացու՝ որոշակի տարիքի հասնելու հիմքով, այլ այդ տարիքով պայմանավորված՝ աշխատունակության հնարավոր սահմանափակման կամ լրիվ կորստի կապակցությամբ, ինչը չի կարող դիտարկվել որպես խտրականության արգելման սկզբունքի խախտում. օրենսդրորեն անհրաժեշտ է առավել հստակ տարբերակել **աշխատանքային պայմանագրի գործողության դադարման եւ դադարեցման** պայմաններն ու կարգը, դրան համապատասխան նախատեսել գործատուի իրավասությունն աշխատանքային պայմանագրի լուծման առնչությամբ:

Որոշման 6-րդ կետում, անորոշ եւ որոշակի ժամկետով աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների հաստատման գործող կարգի իրավաչափության գնահատման շրջանակներում, վերահաստատելով այդ խնդրի առնչությամբ 24.02.2009թ. ՍԳ-Ո-792 որոշմամբ արտահայտված իրա-

վական դիրքորոշումները, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ աշխատանքային հարաբերությունների իրավաչափ կազմակերպման համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն մասն հարաբերությունների հիմք հանդիսացող պայմանագրերի բնույթի ու սահմանադրաիրավական բովանդակության հստակ բացահայտումը եւ անհրաժեշտ նորմատիվ կարգավորումը: Որպես կանոն, այդ պայմանագրերն ունեն որոշակի ժամկետային կամ անժամկետ բնույթ: Որոշակի ժամկետով կնքված պայմանագրերը **պետք է դիտել որպես բացառության դրսևորում**՝ պայմանավորված աշխատանքի բնույթով եւ առանձնահատկություններով (ընտրովի պաշտոն, սեզոնային աշխատանք, փորձաշրջան եւ այլն): Իրավական տրամաբանությունն այն է, որ **այդ առանձնահատկությունները հստակ կանոնակարգվեն օրենքով**, որպեսզի հակամարտություն չառաջանա աշխատողի իրավունքների ու գործատուի հայեցողական ազատության միջև: Առանձին երկրներում (Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Բուլղարիա, Խորվաթիա, Շվեդիա եւ այլն) օրենսդրորեն ընդհուպ նախատեսվում է, որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է դառնալ անորոշ ժամկետով կնքված այն դեպքերում, երբ հանգամանքները, որոնց բերումով աշխատանքային պայմանագրի գործողության որոշակի ժամկետ է սահմանվել, դադարում են գոյություն ունենալ աշխատանքային հարաբերությունների ընթացքում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ այս հանգամանքն անհրաժեշտ խորությամբ արտացոլում չի գտել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ գլխի իրավակարգավորման շրջանակներում:

Տվյալ գործով վիճարկվող նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 13-րդ եւ 15-րդ գլուխների նորմերի համադրված վերլուծությունը վկայել է, որ անհրաժեշտ է.

- առավել հստակեցնել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքերը եւ իրավական շարժառիթները,
- որպես անորոշ ժամկետով կնքված ճանաչել մեկ կամ մի քանի անգամ երկարաձգված որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաեւ որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը՝ այն դեպքերում, երբ վերանում են այդպիսին կնքելու հիմքերը,
- կենսաթոշակային տարիքի հասնելու փաստը սահմանել որպես իրավական հիմք՝ այդպիսի անձանց հետ **որոշակի ժամկետով** հետագա աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ վերոհիշյալ լրացուցիչ իրավակարգավորումներն անհրաժեշտ են աշխատանքային իրավապայմանագրային հարաբերություններում իրավահավասարությունը եւ կենսաթոշակային տարիքի հասած անձանց իրավունքները եւ օրինական շահերը երաշխավորելու նկատառումներով:

Տվյալ գործով կայացված որոշման 7-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ հետեւյալը. «Անհրաժեշտ է նաեւ նկատի ունենալ, որ կենսաթոշակը եւ աշխատանքը միտված են միեւնույն նպատակին՝ գոյության



միջոցների ապահովմանը. աշխատանքը՝ որպես կենսաապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետեւաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլեւս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ: Այսպիսով, կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ անձի հետ աշխատանքային հարաբերություններն օբյեկտիվորեն ենթակա են կարգավորման այլ սկզբունքներով եւ առաջնահերթ կարեւորվում են նրա սոցիալական ապահովման խնդրի լուծումն ու որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված՝ աշխատանքի իրավունքի եւ կենսաթոշակի իրավունքի նման փոխհարաբերակցությունը, պայմանավորված լինելով դրանց սոցիալական բովանդակությամբ եւ առաքելությամբ, իր հիմքում ունի օբյեկտիվ արդարացում: Հետեւաբար, աշխատանքային հարաբերությունների **դադարման** հնարավորությունը կենսաթոշակի իրավունքի ծագմամբ պայմանավորելն իրավաչափ է, քանի որ աշխատանքային հարաբերությունների դադարման հնարավորությունը հիմնվում է այնպիսի օբյեկտիվ չափանիշի վրա, ինչպիսին մարդու տարիքի փաստով պայմանավորված աշխատունակության չափանիշն է»:

Միեւնուն ժամանակ, սահմանադրական դատարանը գտել է, որ. « ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի կիրառումն իր սահմանադրաիրավական վերոհիշյալ բովանդակությանը համապատասխան լիարժեք երաշխավորելի է այն դեպքում, երբ օրենսգրքով նախանշվեն ընթացակարգեր, որոնք կոչված լինեն գնահատելու կենսաթոշակային տարիքի հասած անձի աշխատունակությունը (աշխատանքային պիտանիությունը), հետեւաբար՝ նաեւ աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի եւ գործատուի միջեւ երկկողմ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորություն կնախատեսեն՝ **բացառելով գործատուի սուբյեկտիվ հայեցողությունն այդ հարցում**»:

Նույն որոշման 8-րդ կետում, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ տարբեր երկրների օրենսդրական ու իրավակիրառական փորձի ընդհանրացման արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը հանգել է հետեւյալին.

- մինչկենսաթոշակային տարիքում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերի կնքումը բացառության դրսեւորում է եւ պայմանավորված է աշխատանքի բնույթի որոշ առանձնահատկություններով, **ինչը պետք է օրենքով առավել հստակ նախատեսված լինի եւ չթողնվի գործատուի սուբյեկտիվ հայեցողությանը,**
- մինչկենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագ-

րի հիմնական ձեռն աճող ժամկետով պայմանագիրն է, որի գործողության **դադարման հիմքերն ու կարգը** պետք է նախատեսվեն օրենքով եւ որոշվեն իրավունքի ուժով, **իսկ դադարեցումը** պետք է պայմանավորված լինի միայն իրավաչափ պատճառներով, **ինչը, իր հերթին, հստակ պետք է նախատեսվի օրենքով,**

- կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի հետ աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների կարգավորման բնույթը եւ պայմանները փոխվում են: Եթե մինչկենսաթոշակային տարիքում ելակետն աշխատանքի ընտրության ազատության սկզբունքի երաշխավորումն է, ապա կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կարելի է անձի սոցիալական ապահովության խնդրի լուծումը եւ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ վերոհիշյալ մոտեցումներն իրավաչափ են, հստակեցնում են աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման սահմանադրաիրավական բնույթը եւ համակարգային մոտեցմամբ, հստակ հայեցակարգի հիման վրա, օրենսդրական անհրաժեշտ կարգավորում պետք է ստանան: Դրանք համահունչ են նաեւ ՀՀ Սահմանադրության 1-ին, 14.1-րդ, 32-րդ, 37-րդ եւ 48-րդ հոդվածների պահանջներին: Միաժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի օրենքով նորմատիվ կարգավորում ստանա նաեւ այն հարցը, թե որ դեպքերում է կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, այն իրականացվի ոչ թե գործատուի սուբյեկտիվ հայեցողությամբ, այլ տվյալ աշխատանքի կատարման հարցում կենսաթոշակային տարիքի հասած անձի կարողությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 11.10.2011 թվականի ՄԳ-Ռ-991 որոշումն ընդունելուց հետո, տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լիարժեք իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ կառավարությունը համապատասխան օրենսդրական նախաձեռնություն ցուցաբերեն դրանց ընթացք տալու համար:

## **Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների 68.5 տոկոսը չի ընդունվել սահմանադրական դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22-րդ հոդվածներով սահմանված` դիմումին ներկայացվող պահանջներին: Հիմ-

նականում անհատական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող տարբեր այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված 4 գործերով որոշումները կկայացվեն 2012թ. հունվար-մարտ ամիսներին:

2011 թվականի ընթացքում դատական կազմերի կողմից քննության է առնվել 95 անհատական դիմում, ընդունվել է քննության 41-ը կամ պատշաճ ներկայացված սահմանադրական գանգատների շուրջ 43,2 տոկոսը: Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների հիման վրա քննության առնված գործերով շուրջ 19 տոկոսի դեպքում օրենքների դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը հակասող եւ անվավեր, իսկ մոտ 12 տոկոսի դեպքում դրանք սահմանադրական են ճանաչվել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Քննության առարկա գրեթե բոլոր գործերով ոչ միայն կարելուով է մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխավորումը, այլև այդ որոշումները մեծ նշանակություն ունեն օբյեկտիվ իրավունքների պաշտպանության եւ օրենսդրական անհրաժեշտ բարեփոխումների առումով:

Հատկապես կարելի է առանձնացնել հետևյալ որոշումները.

1. «Քաղաքացիներ Շավարշ, Ռայա Մկրտչյանների եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 08.02.2011թ. ՍԳՈ-936 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրն այն է, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում վարչական հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերը կարող էին բողոքարկվել միայն նյութական իրավունքի խախտման հիմքով: Այդպիսով օրենսդիրը բացառել էր դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վերոհիշյալ գործերով վարչական դատարանի կայացրած դատական ակտերը բողոքարկելու, դրանց օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը՝ անձանց թույլ չտալով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ ակտերի վիճարկման վերաբերյալ գործերով լիարժեք եւ արդյունավետ կերպով իրացնելու դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ, հղում կատարելով իր մի շարք որոշումներին (ՄԳՈ-652, ՄԳՈ-665, ՄԳՈ-673, ՄԳՈ-719, ՄԳՈ-758, ՄԳՈ-780 եւ այլն), որոնցով կարեւորվել է դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովումը, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում՝ խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ չչ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու եւ ապահովելու տեսանկյունից, ինչպես նաեւ վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, սահմանադրական դատարանը, գտել է, որ «չչ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, որով ամբողջությամբ բացառվում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի ակտերը դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու հնարավորությունը, չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, մարդու խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաեւ դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական եւ միջազգային իրավական չափանիշներին: Այն չի համապատասխանում նաեւ չչ իրավական համակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին» (որոշման 7-րդ կետ):

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ. «դատավարական որեւէ առանձնահատկություն կամ վարույթի տեսակ (հատուկ վարույթ) չի կարող օրենքով մեկնաբանվել կամ կիրառվել այնպես, որ ամբողջովին իմաստագրկվեն չչ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված անձի հիմնական իրավունքները կամ դրանց իրացման արգելք հանդիսանա: Հետեւաբար, դատական բողոքարկման բնագավառում չչ դատավարական հարաբերությունների իրավակարգավորման այն սկզբունքները, որոնք կարեւորված են սույն որոշման 6-րդ կետում, պետք է դրվեն այդ ինստիտուտը կարգավորող բոլոր, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով բողոքարկման ընթացակարգային նորմերում» (որոշման 7-րդ կետ):

Չչ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 08.02.2011 թվականի ՄԳՈ-936 որոշումն ընդունելուց հետո, տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել:

2. «Հանրապետություն» կուսակցության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով չչ սահմանադրական դատարանն իր՝ 22.02.2011թ. ՄԳՈ-942 որոշմամբ, անդրադառնալով Հա-

յաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասին, այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առնչությամբ սահմանադրական դատարանը նույն որոշմամբ որոշել է.

«2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելի է նրանով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում վարչական դատարանի իրավասությունը, կապված գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման հետ, սահմանափակվում էր միայն այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու լիազորությամբ՝ անտեսելով վարչական մարմնի գործողությունը (տվյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ նաեւ անգործությունը) վիճարկելու հնարավորությունը՝ դրանով իսկ պատճառ հանդիսանալով ինչպես դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման, այնպես էլ պետության արդարադատական գործառույթի արգելափակման:

Նման իրավիճակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը ձեւակերպելիս չէր ցուցաբերվել հետետողական մոտեցում եւ հաշվի չէր առնվել այն հանգամանքը, որ օրենսգրքի 1-ին, 3-րդ հոդվածները, 68-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 70-րդ հոդվածը նախատեսել են թե՛ վարչական ակտը, թե՛ վարչական մարմնի գործողությունը եւ թե՛ վարչական մարմնի անգործությունը վիճարկելու հնարավորությունը:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի ուսումնասիրությունը վկայում է, որ այն կոչված է ապահովելու, մասնավորապես, օրենսգրքի 65-68-րդ հոդվածների իրացումը՝ երաշխավորելով նշված հոդվածների շրջանակներում ներկայացված հայցապահանջների առնչությամբ արդարադատության իրականացումը: Մասնավորապես, օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համակարգային առումով փոխկապակց-

ված է օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, եւ կոչված է ապահովելու այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու՝ հայցվորի իրավունքի իրականացումը: Մինչդեռ, ի տարբերություն օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի, որտեղ վարչական ակտից զատ նախատեսված է նաեւ վարչական մարմնի գործողությունը (վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ նաեւ անգործությունը) վիճարկելու հնարավորությունը, ինչպես նաեւ ի խախտումն օրենսգրքի, մասնավորապես, 1-ին, 3-րդ եւ 70-րդ հոդվածների իրավակարգավորման տրամաբանության, օրենսգրքի 114-րդ հոդվածը վարչական դատարանին վերապահում է համապատասխան լիազորություն **միայն վարչական ակտի առնչությամբ**» (որոշման 7-րդ կետ):

Արդյունքում՝ հաշվի առնելով նաեւ, որ օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասն առնչվում է վարչական դատարանի լիազորություններին, եւ վարչական դատարանը, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան, կարող է գործել միայն Սահմանադրությամբ եւ օրենքով հստակ սահմանված լիազորությունների շրջանակում, սահմանադրական դատարանը գտել է, որ. «...նշված դրույթը վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը վիճարկելու մասով արգելափակում է օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման հնարավորությունը՝ պատճառ հանդիսանալով ինչպես դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման, այնպես էլ պետության արդարադատական գործառույթի արգելափակման» (որոշման 7-րդ կետ):

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 22.02.2011 թվականի ՍԳՌ-942 որոշումն ընդունելուց հետո, տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել:

**3.** «Քաղաքացիներ Ս.Ասատրյանի եւ Ա.Մանուկյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի եւ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 25.02.2011թ. ՍԳՌ-943 որոշմամբ, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի առնչությամբ սահմանադրական դատարանը գործի վարույթը կարճել է: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առնչությամբ սահմանադրական դատարանը նույն որոշմամբ որոշել է.

«2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

...

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի համալիր լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում իմաստագրկվում էր անհատական դիմումի հիման վրա իրականացվող սահմանադրական արդարադատության դերը և, որպես հետևանք, արգելափակվում էր Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության սահմանադրաիրավական պահանջն իրացնելու հնարավորությունը, չէր ապահովվում, մի կողմից, ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների, մյուս կողմից՝ սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ կապը: Վերջինիս հետևանքով չէր վերացվում ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատական սխալը, որն առաջանում էր օրենքի տվյալ դրույթի վերաբերյալ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների և սահմանադրական դատարանի մեկնաբանությունների միջև հակասության արդյունքում եւ այնպիսի պայմաններում, երբ սահմանադրական դատարանի մեկնաբանությունները ներառող համապատասխան որոշումները չէին դիտարկվում որպես նոր հանգամանք:

Բոլոր դեպքերում նման իրավիճակը պայմանավորված էր ոչ միայն իրավակիրառական պրակտիկայով, այլ նաև դատավարական օրենսգրքերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ: Այդ է պատճառը, որ խնդրո առարկա իրավակարգավորումն անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից գնահատելու նպատակով, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել հետևյալը. «Այդուհանդերձ, անվերապահո-

րեն ընդունելով, որ եթե օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից **որեւէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**, ապա սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով խնդիրն այլ լուծում ունի:

**Նախ.** փաստն այն է, որ դատական պրակտիկան, օրենսդրական առկա ձեւակերպումներից ելնելով, նոր հանգամանք չճանաչելով սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը ճանաչվել է սահմանադրական, հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: **Երկրորդ՝** փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետեւաբար՝ եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: **Երրորդ՝** նման իրավիճակը ոչ միայն դատավարական օրենսգրքերի, այլեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ է պայմանավորված» (որոշման 11-րդ կետ):

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանները պարտավոր են ըստ էության գործի քննության, ինչպես նաեւ դատական բողոքարկման շրջանակներում նորմատիվ իրավական ակտերը կիրառելիս հաշվի առնել դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, գործող դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով **դատական սխալի փաստը գնահատելիս**, եթե կոնկրետ գործով անձանց նկատմամբ կիրառված նյութական կամ դատավարական այս կամ այն նորմի սահմանադրաիրավունքակալման վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը: Այդպիսի հիմնավորմամբ դատական ակտերը վերանայելու պահանջով շահագրգիռ անձանց դիմումները պետք է քննության առնվեն իրավասու դատարանների կողմից, իսկ առանց հիմնավոր պատճառաբանման այդպիսի դիմումի քննությունը մերժելն անձին հնարավորություն կընձեռի իր իրավունքների եւ ազատությունների միջազգային-արդարադատական պաշտպանության համար: Իսկ այդպիսի շարունակական պրակտիկան կհակասի ոչ միայն ՀՀ սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին, այլեւ՝ ՀՀ ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների» (որոշման 11-րդ կետ):

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է, որ. «...իրավական ակտերի սահմանադրականության որոշման վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետեւաբար՝ նաեւ սահմանադրաիրավական պահանջ» (որոշման 11-րդ կետ):

Միաժամանակ, տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է, որ. «...իրավական ակտերի սահմանադրականության վե-



րաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների կողմից որպես նոր հանգամանք ճանաչելու հարցը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական եւ թե՛ վարչական դատավարությունում **համալիր ու անհետաձգելի** կարգավորման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները» (որոշման 11-րդ կետ):

Սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՍԳՈ-943 որոշման ընդունումից հետո ՀՀ Ազգային ժողովը մինչեւ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու՝ սահմանադրական դատարանի նշած վերջնաժամկետի լրանալը, այն է՝ 2011 թվականի նոյեմբերի 1-ը, 2011թ. հոկտեմբերի 26-ին ընդունել է ՀՕ-268-Ն, ՀՕ-269-Ն ՀՕ-270-Ն օրենքները, որոնցով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել համապատասխանաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերում: Ընդ որում, վերը նշված իրավական ակտերից երկուսում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարվել են՝ նաեւ հաշվի առնելով սահմանադրական դատարանի կողմից ավելի ուշ՝ 2011թ. հուլիսի 15-ին ընդունված ՍԳՈ-984 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք եւս վերաբերում են սահմանադրական դատարանի որոշումները նոր հանգամանք դիտարկելու անհրաժեշտությանը, որոնցով թեւ օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրանցում օրենքի դրույթի վերաբերյալ ամրագրվել է իրավակիրառողի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն: Տվյալ գործով վիճարկվում էր արդեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթը, եւ ՍԳՈ-943 որոշման տրամաբանությամբ այս դեպքում եւս ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ էր սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

Միաժամանակ հարկ է նկատել, որ, ի կատարումն ավելի վաղ՝ 15.04.2008 թվականին ընդունված ՍԳՈ-751 որոշման, ՀՕ-268-Ն օրենքով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում կատարվել է եւս մեկ լրացում, որի ուժով սահմանադրական դատարանի որոշումը, որով թեւ օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն այդ որոշման մեջ օրենքի դրույթի վերաբերյալ ամրագրվել է իրավակիրառողի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն, տարածվում է նաեւ այն անձանց վրա, որոնք սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռեւս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարանի դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան:

4. «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» եւ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 12.07.2011 թվականի ՄԳՈ-983 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի եւ սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարևորվում էր նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իրեղեն ապացույցներ ճանաչված գույքը, որպես ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույք, դիտարկվում էր որպես քաղաքացիական հայցվորների օգտին բռնագանձման, ինչպես նաեւ տուժողներին եւ քաղաքացիական հայցվորներին պատճառված վնասները փոխհատուցելուն ոչ ենթակա գույք: Այսինքն՝ վիճարկվող իրավակարգավորումն իրավակիրառական պրակտիկայում ստացել էր այնպիսի մեկնաբանություն, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման դեպքում այդ գույքն ամբողջությամբ անհատույց անցնում է ի սեփականություն պետության՝ առանց տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի ու սեփականության իրավունքի պաշտպանության:

Նման իրավիճակը պայմանավորված էր նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում տարբերակում չէր դրվում ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի ինստիտուտի, մյուս կողմից՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտի միջեւ, եւ դրանք ընկալվում էին որպես մեկ ինստիտուտ:

Ընդ որում, իրավակիրառողը հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում եւ 61-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերում ամրագրված են համապատասխանաբար՝ տուժողի եւ քաղաքացիական հայցվորի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց վերցված գույքը հետ ստանալու իրավունքը:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ, հիմք ընդունելով իրավակիրառական պրակտիկայում վերը նշված երկու ինստիտուտների միասնականացումը,

սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել դրանց առանձնացման անհրաժեշտությունը եւ արձանագրել է հետեւյալը. «...օրենսգրքի 55-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումը՝ իր բնույթով, խնդիրներով ու նպատակներով, համարժեք չէ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավմանը: ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը տարանջատում է կատարում գույքի բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի, եւ 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման օբյեկտների միջեւ: Եթե 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի դեպքում բռնագրավման օբյեկտը բացառապես դատապարտյալի **օրինական** գույքն է, ապա նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված բռնագրավման օբյեկտն այլ է, քան դատապարտյալի օրինական գույքը, այսինքն՝ այն գույքը, որը ձեռք է բերվել հանցագործությունը կատարելու արդյունքում եւ, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը» (որոշման 9-րդ կետ):

Տվյալ գործով կայացված որոշման մեջ, հաշվի առնելով գույքի բռնագրավման՝ վերը նշված երկու ինստիտուտների տարբերությունը, սահմանադրական դատարանը գտել է, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն «...արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման եւ խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը» (որոշման 9-րդ կետ):

Անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՌ-983 որոշման պահանջների և դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացմանն է ուղղված ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման տասներորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկված՝ Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Արամ Սաֆարյանի, Վարդան Բոստանջյանի, Կարինե Աճեմյանի, Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Մարգարետունի Մանուկյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1234-07.09.2011, 21.10.2011-ՊԻ-010/0), որով՝ սահմանադրական դատարանի որոշման կատարման նպատակով նախատեսվում է համապատասխան փոփոխություն մտցնել հիշյալ օրենսդրական ակտում:

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությունը փոխարինել հետեւյալ երկու նախադասություններով. «Եթե նշված հանցակազմերով գործերի դատաքննությամբ հաստատվում է, որ այդ գույքը օրինական տիրապետումից դուրս է եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետեւանքով, ապա այն հանձնվում է սեփականատիրոջը, օրինական տիրապետողին

կամ նրանց իրավահաջորդներին: Գույքի սեփականատիրոջը, օրինական տիրապետողին կամ նրանց իրավահաջորդներին չհայտնաբերելու դեպքում այդ գույքի բռնագրավումը եւս պարտադիր է:»:

5. «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի, Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների, Սվետա Հարությունյանի, Սերգեյ Հակոբյանի եւ Գայանե Կիրակոսյանի ու «Սելտես» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի, 204.38-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011 թվականի ՍԳՌ-984 որոշմամբ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասին, այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման եզրափակիչ մասում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, այն է՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածին, սահմանադրական դատարանն այն եւս ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման եզրափակիչ մասում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում. այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

Միաժամանակ, նույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով սահմանադրական դատարանը հարկ է համարել հատուկ ընդգծել, որ «Իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ սահմանադրական դատարանը նույն որոշմամբ որոշել է.

«4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի նորմի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011թ. նոյեմբերի 1-ը»:

Իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասին եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածին տրվել էր մի մեկնաբանություն, որի ուժով նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում իրականացնում էր այն նույն լիազորությունները, որոնք իրականացնում էր ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունն ստուգելիս, ինչն իր հերթին նշանակում է, որ դատական ակտը վերանայող դատարանն իրավասու էր մերժել բողոքը՝ վերանայվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այսինքն, իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասին եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածին տրված մեկնաբանության ուժով դատարանները հնարավորություն էին ստանում օրինական ուժի մեջ թողնել վերանայման ենթակա այն դատական ակտը, որը կայացվել էր սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրինադրույթի կիրառմամբ կամ ընդունվել էր ի խախտումն Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի պահանջների: Դրա համար իրավական հիմք էին ծառայում ՀՀ քրեական դատավարության եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխանաբար 426.9-րդ հոդվածի 1-ին մասի եւ 204.38-րդ հոդվածի վիճարկվող դրույթները, որոնցում ամրագրված «ընդհանուր կարգ» ձեւակերպումը, ըստ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության, թույլ էր տալիս դատական ակտը վերանայելիս ղեկավարվել համապատասխանաբար ՀՀ քրեական դատավարության

րության օրենսգրքի 419-րդ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածներով եւ, ըստ այդմ, օրինական ուժի մեջ թողնել համապատասխան դատական ակտը:

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը, բացահայտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը, վերահաստատել է իր 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտված եւ 2010թ. փետրվարի 23-ի ՍԳՈ-866 որոշման մեջ վերահաստատված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ այն դեպքում, երբ դատական ակտի վերանայման համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը, **ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետեւ արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:**

Տվյալ գործով քննության առնված մյուս խնդիրը համանման է վերը նշված՝ «Քաղաքացիներ Ս.Ասատրյանի եւ Ա.Մանուկյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի եւ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով քննության առնված խնդրի հետ, այն է՝ իրավակիրառական պրակտիկայում որպես նոր հանգամանք չէին դիտարկվում սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցով թեւ օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրանցում օրենքի դրույթի վերաբերյալ ամրագրվել է իրավակիրառողի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն:

Սահմանադրական դատարանի 15.07.2011 թվականի ՍԳՈ-984 որոշումն ընդունելուց հետո՝ ՀՀ Ազգային ժողովը, մինչեւ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու՝ սահմանադրական դատարանի նշած վերջնաժամկետի լրանալը, այն է՝ 2011 թվականի նոյեմբերի 1-ը, 2011թ. հոկտեմբերի 26-ին ընդունել է ՀՕ-268-Ն, ՀՕ-269-Ն ՀՕ-270-Ն օրենքները, որոնցով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել համապատասխանաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերում: Ընդ որում, վերը նշված իրավական ակտերից երկուսում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում եւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարվել են՝ նաեւ հաշվի առնելով սահմանադրական դատարանի կողմից ավելի վաղ՝ 2011թ. փետրվարի 25-ին ընդունված ՍԳՈ-943 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք եւս վերաբերում են

սահմանադրական դատարանի որոշումները, որոնցով թեև օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրանցում օրենքի դրույթի վերաբերյալ ամրագրվել է իրավակիրառողի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն, նոր հանգամանք դիտարկելու անհրաժեշտությամբ: Տվյալ գործով վիճարկվում էր արդեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթը, եւ ՍԳ-Ո-943 որոշման նմանությամբ, այս դեպքում եւս, ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

**Մի շարք անհատական դիմումների հիման վրա** քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, կամ տվյալ որոշմամբ արձանագրել է նաև իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական քաղաքական խոչընդոտում են մարդու սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը: Սահմանադրական դատարանը կարևոր է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաեւ այդ հանգամանքին: **Առավել եւս, որ իր՝ 25.02.2011թ. ՍԳ-Ո-943 որոշման 11-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից որևէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:** Դատարանը նշված որոշումների պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում նաեւ արտահայտել է որոշակի իրավական դիրքորոշումներ եւ միայն դրանց շրջանակներում է իրավական ակտի վիճարկվող նորմը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Սահմանադրական դատարանը կարելի է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեության մեջ ելնեն իրավանորմների այնպիսի ընկալումից, ինչպիսին սահմանված է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում:

Մասնավորապես.

Ա/ «Քաղաքացի Ռոբերտ Սուքիասյանի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 11.01.2011 թվականի ՍԳ-Ո-932 որոշման պատճառաբանական մասի 9-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Այն հանգամանքը, որ քաղաքացիական վեճերի լուծման ժամանակ, երբ առկա է նաև ժամանակի գործոնի ազդեցությունը, միջանկյալ ակտերով վերաքննություն չնախատեսելն ինքնին չի նշանակում, որ հնարավոր չէ ապահովել արդյունավետ դատավարություն միայն դատական մեկ ատյանում գործի քննության

պայմաններում: Տվյալ կոնկրետ դեպքում կողմի իրավունքների դատական պաշտպանության խնդիրը կարող է վերաքննության առարկա դառնալ նաև **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում**»:

Սահմանադրական դատարանի 11.01.2011 թվականի ՍԳ-Ռ-932 որոշման պատճառաբանական մասի 9-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումից բխում է, որ իրավակիրառողը պարտավոր է, չնայած այն հանգամանքին, որ օրենսդրորեն բողոքարկելի են համարվում սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը, **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում** ընդունել եւ քննության առնել նաև ստորադաս ատյանի այն միջանկյալ ակտերի դեմ բերված բողոքները, որոնք օրենսդրորեն բողոքարկելի չեն համարվում:

Բ/ «Քաղաքացի Կարեն Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ մասի, 429-րդ եւ 430-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 25.01.2011 թվականի ՍԳ-Ռ-933 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում բացահայտել է **օրենսդրական բաց** եւ միաժամանակ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ գործը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանից առաջին ատյանի դատարան ուղարկելու առանձին ընթացակարգ: Դա վերաբերում է նաև հիշյալ դատարաններից գործն առաջին ատյանի դատարան ուղարկելու հստակ ժամկետներին, որով անմիջականորեն պայմանավորված են մի շարք պատժամիջոցների հաշվարկման ժամկետները: Սակայն հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման նպատակն ու առարկան՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված բացը պայմանավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի առկա ձեւակերպմամբ»:

Սահմանադրական դատարանի 25.01.2011 թվականի ՍԳ-Ռ-933 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետից բխում է, որ օրենսդիրը **պարտավոր է լրացնել սահմանադրական դատարանի կողմից բացահայտված՝ վերը հիշատակված օրենսդրական բացը:**

Գ/ «Հանրապետություն» կուսակցության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 22.02.2011թ. ՍԳ-Ռ-942 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հան-



րապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ հաշվի առնելով նաև վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության հնարավորությունը»:

Նույն որոշման պատճառաբանական մասի 5-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է, որ. **«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասն օրենսգրքի այլ նորմերի համակարգային վերլուծության տրամաբանությամբ ենթադրում է նաև վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության դեպքերը**, եւ իրավակիրառողը պետք է ելնի օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի նման մեկնաբանությունից»:

Սահմանադրական դատարանի 22.02.2011թ. ՄԳՈ-942 որոշման պատճառաբանական մասի 5-րդ եւ եզրափակիչ մասի 1-ին կետերում ամրագրված իրավական դիրքորոշումներից բխում է, որ իրավակիրառողը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասն ընկալել այնպես, որ այն **վերաբերում է վարչական ակտին, վարչական մարմնի գործողությանը եւ վարչական մարմնի անգործությանը:**

Գ/ «Քաղաքացի Պերճ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանը՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերը նույն օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ դիտարկելով եւ գնահատելով դրանց սահմանադրականությունը, իր՝ 15.03.2011թ. ՄԳՈ-945 որոշման պատճառաբանական մասի 8-րդ կետում դրանց վերաբերյալ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված՝ «պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ» հասկացության ներքո իրավակիրառական պրակտիկայում պետք է նկատի ունենալ միայն այն պարտավորությունները, որոնք իրենց բնույթով անխզելիորեն կապված են քաղաքացու կարգավիճակի հետ: Քաղաքացիությունից դուրս գալու դիմումի մերժումն այնպիսի չկատարած պարտավորություններ ունենալու հիմքով, որը տվյալ անձը պարտավոր է կատարել նաև ՀՀ քաղաքացիության կորստի դեպքում, կարող է քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքը սահմանափակել անհամաչափորեն, քանզի նման իրավիճակում քաղաքացիությունից դուրս գալու մերժումը կարող է դառնալ ոչ անհրաժեշտ միջոց տվյալ պարտավորության կատարումն ապահովելու համար»:

Նույն որոշման մեջ, առաջնորդվելով իրավակիրառական պրակտիկայում քաղաքացիությունը փոխելու կամ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքների իրավաչափորեն իրացման նկատառումներով, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել, « ... որպեսզի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը նույնպես հստակ ներդաշնակեցվի ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների չափորոշիչներին»:

Սահմանադրական դատարանի 15.03.2011 թվականի ՍԳ-Ռ-945 որոշման պատճառաբանական մասի 8-րդ կետից բխում է, որ իրավակիրառողը պարտավոր է **քաղաքացիությունից դուրս գալու դիմումը մերժելիս հիմք ընդունել քաղաքացիությունից դուրս եկող անձի միայն այն պարտավորությունները, որոնք իրենց բնույթով անխզելիորեն կապված են քաղաքացու կարգավիճակի հետ:**

Սահմանադրական դատարանի 15.03.2011 թվականի ՍԳ-Ռ-945 որոշման պատճառաբանական մասի 8-րդ կետը վերաբերում է նաեւ օրենսդիր մարմնին, եւ այդ կետից բխում է, որ օրենսդիրը **պարտավոր է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը հստակ ներդաշնակեցնել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների չափորոշիչներին:**

Ե/«Քաղաքացի Հովսեփ Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 12.04.2011 թվականի ՍԳ-Ռ-954 որոշման պատճառաբանական մասի 7-րդ կետում բացահայտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված **այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ**» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունը եւ գտել, որ վերջինս «...չի ներառում դատական պաշտպանության իրավունքն ընդհանրապես, եւ իրավակիրառական պրակտիկայում տվյալ բառակապակցությանը պետք է տալ սահմանափակ մեկնաբանություն, որպեսզի չխաթարվի այդ իրավունքի բուն էությունը»:

Միաժամանակ, նույն որոշման 8-րդ կետում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի գնահատման շրջանակներում անդրադառնալով տվյալ գործով կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «...տվյալ գործով դատական քննության արդյունքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության դրույթին տրվել է լայն մեկնաբանություն, ինչի հետեւանքով օրենքի վիճարկվող դրույթներում «լիազորությունները» բառն ընկալվել է համընդգրկուն իմաստով՝ ներառելով ընկերության մասնակցի՝ օրենքով եւ ընկերության կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքները եւ պարտականությունները»:

Սահմանադրական դատարանի 12.04.2011 թվականի ՍԳ-Ո-954 որոշման պատճառաբանական մասի 7-րդ և 8-րդ կետերից բխում է, որ իրավակիրառողը պարտավոր է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ» բառակապակցությանը տալ սահմանափակ մեկնաբանություն, ընկալելով, որ այն չի կարող ներառել ընկերության մասնակցի՝ օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը:

Չ/ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետի (2007թ. ապրիլի 9-ի խմբագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.06.2011 թվականի ՍԳ-Ո-975 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ:

Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը»:

Նույն որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է. «...քաղաքացիաիրավական պայմանագրով սահմանված պարտավորությունը կարող է կա՛ն վերարտադրել արդեն իսկ Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված պարտականության բովանդակությունը, կա՛ն ամրագրել քաղաքացիաիրավական պայմանագրերի առնչությամբ օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված պարտավորություն, այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով, ինչպես նաև սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարել նույն 6-րդ կետում արձանագրել, որ «...քաղաքացիաիրավական պայ-

մանագրերով սահմանված **պարտավորությունների** առնչությամբ կիրառելի չէ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց **պարտականությունները**: Հետեւաբար՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված **պարտավորությունների** առնչությամբ կիրառելի չէ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, որը վերաբրտադրում է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, ինչի բովանդակությանը սույն գործով հղում են կատարել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները»:

Սահմանադրական դատարանի 14.06.2011 թվականի ՍԳՈ-975 որոշման պատճառաբանական մասի 6-րդ եւ եզրափակիչ մասի 1-ին կետում ամրագրված իրավական դիրքորոշումներից բխում է, որ իրավակիրառողը պարտավոր է քաղաքացիաիրավական հարաբերությունների ոլորտում տարբերակել «պարտականություն» եւ «պարտավորություն» հասկացությունները:

Է/ «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի, Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների, Սվետա Հարությունյանի, Սերգեյ Հակոբյանի եւ Գայանե Կիրակոսյանի ու «Մելտեքս» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի, 204.38-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011 թվականի ՍԳՈ-984 որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանի 15.07.2011 թվականի ՍԳՈ-984 որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերում ամրագրված իրավական դիրքորոշումներից բխում է, որ իրավակիրառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածն ընկալել այնպես, որ դրանք **բոլոր դեպքերում են**

**բացառում նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը:**

Ը/ «Քաղաքացի Արմեն Խառատյանի դիմումի հիման վրա՝ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.10.2011 թվականի ՍԳՌ-996 որոշման պատճառաբանական մասի 5-րդ կետում, անդրադառնալով դատարանների կողմից իրավական նորմի մեկնաբանության խնդրին, արձանագրել է հետևյալը. «Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները եւ չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է այնպիսի հնարավոր տարբերակների միջեւ, որոնք բոլորն էլ օրինական են: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»: Հստակ սահմանված է նաեւ, որ իրավական ակտի մեկնաբանությունը չպետք է փոխի դրա իմաստը»:

Միաժամանակ, նույն որոշման 6-րդ կետում, անդրադառնալով օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով դատավորին կցված դատական ծառայության պաշտոնից ազատելու կարգին եւ հիմք ընդունելով, որ այդ կարգը սահմանված է իմպերատիվ նորմով, սահմանադրական դատարանը գտել է, որ. «...օրենքի վիճարկվող նորմի դիսպոզիցիան դատավորի համար նախատեսում է նաեւ պարտականություն՝ դատավորին կցված դատական ծառայողին պաշտոնից ազատելու համապատասխան հիմքի առկայության դեպքում տվյալ դատական ծառայողին ներկայացնել ազատման: Այլ խնդիր է՝ դատավորի կողմից նշված պարտականության կատարումից տարաբնույթ պատճառներով հնարավոր հրաժարվելու հանգամանքը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցի առավել մանրամասն իրավակարգավորման նպատակահարմարության խնդիրը կարող է քննության առարկա դառնալ օրենսդիր մարմնի իրավագործության շրջանակներում»:

Սահմանադրական դատարանի 18.10.2011 թվականի ՍԳՌ-996 որոշման պատճառաբանական մասի 5-րդ եւ 6-րդ կետերից բխում է, որ՝

- դատական մարմիններն իրենց կողմից կիրառվելիք **իրավանորմի հստակության պայմաններում իրավունք չունեն այդ նորմը մեկնաբանել այնպես, որ դրա հետեւանքով փոխվի իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել այդ իրավանորմի նպատակահարմարության խնդիրը,**
- դատավորները պարտավոր են իրենց կցված դատական ծառայողին պաշտոնից ազատելու համապատասխան հիմքի առկայության դեպքում տվյալ դատական ծառայողին ներկայացնել ազատման,

- օրենսդիրը, ելնելով իրավական պետության սկզբունքից, պարտավոր է ամրագրել առավել մանրամասն կարգավորում՝ կանխելու համար բոլոր այն դեպքերը, երբ դատավորին կցված դատական ծառայողին պաշտոնից ազատելու համապատասխան հիմքի առկայության դեպքում տվյալ դատավորը տվյալ դատական ծառայողին ինչ-ինչ պատճառներով չի ներկայացնում ազատման, եւ դա այն դեպքում, երբ նշված դատական ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու պարտադիր պայման է հանդիսանում համապատասխան դատավորի կողմից տվյալ դատական ծառայողին ազատման ներկայացնելը:

Թ/ «Երեւանշին» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 06.12.2011 թվականի ՍԳՈ-1004 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում անուղղակիորեն մեկնաբանել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը» բառակապակցությունը եւ արձանագրել հետեւյալը. «կողմերը կրում են **հայցի առարկայի եւ դրա փաստական հիմքերի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու պարտականություն**: Ինչ վերաբերում է հայցի իրավական հիմքին, վիճելի իրավահարաբերության որակմանը եւ դրա նկատմամբ կիրառելի նորմերի ընտրությանը, ապա դատավարության կողմերի համար՝ հայցի իրավական հիմքը մատնանշելու եւ այդ կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու պարտականություն օրենսգրքով սահմանված չէ»:

Սահմանադրական դատարանի 06.12.2011 թվականի ՍԳՈ-1004 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետից բխում է, որ վերաքննիչ դատարանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելիս պարտավոր է հաշվի առնել **միայն** առաջին ատյանի դատարանում կողմի՝ **հայցի առարկայի եւ դրա փաստական հիմքերի**, այլ ոչ հայցի իրավական հիմքի, վիճելի իրավահարաբերության որակման եւ դրա նկատմամբ կիրառելի նորմերի ընտրության վերաբերյալ դիրքորոշման առկայությունը:

## **Դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում 2010 եւ 2011թթ. մուտքագրված՝ ՀՀ դատարանների կողմից ներկայացված 2 դիմումներն էլ (մեկը ներկայացվել է Երևանի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավա-

սության դատարանի, մյուսը՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից) սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանցից Երևանի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից ներկայացված դիմումով սահմանադրական դատարանի ըստ էության որոշմամբ գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով կարճվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

«ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դիմումի հիման վրա՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 3-րդ մասի 3-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 29.11.2011 թվականի ՍԳՈ-1000 որոշմամբ որոշել է.

«1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը, սույն որոշման հիման վրա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի ուժը կորցնելու պայմաններում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն **ընդհանուր կանոն է**, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ **բացառություն ընդհանուր կանոնից**: Մինչդեռ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմը, շեղվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման հիմքում ընկած՝ խնդրո առարկա իրավական ակտերի **հետադարձ ուժի բացակայության կանխավարկածից**, ամրագրել է այդ իրավական ակտերի **հետադարձ ուժի առկայության կանխավարկածը՝ բացառությունը դարձնելով ընդհանուր կանոն**:

Սահմանադրական դատարանը, հարկ համարելով պարզել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը, արձանագրել է հետեւյալը. «Այդ նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական **ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում** անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը/բնականաբար, հաշվի առնելով նաեւ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջները/: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով

իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու **նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ**: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ եւ տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից» (որոշման 6-րդ կետ):

Տվյալ որոշման նույն 6-րդ կետում սահմանադրական դատարանը, օրենքի վիճարկվող դրույթները դիտարկելով Սահմանադրության անմիջական գործողության ուժի համատեքստում, արձանագրել է, որ՝ «ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմն ունի անմիջական գործողություն եւ, ըստ այդմ, եթե ճյուղային օրենսդրությունը չի նախատեսում համապատասխան նորմ, որը սահմանում է տվյալ օրենսդրության՝ ժամանակի մեջ գործողության կանոնները կամ բովանդակում է նշված սահմանադրական նորմին հակասող նորմեր, ապա **կիրառվում է նշված սահմանադրական նորմը՝ իր անմիջական գործողության ուժով՝** համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի»:

Տվյալ որոշման նույն 6-րդ կետում սահմանադրական դատարանը միաժամանակ գտել է, որ «...**մինչեւ սույն հակասության օրենսդրորեն հաղթահարումն իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ որպես Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով անմիջականորեն գործող նորմ**»:

Հատկանշական է նաեւ այն հանգամանքը, որ տվյալ գործով թե՛ դիմող եւ թե՛ պատասխանող կողմը գտնում էին, որ վեճի առարկա նորմը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանն արձանագրելով, որ քննության առարկա իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ վեճը՝ որպես այդպիսին, բացակայում է, միաժամանակ հանգեց այն հետետուրյանը, որ տվյալ գործի քննությունը ոչ միայն էական նշանակություն կունենա ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու իրավական հստակության ապահովման տեսանկյունից, այլեւ դատական պրակտիկայի համար առավել մատչելի կդարձնի սահմանադրական նորմերի անմիջական կիրառման ինստիտուտի էությունը:

Այսուհանդերձ, սահմանադրական դատարանը նաեւ արձանագրեց, որ ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին կետի ուժով ՀՀ Ազգային ժողովի կողմից երկու տարվա ընթացքում անհրաժեշտ փոփոխություն պետք է կատարվեր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում, ինչը չի արվել:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 29.11.2011 թվականի ՄԴՈ-1000 որոշումն ընդունելուց հետո, տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել:



## **ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված ՍԳ- որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարան 2010թ. ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացված 2 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանցից մեկով, որը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության որոշման հարցին, սահմանադրական դատարանի ըստ էության որոշմամբ գործի վարույթը կարճվել է:

«ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 04.02.2011 թվականի ՍԳ-Ո-935 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի «միայն» արտահայտությունը՝ այնքանով, որքանով բացառում է նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով այլ վերջնական իրավական ակտերի օրենքով սահմանված կարգով վերանայումը՝ դրանով իսկ վտանգելով անձի՝ մասնավորապես, մինչդատական վարույթում պետական իրավասու մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում անտեսվում էր հանցագործության հետեւանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության երաշխավորման խնդիրը, քանի որ օրենսդրորեն նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը նախատեսված էր միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերաբերյալ՝ անտեսելով մինչդատական վարույթի ընթացքում կայացված վերջնական դատավարական ակտերը, ինչպիսիք են՝ գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի վերջնական որոշումները: Եվ դա այն դեպքում, երբ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսել է մինչդատական վարույթի նկատմամբ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով պայմանավորված դատախազության հսկողական գործառույթներն իրականացնելու հնարավորություն եւ կանխորոշել է օրենսգրքի 12.1-րդ բաժնի նորմերի միջոցով այդպիսի հնարավորության իրացման համար համապատասխան իրավական երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունը:

Օրենսգրքի վիճարկվող նորմը դիտարկելով դատավարական ակտերի վերանայման վերաբերյալ ողջ իրավակարգավորման համատեքստում եւ հաշվի

առնելով, մի կողմից, տուժողի շահերի, մյուս կողմից՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի՝ որպես հանրային շահի հավասարակշռման անհրաժեշտությունը, տվյալ որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է, որ. «...գործնականում առաջին հերթին հանցագործության հետեւանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը»:

Նույն որոշման 7-րդ կետում, բացահայտելով օրենսդրական բացը, սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «...գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի վերջնական որոշման՝ նոր կամ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով վերանայման հնարավորության համակարգային իրավակարգավորման բացակայությունը պայմանավորված է առաջին հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի առկա ձեւակերպմամբ, որի արդյունքում վտանգվում է անձի՝ իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը»:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ի ՍԳ-Ո-935 որոշումն ընդունելուց հետո, տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել: Մակայն, անհրաժեշտ է նշել, որ հիշատակված որոշման պահանջների ու դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացմանն է ուղղված Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող՝ Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի և Հովհաննես Սահակյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1094-24.02.2011-ՊԻ-010-0), որով՝ ի կատարումն սահմանադրական դատարանի որոշման, նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություն հիշյալ օրենսդրական ակտում:

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

## **Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված 2 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Գրանցից մեկով սահմանադրական դատարանն իր՝ 15.11.2011թ. ՄԳՈ-997 որոշմամբ վիճարկվող նորմը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում, իսկ մյուսով սահմանադրական դատարանն իր՝ 03.06.2011թ. ՄԳՈ-966 որոշմամբ որոշել է.

«2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) հակասող ճանաչել ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված եւ Հայաստանի Հանրապետության համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու եւ այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պատճառաբանական մասի 6-րդ եւ 7-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ ի գիտություն ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում անհնարին էր դառնում «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված եւ Հայաստանի Հանրապետության համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացումը՝ **այդ իրավունքների իրացման կարգի բացակայության հետեւանքով:**

Միեւնույն ժամանակ սահմանադրական դատարանը տվյալ որոշման մեջ ընդգծել է նաեւ, որ դիմողի իրավունքների խախտումը պայմանավորված է ոչ միայն ՀՀ օրենսդրության մեջ տվյալ անձանց իրավունքների իրացման կարգի բացակայությամբ, **այլ նաեւ իրավակիրառողի գործունեությամբ**, որն անտեսել է «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջը:

Մասնավորապես, տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Օրենքի նկատմամբ ՀՀ միջազգային պայմանագրերի գերակայության սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՀՀ գործող օրենսդրության բազմաթիվ ակտերում, այդ թվում՝ նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որն ուղղակիորեն սահմանել է, որ **«Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»**»:

Հիմք ընդունելով «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝ սահմանադրական դատարանը նույն որոշման 6-րդ կետում գտել է, որ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված **համաձայնագրի դրույթների ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է ոչ թե վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրով, այլ իրավակիրառական պրակտիկայում այդ նույն օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջի անտեսմամբ**»:

Տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում՝ հղում կատարելով իր՝ ՄԴՈ-668 որոշման 5-րդ կետին, սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-668 որոշմամբ (5-րդ կետ) արձանագրել է, որ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքը սահմանելով «Հայրենական մեծ պատերազմի վետերաններ» հասկացությունը, չի անդրադարձել համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետում նշված անձանց, եւ որ իրավակիրառական պրակտիկայում **«պատերազմի վետերաններ» հասկացությունը մեկնաբանելիս՝ անվերապահորեն պետք է հիմք ընդունել նաև համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետի դրույթները**: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկան, ՄԴՈ-668 որոշման հիշյալ պահանջը չի իրացվել: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջը պետք է հաշվի առնվի ոչ միայն «պատերազմի վետերաններ» հասկացության, այլև անձանց նկատմամբ համաձայնագրով նախատեսված արտոնությունները լրիվ ծավալով կիրառելու առնչությամբ»:

Նույն որոշման 7-րդ կետում «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրի, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական ապահովու-

թյան հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի դրույթների համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը լիարժեք պայմաններ չի նախատեսել Հայրենական մեծ պատերազմի վետերանների, նրանց հավասարեցված անձանց, զոհված զինծառայողների ընտանիքների՝ ՀՀ միջազգային պայմանագրով եւ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ամբողջական իրացումն ապահովելու համար: ՀՀ կառավարությունը չի անդրադարձել նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-668 որոշման կատարման ապահովմանը: Մասնավորապես՝ կառավարության հիշյալ որոշման իրավակարգավորման շրջանակներից դուրս են թողնվել ՀՀ միջազգային համաձայնագրով պատերազմի հաշմանդամ համարվող որոշակի թվով անձինք (հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետ), որոնք նախկինում օգտվել են պատերազմի հաշմանդամների համար նախատեսված արտոնություններից: ՀՀ կառավարության 05.02.2004թ. թիվ 207-Ն որոշմամբ նախկին որոշումները ուժը կորցրած ճանաչելով եւ հիշյալ անձանց համար դրամական փոխհատուցում չնախատեսելով՝ տեղի է ունեցել նրանց՝ ՀՀ միջազգային պարտավորություններով նախատեսված իրավունքի արգելափակում: Ընդ որում, ՀՀ դատական պրակտիկան նույնպես փաստել է, որ պատերազմի հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիների պահանջը հստակ իր լուծումն է ստացել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրում, սակայն հենվելով ՀՀ կառավարության՝ սույն գործով վեճի առարկա որոշման վրա՝ չի բավարարվել քաղաքացիների հայցադիմումը՝ իրենց արտոնությունները պահպանելու կամ դրամական փոխհատուցում տալու հարցով»:

ՀՀ կառավարությունը, մինչեւ սահմանադրական դատարանի 03.06.2011թ. ՄԴՈ-966 որոշման ընդունումը, իր՝ 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչել եւ, միաժամանակ, իր՝ 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Զինծառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու եւ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգի հետ կապված հարաբերությունները՝ այդպիսի օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկելով նաեւ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողություններ

րի մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված այլ կատեգորիայի անձանց:

**«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերին եւ 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով** սահմանադրական դատարանն իր՝ 15.11.2011թ. ՍԳ-Ո-997 որոշմամբ օրենսգրքի վիճարկվող նորմը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Մասնավորապես, տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում, միջազգային իրավական պրակտիկայի վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ, մասնավորապես, համաձայն եվրոպական իրավական ներկա զարգացումների՝

- մամուլի դեմ անձի պատվի եւ արժանապատվության պաշտպանության նպատակով հարուցված հայցերի դեպքում առկա է արտահայտվելու ազատության իրավունքի եւ անձի արժանապատվության բախում, եւ լուծումները պետք է գտնվեն դրանց հավասարակշռման տիրույթում,
- մամուլի միջոցներով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելը **համարվում է իրավախախտում, սակայն ոչ քրեորեն պատժելի արարք,**
- այդ իրավախախտումը ենթադրում է համարժեք փոխհատուցում, որն անհրաժեշտ է անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը վերականգնելու համար,
- այդ փոխհատուցումը չպետք է շփոթել պատճառած գույքային վնասի հետ,
- այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես լրատվամիջոցի դեմ կիրառվող տույժ կամ տուգանք, հակառակ դեպքում կիմաստագրկվի զրպարտություն երեւույթի ապաքրեականացումը,
- զրպարտության վերաբերյալ գործերով պատասխանողը պետք է կրի միայն իր հրապարակած փաստերի ճշմարտացիության ապացուցման պարտականությունը,
- պետք է ապահովվի ու երաշխավորվի «ողջամիտ հրապարակման» պաշտպանությունը,
- հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում հանրությանը հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հարցում մամուլի առանցքային դերը՝ առավել լայն պաշտպանություն պետք է ապահովվի այն հրապարակումների համար, որոնք մաս են կազմում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ ծավալվող բանավեճի:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը նաեւ արձանագրել է, որ գրպարտության ապաքրեականացման վերաբերյալ թե՛ մեր երկրում եւ թե՛ եվրոպական մի շարք այլ երկրներում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների ու նոր իրավակարգավորման **հիմնական տրամաբանությունը հենվում է ոչ թե մեղավորության կանխավարկածի վրա (նախատեսել պատիժ՝ արարքի համար), այլ անմեղության կանխավարկածի վրա (երաշխավորել անձի անմեղությունը՝ վերականգնելով նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը)**: Երբ անձի պատվի եւ արժանապատվության արատավորումը հետեւանք է դիտավորության, չարամտորեն իրականացված գործողության, ունի շարունակական բնույթ ու առնչվում է լրատվամիջոցին, ապա խնդիրը տեղափոխվում է նաեւ իրավահարաբերությունների կարգավորման այլ հարթություն, եւ հարցը կարող է քննության առարկա դառնալ ընդհուպ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման տեսանկյունից: Միջազգային իրավական մոտեցումները ելնում են այն կանխավարկածից, որ լրատվության կարեւորագույն առաքելություններից են՝ ասել միայն ճշմարտությունը եւ բարեխղճորեն ստուգել փաստերը: Անհավատարմությունն այս առաքելությանը, կեղծ փաստերով շահադիտական կամ կանխամտածված այլ նպատակներով անձին անվանարկելը, նրա՝ անմեղության կանխավարկածին վնաս հասցնելը կամ անձնական կյանքին միջամտելը պետք է համարժեք իրավական գնահատական ստանան: Իր հերթին, երաշխավորված ու պաշտպանված պետք է լինի խոսքի եւ արտահայտվելու ազատության իրավունքը, եւ պատասխանատու մամուլի կենսունակությունը չպետք է վտանգվի:

Որոշման 7-րդ կետում, անդրադառնալով «վիրավորանք» եզրույթի բովանդակությանը, սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «Վիրավորանքի առկա սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք **կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն** պաշտպանված չէ օրենքով: Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի արտահայտումը՝ այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա եւ արված է արդար մտադրություններով: **Ընդ որում, գնահատող դատողություն արտահայտելու համար ապացույցներ չեն պահանջվում**: Զննադատությունը, որն ուղղված է անձի գործունեությանը քաղաքականության, բիզնեսի, գիտության, արվեստի կամ այլ հանրային բնագավառներում, ինչպես նաեւ հանրային պաշտոնի, հասարակական դիրքի առնչությամբ եւ ակնհայտորեն չի գերազանցում իրավաչափության սահմանները, չի կարող համարվել վիրավորանք վեճի առարկա հողվածի իմաստով:

Զննության առարկա հողվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ արտահայտությունը չի կարող որպես վիրավորանք որակվել, եթե այն ունի որոշակի փաստական հիմք: Այսինքն, ոչ թե պետք է վիրավորանք համարել գնահատողական դատողությունը, այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն **արատավորելու նպատակով** կատարված

հրապարակային արտահայտությունը: Այստեղ կարելու է նաեւ «արատավորելու նպատակով» արտահայտության իրավական իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համատեքստում այն **ենթադրում է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ոսնձգություն** անձի արժանապատվության նկատմամբ: Մինչդեռ գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետետություն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլեւ՝ պարտականությունն է»:

Տվյալ գործով կայացված որոշման 8-րդ կետում, անդրադառնալով «հրապարակային» եզրույթի բովանդակությանը, սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «Այնհայտ է, որ վեճի առարկա հողվածի իրավակարգավորումը վերաբերում է միայն **հանրության առջեւ, առնվազն երրորդ անձի ներկայությամբ անձին հանիրավի անվանարկելու հետեւանքների հաղթահարմանը**: Իր կարեւորությամբ հանդերձ, վիճարկվող հողվածի իրավակարգավորման շրջանակներից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը»:

Միեւնուն ժամանակ, սահմանադրական դատարանը տվյալ որոշման մեջ մատնացույց է արել պետական մարմինների որոշակի գործողություններ կատարելու կամ իրավական նորմը տվյալ բովանդակությամբ ընկալելու անհրաժեշտությունը:

Մասնավորապես, տվյալ որոշման 8-րդ կետում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով իր այն դիրքորոշումը, որ «...իր կարեւորությամբ հանդերձ, օրենքի վիճարկվող հողվածի իրավակարգավորման շրջանակներից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը», բացահայտելով տվյալ հարցով ընդհանուր իրավակարգավորման բացը, անհրաժեշտ համարելով ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը, օրենսդիր մարմնին ուղղորդել է իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա դարձնել ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը:

Փոխհատուցման չափի առնչությամբ սահմանադրական դատարանը նույն որոշման 9-րդ կետում նպատակահարմար է համարել «...օրենսդրի կողմից քննարկելու առավելագույն սահմանի վերանայումը՝ նվազեցման միտումով, որպեսզի այն գործնականում բացառի արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը»:

Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը որոշակի դիրքորոշումներ է արտահայտել նաեւ իրավակիրառողի համար:

Մասնավորապես, տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է, որ. «... դատական հայեցողությունը՝ մանավանդ այնպիսի դեպքերում, երբ քննության առարկա է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սահմանափակման հարցը, **պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի նորմերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան մեկնաբանությամբ կիրա-**



**ռելու պահանջով, այլև միջազգային պրակտիկայով, եւ հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով»:**

Նույն որոշման 8-րդ կետում սահմանադրական դատարանն ամրագրել է հետեւյալը. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր պրակտիկայում **հստակ տարբերակում է կատարել փաստական տվյալների եւ գնահատողական դատողությունների միջեւ:** Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որ գրպարտությանն առնչվող իրավակարգավորումը **պետք է հստակ տարանջատում կատարի գնահատողական դատողության եւ փաստերի միջեւ,** որպեսզի բացառվի Կոնվենցիայի 10-րդ հոդվածին հակասող որոշումների ընդունումը:

Ելնելով վիճարկվող նորմերում արարքի, որպես «գրպարտություն» եւ (կամ) «վիրավորանք» որակելու (գնահատելու) վերաբերյալ վերոհիշյալ միջազգային իրավական չափորոշիչների բովանդակությունից եւ դրանց ճշգրիտ կիրառման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում դատարաններն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող գործողությունների փաստը քննելու յուրաքանչյուր գործով չպետք է կիրառեն նորմատիվ մեկնաբանության հայեցողական այնպիսի ազատություն, որի արդյունքում միակերպ չտարանջատվի **փաստը** (փաստացի տվյալը) եւ **գնահատողական դատողությունը**, հակառակ դեպքում չի կարող արդար, հիմնավոր եւ սահմանադրականության տեսանկյունից իրավական համարվել վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ ազատ խոսքի ամեն մի սահմանափակում»:

Նույն որոշման 9-րդ կետում սահմանադրական դատարանն ամրագրել է հետեւյալը. «**Արատավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի գրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից:** Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում: ... օրենսդիրը բոլորովին այլ իրավահարաբերության հարթություն է տեղափոխել գրպարտության կամ վիրավորանքի հետեւանքով պատճառված **գույքային վնասի** խնդիրը եւ դատարաններին իմպերատիվ պահանջ է ներկայացնում՝ **այն հաշվի չառնել վիճարկվող հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս (մաս 11):** Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ, մի կողմից, մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառական պրակտիկայում **չպետք է շփոթել գույքային վնասի հետ,** մյուս կողմից՝ **այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձեւով սահմանվող պատիժ:** Հակառակ պարագայում, ինչպես նշվեց, կիմաստագրվվի գրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է (կետ 11), որ Սահմանադրության

14, 27, 43 եւ 47-րդ /1-ին մաս/ հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ տվյալ որոշման մեջ հիշատակված եւ մի շարք այլ վճիռների հիման վրա ձեւավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների, «Զանգվածային լրատվության մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետեւում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությամբ համապատասխան կիրառումը երաշխավորելու համար **անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետեւյալ սկզբունքային մոտեցումները.**

- նկատի ունենալով, որ գրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին եւ լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**
- վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արտավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, եւ «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,
- «գրպարտություն» եւ «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,
- չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան գուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար եւ նպաստել հասարակության համար կարեւոր հարցերի շուրջ քննարկումներին,
- մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,
- ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,
- պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, եւ արտա-

հայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

- նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,
- արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձեւերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի գրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, եւ նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,
- վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,
- ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,
- փոխհատուցման` օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,
- լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,
- փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստականության բացակայությունը,
- լրագրողի` հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի` փոխհատուցման չափը որոշելիս,
- հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություններ կայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից` հայցվորի նման կարգավիճակը չի

կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

- անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել է օգտագործվել են արտադատական հատուցման ձեւերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,
- պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ եւ աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,
- պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը եւ այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԳ-Ո-997 որոշումն ընդունելուց հետո, տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել:

### **ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ՝ ՆԱԽՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՆԳՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

2011 թվականի ընթացքում ևս շարունակվել են ՀՀ իրավական դաշտի բարեփոխումները, որոնցով հաշվի են առնվել նաև սահմանադրական դատարանի՝ նախորդ տարիների ընթացքում ընդունած որոշումները: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի՝ **2007** թվականի փետրվարի 16-ի ՍԳ-Ո-678, **2007** թվականի ապրիլի 9-ի ՍԳ-Ո-690, **2007** թվականի ապրիլի 11-ի ՍԳ-Ո-691, **2008** թվականի ապրիլի 15-ի ՍԳ-Ո -751, **2009** թվականի հոկտեմբերի 13-ի ՍԳ-Ո-833, **2010** թվականի հունվարի 14-ի ՍԳ-Ո-851, **2010** թվականի փետրվարի 5-ի ՍԳ-Ո-864, **2010** թվականի սեպտեմբերի 18-ի ՍԳ-Ո-917, **2010** թվականի դեկտեմբերի 14-ի ՍԳ-Ո-929 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների կատարման նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ դատական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության, վարչական դատավարության, քրեական օրենսգրքերում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, «Ազգային ժողովի կանոնակարգ», «Սահմանադրական դատարանի մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ոչ միշտ են միատեսակ ընկալվում, ինչի արդյունքում նշված իրավական դիրքորոշումների հիման վրա կատարված փոփոխությունները մասնակիորեն են ապահովում սահմանադրական դատարանի որոշումների կատարումը:

Մասնավորապես, դատական ակտի պատճառաբանվածության պարտադիր պայմանի վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԳՈ-691 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թվականի ընթացքում կատարվեցին փոփոխություններ, սակայն դրանք լիարժեքորեն չէին արտացոլում ՍԳՈ-691 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները: Նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն առավել ամբողջական կերպով արտացոլվեցին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ 2009 թվականի հուլիսի 28-ի ՍԳՈ-818 որոշման ընդունումից հետո, երբ սահմանադրական դատարանը կրկին անդրադարձավ դատական ակտի պատճառաբանվածության հարցին: Դրանից հետո՝ 2010 եւ 2011թթ. նշված օրենսգրքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ:

Նույնը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին, որում սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԳՈ-690 որոշման ընդունումից հետո կատարվեցին փոփոխություններ, սակայն նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն առավել ամբողջական կերպով արտացոլվեցին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում՝ 2008 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԳՈ-765 որոշման ընդունումից հետո, երբ սահմանադրական դատարանը կրկին անդրադարձավ դատական ակտի պատճառաբանվածության հարցին:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ դատական օրենսգրքին, որում դատական ակտի պատճառաբանվածության պարտադիր պայմանի վերաբերյալ համապատասխան փոփոխությունները կատարվեցին միայն 2010 թվականին: Այնուհետև՝ 2011 թվականին եւս մեկ անգամ նշված օրենսգրքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ:

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետեւում է.

**I.** Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու, հետեւաբար՝ նաեւ **իրավական պետության սահմանադրական սկզբունքը գործնականում իրացնելու համար** շարունակում է հրատապ մնալ համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու խնդիրը: Կարելու է, որ բացի ՀՀ Ազգային ժողովից, ՀՀ արդարադատության նախարարությունում նույնպես 2011թ. ձեւավորվել է հատուկ հանձնախումբ՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացումը երաշխավորելու նպատակով առաջարկություններ նախապատրաստելու համար: Այսուհանդերձ, **անհրաժեշտ է հարցն օրենսդրորեն կանոնակարգել**, որպեսզի.

ա) սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնարավորինս սեղմ ժամանակահատվածում կամ մինչև սահմանադրական դատարանի կողմից տվյալ նորմի՝ ուժը կորցնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտը, հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունած պետական մարմինը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցերի շրջանակում, հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտը՝ փոխկապակցված դրույթներով հանդերձ, Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը եւ ասպահովի, որպեսզի իրավական բաց չառաջանա:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը դրական է համարում այն իրողությունը, որ 2011 թվականի ընթացքում կայացված՝ ՄԴՈ-943 եւ ՄԴՈ-984 որոշումների հիման վրա համապատասխան օրենսդրական փոփոխությունները կատարվել են նույն՝ 2011 թվականի ընթացքում,

բ) պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն՝ հատկապես հաշվի առնելով դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտված են սահմանադրական դատարանի որոշումների ոչ միայն եզրափակիչ, այլ նաեւ պատճառաբանական մասերում, և որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: **Խոսքը չի վերաբերում միայն սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնք կարող են հանդիսանալ որպես նոր հանգամանք. խնդիրն առավել համընդգրկուն է եւ վերաբերում է ցանկացած գործով կիրառման ենթակա իրավական ակտի դրույթի՝ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը, ընկալմանը եւ կիրառմանը:**

Կարելու էին 2011թ. նոյեմբերի 15-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխություններն ու լրացումները, որոնցով էական առաջընթաց քայլ կատարվեց մեր երկրում նոր հանգամանքների ինստիտուտի զարգացման եւ մարդու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով: Սակայն խնդրին ամբողջական լուծում տալու համար վերանայման անհրաժեշտություն ունի նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի հայեցակարգային մոտեցումը:

Տվյալ հոդվածի 4-րդ մասի իրավափիլիսոփայությունը, վերջին հաշվով, հանգում է նրան, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական կարգավորման մակարդակով ճանաչվում է միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը: Նման իրավակարգավորումը լուրջ խոչընդոտներ է ստեղծում ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման եւ մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հարցում: Անհասկանալի է նաեւ իրավական տրամաբանությունը: Օրենքի տվյալ հոդվածի 4-րդ մասը պարզա-

պես շրջանցում է Սահմանադրության նորմերի անմիջական գործողության սկզբունքը: Սահմանադրական հիմնարար սկզբունքների պահանջներից եւ միջազգային իրավական զարգացումների տրամաբանությունից հետեւում է, որ տվյալ իրավակարգավորման նոր տրամաբանություն պետք է որդեգրել՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը պարտադիր է դատական պրակտիկայի համար:

Ներկայացված հիմնախնդրին բազմիցս է անդրադարձ եղել միջազգային տարբեր քննարկումների ժամանակ: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը /Վենետիկի հանձնաժողով/ 2011թ. հունվարի 17-18-ի 85-րդ լիագումար նիստում, հաստատելով անհատական դիմումների հիման վրա սահմանադրական արդարադատության իրականացման եվրոպական փորձն ամփոփող զեկույցը, մասնավորապես արձանագրել է նաեւ, որ երբ սահմանադրական դատարանը որոշակի մեկնաբանության միջոցով սահմանադրականության ապահովման իր գործառույթն իրականացնելիս պարտավորեցնում է պետական բոլոր մյուս մարմիններին նորմատիվ ակտը կիրառել **միայն սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված որոշակի մեկնաբանությամբ**, նորմատիվ ակտն իրավաբանական ուժից չի զրկվում: ...Սակայն այս հարցում հստակություն մտցնելու համար **անհրաժեշտ է այդ խնդիրն օրենսդրոն կանոնակարգել, որպեսզի բոլոր պետական մարմինները, այդ թվում դատարաններն առաջնորդվեն սահմանադրական դատարանի կողմից տրված սահմանադրական մեկնաբանություններով**, որը կարող է հիմք ծառայել անհատական դիմում ներկայացնողներին պահանջելու դատարանում պաշտպանել իրենց իրավունքները /Strasbourg, 27 January 2011, CDL-AD(2010) 039rev., կետ 165/:

Սահմանադրական արդարադատությանը ներկայացվող արդի հրամայականները պահանջում են սահմանադրական մտածողության ու մշակույթի նոր որակ: Այլընտրանք չունեցող եզրահանգումն այն է, որ իրավական պետության գերագույն խնդիրն իշխանության եւ ազատության սահմանների հստակեցումն է ու իրավունքի գերակայության երաշխավորումը: Դա հնարավոր է միայն Սահմանադրության գերակայության երաշխավորման պայմաններում եւ իրական կյանքում սահմանադրական հավասարակշռության երաշխավորման արդյունքում: Դա էր նաեւ հիմնական նախադրյալը վերջին հարյուրամյակում դատական սահմանադրական վերահսկողության նոր կառուցակարգերի ձեւավորման համար: Սակայն նախորդ դարի ծնունդ այս ինստիտուտների դերն ու դերակատարությունը կարող են արդյունավետ լինել, երբ սահմանադրական դատարանների որոշումների իրավական հետեւանքները շոշափելի ու ազդեցիկ լինեն երկրում սահմանադրականության հաստատման առումով: **Դա հնարավոր է միայն սահմանադրական դատարանների նախադեպային իրավունքի իրացման անհրաժեշտ ու բավարար նախադրյալների երաշխավորման պայմաններում:**

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման արդի մարտահրավերները եւ սահմանադրական մշակույթի զարգացման միտումները վկայում են, որ ներկայումս «սահմանադրական դատարանի նախադեպային իրավունք» հասկացությունը **պետք է ընկալել որպես Սահմանադրության եւ այլ իրավական ակտերի կոնկրետ դրույթների սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ու եզրահանգումների ամբողջություն, որոնք Սահմանադրության ուժով համապարտադիր են, երաշխիք են Սահմանադրության գերակայության երաշխավորման, օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար եւ հանդիսանում են իրավունքի աղբյուր:**

Իրավամտածողության նման հայեցակարգի արմատավորումը, դրա համարժեք ընկալումը պետաիրավական ողջ համակարգի կողմից գործուն երաշխիք կհանդիսանան իրավունքի գերակայության երաշխավորման ու կայուն զարգացման համար,

զ) իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիա իրականացնող իրավասու պետական մարմինը, հաշվի առնելով սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՍԳՈ-943 եւ 15.07.2011 թ. ՍԳՈ-984 որոշումները, իրավական ակտի պաշտոնական վերահրատարակում կամ ոչ պաշտոնական հրատարակում իրականացնելիս դրանք հրատարակի համապատասխան նշումով, որ իրավական ակտի տվյալ դրույթի կամ դրույթների վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի մեկնաբանություն՝ նշելով սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ընդունման օրը, ամիսը, ամսաթիվը եւ հերթական համարը: **Խոսքը վերաբերում է սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնցով թեւ իրավական ակտի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրանցում իրավական ակտի դրույթի վերաբերյալ ամրագրվել է իրավակիրառողի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն:**

**II.** Լրջագույն խնդիրներից մեկը Սահմանադրության գերակայության երաշխավորման առնչությամբ պետական տարբեր կառույցների լիազորությունների ոչ արդյունավետ իրացումն է: Սույն հաղորդման մեջ բերված վիճակագրական տվյալներն ավելի քան խոսում են: Մեկ տարվա ընթացքում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքների նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան ներկայացվել է ընդամենը 4 դիմում: Քաղաքացիների կողմից ներկայացվել է այդ բնույթի 287 դիմում: Հավելենք նաեւ, որ սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված անհատական դիմումներից 20 տոկոսի դեպքում օրենքների դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Հետեւությունը միանշանակ է՝ Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անբավա-



րար են իրականացնում Սահմանադրության գերակայության երաշխավորման իրենց պարտականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու նպատակով սահմանադրական դատարան դիմելն իրավական պետությունում ոչ միայն պետք է ընկալվի որպես հայեցողական իրավասություն, այլև՝ որպես սահմանադրական պարտականություն:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ անհրաժեշտ է արմատավորել սահմանադրական մոնիտորինգի այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա շարունակական ու մշտական վերահսկողություն իրականացնել հանրային կյանքում սահմանադրական նորմերի ու սկզբունքների իրացման, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման նկատմամբ: **Սահմանադրականությունը** պետք է դիտարկել ոչ միայն սահմանադրական իրավունքի համատեքստում, **այլ որպես իրավունքի համընդհանուր սկզբունք**: Միայն այս պարագայում է հնարավոր արդյունավետ իրավական երաշխիքներ ստեղծել հանրային կյանքում սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների ձեռախեղումներից խուսափելու համար:

**III.** Սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը վկայում է, որ շարունակվում են այն դեպքերը, երբ դատական մարմինների կողմից խախտվում են մարդկանց՝ հատկապես ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներում ամրագրված իրավունքները: Այս վիճակը հիմնականում պայմանավորված է ոչ թե օրենքների նորմերի սահմանադրականության խնդրով, այլ օրենսդրական բացերով ու իրավական նորմի կիրառման հետ կապված խնդիրներով: Վերջին դեպքը արդյունք է կա՝մ իրավական ակտի մակերեսային, ոչ համակարգված վերլուծության, կա՝մ իրավական նորմի՝ նպատակահարմարության վրա հիմնված մեկնաբանության՝ առանց հաշվի առնելու «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Այդ մասին են վկայում 25.01.2011 թվականի ՍԳ-Ո-933, 04.02.2011 թվականի ՍԳ-Ո-935, 18.10.2011 թվականի ՍԳ-Ո-996, 15.11.2011թ. ՍԳ-Ո-997 որոշումները, որոնք վերաբերում են օրենսդրական բացին, 11.01.2011 թվականի ՍԳ-Ո-932, 22.02.2011թ. ՍԳ-Ո-942, 15.03.2011 թվականի ՍԳ-Ո-945, 12.04.2011 թվականի ՍԳ-Ո-954, 14.06.2011 թվականի ՍԳ-Ո-975 եւ 18.10.2011 թվականի ՍԳ-Ո-996 որոշումները, որոնք վերաբերում են իրավական նորմի կիրառմանը: Այդ մասին են վկայում նաև Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած վճիռները:

Իրավակիրառական պրակտիկայում հաճախ են հանդիպում արտառոց իրավիճակներ: Օրինակ՝ ՀՀ քաղ. դատ. օր-ի 204.34 հոդվածը սահմանում է.

«1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

2. Սույն օրենսգրքի 204.33 հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից»:

Նման հստակ իրավակարգավորման պայմաններում բոլոր այն գործերով, որոնցով ՀՀ սահմանադրական դատարանը տարաժամկետել է իր որոշման հիման վրա հակասահմանադրական ճանաչված դրույթի ուժը կորցրած ճանաչելը, ՀՀ դատարանները քաղաքացիների հիմնական շահերը հանգամանքների հիմքով գործը վերանայելու հնարավորությունից:

**IV. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:**

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»:

Համաձայն Սահմանադրության 93-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»:

Սահմանադրության 94-րդ հոդվածը սահմանում է, որ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով»:

**Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին»** ՀՀ օրենքի /ընդունվել է 01.06.2006թ./ 1-ին հոդվածը սահմանում է.

«1. Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը:

2. Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և **ենթարկվում է միայն Սահմանադրությանը»:**

Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով»:

Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ «**Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան»:**

Իսկ 68-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանադրական դատարանից պահանջում է.

«7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով որոշում ընդունելիս սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

- 1) իրավական ակտի պահանջվող տեսակը.
- 2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
- 3) **մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.**
- 4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը.
- 5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.
- 6) **Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:**

Ներկայացված իրավանորմների համակարգային վերլուծությունը, մասնավորապես, վկայում է, որ.

- իրավական պետության գերագույն առաքելությունն իրավունքի գերակայության երաշխավորումն է,
- սահմանադրական արդարադատությունը կոչված լինելով երաշխավորելու Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը՝ դառնում է իրավունքի գերակայության երաշխավորման առանցքային դերակատար,
- միաժամանակ, առանց մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորման չեն կարող երաշխավորվել Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,
- բացի դրանից, իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում,
- միանշանակ է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական եւ օրենսդրական զարգացումները պետք է ընթանան իրավունքի գերակայության երաշխավորման համակարգային զարգացումների ուղիով, ներդնելով նաեւ անհատական սահմանադրական զանգատի լիարժեք ինստիտուտ, ինչի վերաբերյալ իր հստակ դիրքորոշումն է արտահայտել նաեւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովն այդ հարցի վերաբերյալ՝ իր 85-րդ լիազումար նիստի կողմից հաստատված եզրակացության մեջ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետությունը նաև միջազգային պարտավորություն է ստանձնել երաշխավորելու իրավունքի գերակայությունը: Մասնավորապես, Հայաստանն անդամակցելով Եվրախորհրդին՝ միացավ այս կազմակերպության՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրությանը, որի հոդված 3-ը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի **իրավունքի գերակայության** սկզբունքը եւ այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից»:

**ՀԱՎԵԼՎԱԾ**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ**  
**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**2011թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՔԵՐՏ ՍՈՒՔԻԱՅԱՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝**  
**«ՄԱՆԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ**  
**20-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**11 հունվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Չոհրաբյանի, Գ. Գանիելյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռոբերտ Սուքիասյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռ. Սուքիասյանի՝ 14.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմի 2010 թվականի հուլիսի 1-ի ՍԳԳԿՈ/2-22 որոշմամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի, 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության 1-ին նախադասության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ քաղաքացի Ռ. Սուքիասյանի դիմումը քննության է ընդունվել մասնակի, եւ գործի քննության ընդունումը «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 36-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ պարբերության 1-ին նախադասության մասով մերժվել է՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասի:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մնանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ից: Օրենքն ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ուժը կորցրած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքը:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Մնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը» վերտառությամբ 20-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Մնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վերաքննության կարգով, միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում: Մնացած դեպքերում դատարանի որոշումները վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009թ. ապրիլի 6-ի վճռով «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 17.06.2009թ.: Դատարանի՝ 17.06.2009թ. որոշմամբ նշանակվել է «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009թ. օգոստոսի 6-ի որոշմամբ հաստատվել է պարտատերերի վերջնական ցուցակը: Այդ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների տեսչությունը, որը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2009թ. որոշումը մասնակի՝ նշված որոշմամբ հաստատված 530 պահանջներից 524-ի մասով, եւ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն, որը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2009թ. որոշումը՝ նշված որոշմամբ հաստատված մեկ պահանջի մասով:

Երկու վերաքննիչ բողոքների առկայության պայմաններում ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2009թ. որոշումը չի վիճարկվել 5 պահանջների մասով եւ այդ մասով որոշումը մտել է օրինական ուժի մեջ: Մնանկության գործով կառավարիչը 02.10.2009թ. նշանակել է պարտատերերի առաջին ժողովը, որին իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու թույլտվություն չեն ստացել պարտատերեր Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Մուքիասյանները, նկատի ունենալով, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում բողոքի առկայության պայմաններում նրանց մասով առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ չի մտել:

Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Մուքիասյանները բողոք են ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ պարտատերերի ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Այդ որոշմամբ համաձայնություն է տրվել սնանկության հատուկ հաշվում պարտապանի գույքի վաճառքից կամ ակտիվների հա-

վաքազրումից գոյացած միջոցների նկատմամբ սնանկության գծով կառավարչին 4 տոկոս հավելյալ վարձատրություն սահմանելու մասին: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.10.2009թ. թիվ ԿԳ- 1/0001/04/09 որոշմամբ մերժվել է այդ բողոքը: Դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ երկու վերաքննիչ բողոքների արդյունքում «Պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2009թ. որոշումը չի վիճարկվել միայն 5 պահանջների մասով, եւ նշված որոշումը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով 5 պահանջների մասով մտել է օրինական ուժի մեջ, իսկ մնացած 524 պահանջների մասով, որոնք ներառում են նաեւ Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Սուքիասյանների պահանջները, որոշումն օրինական ուժի մեջ չի մտել, քանի որ նշված որոշումը 524 պահանջների մասով վիճարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Հետեւաբար՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի ուժով սնանկության գործով կառավարիչը պարտատերերի առաջին ժողովի անցկացման վայրի եւ ժամանակի մասին ծանուցել է 5 պարտատերերին եւ պարտապահին:

Սարիբեկ, Ռոբերտ եւ Էդուարդ Սուքիասյանները ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.10.2009թ. թիվ ԿԳ- 1/0001/04/09 որոշման դեմ բերել են վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2009թ. թիվ ԿԳ- 1/0001/04/09 որոշմամբ վերադարձվել է: Դատարանը, հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերին, գտել է, որ օրենսդիրը սնանկության գործով կայացված որոշումները վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն է նախատեսել միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, իսկ սնանկության գործով պարտատերերի ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չի նախատեսել:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 17.02.2010թ. թիվ ԿԳ-1/0001/04/09 որոշմամբ վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, վերադարձրել է նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը: Վճռաբեկ դատարանը նաեւ փաստել է, որ «...հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա»: Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտել է, որ «...վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձանց հիմնավորումը հերքվում է վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով»:

3. Դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով առանց արդար դատաքննություն ապահովելու վեճն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկում չի նախատեսում: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ պարտատերերի ժողովի որոշումների բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վեճն ըստ էության լուծող դատական ակտ, որը, ըստ դիմողի, պետք է ենթակա լինի վերաքննության կարգով բողոքարկման: Այլապես, ըստ դիմողի, սահմանափակվում է դատարանի մատչելիության իրավունքը, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Դիմողը գտնում է, որ, մի կողմից, օրենսդիրը սահմանել է կառավարչի գործողու-

թյունների եւ ժողովի որոշումների բողոքարկման հնարավորություն, մյուս կողմից՝ չար- դարացված տրամաբանությամբ սահմանափակել է սնանկության գործով դատարանի կողմից վեճի առարկա հարցի առթիվ կայացված որոշումների բողոքարկումը եւ դրանց նկատմամբ վերադաս դատարանի վերահսկողությունը:

Վկայակոչելով նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերը, դիմողը շեշտում է, որ դատական մատչելիության իրավունքի սահմանա- փակումը չի կարող արդարացվել միայն այն պատճառաբանությամբ, որ այն կատար- վում է օրենքի հիման վրա:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրու- քյանը հակասելու հանգամանքը դիմողը փաստարկում է նաեւ նրանով, որ «...մեկ առ- յանի կարգով պարտատերերը (այդ թվում՝ Դիմողը) հնարավորություն չեն ունեցել նույնիսկ մասնակցելու դատական նիստին եւ ներկայացնելու իրենց փաստարկները, առարկելու հակառակորդ կողմի փաստարկների դեմ, այլ կերպ ասած չի ապահովված արդարացի լուծման իրավունքը...»:

Դիմողը նույնպես ընդունում է, որ «...սնանկության գործերով ոչ բոլոր դատական ակտերն են ենթակա բողոքարկման վերադատության կարգով»: Սակայն գտնում է, որ դա չի վերաբերում սնանկության գործով կառավարչի կողմից պարտապանների տվ- յալ կոնկրետ ժողովի հրավիրման հետ կապված վեճին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը մեջբերում է որոշ օտարերկրյա պետությունների՝ սնանկության վերաբերյալ իրավա- կան ակտերի համապատասխան դրույթները եւ նշում, որ սնանկության վարույթի ընթացքում ընդունվող որոշումների բողոքարկման այդպիսի համակարգի առկայությու- նը բնորոշ է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաեւ օտարերկրյա մի շարք պետությունների սնանկության ընթացակարգերին:

Հղում կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006թ. եւ 14.04.2008թ. որոշում- ներին՝ պատասխանողը գտնում է, որ պարտատերերի ժողովի որոշումն անվավեր ճա- նաչելու պահանջը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը չի հանդիսանում վեճն ըստ էության լուծող դատական ակտ:

Հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007թ. ՍԴ-Ո-719, 28.09.2010թ. ՍԴ-Ո-918, 02.11.2010թ. ՍԴ-Ո-922 որոշումներում արտահայտված իրավա- կան դիրքորոշումներին՝ պատասխանողը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պար- տապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո սնանկության գործընթացը շարունակվում է «դատական խիստ հսկողության ներքո», գտնում է, որ այդ ընթացքում բացառվում է դատարանի կայացրած բոլոր որոշումների անմիջական բողոքարկումը, սակայն հնարավորություն է ընձեռվում դրանք բողոքար- կել գործն ըստ էության լուծող դատական ակտերի շրջանակներում: Ըստ պատասխա- նողի՝ սնանկության վարույթի ընթացքում կայացված բոլոր ակտերի եռատյան բողոքարկման հնարավորության նախատեսումը կկազմալուծի սնանկության վարույ- թի ողջ ընթացքը, այն կդադարի լինել պարտապանի, առավել եւս՝ պարտատերերի իրա- վունքների իրավական պաշտպանության մեխանիզմ՝ դրանով իսկ վերջիններիս զրկելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրաց- ման հնարավորությունից:



5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը պայմանավորում է սնանկության գործով կայացվող դատական ակտերի բնույթի եւ տեսակների վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայում առկա մեկնաբանությամբ, ինչպես նաեւ սնանկության գործով կայացվող դատական ակտերի բողոքարկման կարգով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարելի է «Սնանկության մասին» ՀՀ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, ինչպես նաեւ կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը: Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում կարելի է նաեւ այն հարցի պարզաբանումը, թե որ իրավական ակտով կամ ակտերով սահմանված կանոններն են ենթակա կիրառման սնանկության գործերով դատավարական կարգի նկատմամբ:

6. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Սնանկության գործերի քննության կարգը» վերտառությամբ 1-ին հոդվածը սահմանում է.

«1. Սնանկության գործերի քննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով եւ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ի մասի երկրորդ պարբերության համաձայն. «Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի եւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ սնանկության գործի քննության ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

7. Անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության պարզաբանմանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված հասկացությունը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, եւ ներառում է այն բոլոր վեճերի լուծմանն ուղղված դատական վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետեւանքներին: Այլ կերպ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված դատական գործը, որպես սնանկության գործ, ի տարբերություն այլ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործերի, չի ավարտվում տվյալ վարույթով կայացված դատական ակտով եւ կարող է բաղկացած լինել մի քանի առանձին վարույթներից, որոնք, սակայն, չեն հանդիսանում առանձին գործեր, այլ ներառվում են տվյալ իրավասուբյեկտի սնանկության վերաբերյալ միասնական դատական գործում:

Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում, մասնավորապես.

ա/ այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը նախատեսել է ոչ միայն պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճռի կայացում, այլ նաև սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացում (մասնավորապես՝ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետ, 59-րդ հոդվածի 1-ին մաս, 69-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետ, 74-րդ հոդվածի 7-րդ մաս, 87-րդ հոդվածի 5-րդ մաս, 90-րդ հոդվածի 5-րդ մաս, 105-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է սնանկության գործն **ավարտելու** տարբեր հիմքեր եւ, հետեւաբար, սնանկության գործն ավարտելու մասին՝ իրենց բնույթով տարբեր վճիռներ: Մասնավորապես՝ ֆիզիկական անձի սնանկության գործը **պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու** մասին վճիռ (օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մաս, 97-րդ հոդվածի 1-ին պարբերություն), **ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու** եւ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ (օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետ), **լուծարման վարույթը դադարեցնելու** եւ պարտապանի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ (օրենքի 74-րդ հոդվածի 7-րդ մաս), **պարտապանի լուծարման հետեւանքով** սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ (օրենքի 87-րդ հոդվածի 5-րդ մաս): **Այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարմամբ ավարտվում է միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթը, այլ ոչ թե ողջ սնանկության գործը,**

բ/ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու եւ դիմումը մերժելու հետեւանքները» վերտառությամբ 19-րդ հոդվածով, որպես պարտապանին սնանկ ճանաչելու հետեւանք, մասնավորապես, նախատեսվում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը նշանակում է սնանկության գործով կառավարիչ, նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը եւ վայրը, արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի եւ դրամական միջոցների վրա, կարճում է նույն պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով այլ դիմումներով դատարանի վարույթում առկա գործերի վարույթը, կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ: Այս իրողությունը հաշվի առնելով՝ օրենսդիրը չի բացառում, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կարող են ծագել քաղաքացիաիրավական վեճեր՝ կապված սնանկության գործով կառավարչի գործողությունների, պարտատերերի ժողովի որոշումների հետ, կամ պարտապանի գույքի վրա արգելանք դնելու, պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց լիազորությունների կասեցման իրավական հետեւանքների հետ: Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված վեճերի լուծման վերաբերյալ վարույթները կարող են հարուցվել մինչեւ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճռի կայացումը՝ օրենսդիրը նշված վարույթները դիտարկել է որպես միեւնույն սնանկության գործում ներառվող առանձին վարույթներ, այլ ոչ թե առանձին գործեր:

Ընդ որում, հաշվի առնելով վերը նշված՝ սնանկության գործի քաղաքատարր հանդիսացող առանձին վարույթների բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ օրենսդիրը նշված վարույթներից առանձնացրել է **երկուսը**, եւ միայն այդ վարույթներով կայացված դատական ակ-

տերն է դիտարկել որպես վեճն ըստ էության լուծող դատական ակտեր: Խոսքը վերաբերում է **պարտապահին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին**, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապահին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ (օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետ), եւ **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին**:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապահին սնանկ ճանաչելու եւ սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին: **Մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապահին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետեւանքները**, որոնք կարող են ծագել պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո **մինչեւ սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացումը**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովի որոշումների բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վեճն ըստ էության լուծող դատական ակտ:

8. Ինչ վերաբերում է սնանկության գործի ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանը, ապա օրենսդիրը, դարձյալ ելնելով սնանկության գործի մաս կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն:

Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողի փաստարկներն առնչվում են ոչ միայն ժողովի որոշումների, այլ նաեւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ նշված վարույթներով կայացված դատական ակտերը, համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ ենթակա չեն բողոքարկման, նշված դատական ակտերի վերջնական լինելու հանգամանքի գնահատման նպատակով սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել, մասնավորապես, ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը:

Միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում: 2007թ. նոյեմբերի 28-ին «Քաղաքացի Արտակ Չեյնայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» կայացված ՄԴՌ-719 որոշման 4-րդ կետում դատարանը նշել է. «...օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են **կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը**, ...: Օրենսդրի կողմից առանձին դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացառումը բխում է դատավարությունն ան-

հարկի ձգձգումներից զերծ պահելու անհրաժեշտությունից, քանի որ դատարաններում քաղաքացիական դատավարության կարգով գործերի քննության համար օրենքը սահմանում է հստակ ժամկետներ: Փաստորեն, օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դատական ակտի կապակցությամբ, առաջնորդվելով արդարադատության շահերից բխող որոշակի նպատակներով եւ խնդիրներով, սահմանում է այս կամ այն դատական ակտի բողոքարկելիությունը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԳՈ-719 որոշման 4-րդ կետում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումն ամբողջությամբ կիրառելի է սույն գործով վիճարկվող իրավանորմերի առնչությամբ:

9. Արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի տեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիտարկել սնանկության վարույթին վերաբերող դատավարական այլ երաշխիքների համատեքստում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների եւ շահերի համակողմանի եւ հավասարակշռված պաշտպանությանը:

Այս առումով, սահմանադրական դատարանի 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԳՈ-719 որոշման լույսի ներքո գնահատելով պարտատերերի ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտատերերի ժողովի որոշումների եւ սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող որոշումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում սնանկության գործի քննության հնարավորությունը, չեն խոչընդոտում դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, հետեւաբար, ապահովում են նաեւ սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների եւ շահերի համակողմանի եւ հավասարակշռված պաշտպանությունը:

Ինքնանպատակ չէ այն, որ օրենսդիրը սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող մի շարք միջանկյալ դատական ակտեր, ի տարբերություն մյուսների, համարում է բողոքարկելի դատական ակտեր: Դրանք իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապահին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու (օրենքի 14-րդ հոդված), դիմումը վերադարձնելու (օրենքի 15-րդ հոդված), պարտապահի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու (օրենքի 19-րդ հոդված), պահանջների վերջնական ցուցակը հաստատելու (օրենքի 20-րդ հոդված), պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը եւ ապահովվածությունը որոշելու (օրենքի 46-րդ հոդված), սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու (օրենքի 50-րդ հոդված), պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին (օրենքի 85-րդ հոդված) որոշումները:

Այսպիսի իրավակարգավորման պարագայում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ մոտեցում է ցուցաբերված օրենսդրի կողմից, երբ բողոքարկելի են համարվում սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը, քանի որ հակառակ մոտեցու-

մը, երբ սկզբունքորեն բողոքարկելի կարող են դիտարկվել սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող առանց բացառության բոլոր միջանկյալ դատական ակտերը, այդ թվում՝ նաև ժողովի որոշումները եւ կառավարչի գործողությունները վիճարկելու վարույթով կայացված որոշումները, կարող է վտանգել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը՝ զերծ պահելով այն անհարկի ձգձգումներից:

Այն հանգամանքը, որ քաղաքացիական վեճերի լուծման ժամանակ, երբ առկա է նաև ժամանակի գործոնի ազդեցությունը, միջանկյալ ակտերով վերաքննություն չնախատեսելն ինքնին չի նշանակում, որ հնարավոր չէ ապահովել արդյունավետ դատավարություն միայն դատական մեկ ատյանում գործի քննության պայմաններում: Տվյալ կոնկրետ դեպքում կողմի իրավունքների դատական պաշտպանության խնդիրը կարող է վերաքննության առարկա դառնալ նաև **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց:**

1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**11 հունվարի 2011 թվականի  
ՍԳ-Ո-932**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԸ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 427-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ, 429-ՐԴ ԵՎ 430-ՐԴ  
ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**25 հունվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Տ. Սաֆարյանի, Ա. Ճուղուրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կարեն Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ մասի, 429-րդ եւ 430-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Կ. Հարությունյանի՝ 11.08.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի վիճարկվող դրույթները եւ հոդվածները գետեղված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական որոշումների կատարումը» վերտառու-թյամբ 12-րդ բաժնի նույնանուն 49-րդ գլխում:

Օրենսգրքի 427-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում սահմանված է. «...2. Օրինա-կան ուժի մեջ մտած դատական որոշումը կատարման է հանձնվում որոշումը կայաց-րած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո»:

Օրենսգրքի 429-րդ եւ 430-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են դատական որոշումն ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքները եւ դա-տական որոշման վերաբերյալ կասկածների ու անհատակությունների լուծման կարգը:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատ-յանի դատարանը 2007թ. օգոստոսի 7-ին կայացրած դատավճռով դիմողին դատապար-տել է երեք տարի ազատազրկման, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել, եւ նշանակվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

Վերոհիշյալ դատավճռի դեմ մեղադրողը ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վե-րաքննիչ քրեական դատարանն իր՝ 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իսկ վերաքննիչ բողո-քը՝ առանց բավարարման:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ դատավճռի դեմ մեղադրող կողմը ներ-կայացրել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ բեկանվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007թ. սեպտեմբերի 28-ի դատավճի-ռը եւ գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության, այն հիմնավոր-մամբ, որ ազատազրկման ձեռով պատիժը պայմանականորեն չկիրառելն անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում դատապարտյալի կա-տարած հանցագործության ծանրությանը եւ դատապարտյալի անձին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գործի նոր քննության արդյունքում իր՝ 2008թ. ապրիլի 25-ի որոշմամբ դարձյալ օրինական ուժի մեջ է թողել Երեւան քաղաքի Արաբ-կիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստո-սի 7-ին կայացրած դատավճիռը: Որոշումն ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

Դիմողի վերաբերյալ քրեական գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանից Երե-ւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է 2008թ. մայիսի 15-ին:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլ-ընտրանքային պատիժների կատարման բաժնի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն բա-ժանումներում դիմողի նկատմամբ կայացված դատավճիռն ստացվել է 2008 թվականի հունիսի 24-ին, եւ հիմք ընդունելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 131-րդ հոդվա-ծի 1-ին մասը, համաձայն որի. «Փորձաշրջանը հաշվարկվում է դատապարտյալին ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումում, իսկ զինձառայողին՝ նրա գորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերց-նելու պահից», փորձաշրջանն սկսվել է հաշվարկվել այդ օրվանից:

Հետագայում, գտնվելով փորձաշրջանի մեջ, դիմողը կատարել է մեկ այլ հանցա-գործություն, ինչի համար Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հունիսի 23-ի դատավճռով դատա-պարտվել է ազատազրկման երեք տարի ժամկետով, նախկին դատավճռով նշանակ-

ված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է, եւ նախկին դատավճռով նշանակված եւ չկրած պատժից երկու տարի ժամկետով ազատագրվումը գումարվել է վերջին դատավճռով նշանակված պատժին: Արդյունքում՝ դիմողի նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատագրվում հինգ տարի ժամկետով:

Այնուհետեւ դիմողը միջնորդություն է ներկայացրել Երեսան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով դատարանի կողմից սահմանված փորձաշրջանի ժամկետը հաշվարկել իր նկատմամբ կայացված առաջին դատական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Միջնորդության հիմքում դիմողի կողմից դրվել է այն փաստը, որ իր նկատմամբ կայացված առաջին դատական ակտը չկատարելու արդյունքում փորձաշրջանի հաշվարկն սկսվել է շուրջ ինն ամիս ուշացումով: Միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավճռի ի կատար ածման փուլում կասկածներ կամ անհստակություններ չկան:

3. Դիմողը որպես օրենսգրքի վիճարկվող 427-րդ հոդվածի երկրորդ մասի հակասահմանադրականության հիմնական փաստարկ ներկայացնում է այն, որ հիշյալ դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով որ այն չի նախատեսում դատական որոշումները կատարման ուղարկելու հստակ ընթացակարգ:

Օրենսգրքի 429-րդ եւ 430-րդ հոդվածների առնչությամբ դիմողը գտնում է, որ նշված հոդվածներում առկա է օրենսդրական բաց, որը հնարավորություն չի տալիս դատապարտյալին գործը վերադաս դատական ատյանից չվերադարձվելու կամ ուշ վերադարձվելու եւ որպես հետեւանք՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի կատար չածվելու կամ ուշ ի կատար ածվելու դեպքում «իր համար վրա հասած վատ հետեւանքները վերացնելու» նպատակով օգտվելու դատական պաշտպանությունից:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, նախ գտնում է, որ դիմողի փաստարկներն ուղղված են միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի հակասահմանադրականությունը հիմնավորելուն, ինչը վկայում է այն մասին, որ դիմողն ըստ էության վիճարկում է միայն նշված նորմի սահմանադրականությունը:

Որոշումը կայացրած դատարանը վերադաս դատական ատյանների կայացրած որոշումների մասին իրազեկվում է միայն համապատասխան դատական ակտը եւ գործը տվյալ դատարան ուղարկելու միջոցով: Բացի դրանից, դատական որոշումների կատարման ընթացքում երբեմն առաջանում են իրավական բնույթի հարցեր, առանց որոնց լուծման հնարավոր չէ ապահովել դատական որոշումների ի կատար ածումը: Այդ հարցերը քննվում եւ լուծվում են միայն դատարանի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Ըստ պատասխանողի՝ դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ օրենսդիրն օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը կատարման հանձնելը պայմանավորել է վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործն ստանալու հանգամանքով:

Ըստ պատասխանողի՝ օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը համապատասխանում է նաեւ իրավական որոշակիության սկզբունքին: Այդ դրույթը սահմանում է դատական որոշումը կատարման հանձնելու, պատժի ժամկետի հաշվարկման կարգը:

Վկայակոչելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 131-րդ հոդվածով սահման-



ված՝ փորձաշրջանի հաշվարկման կարգը, առանձին ենթաօրենսդրական ակտերով սահմանված համապատասխան իրավակարգավորումը՝ պատասխանող գտնում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի հաշվարկման կարգը հստակ է եւ դատապարտյալին հնարավորություն է տալիս հստակ կանխորոշելու իր վարքագիծը եւ կանխատեսելու դրա հնարավոր հետեւանքները:

5. Գիտարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ բաժնի 49-րդ գլխի հոդվածները՝ իրավակարգավորման առարկայի ամբողջականության մեջ, դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու, դատարանի որոշումը կատարման հանձնելու, դատական որոշումն ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովման, դատական որոշման վերաբերյալ կասկածների եւ անհստակությունների լուծման, դատական որոշման կատարման հետաձգման հարցերով իրավակարգավորման բաց կամ անհստակություն չունեն:

Միաժամանակ, առկա է հասկացութային որոշ անհստակություն: Մասնավորապես, եթե դատական ակտերի ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերը լուծելիս օրենսդիրն օրենսգրքի նույն 427-րդ հոդվածի 1-ին մասում կիրառում է «դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ», «դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտ», «վերաքննիչ դատարանի եւ վճռաբեկ դատարանի դատական ակտեր» եզրույթները (որոնց մեկնաբանությունն ըստ էության տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում), ապա օրենսգրքի 427-րդ հոդվածի՝ վիճարկվող 2-րդ մասում, կարգավորելով դատական ակտերի ի կատար ածման հետ կապված հարաբերությունները՝ օրենսդիրը կիրառում է «**դատական որոշում**» եզրույթը (այն տեղ է գտել նաեւ օրենսգրքի 52, 54, 289, 428, 429, 430, 431, 437, 499.15-րդ հոդվածներում):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի վերնագրում նախկինում տեղ է գտել «դատարանի որոշման» բառակապակցությունը, որը հետագայում՝ 28.11.2007թ. ՀՕ-270-Ն օրենքով փոխարինվել է «դատական ակտերի» բառակապակցությամբ, նույնն էլ վերաբերում է նույն օրենքի հիման վրա վերոհիշյալ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխությանը, որտեղ նույնպես «դատարանի որոշում» բառակապակցությունը փոխարինվել է «դատական ակտեր» բառակապակցությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 9) ենթակետում սահմանվում է «**որոշում**» եզրույթը՝ «որոշում՝ քրեական գործով դատարանի որոշումները, բացի դատավճռից, ինչպես նաեւ մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումները», իսկ 7) ենթակետում տրվում է «**դատավարական որոշումներ**» եզրույթի սահմանումը, այն է՝ «դատավարական որոշումներ՝ քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունվող՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ՝ դատավճիռներ, որոշումներ»: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում «դատական որոշում» եզրույթի որեւէ մեկնաբանություն առկա չէ, որը հանգեցնում է հասկացութային անհստակության:

Սահմանադրական դատարանը միեւնույն ժամանակ արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած «դատական որոշում» եզրույթը մեկնաբանվում է որ-

պես օրինական ուժի մեջ մտած եւ կիրառման ենթակա ցանկացած դատական ակտ, ինչը բխում է օրենսդրության տրամաբանությունից: Այսինքն՝ օրենսգրքի վերոհիշյալ դրույթներում տեղ գտած՝ վերը նշված հասկացություններն իրավակիրառական պրակտիկայում առկա մեկնաբանության շրջանակներում չեն առաջացնում իրավական անորոշություն եւ դրա արդյունքում՝ անձանց սահմանադրական իրավունքների խախտման վտանգ:

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաեւ, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ գործը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանից առաջին ատյանի դատարան ուղարկելու առանձին ընթացակարգ: Դա վերաբերում է նաեւ հիշյալ դատարաններից գործն առաջին ատյանի դատարան ուղարկելու հստակ ժամկետներին, որով անմիջականորեն պայմանավորված են մի շարք պատժամիջոցների հաշվարկման ժամկետները: Սակայն հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման նպատակն ու առարկան՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված բացը պայմանավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի առկա ձեւակերպմամբ:

Իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864 եւ ՍԴՈ-914 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»: Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի բացի վերաբերյալ ՍԴՈ-864 եւ ՍԴՈ-914 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաեւ սույն գործի շրջանակներում:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 429-րդ հոդվածի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ հոդվածի առանձին դրույթներ, մասնավորապես, 429-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 3-րդ պարբերությունները, 4-րդ մասի երկրորդ նախադասությունը դիմողի նկատմամբ չեն կիրառվել:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդվածի մյուս դրույթներին եւ 430-րդ հոդվածին, ապա դրանց առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ հաշվի չի առնված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ

իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ:

Նշված պահանջը չկատարելու պարագայում՝ սահմանադրական դատարանը հաշվի առնելով 17.03.2009թ. ՍԳ-ԱՌ-21 որոշման մեջ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեեւ դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար», գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ եւ 430-րդ հոդվածների առնչությամբ դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի պահանջների հիման վրա՝ գործի վարույթը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ եւ 430-րդ հոդվածների մասով, կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 հունվարի 2011 թվականի  
ՍԳ-Ո-933**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 309.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

4 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Վ. Շահինյանի,

պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 27.09.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, վիճարկվող նորմը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները» վերտառությամբ 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղազարկում է»:

Սույն գործով վիճարկվող նորմը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ներառվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-270-Ն օրենքով:

2. Գործի փաստական հանգամանքները հանգում են հետևյալին.

Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 01.10.2009թ. դատավճռով իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով գուգորդված խուլիգանություն կատարելու եւ իշխանության ներկայացուցչի նկատմամբ ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու համար Սամվել Սերյոժայի Կավեյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով ու դատապարտել է ազատազրկման 1 տարի ժամկետով: Նրա նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել:

Երեւան քաղաքի դատախազի կողմից նշված դատավճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք՝ Սամվել Կավեյանին մեղազարկող արարքի նկարագրության եւ դրա իրավաբանական որակման անհամապատասխանության մասով: Նշված բողոքը բավարարվել է, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 05.11.2009թ. որոշմամբ Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 01.10.2009թ. դատավճիռը բեկանվել է եւ գործն ուղարկվել է Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության նոր քննության:

05.02.2010թ. քրեական գործն ընդունվել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթ եւ նշանակվել դատական քննության: 10.03.2010թ. դատարանը, քննարկելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու նպատակով քրեական գործի քննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով հետաձգելու մասին մեղադրողի միջնորդությունը, որոշում է կայացրել այն բավարարելու մասին: 15.03.2010թ. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երեւան քաղաքի քննչական վարչությանը հանձնարարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով կատարել մի շարք քննչական եւ դատավարական գործողություններ:

10.05.2010թ. մեղադրողի կողմից որոշում է կայացվել Սամվել Կավեյանին նախկինում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով առաջադրված մեղադրանքը փոփոխելու եւ նրան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով նոր մեղադրանք առաջադրելու մասին: Նույն օրը կայացած դատական նիստի ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նշված որոշումը՝ ձեռք բերված նյութերի հետ ներկայացվել է դատարանին, որից հետո դատարանի որոշմամբ ամբաստանյալին եւ նրա պաշտպանին նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է տրամադրվել եւ գործի դատական քննությունը հետաձգվել է:

23.06.2010թ. կայացած դատական նիստի ընթացքում մեղադրողի կողմից հրապարակվել է Սամվել Կավեյանին առաջադրված նոր մեղադրանքը, այնուհետև նոր մեղադրանքի կապակցությամբ կողմերի դիրքորոշումը ճշտելուց հետո, նախագահողը հայտարարել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2009թ. որոշման համաձայն՝ դատարանում մեղադրանքը փոփոխելիս մեղադրողի կողմից պետք է կայացվի ինչպես մեղադրանքը փոփոխելու մասին որոշում, **այնպես էլ կազմվի նոր մեղադրական եզրակացություն:** Հիմնվելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված որոշման մեջ արտահայտված դիրքորոշման վրա՝ ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել գործի դատական քննությունը հետաձգելու մասին՝ մեղադրողին ժամանակ տրամադրելով «նոր մեղադրական եզրակացություն» կազմելու համար: Մեղադրողը, համարելով, որ նոր մեղադրական եզրակացության կազմումն իր իրավասության մեջ չի մտնում, բավարարվել է միայն մեղադրանքը փոխելու մասին որոշման ընդունմամբ:

3. Դիմող կողմը վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ ներկայացրել է հետևյալ հիմնավորումները.

ըստ դիմող կողմի՝ ստեղծված իրավիճակում առաջ եկած խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ ստորադաս դատարանները, հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, դատարանում մեղադրանքը փոփոխելիս մեղադրողներից պահանջում են կազմել նոր մեղադրական եզրակացություն, իսկ եթե մեղադրողը բավարարվում է միայն մեղադրանքը փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելով եւ չի կազմում նոր մեղադրական եզրակացություն, ապա այս դեպքում դատարանները գտնում են, որ մեղադրողը խախտել է մեղադրանքը փոփոխելու դատավարական կարգը եւ փոփոխված մեղադրանքը դիտում են որպես առոչինչ:

Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2009թ. որոշմամբ արտահայտված մեկնաբանությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կիրառումը հակասում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին եւ սահմանադրական արդարադատության հարցերով բարձրագույն դատական ատյանի՝ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2010թ. ՍԴՈ-872 որոշմանը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով եւ դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով, իսկ այլ օրենքներում պարունակվող քրեադատավարական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Դատարանում մեղադրանքի փոփոխման կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով, որի 2-րդ մասի համաձայն առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ մեղադրողի միջնորդությամբ դատարանը հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական եւ դատավարական այլ գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար: Նույն մասի 2-րդ պարբերության համաձայն՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու

լու եւ նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ մեկտեղ ներկայացնում է դատարան:

Դիմող կողմի փաստարկների համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ որեւէ իրավական նորմ, որը դատարանում մեղադրանքի պաշտպանություն իրականացնող դատախազին լիազորի գործով կազմել նոր մեղադրական եզրակացություն, ավելին՝ օրենսգրքի որեւէ հոդվածում նախատեսված չէ «նոր մեղադրական եզրակացություն» հասկացությունը, սահմանված չեն այդ փաստաթղթի կառուցվածքն ու բովանդակությունը, այն կազմող եւ հաստատող պաշտոնատար անձանց, փաստաթուղթը կազմելուն նախորդող եւ հաջորդող դատավարական գործողությունների շրջանակը եւ այլն: Ինչ վերաբերում է գործող քրեադատավարական օրենսդրությանը հայտնի միակ մեղադրական եզրակացությանը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն այն նախաքննության՝ որպէս քրեական դատավարության ինքնուրույն փուլի ավարտման ձեւերից մեկն է եւ, որպէս մինչդատական վարույթին բնորոշ դատավարական փաստաթուղթ, չի կարող կիրառվել արդեն դատաքննության փուլում: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 29-րդ կետի եւ 270-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն մեղադրական եզրակացության կազմումը քննիչի, այլ ոչ թե դատախազի լիազորությունն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-54-րդ հոդվածների համաձայն դատախազը լիազորված չէ կազմել մեղադրական եզրակացություն:

Ըստ դիմող կողմի՝ գործող օրենսդրության պայմաններում մեղադրանքի փոփոխման դեպքում «նոր մեղադրական եզրակացություն» կազմելու պարտականություն սահմանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով կատարվող քննչական եւ դատավարական այլ գործողությունների կատարումը, ըստ էության, նույնացվում է նախաքննության հետ, ինչը հակասում է ոչ միայն գործող քրեադատավարական օրենսդրությանը, այլեւ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2010թ. որոշմանը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, եւ որում խոսք չի եղել լրացուցիչ երաշխիքների անհրաժեշտության մասին:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով: ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2009թ. որոշմամբ սահմանվել է պարտադիր կատարման ենթակա կանոն, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կիրառման հակասահմանադրական պրակտիկա է ձեւավորվել: Դատարանների համար պարտադիր կատարման ենթակա այդպիսի պահանջը հակասում է ՀՀ Սահմանադրության 5-րդ եւ 103-րդ հոդվածների պահանջներին:

Ընդհանրացնելով, դիմող կողմը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, մեղադրանքի պաշտպանություն իրականացնող դատախազի համար սահմանելով ՀՀ քրեական դատավարական օրենսդրությամբ չնախատեսված պարտականություն, դուրս է եկել օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական լիազորության շրջանակներից, խախտել է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 6-րդ մասը, որի համաձայն քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական

պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը եւ պայմանները սահմանվում են բացառապես օրենքներով, միաժամանակ խախտել է իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սահմանադրաիրավական սկզբունքը եւ իրականացրել է ՀՀ պետական իշխանության օրենսդիր միակ մարմնի՝ Ազգային ժողովի հիմնական գործառույթը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի հիմքով գործով վարույթը ենթակա է կարճման, քանի որ «գործը, որի շրջանակներում դիմումատուն դիմել է սահմանադրական դատարան գտնվում է ոչ թե դատախազի, այլ Ավան եւ Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում», այն դեպքում, երբ ՀՀ գլխավոր դատախազը սահմանադրական դատարան կարող է դիմել բացառապես իր վարույթում գտնվող քրեական գործով:

5. ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան, գտնում է, որ ստեղծված իրավիճակը դասական առումով պետական իշխանության մարմինների միջեւ սահմանադրական լիազորությունների շուրջ ծագած վեճ է, որը, որպես կանոն, պետք է լուծվի բացառապես սահմանադրական դատարանների կողմից՝ վերջիններիս Սահմանադրությամբ նախատեսված համարժեք լիազորության առկայության պարագայում: ՀՀ սահմանադրական դատարանը նման լիազորությամբ օժտված չէ, ինչը նաեւ խոչընդոտում է Սահմանադրության գերակայության լիարժեք երաշխավորումը: ՀՀ սահմանադրական դատարանն այս հիմնախնդրին անդրադարձել է նաեւ իր տարեկան հաղորդումներում:

Ելնելով հիմնախնդրի կարեւորությունից ու արդարադատության արդյունավետության երաշխավորման անհրաժեշտությունից, նկատի ունենալով, որ վեճի առարկայի շրջանակներում հակադիր մոտեցումները հիմնավորելիս վկայակոչվում են ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաեւ հաշվի առնելով հիշյալ գործի քննության կոնկրետ առանձնահատկությունները եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ ՀՀ սահմանադրական դատարանը կարեւոր է համարում իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում անդրադառնալ սույն վեճի առարկային՝ թե՛ ըստ ձեւի եւ թե՛ ըստ բովանդակության վերահսկողության շրջանակներում:

6. ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» արտահայտության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեադատավարական առումով ՀՀ օրենսդրությունը չի հստակեցրել «ՀՀ գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» հասկացությունը: Վերջին երեք տարվա օրենսդրական փոփոխություններն այս հարցում վիճակն ավելի են խճճել: Գործնականում, թե՛ հետաքննության փուլում, թե՛ նախաքննության փուլում գործի վարույթն իրականացնում են հետաքննության ու նախաքննության մարմինները, դատական փուլում՝ դատարանը: Ոստի «գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» սահմանադրական դրույթը չի կարող մեկնաբանվել ճյուղային-իրավական մեթոդաբանության կիրառման հիման վրա: Անհրաժեշտ է այն մեկնաբանել դրա սահմանադրական նշանակությանը



համապատասխան՝ ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **կոնկրետ դատական սահմանադրական վերահսկողության ձևի կիրառման շրջանակներում** ՀՀ Սահմանադրությունը ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ ճանաչելով ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին հերթին հաշվի է առել Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը»: Ուստի սահմանադրաիրավական առումով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը համարժեք է «ՀՀ դատախազության վարույթ» հասկացությանը:

Պարզաբանման անհրաժեշտություն ունի նաև «**իր վարույթ**» հասկացությունը: Գործող օրենսդրության համաձայն մինչդատական վարույթն իրականացնում են հետաքննության եւ նախաքննության մարմինները, իսկ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ: Դատական քննության փուլում վարույթն իրականացնում է դատարանը, իսկ դատախազությունը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքի հիման վրա դատախազն այլևս նախաքննություն իրականացնելու իրավասություն չունի, ուստի այս իմաստով չի կարող որևէ գործ իր վարույթ ընդունել կամ իրականացնել: Եթե ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունն ընկալվի գուտ դրա քրեադատավարական իմաստով, ապա կստացվի, որ ՀՀ գլխավոր դատախազի այս լիազորության իրականացումը դառնում է անհնարին, քանի որ այդ լիազորության իրականացման համար ՀՀ գլխավոր դատախազը տվյալ գործը պետք է ընդունի իր վարույթ եւ հանդես գա որպես վարույթն իրականացնող մարմին, որի իրավասությունը չունի: Համանման իրավակարգավորում է պահպանվել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածում (2006թ. հունիսի 1-ի խմբագրությամբ):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել այդ հասկացության սահմանադրաիրավական նշանակությունը՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում նախատեսված ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունից: «**Իր վարույթ**» **հասկացության առավել լայն մեկնաբանությունը ենթադրում է, որ վերջինս վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տվյալ փուլում այդ գործով վերջնական իրավական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված է հենց այդ մարմինը:** ՀՀ Սահմանադրությունը ՀՀ գլխավոր դատախազին ճանաչելով որպես կոնկրետ վերահսկողության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ՝ սահմանադրաիրավական իմաստով «կոնկրետ գործը» դիտարկում է դատախազության լիազորությունների իրականացում բոլոր այն դեպքերում, **երբ այդ մարմինն իր սահմանադրական գործառույթների շրջանակներում իրավասու է կայացնելու վերջնական որոշում:**

Վերահաստատելով ՍԳ-Ո-844 որոշմամբ ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի ու լիազորությունների վերաբերյալ արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ

**Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը վերաբերում է ՀՀ դատախազության՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված բոլոր գործառույթների իրականացմանը:** Այդ գործառույթներից յուրաքանչյուրն իրականացնելիս, եթե ի հայտ է եկել դատախազության պաշտոնատար անձի կողմից կոնկրետ գործով իր իրավասության շրջանակներում կայացվելիք որոշման հիմքում դրվող նորմատիվ ակտի դրույթի սահմանադրականության գնահատման հարց եւ այդ հարցի բարձրացումը չի խոչընդոտում պետական իշխանության այլ մարմնի լիազորությունների բնականոն իրացմանը, ապա այդ հարցով ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է դիմել ՀՀ սահմանադրական դատարան: Այլապես, ՀՀ գլխավոր դատախազը կզրկվի սահմանադրական դատարան դիմելու իր սահմանադրական լիազորությունն իրականացնելու հնարավորությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ընդհանուր տրամաբանության շրջանակներում, առաջին հերթին վերաբերում է մինչդատական վարույթի փուլին, քանի որ այս փուլում իրականացվող գործողությունների օրինականության ապահովումն ամբողջությամբ ՀՀ դատախազության սահմանադրական պարտականությունն է:

Դատական քննության փուլում մեղադրանքը պաշտպանելու՝ դատախազության սահմանադրական գործառույթն իրականացվում է արդարադատության ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ մրցակցության սկզբունքի շրջանակներում, եւ վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ օժտված է դատարանը: Ուստի այս փուլում կոնկրետ գործը գտնվում է դատարանի վարույթում, եւ վերջինս է ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ: Այս ընդհանուր կանոնից կարող են առանձնացվել միայն այն դեպքերը, երբ դատախազը գործի դատական քննության փուլում ինքնուրույն որոշում կայացնելու իրավասությամբ է օժտված: Դա կարող է լինել, օրինակ, մեղադրանքից հրաժարվելիս կամ մեղադրանքը փոխելիս: Օրենսդրորեն այս հանգամանքը հաշվի առնելը հնարավորություն կտա առավել արդյունավետ ու ամբողջական իրականացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածում սահմանադրական արդարադատության բնագավառում ՀՀ գլխավոր դատախազի իրավասությունների խնդրին հետեւողական եւ համակարգային լուծում չի տրված: Հիմնախնդիրն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման անհրաժեշտություն ունի: Համապատասխան օրենսդրական կարգավորումները պետք է հաշվի առնեն, որ ընդհանուր իրավասության դատարանում գտնվող կոնկրետ գործով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունը կանոնակարգելով հանդերձ, այն պետք է սահմանափակվի երկու պայմանով. 1) դատարանի վարույթում գտնվող գործով ՀՀ գլխավոր դատախազը կարող է դիմել ՀՀ սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ վիճարկվող նորմն ուղղակիորեն առնչվում է դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության շրջանակներում իր իսկ սահմանադրական գործառույթի իրականացմամբ պայմանավորված ինքնուրույն որոշման կայացմանը, 2) եթե այդ նորմի վիճարկումն անխուսափելիորեն չի պահանջում կոնկրետ գործով վարույթի կասեցում:

Ներկա իրավակարգավորման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասում հստակ սահմանված է, որ «Դատարանները կարող են դիմել սահմանադրական դատարան համապատասխան գործով

վարույթը սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը, **խսկ գլխավոր դատախազը՝ տվյալ գործն իր վարույթ ընդունելուց հետո՝ մինչև այն օրենքով սահմանված կարգով իրավասու դատարան ուղարկելը»:**

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի պահանջն առ այն, որ համապատասխան սուբյեկտները կարող են ՀՀ սահմանադրական դատարան դիմել «Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով», ինչպես նաեւ 100-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն իրավական ակտերի դրույթների սահմանադրականությունը որոշում է «օրենքով սահմանված կարգով», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ներկա իրավակարգավորման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տվյալ գործի վարույթը ենթակա է կարճման՝ նույն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

7. Հաշվի առնելով, որ առկա իրավական վեճն առնչվում է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 02.04.2010թ. ՄԴ-Ո-872 որոշման շրջանակներում արտահայտած իրավական դիրքորոշումներին եւ, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության մեկնաբանմանը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ տվյալ հիմնախնդիրը կարելի էր նշանակություն ունի քրեական դատավարության հայեցակարգային զարգացումների հստակեցման առումով, ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները, անհրաժեշտ է համարում արձանագրել.

**Առաջին**, քրեական գործերով վարույթի կարելիության խնդիրը հանցագործության լրիվ եւ ժամանակին բացահայտումն է, այն նպատակով, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի եւ քրեական օրենքով նախատեսված դեպքերում եւ սահմանված քրեադատավարական կարգով պատասխանատվության ենթարկվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի եւ չդատապարտվի, ինչպես նաեւ՝ ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների եւ ազատությունների այլ սահմանափակման: ՀՀ Սահմանադրության 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ եւ 22-րդ հոդվածներում նախատեսված են սահմանադրաիրավական կոնկրետ երաշխիքներ՝ իրեն ներկայացված մեղադրանքից անձի պաշտպանության համար: Միաժամանակ, պետության խնդիրն է ամեն տեսակի ռոտնձություններից անձանց (այդ թվում՝ իրավաբանական) իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը: Քրեական վարույթում այդպիսի գործառույթի իրականացման կարելի միջոց է մեղադրանքի ինստիտուտը, որի կիրառմամբ իրավասու պաշտոնատար անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացնում է հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի (հանցագործության) կատարման մասին (Քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 20-րդ կետ): Մյուս կողմից, մեղադրանքի ինստիտուտը՝ իր սահմանադրաիրավական բովանդակությամբ, կոչված է օրենքով նախանշված կարգով երաշխավորել քրեական օրենսգրքով չթույլատրված եւ անձին մեղազրկող արարքի կատարման վերաբերյալ նրան ներկայացված այդպիսի հիմնավորումից (մեղադրանքից) պաշտպանվելու իրավական (այդ թվում՝ արդարադատական) հնարավորություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մեղադրանքի ինստիտուտը կարգավորող նորմերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ անձի կողմից հանցավոր արարքի կատարման հիմնավորումը մինչդատական, իսկ որոշ դեպքերում էլ՝ դատական վարույթներում ներկայացվում է պաշտոնական փաստաթղթերի՝ որոշման (մեղադրանք առաջադրելու, այն փոփոխելու, լրացնելու, նոր մեղադրանք առաջադրելու մասին) եւ մեղադրական եզրակացության ձեռով: Ընդ որում, եթե մեղադրանք առաջադրելու (փոփոխելու, լրացնելու, նոր մեղադրանք առաջադրելու) վերաբերյալ որոշումը (իրենց լիազորությունների շրջանակներում՝ քննիչի, դատախազի կողմից) կարող է կայացվել մինչդատական, դատական վարույթներում, ապա մեղադրական եզրակացությունը՝ որպես քրեական գործով նախաքննության արդյունքներն ամփոփոխ, ձեռք բերված ապացույցների շրջանակներում անձի (կամ անձանց) մեղավորությունը հիմնավորող պաշտոնական փաստաթուղթ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ գլխի նորմերին համապատասխան, **առանց բացառության, կազմվում է քննիչի եւ հաստատվում՝ նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից՝ մինչդատական վարույթում**, որի հիման վրա էլ դատախազը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Վերջինս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածում նախատեսված հիմքերով եւ կարգով կարող է լրացվել կամ փոփոխվել՝ նոր մեղադրանք առաջադրելու վերաբերյալ դատախազի պատճառաբանված որոշմամբ, որը ձեռք բերված նյութերի (ապացույցների) հետ ներկայացվում է դատարան (նույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր):

Այսպիսով, մեղադրանքի ինստիտուտի գործող իրավակարգավորման, այդ թվում եւ՝ սույն գործով վիճարկվող նորմերի բովանդակությունից հետեւում է, որ.

ա) նախաքննության արդյունքներն ամփոփվում են մեղադրական եզրակացությամբ, որը կազմվում է **բացառապես քննիչի** եւ հաստատվում՝ դատախազի կողմից (ՀՀ քր. դատ. օր.-ի 270-րդ, 272-րդ եւ 274-րդ հոդվածներ),

բ) դատախազին մեղադրական եզրակացություն կազմելու (կամ նոր մեղադրական եզրակացություն կազմելու) լիազորություն վերապահված չէ, այն նախաքննական մարմնի՝ օրենքով ամրագրված լիազորությունն է,

գ) դատախազն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պարտավոր է հաստատել մեղադրական եզրակացությունը, կամ՝ իր որոշմամբ մեղադրանքի ձեւակերպումից հանել առանձին կետեր, վերադարձնել հանցագործությունը եւ հաստատել մեղադրական եզրակացությունը, կամ՝ գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու, լրացուցիչ մեղադրանք առաջադրելու, մեղադրանքը փոխելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար,

դ) հաստատելով քննիչի կողմից կազմված մեղադրական եզրակացությունը՝ դատախազն իր սահմանադրաիրավական կարգավիճակին եւ օրենքով նախատեսված լիազորություններին համապատասխան **հանդես է գալիս որպես հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող, ինչպես նաեւ մեղադրական եզրակացությամբ հիմնավորված մեղադրանքը դատարանում պաշտպանող իրավասու սուբյեկտ:**

Վերահաստատելով ՄԴՈ-872 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումները, սույն գործի առարկայի շրջանակներում **սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարան ուղարկված գործով «նոր մեղադրական եզրակացություն» կազմվել չի կարող եւ ինչպես վիճարկվող, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի այլ նորմերով այդպիսի իրավակարգավորում նախատեսված չէ, հետեւաբար՝ քրեադատավարական նորմերն այլ կերպ մեկնաբանվել չեն կարող:** Նոր մե-

դադրական եզրակացություն կամ մեղադրական եզրակացության վերակազմում կարող է տեղի ունենալ միայն մինչդաստական վարույթում՝ նշված օրենսգրքի 274-րդ հոդվածում ամրագրված կանոններին համապատասխան՝ լրացուցիչ քննության շրջանակներում:

**Երկրորդ՝** ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանքի առաջադրման (փոփոխման, լրացման), ինչպես նաև մեղադրական եզրակացության կազմման (փոփոխման, լրացման) եւ հաստատման դատավարական ընթացակարգերում, մի կողմից, քննիչի, մյուս կողմից՝ դատախազի լիազորությունների (իրավունքների ու պարտականությունների) օրենսդրական վերոհիշյալ տարանջատումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի իրավակարգավորման ընդհանուր խնդիրներից ու նպատակներից, հիմք ընդունելով պետական իշխանության իրականացման օրինականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետեւաբար, դատախազն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով: Մյուս կողմից, դատաքննության փուլում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման, լրացման, ամբաստանյալին նոր մեղադրանք առաջադրելու դեպքերում, դատարանի գործառույթը պետք է հիմնվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված մրցակցային արդարադատության այն սկզբունքի վրա, համաձայն որի. «դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

**Երրորդ՝** ՀՀ Սահմանադրության 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ հոդվածներում ամրագրված են հանցավոր արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներ: Միաժամանակ, Սահմանադրության 3-րդ եւ 14-րդ հոդվածներին համապատասխան պետության պարտականությունն է ապահովել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անձեռնմխելիությունը: Քրեական գործի վարույթում մեղադրական եզրակացությունը ոչ միայն դատավարական փաստաթուղթ է, որով ամփոփվում են նախաքննության արդյունքները, ներկայացվում են անձին մեղազրվող արարքի իրավաբանական որակումը եւ այն հիմնավորող ապացույցները, այլեւ հնարավորություն է ընձեռնվում ամբաստանյալին (նրա օրինական ներկայացուցչին) կազմակերպելու եւ իրականացնելու առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ կոնկրետ մեղադրանքի եւ այն հիմնավորող ապացույցների շրջանակում: Մեղադրական եզրակացությունն իրավական հնարավորություն է ստեղծում նաև գործով շահագրգիռ այլ անձանց՝ ապահովելու իրենց խախտված իրավունքների պաշտպանությունը:

Քրեական գործով վարույթում անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) իրավունքները (այդ թվում՝ առաջադրված մեղադրանքին ծանոթանալը, նախաքննության ավարտման պահից գործի բոլոր նյութերին ծանոթանալը, դրանցից պատճեններ հանելը, մեղադրական եզրակացության պատճենը ստանալը եւ այլն) նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներով (59, 61, 65, 66, 75, 77, 79, 265, 266, 267, 309.1 եւ այլն): Այսինքն՝ նախատեսված այդ իրավունքների

շրջանակը եւ դրանց իրացման կոնկրետ ընթացակարգերը վկայում են, որ քրեական գործով առաջադրված մեղադրանքը, դրա ծավալը, անձին մեղսագրվող արարքի որակումը, գործում առկա ապացույցները եւ իրավաբանական նշանակության այլ տեղեկությունները միանգամայն հասանելի են գործով շահագրգռված անձանց եւ նրանց օրինական ներկայացուցիչներին: Ավելին, վերոհիշյալ օրենսգրքով նախատեսված են ընթացակարգեր հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողությունների եւ որոշումների բողոքարկման համար: Հետեւաբար, դատաքննության փուլում, երբ մեղադրողը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի նորմերի կիրառմամբ մինչդատական վարույթում առաջադրված մեղադրանքը լրացնել կամ փոփոխել, ապա խնդիրներ են առաջանում այդպիսի լրացման եւ փոփոխման բովանդակության (ծավալի) պատշաճ ձեւակերպման, շահագրգիռ անձանց ներկայացնելու եւ վերջիններիս կողմից իրենց իրավունքների պաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ խնդիրների լուծման ընթացակարգերը նախատեսված են վիճարկվող հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերում, համաձայն որոնց.

ա) մեղադրանքի լրացման կամ փոփոխման անհրաժեշտության դեպքում մեղադրողը դատական քննությունը հետաձգելու միջնորդություն է ներկայացնում (նույն հոդվածի 1-ին մաս),

բ) անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում դատարանը հետաձգում է նիստը՝ ոչ ավելի, քան մեկ ամսով (2-րդ մաս),

գ) առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու մասին **որոշում**, որը ձեռք բերված նյութերի (ապացույցների) հետ ներկայացնում է դատարան (2-րդ մաս),

դ) գործով շահագրգիռ անձանց (տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին) դատարանը **նոր մեղադրանքին ծանոթանալու համար** ժամանակ է տրամադրում՝ նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին եւ նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից (4-րդ մաս):

Վերոհիշյալ նորմատիվ դրույթների առկայության պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը նախատեսել է դատական վարույթի փուլում մեղադրանքը լրացնելու, փոփոխելու, այն դատավարական կարգով ձեւակերպելու եւ անձանց ներկայացնելու հստակ ընթացակարգեր, որպիսի պայմաններում չի խոչընդոտվում նաեւ անձի պաշտպանության իրավունքի իրացման այն ծավալը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով, նաեւ բացառվում է դատական քննության շրջանակներից դուրս մեղադրանք փոփոխելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **դատական քննության ընթացքում մեղադրանքը նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշմամբ կարող է փոփոխվել բացառապես այն սուբյեկտի, տվյալ դեպքում՝ դատախազի կողմից, որն այդ մեղադրանքը պաշտոնապես ներկայացրել է դատարանին:**

**Չորրորդ՝** սահմանադրական դատարանը կարելի է համարում նաեւ արձանագրել, որ թեւեւ մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները եւ կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական եւ օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ եւ միայն այն մեղադրանքի սահմաններում, որը նրան առաջադրվել է մինչդատական վարույթում:

Գրա հետ մեկտեղ, չեն բացառվում այն իրավիճակները, երբ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման արդյունքում պարզվում են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և որոնք գործում առկա այլ փաստական հանգամանքների հետ օբյեկտիվորեն պահանջում են մեղադրանքի փոփոխում (խստացման կամ մեղմացման առումով) կամ լրացում:

**Հինգերորդ՝** վերահաստատելով ՄԳՈ-872 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքի փոփոխումը ոչ թե պետք է հիմք կամ պատճառ հանդիսանա լրացուցիչ նախաքննության (ինչը կհակասի ՄԳՈ-710 որոշմանը), այլ պետք է դատարանում հետազոտված և գործում առկա այլ ապացույցների համալիր վերլուծության արդյունք (հետեւանք) լինի: Սակայն, եթե որոշակի բացառիկ դեպքերում մեղադրանքի փոփոխությունը (լրացումը) պահանջի նոր ապացույցների ձեռքբերում, ապա դրա համար մեղադրողի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ (դատավարության բոլոր մասնակիցների կարծիքները լսելուց հետո) կարող են օգտագործվել բացառապես գործի դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցներ (նոր վկաների կանչ, փորձաքննությունների նշանակում, ապացույցների հետազոտում կամ փաստաթղթերի և այլ նյութերի պահանջում և այլն): Այսինքն՝ մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի հրապարակային դատաքննության շրջանակներում և դուրս չգա դատական վերահսկողությունից: Հակառակ դեպքում կնսեմացվի անկախ, անկողմնակալ և մրցակցային դատարանի սահմանադրաիրավական դերը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունն անհրաժեշտ է մեկնաբանել և իրացնել ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 և 101-րդ հոդվածների, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 (առաջին կետ), 63, 64 և 71-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**4 փետրվարի 2011 թվականի  
ՄԳՈ-934**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 426.1-ՐԳ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

**Քաղ. երեսան**

**4 փետրվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Վ. Շահինյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի 27.09.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:



Օրենսգրքի՝ «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը» վերտառությամբ 426.1-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ոստիկանության Մալաթիայի քննչական բաժնում խարդախության փաստով հարուցված քրեական գործով պարզվել է, որ չորս անգամ հափշտակություններ կատարելու համար դատապարտված Արսեն Երվանդի Սիմոնյանը հինգերորդ անգամ դատապարտվելով 13 տարի ազատազրկման, պատժի կրման վայրից ծանոթություն է հաստատել Անուշ Միքայելի Ներսիսյանի հետ: Վերջինիս վստահությունը չարաշահելով՝ Ա. Սիմոնյանն իր ընկերուհի Արուսյակ Նշանի Շելեյենկյանի միջոցով Ա. Ներսիսյանից խաբեությամբ վերցրել է հափշտակել է 3.050.030 ՀՀ դրամի առանձնապես խոշոր չափի ոսկյա զարդեր եւ գումար: Քրեական գործի քննության ընթացքում 26.01.2010թ. որոշում է կայացվել Արուսյակ Նշանի Շելեյենկյանի վերաբերյալ քրեական գործից մաս անջատելու, մասի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով կարճելու եւ նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

2010թ. փետրվարի 10-ին քրեական գործը, ըստ մեղադրանքի Արսեն Երվանդի Սիմոնյանի, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով ուղարկվել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: 2010թ. հունիսի 15-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով Ա. Սիմոնյանը դատապարտվել է ազատազրկման 10 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: 2010թ. հունիսի 22-ին գործը քննող դատավորից գրություն է ստացվել այն մասին, որ հիշյալ քրեական գործի դատաքննությամբ երեւան են եկել նոր հանգամանքներ, որոնք հիմնավորում են Ա. Շելեյենկյանի կողմից նշված խարդախության կատարմանն օժանդակելու փաստը, որի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել վերացնելու նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու, գործի մասի վարույթը կարճելու վերաբերյալ 26.01.2010թ. որոշումը եւ քննարկել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում 24.08.2010թ. որոշում է կայացվել նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով վարույթ հարուցելու մասին եւ ՀՀ ոստիկանության Մալաթիայի քննչական բաժնին հանձնարարվել է կատարել քննություն:

3. Վիճարկելով օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ, 103-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավանորմի նման ձեւակերպման պայմաններում, ըստ էության, բացառվում է քրեական հետապնդման մարմնի՝ գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հետեւանքով: Նման իրավիճակում, ըստ դիմողի, խախտվում են հանցագործություններից տուժած անձանց սահմանադրական իրավունքները, այդ հիմնախնդրի օրենսդրական համակարգային կարգավորումը, դատախազության սահմանադրական լիազորությունների կրացման ծավալներն ու տրամաբանությունը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած՝ «...իր խախտված իրավունքները վերականգնելու համար» սահմանադրական ձեռակերպումը վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին: Հետևաբար, պետք է սահմանվեն քրեական հետապնդում եւ արդարադատություն իրականացնող պետական մարմինների կողմից թույլ տրված խախտումներով կայացված որոշումների վերանայման եւ վերացման կառուցակարգեր: Ըստ դիմողի՝ նոր երեսան եկած հանգամանքների առումով գործող քրեադատավարական օրենսդրությունը նման կառուցակարգեր սահմանում է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման առումով՝ դրանով իսկ բացառելով, որ այդպիսիք անհրաժեշտ են նաև մինչդատական վարույթում ընդունված ակտերի համար:

Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով մինչդատական եւ դատական վարույթներում ընդունված ակտերի վերանայման վերաբերյալ նախորդ եւ ներկա իրավակարգավորումների համեմատական վերլուծության հիման վրա դիմողը գտնում է, որ օրենսգրքի սկզբնական խմբագրությամբ տեքստի՝ վիճարկվող իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմերը, մասնավորապես՝ օրենսգրքի 21-րդ եւ 408-410-րդ հոդվածները, համակարգային կապի մեջ էին գտնվում, մինչդեռ օրենսգրքի ներկա խմբագրությամբ տեքստի 21-րդ հոդվածը եւ 12.1-րդ բաժնի դրույթները չեն ապահովում հիմնախնդրի համակարգային եւ միասնական կարգավորումը: Իր այդ դիրքորոշումը դիմողը փաստարկում է նրանով, որ օրենսգրքի ներկա խմբագրությամբ տեքստի 21-րդ հոդվածի եւ 12.1-րդ բաժնի նորմերի վերլուծությունը վկայում է, որ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով վերանայման ենթակա են ինչպես դատական ակտերը, այնպես էլ մինչդատական վարույթում ընդունված՝ գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումները:

Վիճարկվող նորմը դիտարկելով դատախազության սահմանադրական լիազորությունների իրացման ծավալների ու տրամաբանության համատեքստում՝ դիմողը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, ինչպես նաև օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը, եզրահանգում է, որ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերանայելը, այդ թվում՝ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով, դատախազի բացառիկ լիազորությունն է, որպիսի փաստարկը հիմնավորվում է նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության եւ դատական վերահսկողության փոխհարաբերությունների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 07.12.2009թ. ՍԳՈ-844 որոշմամբ արտահայտած դիրքորոշումներով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ակտերի վերանայումը նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով» վերառությամբ 12.1-րդ բաժնի նորմերը վերաբերում են միայն դատական ակտերի վերանայմանը: Մինչդեռ «դատախազի կողմից նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների վերացման դատավարական կարգ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը չի սահմանում»:

Պատասխանողը պնդում է, որ «Գործող քրեական դատավարության օրենսգրքի պայմաններում, երբ բացակայում է դատախազի կողմից նոր երեսան եկած հանգա-

մանքներով քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը վերացնելու հստակ դատավարական կարգը, ... օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելը, կարող է հանգեցնել իրավական անորոշության, կրկին դատվելու անթույլատրելիության սահմանադրական եւ կոնվենցիոնալ իրավունքի խախտման»:

Պատասխանողն արձանագրում է նաեւ, որ «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում» առաջարկվում է նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով վարույթի կառուցակարգը կիրառել նաեւ մինչդատական վարույթի ժամանակ ընդունված եզրափակիչ ակտերի նկատմամբ:

5. Սույն գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում վիճարկվող իրավանորմը դիտարկել դատավարական ակտերի վերանայման վերաբերյալ ողջ իրավակարգավորման համատեքստում՝ հաշվի առնելով, մի կողմից, տուժողի շահերի, մյուս կողմից՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի՝ որպէս հանրային շահի հավասարակշռման անհրաժեշտությունը:

Օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթէ այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի»:

Օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերի, որոնք սահմանում են համապատասխանաբար՝ «քրեական գործ», «գործով վարույթ», «քրեական գործով մինչդատական վարույթ» հասկացությունների բովանդակությունը, վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասում «քրեական գործը նորոգելը» բառակապակցությունը **հավասարապես կարող է վերաբերել** ինչպէս դատարանի, այնպէս էլ մինչդատական վարույթում գտնվող կամ նշված վարույթներից որեւէ մեկի ընթացքում **ավարտված** քրեական գործերին:

Հիմք ընդունելով այն, որ նոր կամ նոր երեսան եկած հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չէին կարող հայտնի լինել հետաքննության կամ նախաքննության մարմնին տվյալ գործով վարույթն իրականացնելիս՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազը օբյեկտիվորեն չի կարող նոր կամ նոր երեսան եկած հանգամանքը հաշվի չառնելը դիտարկել որպէս հետաքննության կամ նախաքննության մարմնի կողմից տվյալ գործով վարույթն իրականացնելիս թույլ տրված դատավարական սխալ:

Ինչ վերաբերում է օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետի ավարտից հետո մինչդատական վարույթի նկատմամբ նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով պայմանավորված դատախազության հսկողական գործառնություններն իրականացնելու հնարավորությանը, դրան վերաբերում է օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը, որն էլ, իր հերթին, հղում է կատարում օրենսգրքի 12.1-րդ բաժնի դրույթներին: Այսինքն՝ օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերի դրույթների վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը նախատեսել է օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետի ավարտից հետո մինչդատական վարույթի նկատմամբ նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով պայմանավորված դատախազության հսկողական գործառնություններն իրականացնելու հնարավորություն եւ կանխորոշել է օրենսգր-

քի 12.1-րդ բաժնի նորմերի միջոցով այդպիսի հնարավորության իրացման համար համապատասխան իրավական երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունը: Ընդ որում, քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների վերանայումը դատախազի կողմից՝ հանդիսանում է հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության առանձին տարատեսակ, առնչվում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով եւ օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդում հարուցելու եւ հանցագործությունը բացահայտելու՝ դատախազի պարտականության իրականացմանը, հանդիսանում է ինքնուրույն վարույթ եւ, հետեւաբար, ունի որոշակի առանձնահատկություններ:

6. Օրենսգրքի 12.1-րդ բաժնի վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված բաժինը վերաբերում է նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով **բացառապես դատական ակտերի** վերանայման հետ կապված հարաբերություններին: Այդպիսի եզրահանգման համար հիմք են հանդիսանում ոչ միայն օրենսգրքի 12.1-րդ բաժնի նորմերը, այլեւ նշված բաժնի եւ այդ բաժնում շարադրված առանձին հոդվածների վերնագրերը: Ընդ որում, իրավակարգավորման առարկայի հստակեցման հարցում օրենսդրական փոփոխությունների ընթացքում հետետողականություն չի դրսևորվել: Օրինակ, վեճի առարկա հոդվածը վերնագրված է «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը», մինչդեռ այդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման առարկան իրավական ակտերի համակարգն է, որոնցից առանձնացվում է «**միայն օրինական ուժի մեջ մտած**» դատական ակտը: Նման ձեւակերպումը նաեւ իրավական մտածողության ինտերցիայի դրսևորում է, քանի որ չեն կարող լինել «օրինական ուժի մեջ մտած դատական ակտ» եւ «անօրինական ուժի մեջ մտած դատական ակտ» հասկացություններ, որպեսզի դրանցից «**միայն**» սահմանափակման վերաբերական խոսքի մասի միջոցով ընտրություն կատարվի:

Առկա ձեւակերպման քերականական վերլուծությունից բխում է, որ օրենսգրքի 426.1-րդ հոդվածի «**...միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը**» արտահայտությունը չի սահմանափակվում «օրինական» ուժի մեջ մտած դատական ակտի հանգամանքի շեշտմամբ: Այս բառակապակցության մեջ «**միայն**» արտահայտությունը՝ որպես խոսքի մաս, որպես սահմանափակման վերաբերական ենթադրում է, որ քրեական վարույթում նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով որեւէ այլ վերջնական իրավական ակտ վերանայվել չի կարող: Նման բացառությունը եւ դրանման ձեւով շեշտադրումը պահանջում են սահմանադրաիրավական սկզբունքային դիրքորոշում արտահայտել այն առնչությամբ, թե արդյո՞ք մինչդատական վարույթում նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով վերջնական իրավական ակտի վերանայման արգելափակումն անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման հարցում խնդիրներ չի առաջացնի: Այլ հարց է, թե օրենսդիրն ինչ ընթացակարգեր կսահմանի նման ինստիտուտի իրավաչափ ներդրման համար:

Չուտ անհրաժեշտության եւ նշված խնդիրների հաղթահարման տեսանկյունից հարցին սպառիչ պատասխան է տալիս պատասխանող կողմը, շեշտելով. «...հաշվի առնելով խնդրի կարեւորությունը եւ հայեցակարգային նշանակությունը, ինչպես նաեւ գիտակցելով, որ այն արդյունավետ լուծում կարող է ստանալ միայն համակարգային

կարգավորման պարագայում..., **ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում առաջարկվում է նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով վարույթի կառուցակարգը կիրառել նաեւ մինչդատական վարույթի ժամանակ ընդունված եզրափակիչ ակտերի նկատմամբ»:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործնականում առաջին հերթին հանցագործության հետեւանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը:

Գլխակցելով, որ եթե տուժողի համար արդարադատությունը մատչելի չէ, հետեւաբար, այն խախտում է դատարանի առջեւ հավասարության սկզբունքը, դրանով իսկ իմաստագրվում արդարադատության բուն գաղափարը՝ մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում սահմանվեց պետությունների այն պարտականությունների շրջանակը, որոնք կնպաստեն տուժողի դատավարական իրավունքների արդյունավետ պաշտպանությանը: ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1985 թվականի նոյեմբերի 29-ի՝ «Հանցագործության եւ իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքները» A/RES/40/34 հռչակագրում եւ Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի եւ դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11 հանձնարարականում առաջարկվում է ազգային մակարդակներով միջոցներ ձեռնարկել տուժողների իրավունքների պաշտպանության համար, մասնավորապես, բարելավել տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման դատական եւ վարչական կառուցակարգերը, սահմանել քրեական գործի քննության ժամանակ տուժածի կարգավիճակը, նրա իրավունքների երաշխավորման հարցում դատարանի իրավունքների եւ պարտականությունների բնույթը: Ըստ նշված փաստաթղթերի՝ քրեական արդարադատության կարեւորագույն գործառույթներից է տուժածի պահանջների բավարարումը եւ շահերի պաշտպանությունը, քրեական արդարադատության նկատմամբ տուժածի վստահության ավելացումը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի վերջնական որոշման՝ նոր կամ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով վերանայման հնարավորության համակարգային իրավակարգավորման բացակայությունը պայմանավորված է առաջին հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի առկա ձեւակերպմամբ, որի արդյունքում վտանգվում է անձի՝ իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի «միայն» արտահայտությունը՝ այնքանով, որքանով բացառում է նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով այլ վերջնական իրավական ակտերի օրենքով սահմանված կարգով վերանայումը՝ դրանով իսկ վտանգելով անձի՝ մասնավորապես, մինչդատական վարույթում պետական իրավասու մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**4 փետրվարի 2011 թվականի  
ՍԳՈ-935**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՇԱՎԱՐՇ, ՌԱՅԱ ՄԿՐՏՉՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԳԻՄՈՒՄԻ  
ՀԻՄՆԵ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
141-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**8 փետրվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ փաստաբան Կ. Մեժլումյանի,

պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 69-րդ հոդվածներին,

դռնբաց միստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Շավարշ, Ռայա Սկրտչյանների եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Շավարշ, Ռայա Սկրտչյանների եւ այլոց՝ 17.08.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմի 06.09.2010թ. ՄԳԳԿՈ/1-25 որոշմամբ սույն գործով դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, վիճարկվող նորմը, դատավարական հարաբերություններ կարգավորող այլ օրենքներ եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածը վերնագրված է. «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հիմքը»: Մինչեւ 28.10.2010թ. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-135-Ն) ընդունումն այդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասն ուներ հետեւյալ բովանդակությունը.

«1. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել վճռաբեկ դատարան միայն նյութական իրավունքի խախտման հիմքով»:

Ըստ գործի նյութերի՝ վերջնական դատական ակտով (թիվ ՎԳ/4394/05/09 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 05.05.2010թ. որոշումը) դիմողների նկատմամբ կիրառվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ 141-րդ հոդվածի 1-ին մասը, որը ՀՕ-135-Ն օրենքով փոփոխվել է դիմողների կողմից սահմանադրական դատարան դիմելուց հետո եւ ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտերը՝ վճռաբեկ դատարան, միայն նյութական իրավունքի խախտման հիմքով»:

Ըստ գործում առկա նյութերի՝ դիմողները 02.10.2009թ. ՀՀ վարչական դատարան են դիմել ՀՀ կառավարության 26.06.2009թ. թիվ 944-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Ներկայացված հայցադիմումը վարույթ է ընդունվել վարչական դատարանի 30.10.2009թ. որոշմամբ: 25.02.2010թ. ՀՀ վարչական դատարանից գրություն է ստացվել այն մասին, որ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը՝ դատարանը վարչական գործը քննելու է գրավոր ընթացակարգով, եւ որով տեղեկացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման ժամկետի մասին: Դիմողները միջնորդություն են ներկայացրել վարչական դատարան՝ գործը հրապարակային քննելու մասին: Դատարանը մերժել է միջնորդությունը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, եւ հրապարակել թիվ ՎԳ/4396/05/09 որոշումը՝ ՀՀ կառավարության 26.06.2009թ. 944-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին պահանջը մերժելու վերաբերյալ:

Դիմողները վճռաբեկության կարգով բողոքարկել են վարչական դատարանի որոշումը: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 05.05.2010թ. թիվ ՎԳ/4396/05/09 որոշմամբ վերադարձրել է բողոքը եւ, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի խախտման վերաբերյալ դիմող կողմի պատճառաբանությանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասը՝ նշել է, որ օրենսգրքի 138-րդ հոդվածը դատավարական նորմ է, եւ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն նյութական իրավունքի խախտման հիմքով:

2. Վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ)՝ դիմող կողմը գտնում է, որ դրանք՝ «իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ», հսկա-



սում են ՀՀ Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածներին, քանի որ վարչական դատարանին փաստացի հնարավորություն են տալիս նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերով վեճն ըստ էության լուծող դատական ակտեր կայացնել առանց հրապարակային դատաքննության կամ արդարադատության իրականացման սահմանադրական այլ սկզբունքների կիրառման: Դիմողն իր փաստարկները հիմնավորում է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները վկայակոչելով:

Ըստ դիմողի՝ վարչական արդարադատության պրակտիկան վկայում է, որ գործը գրավոր ընթացակարգով քննելու առկա ընթացակարգի պայմաններում ամբողջությամբ անտեսվում է հրապարակայնության սկզբունքը եւ ոտնահարվում է գործի հրապարակային քննության իրավունքը, որը հաշվի չի առնվել նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

3. Առարկելով դիմող կողմի փաստարկների դեմ, պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթներն օրենսդիրը ներառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 24-րդ գլխում, որը վկայում է դրանց առանձնահատկության, մասնավորապես՝ ընդհանուր վարույթային կարգով քննվող վարչական գործերի համեմատ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի քննության մեթոդաբանության եւ, արդյունքում՝ կայացված դատական ակտերի բողոքարկման հատուկ ընթացակարգի մասին: Ըստ պատասխանող կողմի՝ «Ի տարբերություն այլ վարույթային ընթացակարգերի, այս պարագայում դատավարական նորմերի նշանակությունն ու կարեւորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, քանի որ այս գործերով արդարադատությունը իրականացվում է միայն նյութական իրավունքի նորմերի հիման վրա ... նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի ՀՀ Սահմանադրությունից) համապատասխանությունը ստուգելով»:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ դիմողները ձեւակնորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում են այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, բացի դրանից, դիմումում բավարար կերպով չի հիմնավորվել օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականությունը:

4. Սույն գործով սահմանադրական դատարանը գտնում է, որ վարույթի կարճման հիմքեր չկան եւ անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ միջազգային իրավական սկզբունքներին եւ նորմերին համապատասխան դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված),

- ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի եւ վերջինիս կարեւոր բաղադրիչ հանդիսացող՝ դատական ակտերի բողոքարկման, հավասարապես նաեւ՝ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից, ելնելով այդ բնագավառի օրենսդրական համալիր զարգացումների միասնական այն

հայեցակարգից, որը բխում է դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներից,

- ՀՀ-ում վարչական արդարադատության ինստիտուտի արդյունավետության բարձրացման եւ հետագա կատարելագործման վերաբերյալ սահմանադրական դատարանի նախորդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կենսագործման անհրաժեշտությունից:

Սույն գործով վիճարկվող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաեւ այն հանգամանքը, որ 28.10.2010թ. ՀՕ-135-Ն օրենքով վերոհիշյալ նորմը ենթարկվել է փոփոխության, որի արդյունքում դիմողների բարձրացրած հարցի իրավակարգավորումն առարկայական փոփոխության չի ենթարկվել:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է.

- անձի (այդ թվում՝ իրավաբանական) իրավունքները եւ ազատությունները դատարանում պաշտպանելու իրավունքը,

- դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը,

- դատական պաշտպանության իրավունքը՝ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ,

- խախտված իրավունքներն անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում եւ հրապարակային քննության միջոցով վերականգնելու իրավունքը:

Միաժամանակ, սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսիք վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաեւ անձի իրավունքների դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը: Այդպիսի ընթացակարգեր ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված են ինչպես քրեական, քաղաքացիական, այնպես էլ վարչական գործերով արդարադատության բնագավառներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ եւ 48-րդ գլուխների, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ եւ 5-րդ բաժինների նորմերով են հիմնականում կարգավորվում քրեական եւ քաղաքացիական գործերով դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները: Վարչական գործերով այդ հարաբերությունները հիմնականում կարգավորվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19.1-րդ, 20-րդ գլուխներում, ինչպես նաեւ 4-րդ եւ 5-րդ բաժիններում ամրագրված, մասամբ էլ 24-րդ գլխի՝ սույն գործով վիճարկվող 141-րդ հոդվածի նորմերով:

Ուսումնասիրելով ՀՀ իրավական համակարգում դատական բողոքարկման (վերաքննիչ եւ վճռաբեկ վարույթների կարգով) հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերը, դրանց առանձնահատկությունները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է.

- օրենքով նախատեսված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը (գործով

ըստ էության կայացված ակտերը, ինչպես նաև օրենքով թվարկված միջանկյալ ակտեր),

- սահմանված են դատական ակտերը վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների հիման վրա վերանայելու իրավասություն ունեցող դատարանները, ընթացակարգերը եւ արդյունքում կայացվող որոշումները,

- օրենքով սահմանված են դատական ակտերի բողոքարկման հիմքերը, այդ թվում՝ նաև դատական սխալի հիմքով,

- ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (բացառությամբ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով) դատական ակտերի բողոքարկման հիմք է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը (հիմնարար խախտումը (ՀՀ քաղ.դատ. օր.-ի 207-րդ հոդվածի 7-րդ մաս): Ընդ որում, վերոհիշյալ օրենսգրքերով (ՀՀ քր. դատ. օր.-ի 380. 1-րդ, 406-րդ հոդվածներ եւ այլն, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 226, 227, 228-րդ հոդվածներ եւ այլն, ինչպես նաև ՀՀ վարչ. դատ. օր.-ի 117.4-րդ հոդված) գործով ըստ էության կայացված դատական ակտի բեկանման (վերանայման) հիմք կարող է հանդիսանալ նյութական եւ դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումը, որն ազդել է գործի ելքի վրա (հանգեցրել է գործի սխալ լուծմանը): Եթե նյութական իրավունքի նորմի խախտման հիմքում օրենսդիրը դիտարկել է տվյալ նորմի ոչ ճիշտ մեկնաբանումը, նյութական իրավունքի այն նորմի կիրառումը, որը չպետք է կիրառվեր, կամ այն նորմի չկիրառումը, որը պետք է կիրառվեր, ապա դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքում նկատի են առնվել այնպիսիք, որոնք խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը, խախտել են կողմերի դատավարական իրավունքները, հանգեցրել են արդարադատության սկզբունքների խախտմանը:

Այսպիսով, սահմանելով դատական ակտերի բողոքարկման ընթացակարգեր՝ որպես այդ ակտերը վերանայելու նախապայման (բացառությամբ նոր եւ նոր ի հայտ եկած հանգամանքներով), օրենսդիրը նկատի է ունեցել նյութական, դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումները, որոնց դեպքերում դրանք **ազդել են գործի ելքի վրա կամ հանգեցրել են գործի սխալ լուծմանը**: Իսկ որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքի հիմքով, օրենսդիրն արգելել է ձեւական նկատառումներով բեկանել դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը: Այսինքն՝ վերոթվարկյալ դեպքերում իրավակարգավորման հիմքում դրված է այն սկզբունքը, համաձայն որի՝ նյութական եւ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով կարող է բեկանվել դատական այն ակտը, որը կայացվել է **դատական սխալի արդյունքում**:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարելով անդրադառնալ «**դատական սխալ**» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչպես նաև դրա՝ որպես դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հիմքում իրավաբանական կարեւոր նշանակություն ունեցող փաստի դրսևտորման շրջանակներին, գտնում է, որ այն տարածական մեկնաբանման ենթակա չէ եւ չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից թույլ տրված ցանկացած սխալ (վրիպում): Դատական սխալ կարող է թույլ տրվել միայն գործով ըստ էության դատական ակտի կայացման արդյունքում, այսինքն՝ այնպիսի ակտի, որը կոչված է լինելու լուծել գործը (քրեական, քաղաքացիական, վարչական), վերացնել դրա վիճելիությունը՝ որոշել կողմերի (վիճե-

լի իրավահարաբերության մասնակիցների) իրավական անվիճելի կարգավիճակը, անձանց համար հնարավորություն ստեղծել իրացնելու իրենց իրավունքներն ու պաշտպանել օրինական շահերը, հետևաբար՝ կոչված է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության կամ արդարադատության նպատակները: Այդ գործընթացում **դատարանը կիրառում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր**, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես **նյութական**, այնպես էլ **դատավարական** իրավունքի նորմի խախտման հիմքով: Իսկ դատական սխալը, կամ նյութական, դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստը, **որը հանգեցրել է տվյալ գործի սխալ լուծմանը**, հետևաբար՝ խախտվել են արդարադատության նպատակները, վտանգվել է արդարադատության եւ դատարանի հեղինակությունը, ենթակա է գնահատման եւ հաստատման իրավասու դատարանի կողմից՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում:

Այսպիսով, դատական ակտերի բողոքարկումը կարգավորելու ընթացակարգային վերոհիշյալ պայմանները նախատեսելու հիմքում պետք է ընդունվեն սկզբունքներ, որոնք կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ (1-ին մաս), 18-րդ եւ 19-րդ հոդվածների նորմատիվ պահանջները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման եւ գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար եւ հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու եւ շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք բույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից:

7. Անդրադառնալով սույն գործով վիճարկվող իրավանորմի (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 141-րդ հոդվածի 1-ին մաս) սահմանադրականության գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ իրավակարգավորման առարկայի՝ այն կոչված է կարգավորելու վարչական հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի կայացրած դատական ակտերի բողոքարկման հետ կապված հարաբե-

րությունները՝ այնքանով, որքանով կապված է դատական բողոքարկման հիմքի հետ, ըստ որի՝ այդպիսի գործերով կայացված դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն նյութական իրավունքի խախտման հիմքով: Այդպիսով օրենսդիրը բացառել է դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վերոհիշյալ գործերով վարչական դատարանի կայացրած դատական ակտերը բողոքարկելու, դրանց օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը՝ անձանց թույլ չտալով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ ակտերի վիճարկման վերաբերյալ գործերով լիարժեք եւ արդյունավետ կերպով իրացնելու դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՄԳՈ-652, ՄԳՈ-665, ՄԳՈ-673, ՄԳՈ-719, ՄԳՈ-758, ՄԳՈ-780 եւ այլն) կարելուրել է դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովումը, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում, խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու եւ ապահովելու տեսանկյունից: Մասնավորապես ընդգծվել է դատական բողոքարկման իրավունքի, որպես դատական պաշտպանության իրավունքի կարելուր բաղադրիչի, այնպիսի իրացման անհրաժեշտությունը, որով կապահովվի «...այդ իրավունքի արդյունավետ իրացումը եւ նվազագույնի հասցվի դատական սխալների հավանականությունը» (ՄԳՈ-780): Սահմանադրական դատարանը նաեւ կարելուր է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարելու, մասնավորապես՝ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը ներպետական միջոցներով, այդ թվում՝ դատական, ապահովելու, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004) 20 հանձնարարականի հիման վրա վարչական ակտերի նկատմամբ դատական արդյունավետ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ «...ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները ... որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին»:

Վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, որով ամբողջությամբ բացառվում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի ակտերը դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու հնարավորությունը, չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, մարդու խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաեւ դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական եւ միջազգային իրավական չափանիշներին: Այն չի համապատասխանում նաեւ ՀՀ իրավական համակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՄԳՈ-780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ-ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց եւ ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորա-

պես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի եւ արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Մույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարելությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաեւ ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որեւէ առանձնահատկություն կամ վարույթի տեսակ (հատուկ վարույթ) չի կարող օրենքով մեկնաբանվել կամ կիրառվել այնպես, որ ամբողջովին իմաստազրկվեն ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված անձի հիմնական իրավունքները կամ դրանց իրացման արգելք հանդիսանա: Հետեւաբար, դատական բողոքարկման բնագավառում ՀՀ դատավարական հարաբերությունների իրավակարգավորման այն սկզբունքները, որոնք կարելու է են սույն որոշման 6-րդ կետում, պետք է դրվեն այդ ինստիտուտը կարգավորող բոլոր, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով բողոքարկման ընթացակարգային նորմերում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 փետրվարի 2011 թվականի  
ՍԳՈ-936**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՍՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍՊՐՔԻ 68-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 փետրվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ Ա. Չեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետություն» կուսակցության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հանրապետություն» կուսակցության՝ 07.09.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Ճանաչման հայցը» վերտառութ-  
յամբ 68-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ մասը սահմանում է.

«Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այ-  
լես իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը,  
եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավա-  
չափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կր-  
կին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանա-  
պատվությունը կամ գործարար համբավը»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է  
նրան, որ դիմողը 16.11.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան  
ընդդեմ ՀՀ կառավարության՝ վերջինիս անգործությունը ոչ իրավաչափ (անվավեր) եւ  
միավորումների, արտահայտվելու ազատության, խտրականությունից զերծ լինելու, պե-  
տական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների  
իրավունքների խախտման փաստերը ճանաչելուն պարտավորեցնելու պահանջների  
մասին: ՀՀ վարչական դատարանի՝ 23.11.2009թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու  
մասին» որոշմամբ ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է (Վարչական  
գործ թիվ ՎԴ/4816/05/09/):

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշումը 01.12.2009թ. բողոքարկվել է եւ ՀՀ  
վարչական դատարանի 04.12.2009թ. կոլեգիալ կազմով կայացված՝ «Բողոքը մերժելու  
մասին» որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է: ՀՀ վարչական դատարանի՝  
04.12.2009թ. կոլեգիալ կազմով կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշումը  
21.12.2009թ. բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանի՝  
10.02.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճ-  
ռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվա-  
ծի՝ իր կողմից վիճարկվող 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ  
հոդվածներին: Այդ առնչությամբ դիմողը կարեւորել է վիճարկվող իրավանորմում ՀՀ  
Սահմանադրության հիշյալ հոդվածներով նախատեսված դատական պաշտպանու-  
թյան իրավունքի եւ դրա արդյունավետ իրացումն ապահովող, ի մասնավորի՝ Մարդու  
իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում  
կարեւորված՝ որոշակիության, մատչելիության եւ արդյունավետ միջոցների իրավա-  
կան չափորոշիչների երաշխավորվածության հարցը:

Վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ  
մասի 1-ին կետը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ  
օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված «վարչարարություն» եզրույթի սահմա-  
նումը, ինչպես նաեւ նույն օրենքի 69 եւ 96-րդ հոդվածները՝ դիմողը եզրակացնում է, որ  
դատավարական օրենսգիրքը պետք է նախատեսի համապատասխան իրավակարգա-  
վորում՝ վարչական մարմնի **անգործությունը** ոչ իրավաչափ ճանաչելու հայցով վարչա-  
կան դատարան դիմելու իրավունքն ապահովելու համար: Մինչդեռ, նրա պնդմամբ,  
տվյալ գործով վարչական դատարանը սահմանադրաիրավական վեճի առարկա  
դրույթներին տվել է այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վարչական մարմնի անգոր-



ծությունն անվավեր ճանաչելու հայցապահանջով հայցը դատարանն իրավասու չէ վարույթ ընդունել:

Ի թիվս վերոնշյալի՝ դիմողը, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի R2004(20) հանձնարարականում ամրագրված «վարչական ակտ» եզրույթի սահմանումը, տեսակետ է արտահայտել այն մասին, որ եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում գործածված «վարչական ակտ» եզրույթը ներառում է «գործողություն» ակտը եւս, ապա այլեւս անհիմաստ է երեք ակտերը միասին մեկ եզրույթով հիշատակելուց զատ առանձին հիշատակել նաեւ դրանցից մեկը: Նրա կարծիքով՝ դա ստեղծում է անորոշություն, ինչպես նաեւ երկիմաստ ու հայեցողական մեկնաբանությունների հնարավորություն է տալիս, որը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ պետությունը կարող է կանոնակարգել դատական պաշտպանության իրավունքի իրականացման ընթացակարգը, մեխանիզմներն ու ժամկետները՝ այդ իրավունքը կրողին ներկայացնելով օրենսդրական ամրագրում ստացած հստակ պայմաններ: Պատասխանողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 65-68-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքներով եզրակացնում է, որ օրենսգիրքը հստակ սահմանում է այն բոլոր իրավական մեխանիզմները, որոնք ապահովում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

Միաժամանակ, վերլուծելով գործի փաստական հանգամանքները, պատասխանողը գտնում է, որ դիմողը չի իրացրել դատական պաշտպանության իրավունքի կենսագործմանն ուղղված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավական բոլոր միջոցները:

Պատասխանողը միջնորդում է նաեւ գործի վարույթը կարճել այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել, եւ վիճարկվող նորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հետապնդում սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ:

5. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը կարճելու հիմքեր չկան, եւ հաշվի առնելով, որ դիմողը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում կիրառվող եզրութաբանությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը վիճարկում է դրանում առկա հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության առումով, հարկ է համարում առաջին հերթին անդրադառնալ նշված օրենքում վարչական ակտ, գործողություն եւ անգործություն հասկացությունների տարանջատման խնդրին:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ինչպես ընդհանուր իրավակարգավորման առարկայի, այնպես էլ առանձին նորմերի (2-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ հոդված, 69-րդ հոդված, 71-րդ հոդվածի 1-ին մաս, 76-րդ հոդված, 96-րդ հոդված, 101-րդ հոդված, 102-րդ հոդված, 108-րդ հոդված) համադրված վերլուծությունը վկայում է, որ այդ օրենսդրական ակտում հստակ տարբերակում է կատարված **վարչական ակտ, գործողություն եւ անգործություն** եզրույթների միջեւ՝ դրանցից յուրաքանչյուրին ներհատուկ բովանդակությանը համապատասխան: Օրենքի

69-րդ հոդվածում գործածվող «ակտ» եզրույթի կիրառմամբ օրենսդիրը չի նույնացրել հիշյալ երեք եզրույթները՝ դրանք ներկայացնելով որպես «վարչական ակտ»: Նշված հոդվածի վերլուծությունը վկայում է, որ վերջինիս իրավակարգավորման առարկայի իմաստով պարզապես «ակտ» եզրույթն օգտագործվել է որպես հավաքական հասկացություն, ինչը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 65-68, 70-72, 114, 145, 154-156, 158-րդ հոդվածների իրավակարգավորման շրջանակներում, չի կարող հիմք հանդիսանալ նշված եզրույթների նույնացման համար:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը կարելի է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանության բացահայտումը՝ դատարանի մատչելիության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման տեսանկյունից:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԳՈ-719, ՍԳՈ-721, ՍԳՈ-780, ՍԳՈ-844, ՍԳՈ-882 որոշումներում կարելի է վարչական մարմինների **անգործության** դեմ դատական պաշտպանության անհրաժեշտությունը, առանց որի լիարժեք չի լինի իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համակարգը:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանության բացահայտմանը՝ սահմանադրական դատարանը, օրենսգրքի հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա, արձանագրում է, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել վարչական արդարադատության համակարգում սահմանելու այնպիսի իրավական կարգավորում, որը կերաշխավորի անձանց դատական պաշտպանության իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրականացումը **ոչ միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող վարչական եւ նորմատիվ ակտերի, նրանց գործողությունների**, այլև նրանց **անգործության** դեմ: Շարունակելով նշված տրամաբանության հետետողական իրացումը՝ օրենսդիրը, որպես օրենսգրքի 1-ին եւ 3-րդ հոդվածների արդյունավետ իրացումն ապահովող իրավական երաշխիք, օրենսգրքում ներառել է «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերառությամբ երկրորդ բաժինը եւ վերջինիս ներքո՝ «Գործ հարուցելու հիմքը եւ հայցի տեսակները» վերառությամբ 11-րդ գլուխը: Այն նախատեսում է վարչական դատարան ներկայացվող հայցերի հետեւյալ տեսակները՝ **վիճարկման** հայց (օրենսգրքի 65-րդ հոդված), **պարտավորեցման** հայց (օրենսգրքի 66-րդ հոդված), **գործողության** կատարման հայց (օրենսգրքի 67-րդ հոդված) եւ **ճանաչման** հայց (օրենսգրքի 68-րդ հոդված), որոնց միջոցով անձինք անմիջականորեն ձեռնամուխ են լինում իրենց խախտված իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությանը:

Նշված հայցատեսակների՝ օրենսգրքի 65-67-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից դրսեւորվող **անգործության** արդյունքում անձանց խախտված իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությունը երաշխավորելուն է կոչված ինչպես պարտավորեցման, այնպես էլ գործողության կատարման հայցը: Ընդ որում՝ պարտավորեցման հայցի դեպքում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ այնպիսի անգործության, որն **առնչվում է վարչական ակտի ընդունմանը**, իսկ գործողության կատարման հայցի դեպքում՝ այնպիսի անգործությանը, որը **չի առնչվում վարչական ակտի ընդունմանը**:

Ավելին, վարչական դատավարության օրենսգրքի այն ընդհանուր տրամաբանությունը, որ վարչական արդարադատության շրջանակներում հավասարապես պետք է

ապահովվի դատական պաշտպանությունը նաև ընդդեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց անգործության, իր հետետողական արտագոյումն է գտել նաեւ Վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածում, որտեղ օրենսդիրը «վարչական ակտ» եւ «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ օգտագործում է նաեւ «անգործություն» եզրույթը՝ այն տարածելով նաեւ **ճանաչման հայցի վրա:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն օրենսգրքի 1-ին, 3-րդ եւ 70-րդ հոդվածների, օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում դրսևտրվել է անհետետողական մոտեցում՝ «վարչական ակտ» եւ «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ չի շեշտվել «անգործություն» եզրույթը: Մակայն օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանությունից բխում է, որ այն իրավակիրառական պրակտիկայի կողմից չպետք է մեկնաբանվի ի վնաս մարդկանց իրավունքների պաշտպանության:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասն օրենսգրքի այլ նորմերի համակարգային վերլուծության տրամաբանությամբ ենթադրում է նաեւ վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության դեպքերը,** եւ իրավակիրառողը պետք է ելնի օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի նման մեկնաբանությունից, հաշվի առնելով, որ.

ա/ օրենսգրքի 1-ին եւ 3-րդ հոդվածներով սահմանված՝ օրենսդրի նպատակից եւ իրավակարգավորման ուղղվածությունից բխում է, որ նշված հոդվածները դատական պաշտպանության հնարավորություն են նախատեսում նաեւ վարչական մարմնի **անգործության** պարագայում,

բ/ օրենսդիրն օրենսգրքի 70-րդ հոդվածում «վարչական ակտ» եւ «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ **ճանաչման հայցին է հավասարապես վերագրում նաեւ «անգործություն»** եզրույթը:

6. ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի առարկային բնորոշ է հետեւյալ առանձնահատկությունը. ճանաչման հայցի առարկայի շրջանակներում օրենսդիրը հնարավորություն է ընձեռում վիճարկել այն միջամտող վարչական ակտերի կամ գործողությունների (անգործության) իրավաչափությունը, որոնք **այլեւս իրավաբանական ուժ եւ նշանակություն չունեն դրանց հասցեատիրոջ համար:** Ընդ որում, նման հայց ներկայացնելու դեպքում հայցվորը պետք է հետապնդի օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խնդիրների լուծման նպատակ:

Վերոհիշյալ առանձնահատկությունը վկայում է, որ օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը հանդես է գալիս որպես իրավունքների պաշտպանության առանձին ինստիտուտ, որն իր իրավակարգավորման առարկայով եւ հետապնդվող նպատակներով բովանդակային առումով տարբերվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-67-րդ հոդվածների հիման վրա տրամադրվող դատական պաշտպանության ինստիտուտից, եւ եթե վերջիններիս շրջանակում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ անձի համար իրավաբանական ուժ եւ նշանակություն ունեցող ակտերի, ապա օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի պարագայում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ անձի համար **այլեւս իրավաբանական ուժ եւ նշանակություն չունեցող ակտերի, այսինքն՝ այնպիսի ակտերի, որոնք իրենց ընդունմամբ, կատարմամբ կամ դրսևտրմամբ հասցեատիրոջ համար ուղղակի իրավական հետեւանք չունեն:**

7. ՀՀ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաև վիճարկվող նորմի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի սահմանադրականության հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները» վերտառությամբ 114-րդ հոդվածի 1-ին մասն սպառնիչ կերպով թվարկում է վարչական գործով կայացվող՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները: Ընդ որում, նշված դատական ակտերի տեսակները թվարկող դրույթները միաժամանակ առնչվում են վարչական դատարանի լիազորություններին: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրում է, որ դատարանների համար օրենքներով սահմանված համապատասխան լիազորությունների առկայությամբ եւ դրանց իրացմամբ է, որ հնարավոր է դառնում երաշխավորել անձանց՝ դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի ուսումնասիրությամբ վկայում է, որ այն կոչված է ապահովելու, մասնավորապես, օրենսգրքի 65-68-րդ հոդվածների իրացումը՝ երաշխավորելով նշված հոդվածների շրջանակներում ներկայացված հայցապահանջների առնչությամբ արդարադատության իրականացումը: Մասնավորապես, օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համակարգային առումով փոխկապակցված է օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, եւ կոչված է ապահովելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու՝ հայցվորի իրավունքի իրականացումը: Մինչդեռ, ի տարբերություն օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի, որտեղ վարչական ակտից զատ նախատեսված է նաև վարչական մարմնի գործողությունը (վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ նաև անգործությունը) վիճարկելու հնարավորությունը, ինչպես նաև ի խախտումն օրենսգրքի, մասնավորապես, 1-ին, 3-րդ եւ 70-րդ հոդվածների իրավակարգավորման տրամաբանության, օրենսգրքի 114-րդ հոդվածը վարչական դատարանին վերապահում է համապատասխան լիազորություն **միայն վարչական ակտի առնչությամբ**: Արդյունքում՝ հաշվի առնելով նաև, որ օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասն առնչվում է վարչական դատարանի լիազորություններին, եւ վարչական դատարանը, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան, կարող է գործել միայն Սահմանադրությամբ եւ օրենքով հստակ սահմանված լիազորությունների շրջանակում, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դրույթը վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը վիճարկելու մասով արգելափակում է օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման հնարավորությունը՝ պատճառ հանդիսանալով ինչպես դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման, այնպես էլ պետության արդարադատական գործառույթի արգելափակման:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ հաշվի առնելով նաեւ վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության հնարավորությունը:

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 փետրվարի 2011 թվականի  
ՍԳ-Ո- 942**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ Ս.ԱՍԱՏՐՅԱՆԻ ԵՎ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 426.3-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ 426.4-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, «ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 69-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 12-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 փետրվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչներ Ա. Չեյնայանի, Կ. Մեժլումյանի,

պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ս.Ասատրյանի եւ Ա.Մանուկյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի եւ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ս.Ասատրյանի եւ Ա.Մանուկյանի համապատասխանաբար՝ 02.07.2010թ. եւ 15.12.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Հաշվի առնելով, որ քաղ. Ս.Ասատրյանի եւ Ա.Մանուկյանի դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը վերաբերում են նույն հարցին, սահմանադրական դատարանի 11.01.2011թ. ՄԳԱՈ-1 աշխատակարգային որոշմամբ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն, նշված գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, վիճարկվող նորմերը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի 426.3-րդ հոդվածը կրում է «Դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երեսան եկած հանգամանքների հետեւանքով» վերտառությունը: Այդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի 4-րդ կետը նոր երեսան եկած հանգամանքների հետեւանքով դատական ակտերի վերանայման հիմք է նախատեսում այն դեպքը, երբ.

« ... ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչեւ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաեւ ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածը կրում է «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետեւանքով» վերտառությունը: Այդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքներով դատական ակտերը, ի թիվս այլ դեպքերի, վերանայվում են, երբ.

« ... Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել ամբողջությամբ կամ մի մասով»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի հունիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը կրում է «Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա (անհատական դիմումների քննություն)» վերտառությունը: Այդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 12-րդ մասը սահմանում է.

«12. Սույն հոդվածում նշված գործերով օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Ավան եւ Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը քննելով թիվ 1-15/2007 քրեական գործը՝ Յու. Գ. Վոլֆսոնին եւ Ս. Վ. Ասատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով, նշանակելով պատիժ՝ ազատազրկման ձեռով, համապատասխանաբար՝ 11 տարի եւ 9 տարի ժամկետով: Դա-

տավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերվել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գործը քննել է լրիվ ծավալով եւ 18.06.2008թ. կայացրել դատավճիռ՝ Յու. Գ. Վուլֆսոնի նկատմամբ սահմանելով 6 տարի ազատազրկման ձեռով պատժաժամկետ, իսկ Ս. Վ. Ասատրյանի վերաբերյալ կայացված դատավճիռը թողել է անփոփոխ: 21.11.2008թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հիմնավորումներով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոհիշյալ դատավճռի դեմ բերվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 15.12.2008թ. թիվ ՎԲ-82/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 28.07.2009թ. ՍԳՈ-818 որոշումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2.1-րդ մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին, Ս.Վ. Ասատրյանը 11.08.2009թ. նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր 25.09.2009թ. թիվ ՎԲ-28/09 որոշմամբ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի եւ 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

Ս. Ասատրյանը հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 15.04.2008թ. ՍԳՈ-751, 22.12.2009թ. ՍԳՈ-849 եւ 23.02.2010թ. ՍԳՈ- 866 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան խնդրելով նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 25.09.2009թ. թիվ ՎԲ-28/09 որոշումը: ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2010թ. թիվ ՎԲ-08/10 որոշումով վճռաբեկ բողոքը վերադարձվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի այն հիմքով, համաձայն որի՝ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայվում են այն դեպքում, երբ « ... Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել», եւ փաստել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը առկա չէ:

Դիմողներից Ա.Մանուկյանը հիմք ընդունելով ԵԿԳ/0106/01/08 քրեական գործով իր նկատմամբ կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2010թ. ՍԳՈ-872 որոշումը, համաձայն որի՝ վերոհիշյալ նորմերը ճանաչվել էին Սահմանադրությանը համապատասխանող՝ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում, 28.04.2010թ. դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ ԵԿԳ/0106/01/08 գործով «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 19.05.2009թ. որոշումը նոր երեսան եկած հանգամանքով կամ նոր հանգամանքով վերանայելու խնդրանքով: Վճռաբեկ դատարանը 07.06.2010թ. որոշմամբ մերժել է վերոհիշյալ գործով վերանայման վարույթ հարուցել այն հիմքով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2010թ. ՍԳՈ-872 որոշումը «նոր հանգամանք» կամ «նոր երեսան եկած հանգամանք» չէ, եւ որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի « ... նոր հանգամանքների հետեւանքով դատական ակտերը վերանայվում են այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել»:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթները, «այնքանով, որքանով վերջնական դատա-



կան ակտի վերանայման հիմք չեն նախատեսում կիրառված նորմի սահմանադրականության հարցը լուծող սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում արտահայտած իրավական դիրքորոշման հետ չհամընկնող մեկնաբանությամբ որոշումը», հակասում են Սահմանադրության 18, 19 եւ 101-րդ հոդվածների պահանջներին: Նույնպիսի հիմնավորմամբ դիմող կողմը վիճարկում է նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի սահմանադրականությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը դիմող կողմը վիճարկում է այնքանով, որքանով այդ հոդվածի նորմերով «որպես նոր հանգամանք դատական ակտի վերանայման հիմք չի համարվում այն դեպքը, երբ վիճարկվող օրենքը (օրենքի դրույթը) նախկինում կիրառվել է սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշման հետ չհամընկնող մեկնաբանությամբ», հետեւաբար՝ հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածներին: Ըստ դիմող կողմի՝ այդ հակասությունը կայանում է նրանում, որ թեեւ սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումներով հաստատվում է դատարանի կողմից կիրառված օրենքի դրույթի համապատասխանությունը Սահմանադրությանը՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման շրջանակներում, սակայն նաեւ փաստվում է (ուղղակի կամ անուղղակի), որ այդ նորմերը դատարանի կողմից կիրառվել են տրամազծորեն այլ մեկնաբանությամբ, որը չի բխել Սահմանադրության համապատասխան դրույթներից: Այսինքն՝ ակնհայտ է դառնում, որ խախտվել է անձի անմիջականորեն գործող սահմանադրական իրավունքը, սակայն սահմանադրական դատարանի նման որոշումը չի դառնում անձի իրավունքի դատական պաշտպանության արդյունավետ միջոց, քանի որ հիմք չի հանդիսանում նոր հանգամանքի ուժով դատական ակտը վերանայելու, իրավունքի խախտումը վերացնելու համար, ինչի արդյունքում խախտված իրավունքը չի վերականգնվում: Մինչդեռ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասն իրավական հետեւանքներ է առաջացնում եւ պետք է նոր հանգամանք դիտվի: Հակառակ դեպքում, ինչպես գտնում է դիմող կողմը, կարող է հարվածի տակ դրվել նաեւ ՀՀ իրավական եւ քաղաքական անվտանգությունը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ Սահմանադրությանը համապատասխանող օրենքի դրույթները դատարանների կողմից կմեկնաբանվեն եւ կկիրառվեն այլ Սահմանադրությանը հակասող իմաստով: Դատական ակտերի վերանայման բացակայության առկա իրավակարգավորման պայմաններում, ինչպես նշում է դիմող կողմը, չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով «ինքնանպատակ եւ ոչ արդյունավետ»: Միաժամանակ, դիմող կողմը պնդում է, որ վեճի առարկա իրավանորմերը ձեւակերպված են այնքան անորոշ, որ իրավակիրառական պրակտիկայում հանգեցրել են դրանց այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որ խախտվում են ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 101-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

4. Առարկելով դիմող կողմի փաստարկների դեմ՝ պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ սահմանադրական դատարանը վիճարկվող նորմի սահմանադրականության գնահատման արդյունքում կայացնում է միայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասով

նախատեսված որոշումներից մեկը, որոնցից միայն վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը գործի վերանայման համար կարող է նոր հանգամանք լինել:

Նման իրավակարգավորումը, ինչպես փաստում է պատասխանողը, բնորոշ է մի շարք պետությունների օրենսդրությանը (Էստոնիա, Բոսնիա եւ Հերցեգովինա, Մերքիա, Լատվիա եւ այլն):

Վերոնշյալ նույնպիսի հիմնավորումներով պատասխանող կողմը փաստարկում է նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականության վերաբերյալ պատասխանող կողմը հայտնում է այն տեսակետը, համաձայն որի՝ դիմող կողմը «վիճարկվող իրավադրույթների հակասահմանադրականության վերաբերյալ որեւէ փաստարկ չի ներկայացրել եւ սահմանափակվել է միայն ընդհանուր բնույթի դատողություններով»:

Միաժամանակ, պատասխանող կողմը միջնորդում է սույն գործով վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի մասով կարճել:

5. Ուսումնասիրելով վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ դիմող եւ պատասխանող կողմերի դիրքորոշումները եւ ներկայացված փաստարկները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի մասով գործը կարճելու հիմքեր չկան, հետեւաբար, այն ենթակա է քննության ամբողջ ծավալով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ ՀՀ սահմանադրական դատարանի 15.04.2008թ. ՄԳՈ-751 որոշմամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր «այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը»:

Փաստելով, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածում ՄԳՈ-751 որոշումից բխող անհրաժեշտ փոփոխություններ դեռեւս չեն կատարվել, միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասի եւ 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերով օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի առնչությամբ գործի վարույթը ենթակա է կարճման:

6. Սույն գործով իրավանորմերի սահմանադրականության վիճարկման հիմքում դիմող կողմը, ըստ էության առաջադրում է հետեւյալ խնդիրները.

ա/ ինչպիսի՞ն են սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների էությունն ու բովանդակությունը,

բ/ ինչպիսի՞ն են իրավական դիրքորոշումների իրավաբանական ուժը եւ այդ դիր-

քորոշումներով պայմանավորված իրավական հետեւանքները՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման առումով:

Վերոհիշյալ հարցադրումների շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել՝ ելնելով.

- ՀՀ սահմանադրական դատարանի՝ որպես ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունն ապահովող մարմնի լիազորությունների սահմանադրաիրավական բովանդակությունից,

- սահմանադրական դատարանի որոշումների, որպես հանրային-իրավական բնույթի վեճերով օբյեկտիվ եւ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված նորմատիվ ակտերի, իրավաբանական ուժի եւ ՀՀ իրավահամակարգում դրանց ունեցած տեղի եւ դերի իրավական բովանդակությունից,

- սահմանադրական դատարանի որոշումների, դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների, որպես իրավունքի (այդ թվում՝ ճյուղային) զարգացման կարեւոր աղբյուրի միասնական իրավաընկալման անհրաժեշտությունից,

- իրավասուբյեկտների (այդ թվում՝ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների) կողմից սահմանադրական դատարանի որոշումների, ներառյալ՝ դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների պարտադիր կատարման (դատական բողոքարկման շրջանակներում դրանց՝ որպես նոր հանգամանք դիտարկելու) պայմանների հստակեցման անհրաժեշտությունից,

- ՀՀ իրավական պրակտիկայում ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների նկատմամբ ձեւավորված մոտեցումներից,

- սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիր կատարմանն ուղղված իրավապայմանների՝ օրենքով հետագա երաշխավորման անհրաժեշտությունից:

Ելնելով սույն գործով դիմումների առարկայից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառելիության սահմանադրականությունը գնահատել հիմք ընդունելով **իրավական նորմերի սահմանադրականության որոշման գործերով** (վերացական, ինչպես նաեւ անհատական դիմումներով) ընդունվող որոշումների առանձնահատկությունները:

7. Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի եւ դրա առանձնահատկությունների բովանդակությանը դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում (ՄԳ-Ո-652, ՄԳ-Ո-665 եւ այլն): Վերահաստատելով այդ խնդրի առնչությամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումները, ելնելով նաեւ սահմանադրական արդարադատական մարմինների ստեղծման ու գործունեության՝ միջազգային պրակտիկայում հաստատագրված գործառնությանն ու կառուցակարգային սկզբունքներից, ինչպես նաեւ կոնկրետ լիազորությունների շրջանակներից՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորմերի համալիր վերլուծությամբ հատկանշել այն առանձնահատկությունները, որոնց գնահատման արդյունքում է հնարավոր հստակեցնել սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը:

8. ՀՀ սահմանադրական դատարանն օժտված է սահմանադրաիրավական առանձնահատուկ կարգավիճակով, որը պայմանավորված է պետական իշխանության մարմին-

ների համակարգում իր ունեցած տեղով, դերով և դրան համապատասխան լիազորություններով (ՀՀ Սահմանադրության 92 և 100-րդ հոդվածներ): Որպես դատական մարմին բացառապես սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված իրականացնել սահմանադրական արդարադատություն (ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդված): Սահմանադրական դատարանը կոչված է ապահովելու ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որի արդյունքում ընդունում է որոշումներ (եզրակացություններ): Այդ ակտերը ՀՀ իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ և թե՛ ունեցած իրավական հետեւանքների առումներով: Գրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին: Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և ենթակա չեն քննարկման (վիճարկման, քննության) պետական, տեղական ինքնակառավարման որեւէ մարմնի կամ պաշտոնատար անձի, կազմակերպության կամ անհատի կողմից:

Սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայացնում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ **վարքագծի կանոններ**: Գրանով է պայմանավորված սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվ բնույթը, ինչպես նաև այդ ակտերին անմիջականորեն հաջորդող իրավական առանձնահատուկ հետեւանքները՝ կապված հակասահմանադրական ճանաչված իրավանորմի իրավաբանական ուժը կորցնելու, սահմանադրական նորմերի մեկնաբանման (իրավական դիրքորոշումների) շրջանակներում իրավանորմը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, ինչպես նաև սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրներին լուծում ու փաստերին գնահատական տալու հետ (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 3-9-րդ կետեր):

Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը՝ **ՀՀ իրավահամակարգում** այդ ակտերի տեղի և դերի իմաստավորման տեսանկյունից, կայանում է հետևյալում.

- ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ՀՀ իրավական ակտերի ստորադասության համակարգում դասված են Սահմանադրությունից և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքից հետո, այդպիսով որոշվում է նաև այդ ակտերի իրավաբանական ուժը: Օրենքները, ինչպես նաև ՀՀ օրենսդրության այլ ակտերը չպետք է հակասեն սահմանադրական դատարանի որոշումներին («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9, 12, 13, 13.1, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ հոդվածներ), հետևաբար՝ սահմանադրական դատարանի որոշումներն իրավական ցանկացած այլ ակտի նկատմամբ ունեն իրավաբանական առավել բարձր ուժ,

- այդ որոշումները որպես դատարանի վերջնական ակտեր ընդունվում են Հայաստանի Հանրապետության ամունից, որոնց կատարումը (որպես իրավական ակտ) երաշխավորված է օրենքով և ապահովված է պետական հարկադրանքի ուժով («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված),

- սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են ՀՀ բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդված):

Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթն առանձնահատուկ է նաեւ **ՀՀ ընդհանուր եւ մասնագիտացված դատարանների ակտերի համակարգում**: Սահմանադրական դատարանի որոշումների եւ դատական այլ ակտերի բնույթի, բովանդակության եւ դրանց իրավաբանական ուժի համեմատական վերլուծությունը վկայում է, որ.

- սահմանադրական արդարադատություն իրականացնելը եւ այդ գործառույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում կայացնելը, ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է (ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի երկրորդ մաս եւ 93-րդ հոդված),

- քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր՝ սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված բոլոր դատարանների կողմից,

- իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 եւ 63-րդ հոդվածների պահանջներից, սահմանադրական դատարանը գնահատում է նաեւ արդարադատական (ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների) պրակտիկան, բացահայտելով նաեւ կիրառվող (այդ թվում՝ դատական պրակտիկայում) օրենքների (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակությունը՝ զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը,

- իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետեւանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն,

- սահմանադրական դատարանն իր որոշումներով ըստ էության մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը,

- սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որեւէ դատարանում:

Վերոհիշյալ առանձնահատկությունները պայմանավորված են նաեւ սահմանադրական դատարանի ակտերով կարգավորվող հարաբերությունների սահմանադրաիրավական բովանդակությամբ: Այդ ակտերի՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելը, ինչպես նաեւ դրանցում ամրագրված նորմերի երաշխավորված անփոփոխելիությունը (վերջնական լինելը, որպես կանոն՝ վերանայելի չլինելը) ՀՀ Սահմանադրությամբ նախատեսելը (102-րդ հոդված) կարեւորվում է հետեւյալ հիմնավորումներով.

- սահմանադրական դատարանի որոշումներով լուծվում են հանրային-իրավական կարեւորություն ունեցող այնպիսի գործեր, որոնք անմիջականորեն կապված են ՀՀ Սահմանադրության նորմերի մեկնաբանման ու կիրառման, իրավական, քաղաքական անվտանգության, հանրային իշխանության անընդատության (հաջորդայնության), այդ իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրենց սահմանադրական գործառույթների անվերապահ կատարման, ինչպես նաեւ օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմանադրականության որոշման հետ, հետեւաբար՝ այդ ակտերում ամրագրված նորմերը ենթակա են անվիճելի եւ անհապաղ կատարման,

- առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքներով՝ սահմանադրական դատարանն իր որոշումներով եւ իր իրավասության շրջանակներում ապահովում է ինչպես անձանց (ֆիզիկական, իրավաբանական) խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, այդ իրավունքներով պետության սահմանափակումը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված), այնպես էլ սահմանադրական կարգի հիմունքների կայունությունը (սահմանադրական օրինականությունը), որով պարտավորեցնում է հանրային իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնատար անձանց ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ կատարելու սահմանադրական դատարանի որոշումների պահանջները, այդ թվում ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններին՝ մեկնաբանելու եւ կիրառելու օրենքներն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, ինչպես նաեւ նոր հանգամանքների հիմքով վերանայելու անձանց նկատմամբ կայացված դատական ակտերը:

9. Ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի, իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական բնույթի եւ դրանով պայմանավորված իրավական հետետեանքների վերոհիշյալ առանձնահատկություններից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր կողմից ընդունված ակտերը, դրանց բնույթն ու իրավաբանական ուժը պետք է ընկալվեն եւ գնահատվեն, ինչպես եւ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող ցանկացած այլ պետական մարմնի պարագայում, **«գործառնական եւ կառուցակարգային կարգավիճակ»** համադրության եւ միասնության մեջ, տվյալ դեպքում՝ ՀՀ Սահմանադրության 92-րդ (2-րդ մաս), 93-րդ, 94-րդ (3-րդ մաս), 100-րդ եւ 102-րդ հոդվածներում ամրագրված նորմերի եւ սույն որոշման 8-րդ կետում տրված դրանց մեկնաբանությունների շրջանակներում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանի որոշումը, ինչպես եւ ցանկացած իրավական ակտ, ենթակա է իրավական տեխնիկայի միասնական կանոններին՝ այն առանձնահատկություններով, որոնք սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, որի նպատակը նաեւ դրանց միակերպ, ամբողջական ընկալման ապահովումն է անձանց եւ իրավակիրառող սուբյեկտների կողմից (այդ հիմնախնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում՝ ՍԳ-Ո-630, ՍԳ-Ո-720, ՍԳ-Ո-723, ՍԳ-Ո-780 եւ այլն):

Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաեւ իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական եւ եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաեւ դրանցից բխող օբյեկտիվ եւ սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հատկությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված **իրավական դիրքորոշումները**, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված եւ որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության եւ բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով հստակ բացահայտված չէ «իրավական դիրքորոշում»

եզրույթի բովանդակությունը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման, դրա իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած դերի եւ նորմաստեղծ նշանակության խնդիրներն օրենքով դեռեւս լիարժեք կարգավորման չեն ենթարկվել: Սահմանադրական դատարանն իր ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում կարեւորել է իրավակիրառող սուբյեկտների կողմից սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր հաշվի առնելու հանգամանքը, որպէս նաեւ սահմանադրական արդարադատական միջազգային պրակտիկայում հաստատված կանոն: Այնուամենայնիվ, որպէս հանրային-իրավական հարաբերությունների կարգավորման միջոց՝ իրավական դիրքորոշման ինստիտուտը ներդրված է ՀՀ իրավահամակարգում, մասնավորապէս՝ վարչական արդարադատության բնագավառում (Վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մաս) եւ կիրառվում է ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում հատկապէս անհատական դիմումի ինստիտուտի ներդրման արդյունքում (2006թ. հուլիսի 1-ից): Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավական բնույթը որոշ հստակեցում է ստացել նաեւ ՀՀ Ազգային ժողովի որոշումներում, երբ միջազգային պայմանագրերը վավերացվում են ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի ամեն մի կոնկրետ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԳՈ-652, ՄԳՈ-701, ՄԳՈ-833) անդրադարձել է իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների իրավաբանական բնույթին, մասնավորապէս նշելով, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավունք վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է», «...հակասահմանադրական ճանաչված եւ տարաժամկետով իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած եւ օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաեւ հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում»: Շեշտվել է նաեւ, որ «...սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան միարժեք վկայում է, որ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումներում Սահմանադրության կամ օրենքի նորմի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) միջոցով արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր բնույթ ունեն ինչպէս իրավակիրառողների, այնպէս էլ օրինաստեղծ մարմինների համար»:

ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկան վկայում է, որ իրավական դիրքորոշումներ դատարանն արտահայտում է գործով ըստ էության կայացված, ինչպէս նաեւ գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներով («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 60-րդ հոդվածների հիման վրա): Դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որպէս կանոն, բովանդակում են տվյալ գործի լուծման հիմքում դրված իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք վերաբերում են.

- ՀՀ Սահմանադրության նորմերի, միջազգային պայմանագրերում ամրագրված

պարտավորությունների, օրենքների, ինչպես նաև օրենսդրության այլ ակտերի (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, դրանց սահմանադրական արժեքանությունից բխող ընկալմանն ու կիրառմանը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը, այդ ամենի արդյունքում՝ վիճարկվող նորմի (իրավական ակտի) սահմանադրականությունը գնահատելուն,

- իրավակիրառական (այդ թվում՝ արդարադատական) պրակտիկան գնահատելուն եւ այդ պրակտիկայում ՀՀ Սահմանադրության նորմերը, օրենքները եւ իրավական այլ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությանը,

- սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ու փաստերին գնահատական տալուն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական եւ միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու եւ կիրառելու ուղղությամբ: Որպես սահմանադրական իրավունքի կարետր աղբյուր՝ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ (նորմաստեղծ) գործունեության համար: Իր որոշումներում բացահայտելով օրենքի (դրա առանձին դրույթների) կամ այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արտահայտում է իրավական դիրքորոշումներ, որոնց հիման վրա էլ որոշում է տվյալ նորմերի կամ իրավական ակտի իրավաբանական ուժի հարցը՝ Սահմանադրությանը հակասելու դեպքում ճանաչելով այն անվավեր: Դրանով պայմանավորված՝ նաև առաջանում է այդ ակտով (նորմերով) նախկինում կարգավորվող իրավահարաբերության հետագա կարգավորման, հետեւաբար՝ հանրային իշխանության իրավասու մարմնի իրավաստեղծ (օրինաստեղծ) գործունեության անհրաժեշտություն:

Ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի ու իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական ուժի եւ բնույթի առանձնահատկություններից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները.

ա/ անմիջականորեն բխում են սահմանադրական դատարանի լիազորություններից, հետեւաբար՝ կրում են պաշտոնական բնույթ,

բ/ ունեն կոնկրետ իրավական հետեւանք, հասցեագրված են ինչպես տվյալ գործով կոնկրետ, այնպես էլ հանրային-իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին (համընդգրկուն են),

գ/ ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, կարող են փոփոխվել միայն սահմանադրական դատարանի որոշումներով,

դ/ կոչված են ՀՀ իրավահամակարգում եւ իրավակիրառական պրակտիկայում նպաստելու իրավական անորոշության վերացմանը, դրվում են իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմքում, ունեն նախադեպային բնույթ,

ե/ մինչեւ վեճի առարկա հարաբերության նորմատիվ կարգավորումը, որոշ դեպքերում նաև իրավակարգավորման ժամանակավոր միջոց են,

զ/ ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են:



10. Միջազգային պրակտիկան նույնպես միարժեք վկայում է, որ իրավունքի գերակայության, հետեւաբար եւ՝ Սահմանադրության գերակայության, երաշխավորման գլխավոր նախապայմանը համապարտադիր, վերջնական եւ erga omnes բնույթ ունեցող դատական ակտերի կատարման երաշխավորումն է, ակտեր, որոնք իրավական բովանդակությունից զրկվում են առանց դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առկա նախադեպային իրավունքի (Philis v. Greece, para. 59, Golder v. the United Kingdom, paras. 34-36, Hornsby v. Greece, p. 40, Di Pede v. Italy, paras. 20-24, Zappia v. Italy, paras. 16-20, Immobiliare Saffi v. Italy, p. 66) ուսումնասիրությունը վկայում է, որ Եվրոպական դատարանը ներպետական դատական ատյանների որոշումների կատարման վերաբերյալ նշում է. ««դատարանի իրավունքը» կլինի ոչ իրական, եթե պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տա, վերջնական, պարտադիր ուժ ունեցող դատական ակտին մնալ անկիրառելի ի վնաս կողմերից մեկի շահերի», «ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարումը պետք է դիտարկվի որպես դատաբնութային անբաժանելի մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով»:

Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումները սահմանադրական-արդարադատական մարմինների կառուցակարգային դերի եւ ընդունած որոշումների իրավաբանական բնույթի վերաբերյալ՝ հանգեցնում են այն եզրակացությանը, որ անհատական դիմումների ազգային համակարգը պետք է լինի լիարժեք ու ամբողջական, ներառի բոլոր իրավական ակտերը, այդ դիմումներով ընդունված որոշումները պետք է արդյունավետ ազդակ հանդիսանան ընդհանուր իրավասության դատարաններում անձանց նկատմամբ գործերի վարույթը նորոգելու կամ սկսված վարույթը կարճելու համար, ինչպես նաեւ պետք է նախատեսվեն իրավական գործուն միջոցներ՝ այդպիսի որոշումներով պատասխանող կողմից արդարացի հատուցում պահանջելու ուղղությամբ (Cocchiarella judgment (ECtHR, GC, Cocchiarella v. Italy, 29 March 2006, պարագրաֆներ 76-80 եւ 93-97, ON INDIVIDUAL ACCESS TO CONSTITUTIONAL JUSTICE. Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010), պարագրաֆներ 79, 94):

11. Դիմող կողմի փաստարկները սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ՝ ունեն բովանդակային ընդհանրություն, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ ՀՀ Սահմանադրությանը վիճարկվող իրավանորմի համապատասխան լինելը սահմանադրական դատարանը ճանաչում է իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակներում, դատական պրակտիկայում դրան տրված այլ մեկնաբանության պարագայում պետք է հիմք հանդիսանա նոր հանգամանքներով դատական համապատասխան ակտերը վերանայելու համար:

Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման պարտադիր լինելու հանգամանքը, ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանը կարեւորել է իր բազմաթիվ որոշումներում եւ տարեկան հաղորդումներում, արձանագրելով ինչպես իրավակիրառական, այնպես էլ իրավաստեղծ պրակտիկայում դրանց թե՛ կատարման եւ թե՛ շրջանցման դեպքերը: Իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ լիարժեք կատարման

փաստերը, ինչն առկա է նաև սույն գործով, սահմանադրական դատարանը պայմանավորել է իրավակիրառական պրակտիկայում առկա թերություններով, ինչպես նաև օրենսդրական անհրաժեշտ կարգավորումների բացակայությամբ:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս կարելու է այդ հիմնախնդիրների լուծման իրավական միջոցների կիրառելիությունը, կապված՝

ա/ իրավակիրառողների կողմից սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիր կատարման հետ՝ ելնելով իրավունքի գերակայության, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության եւ սահմանադրաիրավական այլ սկզբունքներից, ինչպես նաև գործող օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումներից,

բ/ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիր կատարմանն ուղղված լրացուցիչ իրավապայմանների՝ օրենքով հետագա երաշխավորման անհրաժեշտության հետ:

Իրավական նորմերի սահմանադրականության որոշման գործերով (վերացական, ինչպես նաև անհատական դիմումներով) սահմանադրական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- 1) վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,
- 2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին:

Ելնելով սահմանադրական դատարան ներկայացված դիմումի ընդունելիության, բարձրացված հարցերի ընդդատության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ հանգամանքներից՝ սահմանադրական դատարանը վերոհիշյալ գործերով ընդունում է նաև որոշումներ՝ գործի քննությունը մերժելու կամ վարույթը կարճելու վերաբերյալ:

Վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս սահմանադրական դատարանը հաճախ (ինչպես օր. ՄԴՈ- 872, ՄԴՈ-890, ՄԴՈ-903, ՄԴՈ-906, ՄԴՈ-918, ՄԴՈ-920, ՄԴՈ-923 եւ այլ գործերով) մեկնաբանելով վիճարկվող իրավանորմերը՝ տալիս է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը՝ որոշման եզրափակիչ մասում ճանաչելով այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը Սահմանադրությանը՝ իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում, կամ մասամբ՝ որոշակի իրավակարգավորման շրջանակում, դրանցով իսկ մատնանշելով.

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի եւ կիրառվի տվյալ նորմը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետեւանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ:

Սահմանադրական դատարանը ելնում է այն հիմնարար դրույթից, որ սահմանադրական արդարադատության իմաստը սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է, եւ ոչ մի ընթացակարգային նորմ կամ դրա ոչ հստակ ձեւակերպում չի կարող սահմանադրական գործառույթի իրացման խոչընդոտ հանդիսանալ:

Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր են դիմող կողմի այն պնդումները, համաձայն որի՝ իրավական դիրքորոշումների շրջանակում **սահմանադրական ճանաչված նորմը չի կարող կիրառվել սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունից տարբերվող բովանդակությամբ**: Հակառակ դեպքում իրավասու պետական մարմնի, այդ թվում՝ դատարանի, գործողություններն ու ակտերն ակնհայտ կհակասեն ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ եւ մի շարք այլ հոդվածներով երաշխավորված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին: ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանները պարտավոր են ըստ էության գործի քննության, ինչպես նաեւ դատական բողոքարկման շրջանակներում նորմատիվ իրավական ակտերը կիրառելիս հաշվի առնել դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, գործող դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով **դատական սխալի փաստը գնահատելիս**, եթե կոնկրետ գործով անձանց նկատմամբ կիրառված նյութական կամ դատավարական այս կամ այն նորմի սահմանադրաիրավաբանական վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը: Այդպիսի հիմնավորմամբ դատական ակտերը վերանայելու պահանջով շահագրգիռ անձանց դիմումները պետք է քննության առնվեն իրավասու դատարանների կողմից, իսկ առանց հիմնավոր պատճառաբանման այդպիսի դիմումի քննությունը մերժելն անձին հնարավորություն կընձեռի իր իրավունքների եւ ազատությունների միջազգային-արդարադատական պաշտպանության համար: Իսկ այդպիսի շարունակական պրակտիկան կհակասի ոչ միայն ՀՀ սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին, այլե՛ ՀՀ ստանձնած միջազգային մի շարք պարտավորություններին:

ՀՀ սահմանադրական դատարանը նաեւ հարկ է համարում վկայակոչել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման եւ վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ... նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար»: Միաժամանակ, առաջարկվում է Պայմանավորվող պետություններին՝ համոզվել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ *restitutio in integrum*-ի հասնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության որոշման վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետեւաբար՝ նաեւ սահմանադրաիրավական պահանջ:

Այդուհանդերձ, անվերապահորեն ընդունելով, որ եթե օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից **որեւէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**, սպա սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով խնդիրն այլ լուծում ունի:

**Նախ.** փաստն այն է, որ դատական պրակտիկան, օրենսդրական առկա ձեւակերպումներից ելնելով, նոր հանգամանք չճանաչելով սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը ճանաչվել է սահմանադրական, հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: **Երկրորդ՝** փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետեւաբար՝ եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: **Երրորդ՝** մնան իրավիճակը ոչ միայն դատավարական օրենսգրքերի, այլեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ է պայմանավորված:

Ակնհայտ է, որ առկա իրավակարգավորումն ու իրավակիրառական պրակտիկան հակասության մեջ են մտնում ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 6, 18, 19, 92, 93-րդ եւ մի շարք այլ հոդվածների պահանջների հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների կողմից որպես նոր հանգամանք ճանաչելու հարցը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական եւ թե՛ վարչական դատավարությունում **համալիր ու անհետաձգելի** կարգավորման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասով գործի վարույթը կարճել:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի համալիր լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության

երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 փետրվարի 2011 թվականի  
ՍԳ-Ո-943**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ՕՀԱՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԸ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒՐՔԻ  
10-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 302-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**4 մարտի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Կիվիրյանի, Դ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Օհանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 302-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Օհանյանի՝ 06.09.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստո-

րագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից»:

Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առաջինը է»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Գիմողը 30.11.2003թ. «Երեւանի անտառտնտեսություն» ԳՓԲ ընկերության հետ կնքել է անտառային տարածքի 10 տարի ժամկետով վարձակալության պայմանագիր, որից ծագող գույքային իրավունքը, սակայն, օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չի ստացել:

09.07.2008թ. Երեւանի քաղաքապետարանի եւ Ա. Ավանյանի միջեւ դիմողի վարձակալած տարածքի առնչությամբ կնքվել է առուվաճառքի պայմանագիր: 02.07.2009թ. դիմող Ա. Օհանյանը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ նշված առուվաճառքի պայմանագիրը եւ Ա. Ավանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու եւ Երեւանի քաղաքապետին՝ իր վարձակալած տարածքն ուղղակի վաճառքի ձեռով օտարելուն պարտավորեցնելու պահանջով:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 10.02.2010թ. վճռով Ա. Օհանյանի հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել, հետեւաբար՝ նշված գործարքն իրավաբանական ուժ չի ստացել եւ քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ չի առաջացրել:

ՀՀ վարչական դատարանի նշված վճիռը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 19.05.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Գիմողը փաստարկում է, որ վիճարկվող նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը որպես իրավունքների եւ պարտականությունների սահմանման, փոփոխման եւ դադարման հիմք է դիտարկում գործարքը, հետեւաբար, պատշաճ կարգով կնքված գործարքն արդեն իսկ բավարար իրավական հիմք է հանդիսանում իրավունքներ եւ պարտականություններ առաջացնելու, փոխելու եւ դադարեցնելու համար: Վկայակոչելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ դիմողը գտնում է, որ գրանցման է ենթակա արդեն իսկ ծագած, գոյություն ունեցող իրավունքը: Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ նշված օրենքի համապատասխան դրույթները՝ դիմողը եզրահանգում է, որ «օրենսդիրը պետական գրանցման միջոցով ոչ թե ծագեցնում է իրավունքը, պայմանավորում իրավունքի ծագումը, այլեւ առկա իրավունքը պետական գրանցման միջոցով ստանում է պետական պաշտպանություն»: Նման պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասի դրույթը, ըստ դիմողի, որոշակի չի դարձնում, թե անձը երբ եւ ինչպիսի փաստի միջոցով է ձեռք բերում քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ՝ վարչարարության իրականացման արդյունքում ընդունվող վարչական ակտի, թե գործարքի միջոցով:

Միաժամանակ դիմողը գտնում է, որ գործարքի հիման վրա իրավունքների ծագու-

մը պետական գրանցման փաստով պայմանավորելը, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի, սահմանափակում է անձի սեփականության իրավունքը:

4. Ըստ պատասխանողի՝ գործարքը նպատակաուղղված իրավաչափ իրավաբանական գործողություն է, որի արդյունքում կարող են իրավական հետեւանքներ առաջանալ, եթե այն համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին: Այդ իսկ պատճառով օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքներն անվավեր են: Գործարքի առանձին տեսակների համար սահմանելով դրանցից բխող իրավունքների պարտադիր պետական գրանցման պահանջ՝ օրենսդիրը միեւնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է այդ պահանջը չկատարելու իրավական հետեւանքները: Գործարքի ձեւի եւ դրա չպահպանման հետեւանքների հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով, եւ այդ հարաբերություններն անհրաժեշտ է դիտարկել իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ:

Պատասխանողի պնդմամբ՝ վիճարկվող նորմերը համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ հստակ սահմանում են օրենսդրի կամքը, այդ նորմերը պարզ, հասկանալի եւ միանշանակ են իրավակիրառողի եւ տվյալ իրավանորմի հասցեատերերի համար: Վիճարկվող իրավադրույթների բովանդակությունը թույլ է տալիս իրավունքի սուբյեկտին տվյալ հանգամանքներում կողմնորոշվել, թե ինչ իրավական նորմեր են ենթակա կիրառման եւ հստակ կանխատեսել իր վարքագծի իրավական հետեւանքները:

5. Վիճարկվող դրույթների՝ իրավական օրենքին ներկայացվող որոշակիության պահանջին համապատասխանությունը պարզելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ դրույթները դիտարկել դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ դրույթների հետ համադրության մեջ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը որպես անշարժ գույքի նկատմամբ ցանկացած հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածը որպես պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման: Բացի գործարքից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ գլխի դրույթները որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմք են ճանաչում, ի թիվս այլնի, նաեւ անձի կողմից իր համար նոր անշարժ գույքի ստեղծումը (ՀՀ քաղ. օր.-ի 173-րդ հոդված), ձեռքբերման վաղեմությունը (ՀՀ քաղ. օր.-ի 187-րդ հոդված): Օրենսգրքի 173-րդ եւ 187-րդ հոդվածները համապատասխանաբար նշված հիմքերով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը եւս պայմանավորում են այդ իրավունքի պետական գրանցման պահով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահը դիտում է որպես այդ իրավունքի ծագման նախապայման ոչ միայն սեփականության իրավունքի պարագայում, այլեւ անշարժ գույքի նկատմամբ ցանկացած այլ գույքային իրավունքի առնչությամբ: Մասնավորապես, ՀՀ քաղաքա-



ցիական օրենսգրքի 225-րդ եւ 235-րդ հոդվածներն իրավունքի պետական գրանցման պահով են պայմանավորում նաեւ համապատասխանաբար՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի եւ որոշ դեպքերում՝ գրավի իրավունքի ծագումը:

Վերոհիշյալը վկայում է, որ օրենսդիրը միանշանակորեն անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այս կամ այն հիմքից բխող իրավունքների պետական գրանցման փաստին հաղորդել է միանգամայն որոշակի նշանակություն] քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների համար հստակ է, որ օրենսդիրն անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագումը պայմանավորել է ոչ թե դրանց համար հիմք հանդիսացող հանգամանքների առկայությամբ, այլ այդ հանգամանքների առկայության պայմաններում համապատասխան գույքային իրավունքի պետական գրանցման՝ անշարժ գույքի հետ կապված գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների ճանաչման փաստով:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վիճարկվող 10-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես որպես գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահ է սահմանում դրանց գրանցման պահը: Օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է պետական գրանցման ենթակա իրավունքների շրջանակը, այն է՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները՝ չբացառելով օրենքով պետական գրանցման ենթակա այլ իրավունքներ սահմանելու հնարավորությունը: Օրենսգրքի 301-րդ հոդվածն անշարժ գույքի հետ կատարվող գործարքի կողմերին պարտավորեցնում է գործարքից ծագող իրավունքները ենթարկել պետական գրանցման: Միաժամանակ, օրենսգրքի 302-րդ հոդվածը սահմանում է օրենքի նշված պահանջը չկատարելու իրավական հետեւանքները, այն է՝ գործարքը, որից ծագող իրավունքներն օրենքով սահմանված ժամկետում պետական գրանցում չեն ստանում, առաջին է՝ օրենքի ուժով գոյություն չունի: Նշված նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ **նախ**՝ նման իրավակարգավորումը երաշխավորում է անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների հավասարակշռումը՝ դրանով իսկ համապատասխան նախադրյալներ ստեղծելով իրավունքների պաշտպանության համար: **Երկրորդ**՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններում քաղաքացիաիրավական շրջանառության մասնակիցները լիարժեք հնարավորություն են ունենում կանխատեսելու իրենց համապատասխան վարքագծի իրավական հետեւանքները: **Երրորդ**՝ իրավական պայմաններ է ստեղծում պետության կողմից անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցելուն, գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելուն, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին, իրավաբանական անձանց, բանկերին, քաղաքացիներին գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն, ինչպես նաեւ այդպիսի տեղեկատվության մատչելիությունը, օբյեկտիվությունը եւ անընդհատությունն ապահովելուն, այսինքն՝ այնպիսի խնդիրներ եւ նպատակներ, որպիսիք միտված են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածից բխող՝ պետության պարտականությունների կատարման երաշխավորմանը:

Ինչ վերաբերում է դիմողի մատնանշած՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի եւ վիճարկվող դրույթների միջեւ ենթադրյալ հակասությանը, ինչը, ըստ դիմողի, վկայում է վերջիններիս անորոշության մասին, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք ունեն միմյանցից բովանդակային առումով

տարբերվող իրավակարգավորման առարկաներ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների համար **հիմք հանդիսացող հանգամանքները**՝ վերջիններիս թվում մատնանշելով նաեւ պայմանագրերն ու գործարքները: Այդ նորմին համապատասխան՝ օրենսգրքի 289-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների սահմանման, դադարման եւ փոփոխման համար հիմք հանդիսացող «գործարք» եզրույթի քաղաքացիաիրավական բովանդակությունն է բացահայտում: Մինչդեռ օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է գույքային իրավունքների ծագման համար հիմք հանդիսացող այս կամ այն հանգամանքի առկայության պայմաններում գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահը: Այն-հայտ է, որ քաղաքացիական իրավունքների, այդ թվում՝ սեփականության, ու պարտականությունների «**ծագման հիմքերը**» եւ «**ծագման պահը**» միեւնոյն իրավական բովանդակությունը չունեն: Օրենքով նախատեսված հիմքերը, այդ թվում՝ գործարքը, անհրաժեշտ են, բայց ոչ բավարար սեփականության նկատմամբ իրավունքի իրացումը երաշխավորելու համար: Այն պետք է նաեւ օրենքով սահմանված կարգով իրավական ճանաչում ստանա: Սակայն այդ ճանաչումը չի կարող հայեցողական բնույթ ունենալ եւ **անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում** խոչընդոտել սեփականության իրավունքի իրացմանը: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների բնույթից ու նշանակությունից ելնելով, հստակ տարանջատել է անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում գույքի նկատմամբ **իրավունքի ծագման** երեք պահ. գույքի **հանձնման պահից** /հոդվ. 176/, գործարքի **նոտարական վավերացման պահից** /հոդվ. 299/, գույքի նկատմամբ իրավունքի **պետական գրանցման պահից** /հոդվածներ 10, 176-ի 2-րդ մաս, 301/:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ վիճարկվող նորմերի մեկնաբանման եւ կիրառման պրակտիկայում դրանք ընկալվում են միանշանակ բովանդակությամբ, երկիմաստ, հայեցողական եւ հակասական մեկնաբանությունների հնարավորություն չեն ստեղծում:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթները ձեւակերպված են հստակ եւ որեւէ իրավական անորոշություն չեն առաջացնում:

7. Մույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է նաեւ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագումն այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահով պայմանավորելու իրավաչափության գնահատումը: Այդ նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, դրա խնդիրներին, ինչպես նաեւ այդ ինստիտուտի վերաբերյալ իր՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտը կոչված է իրականացնելու անշարժ գույքի շրջանառության ոլորտում մասնավոր իրավական հարաբերությունների պետական կարգավորում: Այս ինստիտուտը հատուկ է բոլոր այն իրավակարգերին, որտեղ անշարժ գույքը հանդես է գալիս որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի հիմնական իմաստն ու նպատակն անշարժ գույքի շրջանառության կայունության, անշարժ գույքի նկատմամբ սեփականության

կամ այլ գույքային իրավունք ունեցող անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումն է: Նշված նպատակն է արտացոլված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: Վերջինս որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հիմնական խնդիրներ է ամրագրում, մասնավորապես, պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը եւ պաշտպանությունը, աջակցությունն անշարժ գույքի շուկայի կայացմանը, գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության եւ անընդհատության ապահովումը, պայմանավորված նաեւ այն խնդիրներով, որպիսիք թվարկված են սույն որոշման 6-րդ կետում:

Անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցումը ոչ այլ ինչ է, քան գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման ու պաշտպանության երաշխիք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. մայիսի 15-ի ՍԳ-Ո-702 որոշման մեջ, գնահատելով առանձին գործարքների պարտադիր նոտարական վավերացման, ինչպես նաեւ դրանցից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի իրավաչափությունը, նշել է. «...գրավոր որոշ գործարքների նոտարական պարտադիր վավերացման ինստիտուտը եւ այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող եւ դադարող իրավունքների պետական գրանցման պահանջը՝ ելնելով նաեւ անձի իրավունքների եւ դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների ազատության որոշակի սահմանափակում նախատեսելով հանդերձ, կարելի է երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման, հետեւաբար, նաեւ քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար»:

Ելնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից ու խնդիրներից, ինչպես նաեւ հաշվի առնելով սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պարտականություն սահմանելով եւ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագումն այդպիսի գրանցմամբ պայմանավորելով՝ օրենսդիրը հետապնդել է իրավաչափ նպատակ:

8. Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ ստեղծված են կոնկրետ իրավական երաշխիքներ, որոնք կոչված են ապահովելու անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման գործընթացի անարգել իրականացումը: Մասնավորապես, նշված գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի կատարումը բացառապես պայմանավորված է գործարքի կողմերի կամաարտահայտությամբ եւ նրանց վարքագծով: Պետական գրանցում իրականացնող իրավասու մարմինը, այն է՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, գրանցման գործընթացում հայեցողություն դրսևորելու իրավական հնարավորություն չունի: Գրանցման գործընթացը մանրամասն կանոնակարգված է «Գույքի նկատմամբ իրա-

վունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Վերջինս սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ստորաբաժանումներ մուտքագրվող փաստաթղթերի ընդունման կարգը (հոդվ. 22), գրանցման համար դիմելու ժամկետը, գրանցումն իրականացնող ստորաբաժանումը (հոդվ. 23), պետական ռեգիստրի ստորաբաժանման կողմից գրանցումը կատարելու առավելագույն ժամկետը (հոդվ. 24): Ընդ որում, վերոհիշյալ օրենքով սահմանված փաստաթղթերի առկայության պայմաններում համապատասխան իրավասու ստորաբաժանման կողմից գրանցումն օրենքով սահմանված ժամկետում չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով, տվյալ գործարքի հիման վրա գույքային իրավունք ձեռք բերելու ակնկալիք ունեցող սուբյեկտը կարող է ձեռնամուխ լինել իր համապատասխան իրավունքի իրականացմանը:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է պաշտպանության միջոց նաեւ այն դեպքում, երբ գործարքից բխող իրավունքի գրանցմանը խոչընդոտում է գործարքի կողմերից մեկը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գործարքը կնքվել է պատշաճ ձեւով, իսկ կողմերից մեկը հրաժարվում է գործարքից ծագող իրավունքների գրանցումից, դատարանն իրավունք ունի մյուս կողմի պահանջով վճիռ կայացնել այդ իրավունքների գրանցման մասին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի գրանցման ուշացման հետ կապված վնասները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը վիճարկվող իրավանդորմերի սահմանադրականությամբ պայմանավորված չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**4 մարտի 2011 թվականի  
ՍԳՈ-944**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ՊԵՐՏ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ  
ԵՎ 13.1-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԳ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐ ԸՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**15 մարտի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (գեկուցող),

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ժ. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Պերտ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Պ. Հակոբյանի՝ 06.10.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազ-

գային ժողովի կողմից ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 6-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1995 թվականի նոյեմբերի 16-ին եւ ուժի մեջ է մտել 1995 թվականի նոյեմբերի 28-ին:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը» վերտառությամբ 1-ին հոդվածի՝ վիճարկվող 5-րդ մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելն ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն»:

Նույն օրենքի՝ «Երկքաղաքացիություն» վերտառությամբ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ վիճարկվող 2-րդ պարբերությունը սահմանում է.

«Սույն նորմը տարածվում է նաեւ 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմողը 1992թ. մեկնել է Հայաստանի Հանրապետությունից եւ դիմել է Բելգիայի Թագավորության իրավասու մարմիններին՝ Բելգիայի քաղաքացիություն ստանալու խնդրանքով: 1997թ. ապրիլի 10-ին դիմողը ձեռք է բերել Բելգիայի քաղաքացիություն: ՀՀ Նախագահին ուղղված՝ ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու վերաբերյալ նրա դիմումը չի քննարկվել, եւ ՀՀ քաղաքացիությունը չի դադարեցվել:

Երեւանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի դատախազությունում 06.05.2002թ. դիմող Պ. Հակոբյանի նկատմամբ հարուցվել է թիվ 16217802 քրեական գործը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 23.05.2002թ. որոշմամբ Պ. Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով: 03.06.2002թ. նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ 06.06.2002թ.՝ հայտարարվել է հետախուզում:

16.08.2004թ. Պ. Հակոբյանի արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասին: Պ. Հակոբյանը ՀՀ ոստիկանության կողմից հայտնաբերվել է 08.06.2009թ. եւ ներկայացվել նախաքննության մարմնին: 09.06.2009թ. Շահումյանի զինկոմիսարիատի կողմից Պ. Հակոբյանի դիմումը եւ անձնական գործն ուղարկվել են սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննարկող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը: Վերջինիս կողմից Պ. Հակոբյանի կողմից վճարման ենթակա գումարը հաշվարկվել է 1.800.000 ՀՀ դրամի չափով, որը վճարվել է:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնի քննիչի՝ 10.12.2009թ. որոշմամբ Պ. Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ թիվ 16217802 քրեական գործի վարույթը կարճվել՝ իրադրության փոփոխման հիմքով:

Հիշյալ որոշումը Պ. Հակոբյանի պաշտպանի կողմից 17.12.2009թ. բողոքարկվել է Երեւան քաղաքի դատախազին: Երեւան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի դատախազի՝ 29.12.2009թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է: Նշված որոշումը բողոքարկվել է Երեւան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որի՝ 04.02.2010թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որի՝ 19.04.2010թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է, իսկ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 04.02.2010թ. որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի՝ 17.06.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ՝ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմող կողմը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը հակասում են ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասին եւ 43-րդ հոդվածին: Իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է նրանով, որ քաղաքացիություն ձեռք բերելը, քաղաքացիությունը փոխելը, քաղաքացիությունից հրաժարվելը մարդու համար իրավունք են, որոնք իրականացվում են վերջինիս ազատ կամաարտահայտությամբ: Հետեւաբար, քաղաքացիությունից հրաժարվելու կամ փոխելու առնչությամբ անձի կամաարտահայտությունը, եթե հիմքեր չկան ենթադրելու, որ կամաարտահայտությունն ազատ չի եղել, պետք է ընդունվի որպես անձի՝ քաղաքացիությունը փոխելու, քաղաքացիությունից հրաժարվելու սահմանադրական իրավունքի իրականացում:

Դիմող կողմը գտնում է, որ օրենքը կարող է սահմանել քաղաքացիությունից հրաժարվելու որոշակի կարգ, սակայն օրենքով սահմանված կարգի խախտմամբ անձի կողմից իր քաղաքացիությունը փոխելը, երբ կասկածներ չկան նրա կամաարտահայտման ազատ լինելու վերաբերյալ, չի կարող հիմք հանդիսանալ քաղաքացիությունը փոխած լինելու նրա իրավունքը չճանաչելու համար:

Դիմողի գնահատմամբ՝ վիճարկվող նորմերը կարող են գնահատվել որպես ՀՀ քաղաքացիությունը պահպանելու իրավունքի ընդարձակում եւ ոչ թե ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու իրավունքի սահմանափակում:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ նշում է, որ քաղաքացիության ինստիտուտին բնորոշ՝ իրավունքների ու պարտականությունների փոխադարձությունից բխում է, որ պետությունն առանց քաղաքացու համաձայնության չի կարող դադարեցնել նրա քաղաքացիությունը, մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ստանալն ինքնին չի կարող հանգեցնել ՀՀ քաղաքացիության դադարեցմանը: Քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է, որն առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ ու պատասխանատվություն: Հետեւաբար, քաղաքացիությունից դուրս գալու եւ քաղաքացիությունը փոխելու ազատությունը չպետք է ընկալել որպես բացարձակ հնարավորություն: Պետությունը, ելնելով իր շահերից, կարող է նախատեսել որոշակի սահմանափակումներ: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու եւ քաղաքացիությունը փոխելու ազատությունը սահմանափակող երկու խումբ հիմքեր, որոնք ամրագրված են օրենքի 24-րդ հոդվածում:

Պատասխանողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածով երաշխավորված՝ քաղաքացիությունը փոխելու յուրաքանչյուրի իրավունքը բացարձակ չէ եւ կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նաեւ օրենքով նախատեսված սահմանափակումները:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունների արդյունքում վերացվեց 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում սահմանված՝ ՀՀ քաղաքացու՝ միաժամանակ այլ երկրի քաղաքացի լինելու արգելքը եւ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվեց երկքաղաքացիության ինստիտուտը: Նշված սահմանադրական փոփոխության արդյունքում համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաեւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, լրացվեց օրենքի 1-ին հոդվածի վիճարկվող դրույթը: Օրենքը լրացվեց նաեւ 13.1-րդ հոդվածով: Վերջինս կանոնակարգելով ՀՀ երկքաղաքացու կարգավիճակը՝ միաժամանակ հստակեցնում է 1995թ. հունվարի 1-ից հետո մինչեւ երկքաղաքացիության արգելքի վերացումն ընկած ժամանակահատվածում այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած ՀՀ քաղաքացիների կարգավիճակը: Օրենքի 13.1-րդ հոդվածի բովանդակությունը հանգում է հետեւյալին: Հաշվի առնելով, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի՝ այդ դրույթում նշված անձինք, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված արգելքի պայմաններում այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելով, պահպանել են ՀՀ քաղաքացիությունը եւ չի ճանաչվել նրանց կողմից այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու փաստը, երկքաղաքացիության արգելքի վերացման պայմաններում ճանաչվում է նրանց կողմից նախկինում ՀՀ օրենսդրության խախտմամբ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու փաստը եւ նրանք եւս համարվում են երկքաղաքացի: Այսինքն՝ այս դրույթի միջոցով օրինականացվել է այն անձանց կարգավիճակը, ովքեր այլ երկրի քաղաքացիություն էին ձեռք բերել ՀՀ Սահմանադրության խախտմամբ: Այս առնչությամբ անհիմն է դիմողի այն պնդումը, որ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ երկքաղաքացիության արգելքի պայմաններում այլ երկրի քաղաքացիության ձեռքբերումը հանգեցրել է ՀՀ քաղաքացիության դադարմանը:

6. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության սահմանադրականությունը վիճարկելու միջոցով առաջադրում է հետեւյալ սահմանադրաիրավական վեճը. արդյո՞ք անձի կամաարտահայտությունը՝ հրաժարվելու ՀՀ քաղաքացիությունից եւ/կամ ձեռք բերելու այլ երկրի քաղաքացիություն, բավարար նախապայման չէ ՀՀ քաղաքացիության դադարման համար, եւ կարող է, արդյո՞ք, անձի ազատ կամաարտահայտությամբ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու եւ/կամ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում ՀՀ քաղաքացիության դադարումը կախվածության մեջ դրվել որոշակի պարտականությունների կատարման փաստից:

Քննության առարկա գործի շրջանակներում նշված սահմանադրաիրավական վեճի լուծումը պահանջում է վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներին համապատասխան դիտարկել դրանց հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ «Հայաստանի



Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի եւ 24-րդ հոդվածի հետ համակարգային ամբողջականության մեջ:

Գիմունում բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում բացահայտել ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը: Այդ նպատակով հարկ է նշված իրավունքը դիտարկել քաղաքացիության ինստիտուտի բովանդակության համատեքստում եւ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման եւ դադարման կարգը սահմանվում է օրենքով» դրույթի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի հետ համակցության մեջ:

Որպես կանոն, քաղաքացիությունը բնութագրվում է որպես անձի եւ պետության միջեւ առկա իրավական կաշի կապ, ինչն արտահայտվում է փոխադարձ իրավունքների, պարտականությունների եւ պատասխանատվության համակցության մեջ: Քաղաքացիության ինստիտուտի նման բովանդակությունը ենթադրում է, որ քաղաքացի-պետություն հարաբերություններում, ուր նշված սուբյեկտները միմյանց նկատմամբ ունեն փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ, այդ հարաբերություններն ընդհատելու կապակցությամբ կողմերից որեւէ մեկի միակողմանի կամաարտահայտությունը դեռեւս բավարար հիմք չէ անձի քաղաքացիության դադարման համար: Քաղաքացիության ինստիտուտի նշված բովանդակությունից է բխում նաեւ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածով պետությանը հասցեագրված այն արգելքը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող գրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից: Նման արգելք նախատեսված է նաեւ միջազգային իրավական փաստաթղթերով: Մասնավորապես, 1997թ. նոյեմբերի 6-ի՝ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի ուժով կամ պետության նախաձեռնությամբ քաղաքացիության դադարեցումը թույլատրվում է միայն նշված հոդվածում սպառնիչ կերպով նշված բացառիկ դեպքերում:

Նմանապես, այն դեպքում, երբ քաղաքացիության դադարման գործընթացի նախաձեռնողը քաղաքացին է, պետության նախաձեռնությամբ քաղաքացիության դադարեցումն արգելող ընդհանուր կանոնի տրամաբանությանը համահունչ, քաղաքացու կողմից դրսեւորված նախաձեռնությունը չի կարող անվերապահորեն հանգեցնել քաղաքացիության դադարմանը՝ հաշվի առնելով պետության հանդեպ քաղաքացու պարտականությունների ու պարտավորությունների առկայության հանգամանքը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է, որ, պայմանավորված քաղաքացիության ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությամբ, քաղաքացու կամաարտահայտությունը՝ հրաժարվելու իր երկրի քաղաքացիությունից, դեռեւս բավարար հիմք չէ քաղաքացիության դադարման համար, եւ, որպես կանոն, դադարման հնարավորությունը կախվածության մեջ է դրվում տվյալ քաղաքացու՝ պետության հանդեպ ունեցած որոշակի պարտականությունների ու պարտավորությունների առկայության փաստից: Մասնավորապես, մի շարք երկրներում քաղաքացիությունից հրաժարումը չճանաչելու հիմք է հանդիսանում զինվորական ծառայության պարտականության առկայությունը (Ավստրիա, Էստոնիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Գերմանիա, Հունաստան, Լատվիա, Մոլդովա): Առանձին երկրներում հրաժարման ճանաչումը պայմանավորում

են պետության առջև հարկային պարտավորությունների բացակայությամբ (Բուլղարիա, Խորվաթիա, Հունգարիա, Ռումինիա, Սլովակիա): Ռուսաստանի Դաշնությունում, Ալբանիայում, Էստոնիայում, Ֆինլանդիայում և Լատվիայում քաղաքացիությունից հրաժարումը չի ճանաչվում, եթե տվյալ քաղաքացին պետության հանդեպ ունի ցանկացած չկատարված պարտավորություն: Մի շարք երկրներում քաղաքացիությունից հրաժարումը չի ճանաչվում, եթե անձը ենթակա է քրեական պատասխանատվության (Ալբանիա, Ավստրիա, Բուլղարիա, Հունաստան, Հունգարիա, Լիտվա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիա, Ուկրաինա): Իռլանդիայի օրենսդրությունը նույնիսկ հստակորեն տարանջատում է կատարում քաղաքացիությունից հրաժարվելու և պետության առջև ունեցած պարտավորությունների միջև՝ նախատեսելով, որ քաղաքացիությունից հրաժարումն անձին չի ազատում որեւէ պարտականությունից կամ պարտավորությունից:

7. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վիճարկվող դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ քաղաքացու կամաարտահայտությունը՝ դուրս գալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, դեռեւս բավարար հիմք չէ ՀՀ քաղաքացիությունը կորցնելու համար, ուստի օրենքով նախատեսվում են որոշակի պայմաններ: Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետեւանքով: ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարման կարգի սահմանումը վերապահում է օրենքին: Այս սահմանադրական դրույթին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի նորմերը սահմանում են ՀՀ քաղաքացիության դադարեցման կարգը: Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ **ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու**, ՀՀ քաղաքացիությունից գրկվելու դեպքերում, ինչպես նաեւ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Բացահայտելով ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը ներառում է նաեւ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու մտադրությամբ եւ այլ պետության քաղաքացիության ձեռքբերման երաշխիքների առկայությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը, որը ենթակա է իրացման քաղաքացիությունը փոխելու վերաբերյալ առկա իրավակարգավորումներին համապատասխան:

8. ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու իրավունքը: Այս իրավունքը պատկանում է այն սահմանադրական իրավունքների թվին, որոնք բացարձակ չեն եւ կարող են սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված պայմաններով ու հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը վերարտադրելով ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավունքը, միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությամբ համապատասխան եւ հաշվի առնելով տվյալ իրավունքը ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պայմաններով եւ հիմքերով սահմանա-

փակելու թույլատրելիությունը, նախատեսում է նույն օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքը սահմանափակելու հնարավորությունը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակման դեպքերն ըստ էության նախատեսում է այդ օրենքի 24-րդ հոդվածում՝ սահմանելով ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը: Օրենքի 24-րդ հոդվածը, ամրագրելով Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացու՝ իր քաղաքացիությունը փոխելու, այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու եւ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը, միաժամանակ ամրագրում է ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը: Այդ հիմքերն են՝ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու փաստը, դատարանի օրինական ուժի մեջ մտած եւ կատարման ենթակա դատավճռի կամ վճռի առկայությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հակասությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին, ինչպես նաեւ պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորությունների առկայությունը:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ խնդրո առարկա իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, **եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:**

Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում նաեւ անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարեւորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին եւ պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

Սահմանադրական դատարանը, հետազոտելով ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը, գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակումները բխում են Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված՝ «պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ» հասկացության ներքո իրավակիրառական պրակտիկայում պետք է նկատի ունենալ միայն այն պարտավորությունները, որոնք իրենց բնույթով անխզելիորեն կապված են քաղաքացու կարգավիճակի հետ: Քաղաքացիությունից դուրս գալու դիմումի մերժումն այնպիսի չկատարած պարտավորություններ ունենալու հիմքով, որը տվյալ անձը պարտավոր է կատարել նաեւ ՀՀ քաղաքացիության կորստի դեպքում, կարող է քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքը սահմանափակել անհամաչափորեն, քանզի նման իրավիճակում քաղաքացիությունից դուրս գալու մերժումը կարող է դառնալ ոչ անհրաժեշտ միջոց տվյալ պարտավորության կատարումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև. որպեսզի իրավակիրառական պրակտիկայում քաղաքացիությունը փոխելու կամ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքներն իրացվեն իրավաչափորեն, անհրաժեշտ է, որպեսզի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը նույնպես հստակ ներդաշնակեցվի ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների չափորոշիչներին:

9. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ըստ որի՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում առաջադրված իրավական խնդիրը դիտարկել նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորությունների, ինչպես նաև քաղաքացիության հետ կապված հարցերին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների ու նորմերի համատեքստում:

Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961թ. կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1994թ. մարտի 16-ին) 7-րդ հոդվածին համապատասխան՝ տվյալ պետության քաղաքացիությունից հրաժարումը չի առաջացնում քաղաքացիության կորուստ, եթե տվյալ անձը չունի կամ ձեռք չի բերել այլ երկրի քաղաքացիություն: Համարժեք նորմ է բովանդակում նաև 1997թ. նոյեմբերի 6-ի՝ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան: Այդ կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անդամ պետություն թույլատրում է իր քաղաքացիությունից հրաժարում, պայմանով, որ դրանով այդ անձը չի դառնում քաղաքացիություն չունեցող անձ: Ընդ որում, նույն հոդվածն անդամ պետություններին թույլատրում է քաղաքացիությունից հրաժարվելու իրավունքը վերապահել միայն արտասահմանում մշտական բնակություն ունեցող իր քաղաքացիներին: Նշված միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ նման իրավակարգավորման միջոցով միջազգային իրավունքը ձեւավորել է երաշխիք, որը, ի թիվս մյուս երաշխիքների, նպատակաուղղված է ապաքաղաքացիության առաջացման հնարավորությունը կանխարգելելուն: Այս իրավակարգավորմանը համապատասխան՝ մի շարք երկրների՝ քաղաքացիության վերաբերյալ օրենքները նախատեսում են, որ քաղաքացիությունից հրաժարումը կարող է ընդունվել միայն, եթե տվյալ անձը ձեռք է բերել այլ երկրի քաղաքացիություն կամ ներկայացնում է այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու երաշխիքներ: Առանձին երկրներում նույնիսկ հրաժարման ընդունման համար որպես նախապայման է դիտվում այլ երկրում մշտական բնակության փաստը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու իրավական հետևանքների մասով, դիտարկելով վերոհիշյալ միջազգային իրավակարգավորման եւ դրանով հետապնդվող նպատակի լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված վիճարկվող դրույթը համահունչ է միջազգային իրավակարգավորմանը, բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից եւ նախեսառաջ հետապնդում է քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում ապաքաղաքացիության վիճակի առաջացումը կանխելու իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու ուժով քաղա-

քացիության դադարմանը, սպա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս առնչությամբ միջազգային իրավունքում առկա մոտեցումները Բազմաքաղաքացիության դեպքերի կրճատման եւ բազմաքաղաքացիության դեպքերում զինվորական պարտավորությունների մասին 1963թ. կոնվենցիայի ընդունումից ի վեր որոշակի զարգացում են ապրել: Նշված կոնվենցիան հիմնվում էր այն գաղափարի վրա, որ երկքաղաքացիությունը կամ բազմաքաղաքացիությունն անցանկալի երեւոյթ է, եւ ըստ այդմ իր 1-ին հոդվածում ամրագրում է, որ իր կամքով այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը կորցնում է իր նախկին քաղաքացիությունը: Սակայն նշված կոնվենցիայի ընդունումից ի վեր Եվրոպայում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների ազդեցությամբ Եվրոպայի խորհուրդը վերանայեց երկքաղաքացիությունից խուսափելու հարցում իր մոտեցումը՝ ըստ էության հրաժարվելով երկքաղաքացիությունից խուսափելու սկզբունքի խիստ կիրառումից: Նշված հարցում որդեգրված նոր մոտեցումն իր կոնվենցիոնալ ամրագրումն ստացավ Քաղաքացիության մասին 1997թ. եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածում, որի համաձայն՝ կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում անդամ պետությունների իրավունքը՝ իր ներպետական օրենսդրությամբ որոշելու՝ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը պահպանում է իր քաղաքացիությունը, թե՛ ոչ: Այսինքն՝ միջազգային իրավունքը պետություններին չի պարտավորեցնում որոշակի կոնկրետ վերաբերմունք դրսևտրել իր քաղաքացիների կողմից այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հետեւանքների առնչությամբ՝ այդ հարցում ճանաչելով պետությունների հայեցողության ազատությունը:

Ելնելով վերոհիշյալից, հաշվի առնելով նաեւ Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորությունները եւ խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի կամաարտահայտության դեպքում ՀՀ քաղաքացիության կորուստը ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորելը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմերի սահմանադրականությամբ, այլ առնչվում են պետական իշխանության մարմինների պարտականությունների ժամանակին ու պատշաճ կատարմանը, որոնց քննությունն ու գնահատումը դուրս է ՀՀ սահմանադրական դատարանի իրավագործությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 մարտի 2011 թվականի  
ՍԳՈ-945**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԲԶՆԻ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍՊՐՔԻ 92-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երևան**

**29 մարտի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Դ. Դանելյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Սելբոնյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 69-րդ հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի՝ 07.10.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցադիմումը վերադարձնելը» վերտառությամբ 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է. «Գատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու պահին, հետեւյալն է. դիմողը 22.09.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության՝ վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

13.10.2009թ. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԳ/4234/05/09 վարչական գործով կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում: Դատարանը մասնավորապես գտել է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, քանի որ հայցադիմումով ներկայացված պահանջները բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդդատյա չեն վարչական դատարանին:

22.10.2009թ. դիմողը բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ վերջինիս՝ 13.10.2009թ. թիվ ՎԳ/4234/05/09 վարչական գործով կայացված՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ: 28.10.2009թ. ՀՀ վարչական դատարանը կոլեգիալ կազմով կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 13.10.2009թ. որոշման դեմ դիմողի կողմից բերված բողոքը մերժելու մասին որոշում՝ վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի կողմից 13.10.2009թ. ներկայացված պատճառաբանությունները:

19.11.2009թ. դիմողը ՀՀ վարչական դատարանի՝ 28.10.2009թ. «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ բողոք է բերել ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 02.12.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ ըստ էության վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի 13.10.2009թ. ներկայացրած պատճառաբանությունները:

28.12.2009թ. դիմողը հայցադիմում է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ վերոնշյալ նույն պահանջով: 11.01.2010թ. դատարանը կայացրել է «Հայցադիմումը վերադարձնելու մասին» թիվ ԵԿԳ/3492/02/09 որոշումը: Նշված որոշմամբ դատարանը եզրահանգել է. «...ՀՀ բնապահպանության նախարարությունը հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որն իրականացնում է վարչարարություն եւ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ծագել է հանրային իրավահարաբերություններից ... ուստի դատարանը գտնում է, որ նշված պահանջի դատական կարգով քննությունը վերոգրյալ իրավական նորմերին համապատասխան վերապահված է ՀՀ վարչական դատարանին եւ հայցը պետք է հարուցվեր ՀՀ վարչական դատարան, այդ իսկ պատճառով ներկայացված հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներից»:

Դիմողը 11.01.2010թ. որոշման դեմ 18.01.2010թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 08.02.2010թ. որոշմամբ դիմողի բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության



դատարանի՝ թիվ ԵԿԳ/3492/02/09 քաղաքացիական գործով կայացված՝ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը: Ի հիմնավորումն նշված որոշման՝ դատարանը գտել է, որ նախարարության կողմից իրականացված վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը բխում է սույն գործով կողմերի միջև առաջացած հանրային-իրավական հարաբերությունից եւ ընդդատյա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

23.02.2010թ. դիմողը վերաքննիչ դատարանի 08.02.2010թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ եւ 234-րդ հոդվածներով, իր՝ 07.04.2010թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ ըստ էության վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում պարզվել է, որ սահմանադրական դատարան դիմելուց հետո դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով նոր երեսան եկած հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 10.01.2011թ. որոշմամբ բավարարելով վճռաբեկ բողոքը՝ որոշել է. «Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի 07.04.2010 թվականի... որոշումը: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010 թվականի որոշումը եւ կայացնել նոր դատական ակտ. վերացնել Երեսանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.01.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը»:

Վերը նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ դիմողի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանում վիճարկվող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը կայացվել է մինչեւ նույն դատարանի կողմից 03.12.2010թ. թիվ ԵԱԶԳ/1369/05/09 որոշման կայացումը, որով վճռաբեկ դատարանը սահմանել է օրենքի միատեսակ կիրառության սահմանները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «սույն գործով Ընկերությունը գրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով եւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից»: Նշված որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...սույն գործը ենթակա է քննության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում»:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական որոշակիության պահանջները եւ «ընդդատության» բացահայտման իմաստով դատական պրակտիկայում հանգեցնում է տարաբնույթ, հակասական մեկնաբանությունների:

Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմի՝ «ընդդատության» բացահայտման իմաստով, դատական պրակտիկայում սխալ մեկնաբանության արդյունքում ինքը գրկվել է դատական պաշտպանության իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը՝ «ընդդատության» բացահայտման իմաստով, հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանողը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթների բովանդակությունը, նշում է, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաեւ քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի առկայության եւ նշված վեճերի ու քրեական մեղադրանքի լուծման իրավագործությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու պայմաններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հունվարի 10-ի որոշմամբ վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը եւ երաշխավորվել է դիմողի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը՝ պատասխանողը գտնում է, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները, ուստի միջնորդում է քննության առարկա գործի վարույթը կարճել:

5. Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից սահմանադրական դատարան դիմելու կարգը սահմանված է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն. Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել «...յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ **առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները** եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով սահմանված իրավակարգավորումը խարսխված է այն տրամաբանության վրա, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք իրենց խախտված իրավունքները, նախեւառաջ, պետք է պաշտպանեն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում: Ըստ այդմ, ՀՀ օրենսդրությունը որպես սահմանադրական դատարան դիմելու նախապայման սահմանել է **դատական պաշտպանության միջոցներն սպառելու պարտականություն եւ վերջնական դատական ակտի առկայության պահանջ**:

Գործի նյութերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերանայելով իր որոշումը՝ հիմք է ստեղծել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով ու Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար: Իսկ դիմողի փաստարկները հիմնականում վերաբերում

են ոչ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բուն բովանդակությանը, որն իրավաչափորեն նախատեսում է, որ «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին», այլ այդ նորմի այնպիսի կիրառմանը, որն արգելափակել էր դատարանի մատչելիության իր իրավունքի իրացումը, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի 10.01.2011թ. որոշմամբ երաշխավորվել է:

Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործը քննության ընդունելու համար հիմք հանդիսացած վերջնական դատական ակտի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշման վերանայման եւ իրավական ուժը կորցնելու պայմաններում այլեւս առկա չէ սահմանադրական դատարանում գործի քննության համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող վերջնական դատական ակտը, դրանով իսկ դիմողի համար դեռեւս չեն սպառվել դատական պաշտպանության միջոցները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**29 մարտի 2011 թվականի  
ՍԳ-Ո-946**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ  
ԵՎ ԳԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ  
ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 213-ՐԴ  
ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների.

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.11.2010թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Վաշխառությունը» վերտառությամբ 213-րդ հոդվածը սահմանում է.

«1. Վաշխառությունը՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը՝

1) որի հետեւանքով տուժողն ընկել է նյութական ծանր կացության մեջ,

2) որը կատարվել է որպես արհեստ,

3) որը կատարվել է տուժողի անչափահաս լինելը կամ մտավոր զարգացման թերություններն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երեւան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի կողմից հարուցվել եւ քննվել է թիվ 10128209 քրեական գործը: Հարուցված քրեական գործի շրջանակներում որոշում է կայացվել Վ. Ազիզյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: 2010թ. մարտի 1-ին քրեական գործն ուղարկվել է Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի կողմից նույն թվականի մարտի 3-ին քրեական գործն ընդունվել է վարույթ: 03.11.2010թ. դատավոր Վ. Ռշտունին կայացրել է քրեական գործի վարույթը կասեցնելու եւ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում՝ վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի սահմանադրականությունը:

3. Դիմողը, պնդելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1, 18 եւ 31-րդ հոդվածներին, որպես վիճարկվող հոդվածի հակասահմանադրականության հիմնական փաստարկ վկայակոչում է, նախ՝ այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 եւ 313-րդ հոդվածներով արդեն իսկ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված եւ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա կատարվող վաշխառության երկրնորելի արարքների համար քաղաքացիաիրավական պատասխանատվություն, եւ երկրորդ՝ պետության կողմից պաշտպանվող տնտեսական շահերի դեմ ուղղված՝ կամովին երկկողմ պայմանագիր կնքելու դեպքում օրենսդիր քրեական պատասխանատվություն է սահմանում կողմերից միայն մեկի՝ փոխատուի համար, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերին եւ հղում կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին՝ դիմողը գտնում է, որ

օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» եզրույթը, 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցությունը չեն բխում իրավական որոշակիության սկզբունքից: Ըստ դիմողի՝ օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» եզրույթը խիստ գնահատողական է, բազմիմաստ, իսկ 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցությունն առաջադրում է հարց, թե ՀՀ կենտրոնական բանկի սահմանաձև բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքով պարբերաբար գումարներ տրամադրող անձին պետք է ենթարկել վարչական պատասխանատվության՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար, թե քրեական պատասխանատվության՝ վաշխառությունը որպես արհեստ կատարելու համար: Իսկ եթե՝ քրեական պատասխանատվության, ապա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով, 188-րդ հոդվածով, թե երկու հոդվածներով միաժամանակ:

4. Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ հետեւյալ պատճառաբանությամբ: «Վաշխառության քրեականացումը պայմանավորված է գործունեության այս տեսակը քրեականացնելու եւ դրա դեմ քրեաիրավական մեթոդներով պայքարելու հանրային պահանջով, որի հիմքում նախ եւ առաջ ընկած է արարքի հանրային վտանգավորության եւ արարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմատությամբ դրա քրեականացման նպատակահարմարության հիմնավորումը: Արարքի քրեականացումը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն ապահովող առավել ընդհանուր սոցիալական գործընթացի՝ սոցիալական վերահսկողության համակարգի տարր է: Վաշխառության քրեականացումը համարժեք պատասխանն է այն վնասին, որը գործունեության այս տեսակը հասցնում է մի կողմից տնտեսական հարաբերություններին, մյուս կողմից նպաստում այլ՝ առավել վտանգավոր հանցագործությունների կատարմանը»: Պատասխանողը նաեւ պնդում է, որ վաշխառության քրեականացումն ունի նաեւ կանխիչ նշանակություն, քանի որ քրեաիրավական արգելքի բովանդակությունը հասարակական գիտակցության մեջ արմատավորելու, հանցավոր վարքագծի կարծրատիպեր ձեւավորելու միջոցով իրականացվում է ինչպես գործունեության այս տեսակի կանխման գործառույթ, այնպես էլ կանխվում են հասարակական ավելի մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունները, որոնք վաշխառության անմիջական հետեւանք կարող են լինել:

5. Վիճարկվող հոդվածը գետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները» վերառությամբ 22-րդ գլխում: Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հանրային վտանգավորությունը՝ հատկապես վերափոխվող տնտեսական համակարգերի համար, դրսևորվում է նրանում, որ դրանք խախտում են տնտեսության ոլորտի իրավակարգը, տնտեսական շրջանառության առանձին մասնակիցների, հասարակության, պետության տնտեսական շահերը, գույքային վնաս են պատճառում տնտեսավարող սուբյեկտներին եւ առանձին քաղաքացիների:

Վաշխառության հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է երկու արարքով, որոնցից թեկուզեւ մեկի կատարումը բավական է արարքը հանցագործություն որակելու համար: Այն է՝ առաջին՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանաձև բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չա-

վիճակներ ստանալը, եւ երկրորդ՝ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսեւորվում է ուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսու-նակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկ-վող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագոր-ծությունների վերաբերյալ գործերը հարուցվում են տուժողի բողոքի հիման վրա, եւ կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում են-թակա են կարճման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հան-ցագործությունների, այսինքն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված վաշխա-ռության վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշ-վի առնելով նաեւ դիմողի հարցադրումները, հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել ՀՀ քրեական եւ քաղաքացիական օրենսդրության խնդիրների համատեքստում:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հան-րապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են, ի թիվս այլնի, հանցավոր ոտնձգու-թյուններից մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանու-թյունը, հանցագործությունների կանխումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքնե-րը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլուծությունը թույլ է տա-լիս բացահայտել նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրները: ՀՀ քաղա-քացիական օրենսդրության խնդիրներն են, ի թիվս այլնի, քաղաքացիական իրավունք-ների անարգել իրականացումը, խախտված իրավունքների վերականգնման եւ դրանց դատական պաշտպանության ապահովումը:

ՀՀ քրեական եւ քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլու-ծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջեւ դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետեւանքով իրա-վունքների եւ ազատությունների **խախտումների կանխման** խնդիր, իսկ քաղաքացիա-կան օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջեւ դրել է **խախտված իրավունքների վերականգնման** ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքա-ցիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նա-խադրյալներ հանդիսացող նորմեր: Այդպիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 եւ 313-րդ հոդվածները, որոնք նա-խադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհա-մապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետեւանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար:

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունք-ների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվա-

ծի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիսիչ նշանակություն եւ քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաեւ, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետեւանքով խախտված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական եւ քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, եւ դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը:

Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը եւ դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը եւ ելնելով վարչական, քաղաքացիական եւ քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համարդաված կանոնակարգման անհրաժեշտությունից:

Օրենսդիրն իրավակիրառողին չի ընձեռում քաղաքացիական եւ քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի միջեւ ընտրություն կատարելու հնարավորություն: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջեւ: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է եւ պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաեւ քրեական պատասխանատվություն:

7. Ինչ վերաբերում է դիմողի այն հարցադրմանը, որ պետության կողմից պաշտպանվող տնտեսական շահերի դեմ ուղղված՝ կանոնները երկկողմ պայմանագիր կնքելու դեպքում օրենսդիրը քրեական պատասխանատվություն է սահմանում կողմերից միայն մեկի՝ փոխատուի համար, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հարցադրումն անհիմն է: Սահմանադրական դատարանն իր՝ 04.05.2010թ. ՍԳ-Ո-881 որոշման մեջ անդրադարձել է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը եւ հետետողականորեն առաջ է տարել այն տեսակետը, որ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է համեմատելի իրավիճակներում գտնվող **մինչևնույն կատեգորիայի անձանց, մինչդեռ տվյալ դեպքում փոխատուն եւ փոխառուն որակական տարբեր վիճակներում են:**

8. Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ



սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ ՍԳ-Ո-747 եւ ՍԳ-Ո-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաեւ դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» բառակապակցության եւ դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված բառակապակցությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը եւ պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ փոխառում, գտնվել է ծանր կացության մեջ: Ինչ վերաբերում է օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցության վերաբերյալ դիմողի հարցադրմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է իրավունքի կիրառման հարց:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, եւ պահպանելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, չի անդրադարձել եւ որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի առնչությամբ, քանի որ այն կոնկրետ քրեական գործի շրջանակներում կիրառելի չէ:

Նշված հանգամանքը հիմք է տալիս եզրահանգելու, որ սույն գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով ենթակա է կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով՝ որպես տվյալ կոնկրետ իրավանորմի սահմանադրականության հարցով ոչ իրավասու սուբյեկտի կողմից ներկայացված դիմումի հիման վրա քննության ընդունված գործ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ գործի վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով, կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 ապրիլի 2011 թվականի  
ՍԳ-Ո-947**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ՀՈՎՍԵՓ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՆ**  
**«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ**  
**19-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ**  
**ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**12 ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Հովսեփ Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Հ. Գալստյանի՝ 12.11.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ից: Օրենքի ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ուժը կորցրած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Պարտապահին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետեւանքները» վերառությամբ 19-րդ հոդվածի

3-րդ մասը սահմանում է. «Պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապահի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով եւ պարտապահի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ: Նշված լիազորությունների իրականացումը կարող է թույլատրվել դատարանի որոշմամբ՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը դիմել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Ֆրունզիկ Գալստյանի եւ «Հայգազարդ» ՓԲԸ-ի՝ օրենքի խախտմամբ կնքված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու պահանջով: Նշված պահանջի շրջանակներում դիմողը պահանջել է անվավեր ճանաչել «ԱՄՖ» ՍՊԸ-ի եւ «Հայգազարդ» ՓԲԸ-ի միջեւ 01.09.2007 թվականին եւ 2008 թվականին կնքված՝ պարտքի մարման ժամանակացույց սահմանելու մասին պայմանագրերը, 03.12.2007 թվականին կնքված՝ փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է: Հայցը բավարարելիս դատարանը, հիմք ընդունելով, ի թիվս այլնի, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի դրույթները, առաջնորդվելով **Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի եւ անմիջական գործողության սահմանադրական սկզբունքով**, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներն անուղակիորեն մեկնաբանել է այնպես, որ վերջիններս չեն ներառում ընկերության մասնակցի դատական պաշտպանության իրավունքը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 08.04.2010 թվականին բեկանել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճիռը եւ փոփոխել այն՝ հայցը մերժել: Հայցը մերժելիս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներն անուղակիորեն մեկնաբանել է այնպես, որ վերջիններս ներառում են նաեւ ընկերության մասնակցի բոլոր լիազորությունները, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը, որը տվյալ դեպքում սահմանված է «ԱՄՖ» ՍՊԸ-ի կանոնադրության 4.2-րդ կետում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 16.06.2010թ. թիվ ԿԳ/0630/02/09 որոշմամբ, վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, վերադարձրել է նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 8, 18, 19 եւ 31-րդ հոդվածներին: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ օրենքի վիճարկվող դրույթները խոչընդոտում են դիմողի՝ «Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված եւ գործող օրենքներին եւ այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով դատարան դիմելու իրավունքի իրացումը»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներին հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ օրենքի վիճարկվող դրույթները խոչընդոտում են դիմողի՝ «իր սեփականություն հանդիսացող

ընկերության բաժնեմասն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքը»: Մասնավորապես, հղում կատարելով «Սահմանափակ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «դ» կետին՝ դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները խոչընդոտում են դիմողի՝ օրենքով եւ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իր բաժնեմասն ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց օտարելու իրավունքը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Որպես իր փաստարկի հիմնավորում՝ պատասխանողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացման երաշխիքների շրջանակներում գնահատելիս յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այդ ինստիտուտի յուրահատկությունները, սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրության հիմքում ընկած սկզբունքներն ու այդ ոլորտում առաջացող հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները:

Ըստ պատասխանողի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած սահմանափակումը գործում է սնանկության գործընթացի այլ մասնակիցների նկատմամբ կիրառվող բազմաթիվ այլ սահմանափակումների համակարգում, որոնց օրենսդրական ամրագրումն ու կիրառումն ապահովում է սնանկության ինստիտուտի հիմնական նպատակի իրականացումը, այն է՝ պարտապան իրավաբանական կամ ֆիզիկական անձի բոլոր պարտատերերի իրավահավասար մասնակցությունը սնանկության գործընթացին եւ լուծարային գանգվածի արդարացի բաշխում բոլոր պարտատերերի միջև՝ պարտատերերի պահանջների բավարարման հաջորդականությանը համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո «շարունակվում է սնանկության գործընթացը՝ «դատական խիստ հսկողության ներքո», պատասխանողը գտնում է, որ այդ ընթացքում «բացառվում է ... սնանկության գործընթացի բոլոր մասնակիցների կողմից այդ գործընթացին առնչվող որոշումների անմիջական բողոքարկումը, սակայն հնարավորություն է տալիս դրանք բողոքարկելու գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթների եւ սեփականության իրավունքի միջև հակասության հետ, եւ հղում կատարելով օրենքի 82-րդ հոդվածին, որը նախատեսում է ընկերության մասնակցի իրավունքն ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալու ընկերության մնացած գույքից՝ որպես վերջին հերթի պարտատեր, պատասխանողը գտնում է, որ տվյալ նորմի առկայությամբ «ստեղծվում են նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համարժեք մեխանիզմներ իրավաբանական անձի մասնակիցների սեփականության իրավունքի պաշտպանության համար»:

5. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով եւ պարտա-

պանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ» բառակապակցության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, ինչպես նաև կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման տրամաբանությունը:

6. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքն ուղղված է **ընկերության պարտատերերի շահերի պաշտպանությանը**, որը դրսևորվում է, նախեւառաջ, անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող ընկերությունների ֆինանսական առողջացմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության գույքի հաշվին ընկերության պարտատերերի պահանջների բավարարմամբ:

Նշված տրամաբանությանը համահունչ, օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ժամանակավոր կառավարչի կամ պարտատիրոջ միջնորդությամբ դատարանի որոշմամբ կարող է կիրառվել պարտապանի կամ նրա տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ցանկացած անհրաժեշտ սահմանափակում, եթե դրանց չկիրառման արդյունքում **կարող է էական նվազել պարտապանի գույքը**»: Օրենքի՝ «Պարտատերերի պահանջների բավարարման ստեղծումը (մորատորիում)» վերտառությամբ 39-րդ հոդվածը սահմանում է այնպիսի իրավակարգավորում, որը նույնպես ուղղված է **պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն**:

Վերը նշված տրամաբանությունից է բխում նաև օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը, որը ելակետ է ընդունում այն, որ պարտապանի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված անգամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ԴԱՀԿ ծառայության կողմից **ենթակա չեն կատարման**:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության մեջ **միայն պարտապանի կանոնադրական կապիտալում մասնակցությամբ պայմանավորված** լիազորությունների շեշտադրման հանգամանքը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը դրանով նկատի է ունեցել ընկերության մասնակցի իրավունքների եւ պարտականությունների միանգամայն սահմանափակ ծավալ: Ընդ որում, ընկերության մասնակցի իրավունքների եւ պարտականությունների վերը նշված սահմանափակ ծավալում օրենսդիրը նկատի է ունեցել ընկերության մասնակցի այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց իրականացումը **կարող է հանգեցնել պարտապանի գույքի էական նվազմանը, կամ պարտատերերի իրավունքների եւ օրինական շահերի խաթարմանը, կամ կարող է խոչընդոտել պարտատերերի իրավաչափ պահանջների բավարարմանը**:

Վերը նշված իրավական դիրքորոշման համար հիմք են հանդիսանում նաև 2007թ. փետրվարի 10-ին ուժը կորցրած՝ «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության համեմատական վերլուծության արդյունքները: Նշված համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից

կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող անձանց եւ պարտապանի ղեկավարի՝ օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված լիազորությունները»։ Մինչդեռ օրենսդրական բարեփոխումների արդյունքում ընդունված եւ միեւնույն իրավակարգավորման առարկան ունեցող՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության մեջ, ի տարբերություն «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի, օրենսդիրը, անդրադառնալով ընկերության մասնակցի լիազորություններին, հատուկ շեշտադրել է «այն» եւ «պայմանավորված են» բառերը՝ ընդգծելու համար ընկերության մասնակցի իրավունքների եւ պարտականությունների սահմանափակման ենթակա ծավալը։

Վերոնշյալ իրավական դիրքորոշման հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ» բառակապակցությունը չի ներառում դատական պաշտպանության իրավունքն ընդհանրապես, եւ իրավակիրառական պրակտիկայում տվյալ բառակապակցությանը պետք է տալ սահմանափակ մեկնաբանություն, որպեսզի չխաթարվի այդ իրավունքի բուն էությունը։

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում նաեւ հետեւյալ հանգամանքները.

ա) ընկերության մասնակցի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի կարգավիճակը չի բացառում նույն անձի՝ որպես իրավունքի ընդհանուր սուբյեկտի կարգավիճակը, հետեւաբար եւ՝ տվյալ սուբյեկտի սահմանադրական իրավունքները եւ պարտականությունները, ներառյալ՝ դատական պաշտպանության իրավունքը՝ հաշվի առնելով նշված իրավունքների սահմանափակումները եւ դրանց թույլատրելի շրջանակները,

բ) Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը դատական պաշտպանության իրավունքը չի դիտարկում որպես սահմանափակման ենթակա իրավունք։

Սահմանադրական դատարանն իր՝ ՄԳՈ-652, ՄԳՈ-665, ՄԳՈ-673, ՄԳՈ-690, ՄԳՈ-719 եւ մի շարք այլ որոշումներում անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության եւ այդպիսի խախտումների հետեւանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է։ **Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ**, եւ արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է։

8. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի գնահատման շրջանակներում անդրադառնալով տվյալ գործով կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ տվյալ գործով դատական քննության արդյունքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության դրույթին տրվել է լայն մեկնաբանություն, ինչի հետեւանքով օրենքի վիճարկվող դրույթներում «լիազորությունները» բառն ընկալվել է համընդգրկուն իմաստով՝ ներառելով ընկերության մասնակցի՝ օրենքով եւ

ընկերության կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքները եւ պարտականությունները, **ինչը, սակայն, պայմանավորված չէ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությամբ:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 ապրիլի 2011 թվականի  
ՍԳՈ-954**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝  
«ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 207-Ն  
ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**3 հունիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Մաշինյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին եւ 4-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 13.01.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը, ՀՀ օրենսդրության այլ ակտեր, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**



1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սույն գործով վիճարկվող 1-ին եւ 4-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են.

«Հոդված 1. Հայրենական մեծ պատերազմի վետերաններ հասկացությունը

Սույն օրենքով՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններ (այսուհետ՝ վետերաններ) են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներն ու Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն անձինք, ովքեր մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, ինչպես նաեւ պատերազմի տարիներին Լեւինգրադի բլուկադայի մասնակիցները եւ ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին անչափահաս գերիները: Հայաստանի Հանրապետությունում ժամանակավորապես բնակվող կամ գտնվող Հայրենական մեծ պատերազմին մասնակցած օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 4. Վետերանների սոցիալական պաշտպանվածության իրավունքը

Վետերանների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Վետերաններն իրավունք ունեն պետական պատվերի շրջանակներում ստանալ անվճար բժշկական օգնություն եւ բժշկական սպասարկում, ինչպես նաեւ արտոնյալ պայմաններով ստանալ առողջարանային բուժման ուղեգրեր՝ զինծառայողների համար օրենքով սահմանված կարգով:

Վետերաններին էլեկտրաէներգիայից եւ տրանսպորտից օգտվելու նպատակով, իսկ հաշմանդամ վետերաններին՝ նաեւ գազի, ջրամատակարարման, ջրահեռացման եւ ջերմամատակարարման վարձերը վճարելու համար տրվում է ամենամսյա դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

Հաշմանդամ վետերաններն իրավունք ունեն նաեւ՝

ա) («ա» կետն ուժը կորցրել է 29.11.06 ՀՕ-224-Ն օրենքով).

բ) 50 տոկոս գեղջով վճարել բնակարանի, աղբահանության, հեռախոսի եւ ռադիոյի վարձերը.

գ) ստանալ անվճար պրոթեզավորում եւ վերականգնողական պարագաներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Վետերանն ստանում է ամենամսյա պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պատվովճարի գումարը հարկման ենթակա չէ եւ չի հաշվառվում վետերանների կամ նրանց ընտանիքների սոցիալական կարիքավորության աստիճանը որոշելիս:

Սույն հոդվածով սահմանված արտոնությունների իրականացման ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին»:

Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 207-Ն որոշումն ընդունվել է 2004թ. փետրվարի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից վավերացվել է 2004թ. մարտի 2-ին: Այդ որոշումը սահմանում է Հայրենական մեծ պատերազ-

մի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգը:

ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Ձինձառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու եւ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգի հետ կապված հարաբերությունները՝ այդպիսի օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկելով նաեւ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինձառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված այլ կատեգորիայի անձանց:

2. Դիմող կողմը վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ ներկայացնելով փաստարկներ՝ գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինձառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994թ. ԱՊՀ համաձայնագրի գործողությունը տարածվում է քաղաքացիական եւ Հայրենական մեծ պատերազմների հաշմանդամների ու մասնակիցների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինձառայողների ընտանիքների եւ անձանց այն դասերի վրա, որոնց, համաձայն նշված համաձայնագրին կից 1-ին հավելվածի, տրամադրված են արտոնություններ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ: Այսպիսով, ինչպես եզրակացնում է դիմող կողմը, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված արտոնությունները չպետք է պակաս լինեն նշված համաձայնագրին կից 2-րդ հավելվածով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ծավալից:

Միաժամանակ, ըստ դիմող կողմի, վերոհիշյալ համաձայնագրի համակարգային վերլուծությունից բխում է, որ սահմանված արտոնությունների մեծ մասի կիրառման ապահովման համար պահանջվում է ներպետական մակարդակով համապատասխան իրավական ակտի ընդունում՝ արտոնության կիրառման կարգի նախատեսմամբ: Բացի դրանից, համաձայնագրին կից 2-րդ հավելվածով սահմանված են մի շարք արտոնություններ, որոնք ընդհանրապես տեղ չեն գտել ՀՀ օրենսդրության մեջ կամ իրավահավասարության սկզբունքի խախտմամբ առանձին սոցիալական խմբերի համար սահմանվել են մասնակիորեն՝ հակասելով համաձայնագրի պահանջներին: Ըստ դիմող կողմի՝ համապատասխան արտոնություններ սահմանող նորմատիվ դրույթները հակասում են ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին՝ նաեւ արտոնությունների բովանդակության համապատասխանության տեսանկյունից:

Գլխող կողմը գտնում է նաև, որ համաձայնագրի կիրառման բնագավառում առկա են նաև բազմաթիվ օրենսդրական բացեր եւ հակասություններ, մասնավորապես, 1994թ. ԱՊՀ համաձայնագրի 1-ին հավելվածով թվարկված բազմաթիվ դասերի անձինք, այդ թվում՝ 1994թ. ԱՊՀ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշվածները, չեն ներառվել «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004թ. փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին հավասարեցված անձանց ցանկում: Միեւնույն ժամանակ, նշված անձինք իրավակիրառական պրակտիկայում դիտվում են որպես պատերազմի վետերաններին կամ հաշմանդամ վետերաններին հավասարեցված անձինք եւ օգտվում են ՀՀ օրենսդրությամբ վերջիններիս համար սահմանված արտոնություններից (բացառությամբ ամենամայա պատվովճարի, որն օրենքով նախատեսված է միայն Հայրենական մեծ պատերազմին մասնակցած անձանց համար):

3. Պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի դիրքորոշման համաձայն՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 4-րդ հոդվածում առկա իրավակարգավորումը չի կարող հակասել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին, քանի որ «օրենքի առջեւ հավասարության սահմանադրական սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իբրեւ զուտ ձեւական հավասարություն, այլ իբրեւ իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշ եւ, այս առումով, չպետք է բացառել այդ սկզբունքի կիրառման տարբեր դրսեւորումների հնարավորություն, երբ ձեւական հավասարության հաստատումը կարող է հանգեցնել նյութական անհավասարության: Մասնավորապես, տնտեսական եւ սոցիալական իրավունքների ու ազատությունների ձեւական հավասարության դեպքում որոշակի կատեգորիայի սուբյեկտներ կարող են հայտնվել անհավասար կարգավիճակում...: Իրավահավասարության սկզբունքի խախտում կհամարվեր, երբ միեւնույն կարգավիճակն ունեցող անձը ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որեւէ հիմքով գրկվեր արտոնությունից կամ առավելությունից: Մինչդեռ օրենքը առանց որեւէ բացառության միեւնույն կատեգորիայի անձանց համար սահմանում է հավասար արտոնություններ եւ առավելություններ»:

Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի, վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթը չի հակասում նաև ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուրի՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքին, քանի որ «տվյալ դեպքում օրենքով սահմանվել են արտոնություններ եւ առավելություններ որոշակի կատեգորիայի անձանց նկատմամբ: Ընդ որում, օրենքում նշված կատեգորիայի անձանց սոցիալական ապահովության իրավունքի իրականացման եղանակներն ու մեխանիզմները նախատեսված են այլ օրենքներով...»: Ըստ ՀՀ Ազգային ժողովի դիրքորոշման՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասին, քանզի օրենքի վիճարկվող դրույթի պարագայում իրավունքների սահմանափակման թույլատրելի կամ ոչ թույլատրելի շրջանակների մասին խոսել չի կարելի, քանի որ տվյալ պարագայում առկա է ոչ թե երաշխավորված իրավունք եւ դրա սահմանափակում, որը պետք է համապատասխանի սահմանափակման միջազգայնորեն սահմանված շրջանակներին, այլ առկա է որոշակի կատեգորիայի անձանց համար օրենքով սահմանված արտոնություն:

Ըստ պատասխանող կողմ ներգրավված ՀՀ կառավարության դիրքորոշման՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման վիճարկվող դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածներին եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի որ «ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվել են որոշակի արտոնություններ հավասարապես բոլոր նրանց համար, ովքեր ունեն հաշմանդամ վետերանների եւ նրանց հավասարեցված անձանց կարգավիճակ», եւ որ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածն իր ամբողջական արտացոլումն է գտել վերոհիշյալ իրավական ակտերում: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասին վիճարկվող դրույթների անհամապատասխանության վերաբերյալ ՀՀ կառավարությունը գտնում է, որ իրավական այդ ակտերով սահմանվում են ոչ թե սահմանափակումներ, այլ տրամադրվում են արտոնություններ որոշակի կատեգորիայի անձանց համար, եւ այդպիսիք չեն կարող դիտարկվել որպես հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ:

4. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը գնահատելիս հիմք ընդունել.

- ՀՀ միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժի եւ դրանցում ամրագրված նորմերի կիրառելիության սահմանադրական իրավակարգավորման բովանդակությունը,

- միջազգային պայմանագրերով եւ օրենքներով սահմանված՝ մարդու եւ քաղաքացու այլ իրավունքների ու ազատությունների երաշխավորման անհրաժեշտության սահմանադրական սկզբունքը,

- անձանց իրավունքները (այդ թվում՝ արտոնությունները) իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը բացառապես օրենքով սահմանելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջը,

- մինչեւ սահմանադրական դատարանում գործի դատաքննությունը կամ դրա ընթացքում վիճարկվող իրավական ակտի կամ դրա դրույթի վերացման կամ ուժը կորցնելու իրավական հետեւանքների վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի պահանջը:

Սույն գործի առարկայի շրջանակներում վետերանների սոցիալական պաշտպանության հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորումն իրականացվում է «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 26-ից: Այդ համաձայնագրի, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի եւ դրանց կատարումն ապահովելու կոչված՝ սույն գործով վիճարկվող ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման, ինչպես նաեւ սոցիալական ապահովության բնագավառի ՀՀ օրենսդրության այլ ակտերի համադրված վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես՝ հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետով նախատեսված անձինք, որոնց համար վերոնշյալ միջազգային համաձայնագրի համաձայն (2-րդ հոդված) պետք է նախատեսվեին արտոնություններ, դուրս են մնացել այդպիսի իրավակարգա-

վորման շրջանակից: ՀՀ օրենսդրությունը նաև մասնակիորեն է անդրադարձել վերոհիշյալ համաձայնագրով նախատեսված արտոնությունների ողջ ծավալին:

5. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Սահմանադրաիրավական այդ նորմի բովանդակությունից հետեւում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից եւ իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում:

Օրենքի նկատմամբ ՀՀ միջազգային պայմանագրերի գերակայության սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՀՀ գործող օրենսդրության բազմաթիվ ակտերում, այդ թվում՝ նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որն ուղղակիորեն սահմանել է, որ «**Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը**»:

ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմատիվ դրույթի բովանդակությունից ոչ միայն բխում է անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները հատկապես օրենքով կարգավորելու, այլեւ այդ հարաբերությունները լիարժեք եւ, առաջին հերթին՝ **իրավունքի սկզբունքներին համապատասխան կարգավորելու** սահմանադրաիրավական պահանջ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն հիշյալ իրավակարգավորումը սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքներից եւ ազատություններից (այդ թվում՝ արտոնություններից) օգտվելը նույնպես անձի իրավունք է, որը ենթակա է երաշխավորման ու պաշտպանության ներպետական օրենսդրությամբ: **Միաժամանակ, օրենքով եւ իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որևէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք:**

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման եւ իրավակիրառական պրակտիկայում դրանց միակերպ ընկալումն ապահովելու անհրաժեշտության հետ միաժամանակ, սահմանադրական դատարանը կարելորում է նաև Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի սկզբունքային պահանջը եւ դրա անվերապահ կատարման անհրաժեշտությունը:

6. Անդրադառնալով «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի խնդիրն է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում օրենքով նախատեսել անհրաժեշտ իրավակարգավորումներ՝ ապահովելու համար այդ պարտավորությունների կատարումը միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին, հետեւաբար՝ նաեւ ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքին համապատասխան, որոնք միտված լինեն ոչ միայն պետությունների հետ բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ հաստատելու, այլեւ անձանց իրավունքները երաշխավորված պաշտպանելու նպատակին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված **համաձայնագրի դրույթների ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է ոչ թե վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրով, այլ իրավակիրառական պրակտիկայում այդ նույն օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջի անտեսմամբ:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳ-Ո-668 որոշմամբ (5-րդ կետ) արձանագրել է, որ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքը սահմանելով «Հայրենական մեծ պատերազմի վետերաններ» հասկացությունը, չի անդրադարձել համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետում նշված անձանց, եւ որ իրավակիրառական պրակտիկայում «պատերազմի վետերաններ» հասկացությունը **մեկնաբանելիս՝ անվերապահորեն պետք է հիմք ընդունել նաեւ համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետի դրույթները:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկան, ՍԳ-Ո-668 որոշման հիշյալ պահանջը չի իրացվել: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջը պետք է հաշվի առնվի ոչ միայն «պատերազմի վետերաններ» հասկացության, այլեւ անձանց նկատմամբ համաձայնագրով նախատեսված արտոնությունները լրիվ ծավալով կիրառելու առնչությամբ: Անդրադառնալով պատասխանող կողմի (ՀՀ կառավարություն) հայտնած այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «ՀՀ Սահմանադրական դատարանի 28.11.2006թ. թիվ ՍԳ-Ո-668 որոշման 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները նորից հաշվի առնելու անհրաժեշտություն չկա», սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, վերահաստատելով ՍԳ-Ո-943 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, իրավակիրառական պրակտիկան պարտավոր է հաշվի առնել իրավական ակտերի (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ պրակտիկայի ձեւավորումը կհակասի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին:

7. ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ՝ ապահովելու համար նաեւ միջազգային պայմանագրերի եւ օրենքների կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ կառավարության սահմանադրական պարտականությունն է իր որոշմամբ սահմանել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պե-

տությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրի, ինչպես նաեւ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի դրույթների կատարման կարգն ու պայմանները՝ այնպիսի ծավալով ու բովանդակությամբ, ինչպիսին անմիջականորեն բխում է այդ ակտերից եւ Սահմանադրությամբ ու օրենքներով իրեն վերապահված լիազորություններից՝ հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-668 որոշման 5-րդ կետում արտահայտված դիրքորոշումը:

Վերոհիշյալ համաձայնագրի եւ օրենքի, ինչպես նաեւ Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի դրույթների համադրված վերլուծությունը վկայում է, որ 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը լիարժեք պայմաններ չի նախատեսել Հայրենական մեծ պատերազմի վետերանների, նրանց հավասարեցված անձանց, զոհված զինծառայողների ընտանիքների՝ ՀՀ միջազգային պայմանագրով եւ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ամբողջական իրացումն ապահովելու համար: ՀՀ կառավարությունը չի անդրադարձել նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-668 որոշման կատարման ապահովմանը: Մասնավորապես՝ կառավարության հիշյալ որոշման իրավակարգավորման շրջանակներից դուրս են թողնվել ՀՀ միջազգային համաձայնագրով պատերազմի հաշմանդամ համարվող որոշակի թվով անձինք (հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետ), որոնք նախկինում օգտվել են պատերազմի հաշմանդամների համար նախատեսված արտոնություններից: ՀՀ կառավարության 05.02.2004թ. թիվ 207-Ն որոշմամբ նախկին որոշումները ուժը կորցրած ճանաչելով եւ հիշյալ անձանց համար դրամական փոխհատուցում չնախատեսելով՝ տեղի է ունեցել նրանց՝ ՀՀ միջազգային պարտավորություններով նախատեսված իրավունքի արգելափակում: Ընդ որում, ՀՀ դատական պրակտիկան նույնպես փաստել է, որ պատերազմի հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիների պահանջը հստակ իր լուծումն է ստացել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրում, սակայն հենվելով ՀՀ կառավարության՝ սույն գործով վեճի առարկա որոշման վրա՝ չի բավարարվել քաղաքացիների հայցադիմումը՝ իրենց արտոնությունները պահպանելու կամ դրամական փոխհատուցում տալու հարցով:

ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող կողմի դիրքորոշումը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման սահմանադրականության վերաբերյալ, գտնելով, որ, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ (1-ին եւ 4-րդ մասեր), 42-րդ (1-ին մաս), 44-րդ, 85-րդ (2-րդ մաս) հոդվածներով, ինչպես նաեւ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ կառավարությունը պարտավոր էր իր որոշմամբ ապահովել Հայրենական մեծ պատերազմի վետերանների եւ նրանց հավասարեցված անձանց սոցիալ-տնտեսական արտոնությունների գործողությունը կամ դրանց դրամական փոխհատուցումը՝ նաեւ այն կատեգորիայի անձանց համար, որը նախատեսված է հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում:

Սիւժեանանակ, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունն իր՝ 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ սույն գործով վիճարկվող թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչել: Իր՝ 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Ձինձառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու եւ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգի հետ կապված՝ 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունները: Նման օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկվել են նաեւ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինձառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված անձանց:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետով, 63-րդ, 64-րդ եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին եւ 4-րդ հոդվածները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) հակասող ճանաչել ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինձառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված եւ Հայաստանի Հանրապետության համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու եւ այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պատճառաբանական մասի 6-րդ եւ 7-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ ի գիտություն ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**3 հունիսի 2011 թվականի  
ՍԳՈ-966**





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՇՈՐՔԵՓ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 57-ՐԴ  
ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ (ՄԻՆՉԵՎ 09.01.2009Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց միատուժ գրավոր ընթացակարգով քննեց ««Շորքեփ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Շորքեփ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի՝ 02.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի սեպտեմբերի 30-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

մից ստորագրվել՝ 1997 թվականի նոյեմբերի 27-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 1-ից:

Սույն գործով դիմողը վիճարկում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ:

Օրենքի վիճարկվող նորմը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) սահմանում էր.

«Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման (գանձման) հնարավորության բացակայության (այսինքն՝ հարկային գործակալի բացակայության) դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութահարկի վճարման պարտավորությունը կրում է հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը՝ սույն օրենքի 60-63 հոդվածներով սահմանված կարգով եւ ժամկետներում»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 9-ին, օրենքի վիճարկվող նորմում լրացում է կատարվել: Մասնավորապես, օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը «ժամկետներում» բառից հետո լրացվել է «...» հիմնվելով սույն հոդվածի 1-ին կետում նշված դրույքաչափերի վրա» բառերով:

Օրենքի (ներկա խմբագրությամբ)՝ «Ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափերը» վերառությամբ 57-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ կետը սահմանում է.

«Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման (գանձման) հնարավորության բացակայության (այսինքն՝ հարկային գործակալի բացակայության) դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութահարկի վճարման պարտավորությունը կրում է հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը՝ սույն օրենքի 60-63 հոդվածներով սահմանված կարգով եւ ժամկետներում՝ հիմնվելով սույն հոդվածի 1-ին կետում նշված դրույքաչափերի վրա»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 25.06.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ԿԸ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության՝ պահանջելով փոփոխել հարկային տեսչության՝ 27.04.2009թ. թիվ 01-09 ծանուցագիրը՝ միջամտող վարչական ակտը, եւ հայցվորի՝ հայաստանյան աղբյուրից գույքի արժեքի հավելաճի տեսքով ստացված եկամտից շահութահարկը հաշվարկել 10 տոկոս դրույքաչափով՝ կիրառված 20 տոկոսի փոխարեն: ՀՀ վարչական դատարանի՝ 08.06.2010թ. թիվ ՎԳ/3027/05/09 վճռով հայցը մերժվել է:

Սերժելով հայցը՝ ՀՀ վարչական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքները, որ «Շոքբեփի Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն շահույթ է ստացել 2008 թվականին, իսկ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 9-ին, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասին, գտել է, որ ՀՕ-248-Ն ՀՀ օրենքով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետում կատարված լրացումը՝ **«ԵՔԵ Այն վերաբերում է հարկային գործակալի բացակայության դեպքում շահութահարկի հաշվարկման տոկոսներին»**, ընկերության համար կիրառելի չէ:

ՀՀ վարչական դատարանի վերը նշված վճիռը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի՝ 08.06.2010թ. թիվ ՎԳ/3027/05/09 վճռում ամրագրված իրավական դիրքորոշումները, իր՝ 11.08.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Փորձելով հիմնավորել վիճարկվող նորմի հակասահմանադրականությունը՝ դիմողը, մասնավորապես, շեշտադրում է հետևյալ հանգամանքները՝

- շահութահարկի վճարման կարգը ոչ մի դեպքում չի ներառում շահութահարկի դրույքաչափը, եւ վերջինս չի կարող դիտարկվել որպես վճարման կարգի բաղադրատարր,

- օրենքի վիճարկվող նորմը, միայն վճարման կարգի առնչությամբ հղում կատարելով օրենքի 60-63-րդ հոդվածներին, չի հստակեցնում ոչ ռեզիդենտների կողմից վճարվող շահութահարկի դրույքաչափը, որի արդյունքում այն դարձել է այնքան անորոշ եւ հակասական, որ հնարավոր չէ հստակ հետեւություն անել, թե ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտը հարկային գործակալի բացակայության դեպքում ինչ դրույքաչափով պետք է շահութահարկ հաշվարկի եւ վճարի,

- օգտվելով այս անորոշությունից՝ դատարանը կամայական մեկնաբանություն է տվել վիճարկվող նորմին եւ դիմողի նկատմամբ կիրառել ռեզիդենտների համար սահմանված դրույքաչափը,

- վիճարկվող դրույքը հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված իրավահավասարության սկզբունքին, քանի որ հարկային գործակալի առկայության դեպքում ոչ ռեզիդենտի շահույթը հարկվում է 5% կամ 10% դրույքաչափով, մինչդեռ նույն ոչ ռեզիդենտի շահույթը հարկային գործակալի բացակայության դեպքում՝ 20% դրույքաչափով:

Վերոհիշյալ տեսակետների հիման վրա դիմողը գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8-րդ եւ 14.1-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Շոքթեփ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման այն պատճառաբանությամբ, որ օրենքի վիճարկվող նորմը համապատասխանում է իրավական որոշակիության պահանջին, եւ այդ պայմաններում դիմողը, ձեւական առումով առաջադրելով օրենքի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է վարչական ակտով իրեն վնաս պատճառելու հանգամանքի գնահատման խնդիր:

Հերքելով դիմողի դիրքորոշումը՝ կապված այն հանգամանքի հետ, որ շահութահարկի վճարման կարգը չի ներառում շահութահարկի դրույքաչափը, պատասխանողը գտնում է, որ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը կարգավորում էր շահութահարկի հաշվառման կարգը՝ առանց դրա դրույքաչափը սահմանելու: Դրույքաչափը սահմանվում էր նույն օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 33-րդ հոդվածով: Այս պարագայում պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմը չէր կարող ունենալ «սույն օրենքի 60-63 հոդվածներով սահմանված դրույքաչափով, կարգով եւ ժամկետներում» ձեւակերպումը, ինչպես պնդում է դիմողը: Իր այդ դիրքորոշումը պատասխանողը հիմնավորում է՝ հղում կատարելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքի նախագծի՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված հիմնավորմանը:

Անդրադառնալով դիմողի նկատմամբ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքի կիրառման հնարավորությանը՝ պատասխանողը, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասին, գտնում է, որ մինչեւ ՀՕ-248-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) սահմանված նորմերը:

5. ՀՀ սահմանադրական դատարանը չի ընդունում պատասխանող կողմի միջնորդությունը՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ, գտնելով, որ գործի ըստ էության քննությունը կարելու է վեճի առարկա իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է սույն գործի քննության առարկա դրույթներին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ինչպես նաեւ նրանով, որ՝

- օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 33-րդ հոդվածը վերաբերում էր **ռեզիդենտի**, այլ ոչ թե ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափին,

- օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր **ունեցող** (օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով), այլ ոչ թե այդպիսիք չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկին,

- օրենքը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) չի սահմանում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարման կարգը եւ շահութահարկի դրույքաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում,

հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում վիճարկվող իրավանորմը դիտարկել օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) մյուս նորմերի հետ համադրության մեջ՝ իրավական անորոշության եւ խտրական վերաբերմունքի բացահայտման տեսանկյուններից:

6. Օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) վերլուծությունը վկայում է, որ՝

- ի տարբերություն ռեզիդենտների, օրենքը չունի հատուկ նորմ, որը կվերաբերեր Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտների շահութահարկի դրույքաչափին հարկային գործակալի բացակայության դեպքում,

- ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեզիդենտների, օրենքը չունի հատուկ նորմ, որը կվերաբերեր Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկին,

- օրենքի 33-րդ հոդվածը վերաբերում էր **ռեզիդենտի**, այլ ոչ թե ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափին,

- օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր **ունեցող**, այլ ոչ թե այդպիսիք չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկին:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված հանգամանքները հիմք չեն տալիս պնդելու, որ օրենքը չէր սահմանում Հայաս-

տանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարման կարգը եւ շահութահարկի դրույքաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում:

Նշված իրավական դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ իրավական տեխնիկայի առումով թույլատրելի է այն դեպքը, երբ իրավաստեղծ մարմինը տվյալ իրավահարաբերության կարգավորման համար հատուկ նորմեր սահմանելու փոխարեն հղում կատարի մեկ այլ նմանատիպ իրավահարաբերություն կարգավորող նորմերին՝ դրանով իսկ վերջիններս կիրառելի դարձնելով առաջին իրավահարաբերության կարգավորման համար: Տվյալ դեպքում օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 57-րդ հոդվածի 3-րդ կետը, ի թիվս այլնի, հղում էր կատարում օրենքի՝ մեկ այլ նմանատիպ իրավահարաբերություն կարգավորող 61-րդ հոդվածի 1-ին կետին, որն էլ, իր հերթին, հղում էր կատարում օրենքի՝ դարձյալ մեկ այլ իրավահարաբերություն կարգավորող 33-րդ հոդվածին՝ վերջիններս կիրառելի դարձնելով Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտների առնչությամբ՝ հարկային գործակալի բացակայության դեպքում: Հիմք ընդունելով վերոգրյալը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 33-րդ հոդվածով **ռեզիդենտների** համար սահմանված դրույքաչափը, ինչպես նաեւ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր **ունեցող** ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի վերաբերյալ դրույթները կիրառելի էին նաեւ Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր **չունեցող** ոչ ռեզիդենտների առնչությամբ՝ հարկային գործակալի բացակայության դեպքում, եւ իրավակիրառողն առաջնորդվել է այդպիսի դիրքորոշմամբ:

Այլ խնդիր է, թե արդյո՞ք օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը, որին հղում էր կատարում օրենքի վիճարկվող նորմը, եւ որը վերաբերում էր շահութահարկի վճարման պարտականության կատարման կարգին, միաժամանակ սահմանում էր շահութահարկի դրույքաչափ: Այս խնդրի պարզաբանման նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) շրջանակներում վերլուծել շահութահարկի վճարման պարտականության բովանդակային ծավալը: Օրենքի ուսումնասիրությունից բխում է, որ ոչ ռեզիդենտների շահութահարկի վճարման պարտականության կատարման համար հարկային տեսչության մարմինը ոչ ռեզիդենտի կամ նրա լիազոր անձի ներկայացրած տարեկան եկամուտների մասին հայտարարագրի հիման վրա ոչ միայն **պարտավոր էր** հաշվարկել շահութահարկը, այլ նաեւ **ընտրել եւ կիրառել շահութահարկի դրույքաչափ սահմանող համապատասխան նորմը**: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում շահութահարկի դրույքաչափ սահմանող նորմին հղում կատարելը չի կարող դիտարկվել որպես շահութահարկի դրույքաչափի սահմանում, այլ պետք է դիտարկվի որպես շահութահարկի դրույքաչափ սահմանող համապատասխան նորմն ընտրելու եւ կիրառելու պարտականություն, որն ընդգրկվում է «շահութահարկի հաշվարկի կարգ» կամ «շահութահարկ վճարելու պարտականություն» հասկացությունների բովանդակային ծավալում:

Տվյալ դեպքում օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը, որը հղում էր կատարում օրենքի՝ շահութահարկի դրույքաչափ սահմանող 33-րդ հոդվածին, ոչ թե սահմանում էր շահութահարկի դրույքաչափ, այլ հարկային մարմնի համար սահմանում էր պարտականություն՝ շահութահարկի դրույքաչափ սահմանող տարբեր նորմերի շրջանակում ընտրելու եւ կիրառելու շահութահարկի դրույքաչափ սահմանող համապատասխան նորմը:

Նման պայմաններում, չբացառելով այն հանգամանքը, որ, ինչպես պնդում է դիմողը, շահութահարկի վճարման կարգը չի ներառում շահութահարկի դրույքաչափը, եւ վերջինս չի կարող դիտարկվել որպես վճարման կարգի բաղադրատարր, սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումները՝ կապված այն հանգամանքների հետ, որ օրենքի վիճարկվող նորմում առկա էր իրավական անորոշություն, կամ օրենքը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) չէր սահմանում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարման կարգը եւ շահութահարկի դրույքաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում, կամ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը սահմանում էր շահութահարկի դրույքաչափ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ օրենքի առանձին հասկացությունների բովանդակությունը չի կարող ինքնաբավ լինել: Դրանք պետք է դիտարկել ընդհանուր իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ:

Ինչ վերաբերում է իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ դիմողի պնդումներին, ապա փաստն այն է, որ վեճի առարկա իրավանորմի առնչությամբ առկա չէ հակասական իրավակիրառական պրակտիկա, եւ դատական պրակտիկան հստակ առաջնորդվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի պահանջներով:

7. Անդրադառնալով վիճարկվող իրավանորմը խտրական վերաբերմունքի բացահայտման տեսանկյունից դիտարկելու խնդրին՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ՝ պարզել, թե արդյո՞ք հարկային գործակալի առկայությունը կամ բացակայությունը հանդիսանում էր բավարար հիմք ոչ ռեզիդենտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու կամ վերջիններիս որպես տարբեր իրավական կարգավիճակ ունեցող սուբյեկտներ դիտարկելու համար:

Նշված հանգամանքների բացահայտումը կարեւորվում է նրանով, որ օրենքի՝ դիմողի կողմից շահութահարկ վճարելու պարտականության ծագման պահին գործող տեքստի 57, 61 եւ 33-րդ հոդվածների համաձայն, պայմանավորված հարկային գործակալի առկայությամբ կամ բացակայությամբ, ոչ ռեզիդենտների համար սահմանված էին շահութահարկի տարբեր դրույքաչափեր: Մասնավորապես, կախված եկամտի տեսակից՝ հարկային գործակալի առկայության դեպքում ոչ ռեզիդենտների համար որպես շահութահարկի դրույքաչափ սահմանված էր 5 կամ 10 տոկոս, իսկ հարկային գործակալի բացակայության դեպքում ոչ ռեզիդենտների համար, անկախ եկամտի տեսակից՝ 20 տոկոս:

Հարկային քաղաքականություն մշակելիս եւ իրականացնելիս պետությունն օժտված է որոշակի հայեցողությամբ: Հարկային իրավահարաբերությունները կարող են ունենալ բազմաթիվ առանձնահատկություններ, դրանց բովանդակությունը կարող է հաճախակի փոփոխությունների ենթարկվել, իսկ այդ փոփոխությունները պայմանավորված լինեն պետության ֆինանսատնտեսական քաղաքականությամբ, զարգացման առաջնահերթություններով, ռազմավարական խնդիրները լուծելու պահանջով, տնտեսական հարաբերությունները կատարելագործելու, տնտեսության որոշակի ոլորտների զարգացումը խրախուսելու, ինչպես նաեւ հարկային վարչարարությունը կատարելագործելու նպատակով: Նշված այս հանգամանքների կամ դրանցից որեւէ մեկի առկայությունը կարող է հիմք ծառայել հարկային քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնելու, հարկային իրավահարաբերություններում արտոնություններ կամ առավել բարենպաստ պայմաններ սահմանելու համար: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ այս ամենի իմացությամբ եւ իր ազատ կամաարտահայտմամբ է մտնում տնտեսական հարաբերությունների մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսեւորվում է տարբերակված մոտեցում մույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է: Մինչդեռ տվյալ դեպքում նման իրավիճակ առկա չէ: Օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) վերլուծությունը վկայում է, որ, ելնելով վերոգրյալ նպատակներից, օրենսդիրը սահմանել էր որոշակի հարկային քաղաքականություն՝ իրավաչափորեն տարբերակում դնելով ոչ ռեզիդենտ հարկատուների եկամուտների հարկման միջեւ՝ հիմք ընդունելով հարկային գործակալի առկայության կամ բացակայության հստակ չափանիշը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում վերը նշված նպատակներով պայմանավորված՝ հարկային գործակալի առկայության կամ բացակայության հիմքով ոչ ռեզիդենտների միջեւ տարբերակումը, որը սահմանված էր մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ օրենքի տեքստում, բացառել է, որպեսզի հարկային գործակալի առկայության եւ բացակայության պայմաններում հարկվող ոչ ռեզիդենտները դիտարկվեն որպես մույն իրավիճակում գործող սուբյեկտներ: Դրանք, օրենքով սահմանված որոշակի կարգի առկայության պայմաններում, տնտեսական հարաբերությունների մեջ են մտել միանգամայն կանխատեսելի վարքագծով եւ տարբեր իրավիճակներում գործող սուբյեկտներ են: Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհիմն է համարում նաեւ դիմողի այն դիրքորոշումը, որը կապված է վիճարկվող իրավանորմի գործողության հետեւանքով իրավահավասարության սկզբունքի խախտման հետ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս կարող էին եւ պետք է տեղյակ լինեին օրենսդրությամբ սահմանված այլընտրանքային հնարավորությունների մասին՝ կապված հարկային գործակալի առկայության կամ բացակայության դեպքում ոչ ռեզիդենտներին ցուցաբերվող տարբերակված մոտեցման մասին, եւ հնարավորություն ունեին ընտրություն կատարել իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 հունիսի 2011 թվականի  
ՍԳՈ-967**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1003<sup>1</sup>-ՐԴ  
ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ (2007թ. ԱՊՐԻԼԻ 9-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. երեսան

14 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Կիվիրյանի, Դ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, ՀՀ Նախագահի ներկայացուցիչ Ն. Ճնգրյանի, ՀՀ կառավարության ներկայացուցիչ Գ. Մուրադյանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ Ն. Կարապետյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42.1-րդ հոդվածի, 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38, 60 (2-րդ կետ) եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց միատում բանավոր ընթացակարգով քննեց «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի՝ դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի (2007թ. ապրիլի 9-ի խմբագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի՝ 06.12.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով եւ ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, ՀՀ կառավարության եւ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչների պարզաբանումները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**



1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հուլիսի 28-ին եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Դիմողը վիճարկում է օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը՝ 2007թ. ապրիլի 9-ի խմբագրությամբ:

Օրենսգրքի՝ «Ապահովագրական հատուցման նվազեցումը եւ հատուցման մերժման հիմքերը» վերտառությամբ 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը (2007թ. ապրիլի 9-ի խմբագրությամբ) սահմանում էր.

«1. Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նվազեցնելու կամ մերժելու ապահովագրական պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

1) ապահովագրական պատահարն առաջացել է ապահովադրի կամ ապահովագրված անձի կամ շահառուի դիտավորությամբ կատարված գործողությունների հետևանքով.

2) ապահովագրական պայմանագիր կնքելիս ապահովադիրն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք.

3) ապահովադիրը հատուցում է ստացել երրորդ անձից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար այն չափով, որքանով հատուցում ստացվել է վնաս պատճառած անձից.

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածը, որպես լրացում, օրենսգրքում ներառվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. ապրիլի 9-ին ընդունված եւ 2007թ. սեպտեմբերի 30-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-178-Ն ՀՀ օրենքով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» 2010թ. մայիսի 18-ին ընդունված եւ 2010թ. հունիսի 26-ին ուժի մեջ մտած ՀՕ-69-Ն ՀՀ օրենքով օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «առկա են ապահովագրական հատուցման վճարումը նվազեցնելու կամ մերժելու՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքեր»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի եւ «ՄԻ.ԷՅ.ԱՐ.ԼԻՋ» ՍՊԸ-ի միջեւ 21.07.2008թ. կնքվել է թիվ MC/012997 «Տրանսպորտային միջոցների ապահովագրության» վկայագիր, որով 1 տարի ժամկետով ապահովագրվել է ավտոմեքենա: Վկայագրի անբաժանելի մասն է հանդիսանում «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ» անվանումով փաստաթուղթը:

Ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում վնասվել է ապահովագրված ավտոմեքենան, իսկ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն իր գրությամբ մերժել է «ՄԻ.ԷՅ.ԱՐ.ԼԻՋ» ՍՊԸ-ի պահանջը՝ հատուցելու թիվ MC/012997 «Տրանսպորտային միջոցների ապահովագրության» վկայագրով նախատեսված ապահովագրական հատուցումը՝ պատճառաբանելով, որ ապահովագրված ավտոմեքենայի վարորդը թույլ է տվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող՝ «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններին» խախտում:

«ՄԻ.ԷՅ.ԱՐ.ԼԻԶ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.12.2009թ. թիվ ԵԿԳ- 1112/02/09 վճռով հայցը բավարարել է մասնակի՝ պատճառաբանելով, որ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի եւ «ՄԻ.ԷՅ.ԱՐ.ԼԻԶ» ՍՊԸ-ի միջեւ 21.07.2008թ. կնքված թիվ MC/012997 «Տրանսպորտային միջոցների ապահովագրության» վկայագրի անբաժանելի մասը կազմող՝ «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոնների» 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերը հակասում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի եւ «ՄԻ.ԷՅ.ԱՐ.ԼԻԶ» ՍՊԸ-ի վերաբննիչ բողոքների հիման վրա ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 05.03.2010թ. թիվ ԵԿԳ- 1112/02/09 որոշմամբ մերժել է «ՄԻ.ԷՅ.ԱՐ.ԼԻԶ» ՍՊԸ-ի վերաբննիչ բողոքը, մասնակի բավարարել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի վերաբննիչ բողոքը՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2009թ. թիվ ԵԿԳ- 1112/02/09 վճռի՝ 13.820.000 ՀՀ դրամ որպես բաց թողնված օգուտ բռնագանձելու մասը բեկանել է եւ գործն այդ մասով ուղարկել նոր քննության, իսկ մնացած մասով վճիռը թողել է օրինական ուժի մեջ: Նշված որոշմամբ անդրադառնալով ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման օրինաչափությանը՝ ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է. «Դատարանը կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին), եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, ըստ որի՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները ..., իրավացիորեն գտել է, որ «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերով սահմանված պայմանները հակասում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 19.05.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը:

Գործի նյութերից մաեւ պարզվում է, որ առաջին աստիճանի դատարանի ոչ ճիշտ հղումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին՝ «մեխանիկորեն» վերադարձրել է տվյալ գործով վերաբննիչ դատարանի հիշյալ որոշման մեջ՝ կատարելով գործի համար սկզբունքային նշանակության եզրահանգում:

3. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է օրենքի բացի խնդիր, որը, ըստ դիմողի, դրսևորվում է նրանում, որ օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի վիճարկվող դրույթները, ի տարբերություն նույն հոդվածի՝ 2010թ. մայիսի 18-ի խմբագրությամբ տեքստի դրույթների, հնարավորություն չեն ընձեռում ապահովագրական ընկերություններին ապահովագրության պայմանագրով նախատեսելու ապահովագրական հատուցման վճարումը նվազեցնելու կամ մերժելու՝ օրենքով նախատեսված հիմքերից բացի այլ հիմքեր, ինչը տնտեսավարող սուբյեկտին գրկում է շուկայում իր կողմից գնահատված ռիսկերի համաձայն իրականացնել տնտեսական գործունեություն,

ինչպես նաև ընդհանրապես բացառում է սպահովագրական գործունեության իրականացման հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունում: Դիմողը գտնում է, որ սպահովագրական գործունեությունն իրենից ներկայացնում է բացառապես ռիսկերի կառավարման վրա հիմնված տնտեսական գործունեություն եւ այն պետք է ունենա իր կողմից ռիսկերը կառավարելու իրական եւ իրավական հնարավորություն՝ իր գործունեությունն իր կողմից գնահատված ռիսկերին համապատասխանեցնելու հարցում: Իսկ սպահովագրական պայմանագիրը հրապարակային պայմանագրի տեսակ է, որի դեպքում կողմերն ազատ են ինքնուրույն որոշելու այն պայմանները, որի շուրջ կնքում են պայմանագիրը:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի՝ 2007թ. ապրիլի 9-ի խմբագրությամբ տեքստի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին եւ 8-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ 2007թ. ապրիլի 9-ի խմբագրությամբ տեքստի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկելով, մի կողմից, ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ տնտեսական գործունեության ազատության, մյուս կողմից՝ պայմանագրի ազատության սկզբունքների հետ հարաբերակցության համատեքստում, պատասխանողը գտնում է, որ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ: Պետությունը պետք է ոչ միայն երաշխավորի այդ ազատությունը, այլև կարգավորի դրա իրացումը՝ տնտեսությանը տալով կայուն զարգացման կողմնորոշում: Ուստի, ըստ պատասխանողի, պետությունն իրավասու է օրենսդրական կարգավորման ենթարկել տնտեսական հարաբերությունների մասնակիցների վարքագիծը՝ կանխորոշելով նրանց թույլատրելի ազատության չափը եւ սահմանելով ընդհանուր եւ հատուկ սահմանափակումներ:

Պատասխանողը միաժամանակ գտնում է, որ թեև քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման հիմքում հիմնականում ընկած է դիսպոզիտիվության սկզբունքը, այնուամենայնիվ, պետությունն իրավասու է նախատեսել եւ նախատեսել է նաև իմպերատիվ կարգադրագրեր, որոնք պարտադիր են քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների համար: Ուստի, ըստ պատասխանողի, դիմողի նշած փաստարկների հիման վրա օրենսգրքի վիճարկվող դրույթները ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելը կնշանակի զրկել պետությանը քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորելու եւ որոշակի արգելքներ կամ սահմանափակումներ նախատեսելու հնարավորությունից:

Անդրադառնալով օրենքի փոփոխության հիմնախնդրին՝ պատասխանողը գտնում է, որ նոր իրավակարգավորման նախատեսումը չի նշանակում, որ նախկին կարգավորումը հակասահմանադրական էր: Հասարակական հարաբերությունների զարգացումն ինքնին պահանջում է նաև օրենսդրության կատարելագործում՝ առկա զարգացումներին եւ զարգացման միտումներին համընթաց: Պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածում կատարված փոփոխությունները եւս պայմանավորված էին նման զարգացումներով:

5. Սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու նպատակով սահմանադրական դա-

տարանը նախ անհրաժեշտ է համարում դրանք դիտարկել քաղաքացիական օրենսդրությանը բնորոշ՝ պայմանագրի ազատության սկզբունքի համատեքստում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պայմանագրի ազատություն» վերտառությամբ 437-րդ հոդվածի ուսումնասիրությունից բխում է, որ պայմանագրի ազատության սկզբունքը, ի թիվս այլնի, ենթադրում է պայմանագրի **պայմանների** ազատ ընտրություն:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նույն հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի եւ «Պայմանագիր եւ օրենք» վերտառությամբ 438-րդ հոդվածի 1-ին կետի ուսումնասիրությունից բխում է, որ օրենքը կամ այլ իրավական ակտը քաղաքացիաիրավական պայմանագրերի առնչությամբ կարող է սահմանել դիսպոզիտիվ եւ իմպերատիվ պայմաններ: Ընդ որում, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ կետն իմպերատիվ պայմանի առնչությամբ սահմանում է, որ պայմանագրի պայմանը չի կարող հակասել օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված **իմպերատիվ նորմերի բովանդակությանը**, ապա օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար **պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին)**: Այս առումով սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ «պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին)» բառերը վերաբերում են նաեւ այդ նորմերի **բովանդակությանը**: Այսինքն՝ չնայած ձեւակերպման տարբերություններին, օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներն իրենց բովանդակային ծավալով ներդաշնակվում են 438-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների բովանդակային ծավալին: Տարբերությունը կայանում է նրանում, որ օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներն ունեն ավելի լայն բովանդակային ծավալ եւ վերաբերում են ոչ միայն իմպերատիվ պայմանների **բովանդակությանը**, այլ նաեւ ընդհանրապես պայմանագրի վերաբերյալ ցանկացած իմպերատիվ պահանջի:

Իսկ դիսպոզիտիվ նորմերի պարագայում պայմանագրով կարող է բացառվել դիսպոզիտիվ նորմով նախատեսված պայմանի կիրառումը կամ կարող է նախատեսվել դիսպոզիտիվ նորմով նախատեսվածից այլ պայման:

Այսպիսով, պայմանագրի ազատության բովանդակությունը՝ պայմանագրի պայմանների բովանդակության ազատ ընտրության առումով հանգում է նրան, որ պայմանագրի կողմերն իրենց հայեցողությամբ սահմանում են պայմանագրի պայմանները՝ ստանձնելով փոխադարձ պարտավորություններ եւ ձեռք բերելով համապատասխան իրավունքներ: Պայմանագրի կողմերին ուղղված միակ պահանջն այն է, որ նրանց միջեւ փոխհամաձայնեցված պայմանի բովանդակությունը չհակասի օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանի բովանդակությանը: Մասնավորապես, կողմերը չեն կարող օժտվել հայեցողությամբ պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի **բովանդակությունն** ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով, կամ սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պայմանագրով սահմանված պայմանը նախատեսված կամ բացառված չէ օրենքով կամ այլ իրավական ակտով, ապա նշված դեպքերում քաղաքացիաիրավական պայմանագրի կողմերը կարող են կա՛ն պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման, կա՛ն դիսպոզիտիվ նորմով սահմանված լինելու դեպքում՝ սահմանել դիսպոզիտիվ նորմով նախատեսվածից այլ պայման:

Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քա-

ղաքացիական օրենսգրքի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ տեքստի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետում առկա չէ օրենքի բաց, քանի որ անկախ նրանից, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը հղում կկատարի քաղաքացիաիրավական պայմանագրին, թե՛ ոչ, պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 եւ 438-րդ հոդվածների ուժով կարող են պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման, այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսեւորել պայմանագրի այն պայմանի **բովանդակությունը** որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով: Ինչ վերաբերում է «Տրանսպորտային միջոցների ապահովագրության կանոնների»՝ սույն գործին առնչվող կետերին, ապա դրանցում տառացիորեն հղումը կատարվում է «ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթուղիների կանոնների» խախտմանը: Նման կանոններ սահմանված են, մասնավորապես, «Ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում, որի առանձին դրույթներ վերարտադրվել են կողմերի փոխադարձ պարտավորություններում: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ գործող այլ օրենքների (մասնավորապես՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի) իրավական մոտեցումները կառուցված են այն հայեցակարգի վրա, որ փոխհատուցելի է միայն այն վնասը, որն առաջացել է տուժողի ոչ դիտավորյալ գործողության արդյունքում, որ վնասը հիմնավորված ու փաստացի ապացուցված է ու բխում է կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման պայմաններից: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1020-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է՝ «Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ **ապահովագրության պայմանագրով**, ապա ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում եւ ապահովագրական գումար վճարելուց...»: Այստեղ բացառություն նախատեսվում է միայն արտակարգ կամ օրենքով նախատեսվող այլ իրավիճակների դեպքում, սակայն ուշադրության է արժանի մոտեցման ընդհանուր տրամաբանությունը: Օրենսգրքի նշված հոդվածի, ինչպես նաեւ 436-438-րդ, 441-րդ եւ մի շարք այլ հոդվածների առկայության պայմաններում, թերեւս, կարող էր նաեւ փոփոխություն չկատարվել 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում՝ կրկին անգամ շեշտելով ոչ միայն օրենքով, այլեւ **պայմանագրով** նախատեսված պայմանի պարագան:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերի բնույթին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններն իմպերատիվ պայմաններ են, որոնց պարագայում պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 եւ 438-րդ հոդվածների ուժով իրավասու են պայմանագրով նախատեսել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված ցանկացած այլ պայման, սակայն չեն կարող փոփոխել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված պայմանների **բովանդակությունը**, ինչպես նաեւ չեն կարող սահմանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին հակասող պայման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ ապահովագրական ընկերությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված՝ ապահովագրական հատուցումը նվազեցնելու եւ հա-

տուցումը մերժելու վերաբերյալ ցանկացած այլ պայմանի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանագրի ազատության սահմանափակման շրջանակներում է, եթե, նախ՝ **այդպիսի պայմանի բովանդակությունը չի փոխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմանների բովանդակությունը, երկրորդ՝ այդպիսի պայմանը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին:**

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում գնահատել նաև «պարտականություն» եւ «պարտավորություն» հասկացությունների մեկնաբանման ու կիրառման պրակտիկան, բացահայտել դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է. ՀՀ Սահմանադրության 16, 22, 30.1, 42, 55, 60, 81, 83.5, 88 եւ 98-րդ հոդվածներում սահմանադիրը «**պարտականություն**» հասկացությունն օգտագործում է **օրենքով սահմանվող** պարտականության կամ միջազգային պայմանագրով սահմանվող՝ **ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պարտականության** առնչությամբ:

ՀՀ Սահմանադրության 43, 44, 81 եւ 100-րդ հոդվածներում սահմանադիրը «**պարտավորություն**» հասկացությունն օգտագործում է միջազգային պայմանագրով պետության համար **պարտավորության** առնչությամբ եւ մեկ դեպքում՝ Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ մասում՝ **քաղաքացիաիրավական հարաբերությունների** առնչությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21, 27, 60, 345-353-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում **պարտավորության** ստանձնումը ոչ թե իրավունքի սահմանափակում է, այլ իրավունքի իրացման պայման ու երաշխիք: Միաժամանակ, նույն օրենսգրքի, մասնավորապես՝ 3, 10 եւ 20-րդ հոդվածները վկայում են, որ քաղաքացիական իրավունքներ ունենալը եւ պարտականություն **կրելը** հանդես են գալիս զուգորդված: Ընդ որում, **պարտականությունները** ծագում են օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից: Ակնհայտ է նաև, որ օրենքի հիմքով ծագող պարտականության հնարավոր սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով:

ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, «**պարտականություն**» **հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ եւ օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն:** «**Պարտավորություն**» **հասկացությունն իր հերթին ենթադրում է իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի ուժով կամ իր ազատ կամահայտությամբ եւ սեփական գործողությունների շնորհիվ ստանձնված համապատասխան վարքագիծ:** Ընդ որում, քաղաքացիաիրավական պայմանագրով սահմանված պարտավորությունը կարող է կամ վերարտադրել արդեն իսկ Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված պարտականության բովանդակությունը, կամ ամրագրել քաղաքացիաիրավական պայմանագրերի առնչությամբ օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված պարտավորություն, այն վերապահումով, որ կող-

մերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով, ինչպես նաև սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված **պարտավորությունների** առնչությամբ կիրառելի չէ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց **պարտականությունները**: Հետեւաբար՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված **պարտավորությունների** առնչությամբ կիրառելի չէ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, որը վերարտադրում է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, ինչի բովանդակությանը սույն գործով հղում են կատարել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «**պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ եւ օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ եւ սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ:**

Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 հունիսի 2011 թվականի  
ՍԳ-Ո-975**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

#### ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՐԳԳԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 1230-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Հ. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Վարդգես Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Վ. Հարությունյանի՝ 01.04.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողու-



թյան մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Ժառանգությունից հրաժարվելու իրավունք» վերտառությամբ 1230-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Ժառանգությունից հրաժարվելը չի կարող վերացվել կամ հետ կանչվել»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 02.11.2009թ. դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց, որով, ի թիվս այլնի, պահանջել է անվավեր ճանաչել 11.06.2004թ. նոտարական գրասենյակում իր կողմից ժառանգությունից հրաժարվելու մասին հայտարարությունը: Երեսան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 20.08.2010թ. վճռով գործի վարույթը դիմողի վերոնշյալ պահանջի մասով կարճվել է:

Հիշյալ վճռի դեմ սկզբնական հայցով հայցվորի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 22.10.2010թ. որոշմամբ բեկանել է Երեսան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.08.2010թ. վճիռը եւ այն փոփոխել. դիմողի հակընդդեմ հայցապահանջն ամբողջությամբ մերժել է: Մերժելով դիմողի հայցապահանջը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը պատճառաբանելով, որ «սույն պարագայում հակընդդեմ հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել միակողմանի գործարքը՝ 11.06.2004 թվականին իր կողմից տրված հոր ժառանգական զանգվածից հրաժարվելու հայտարարությունն այն խաբեության ազդեցության ներքո կնքված լինելու հիմքով եւ համապատասխանաբար կիրառել անվավերության հետեւանքներ», գտել է, որ «նշված պահանջը ներկայացվել է 02.11.2009 թվականին, իսկ գործարքը կնքվել է 2004 թվականին, հետեւաբար եւ հակընդդեմ հայցվորը բաց է թողել դրա վիճարկման համար նախատեսված ժամկետները եւ հակընդդեմ հայցը՝ նշված պահանջի մասով ենթակա է մերժման, այլ ոչ թե կարճման»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի եւ 1230-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ մասերի համադրված վերլուծության շրջանակներում մեկնաբանելով վերը նշված նորմերի բովանդակությունը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Նշված նորմերի համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ առկա է ժառանգության ընդունման 2 եղանակ՝ փաստացի տիրապետմամբ այն ընդունելու եւ համապատասխան դիմում նոտարական գրասենյակ ներկայացնելու միջոցով, եւ ժառանգության ընդունումից հրաժարվելը ենթադրում է հրաժարման պահից բացառել օրենքով նախատեսված եղանակներից որեւէ մեկով ժառանգության ընդունում»: Վերոնշյալ իրավական դիրքորոշման հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ. «...սույն պարագայում Վարդգես Հարությունյանը, 11.06.2004 թվականին օրենքով սահմանված կարգով հրաժարվելով ժառանգությունից, չէր կարող դրանից հետո հանդիսանալ եւ ճանաչվել փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.10.2010թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, իր՝ 08.12.2010 թվականի որոշմամբ դիմողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 19-րդ, 25-րդ, 31-րդ, 34-րդ եւ 42-րդ հոդվածներին: Դիմողն իր փաստարկները հիմնավորում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ, 1230-րդ հոդվածների սեփական մեկնաբա-

նությանը: Մասնավորապես, ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ հոդվածների ուժով 6 ամսվա ընթացքում ժառանգն իրավունք ունի ինչպես հրաժարվելու ժառանգությունից, **այնպես էլ ժառանգությունից հրաժարվելը վերացնելու կամ հետ կանչելու**, ինչը, ըստ դիմողի, հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասին: Դիմողը գտնում է նաև, որ ժառանգությունից հրաժարվելը, որպես միակողմանի գործարք, ժառանգության բացման օրվանից 6 ամսվա ընթացքում պարտականություններ է ստեղծում միայն ժառանգությունից հրաժարված անձի համար, **իսկ այլ անձանց համար որեւէ պարտականություններ չի սահմանում**, եւ այդ միակողմանի գործարքը տեղի է ունենում **միայն ժառանգության բացման օրվանից 6 ամիսը լրանալուց հետո**: Վերոնշյալ փաստարկների հիման վրա դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը «արգելում է վերացնել որեւէ մեկի համար պարտականություններ չառաջացնող, այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող միակողմանի այս գործարքը»:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ եւ 1232-րդ հոդվածներին, գտնում է, որ ժառանգությունից հրաժարվելը մի սուբյեկտի համար՝ իրավադադարեցնող, մյուս սուբյեկտների համար իրավաառաջացնող փաստ է, այսինքն, ժառանգի՝ ժառանգությունից հրաժարվելու փաստն այլ ժառանգների համար առաջացնում է ժառանգությունն ընդունելու իրավունք, եւ այս պարագայում օրենսգրքի վիճարկվող դրույթը մնացած ժառանգների համար երաշխավորում է որոշակի վարքագիծ դրսևորելու հնարավորություն: Հակառակ պարագայում, ըստ պատասխանողի, կստեղծվի վիճակ, երբ ժառանգի՝ ժառանգությունից հրաժարվելուց հետո հաջորդ հերթի ժառանգները կընդունեն ժառանգությունը, որից հետո, սակայն, ժառանգությունից հրաժարվելը վերացնելը կամ հետ կանչելը կխախտի ժառանգությունն ընդունած հաջորդ հերթի ժառանգների իրավունքը: Պատասխանողը գտնում է, որ այս առումով օրենսգրքի վիճարկվող դրույթը կոչված է ապահովելու այս հարաբերություններում իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Ժառանգությունից հրաժարվելու ինստիտուտը դիտարկելով որպես միակողմանի գործարք եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312 եւ 313-րդ հոդվածների վերլուծության արդյունքում հանգելով այն եզրակացությանը, որ յուրաքանչյուր դեպքում, երբ առկա են գործարքի անվավերության հանգեցնող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմքերը, դրա վավերականությունը կարող է վիճարկվել դատական կարգով, պատասխանողն անհիմն է համարում դիմողի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթը զրկում է իրավունքի սուբյեկտին կողմնորոշվելու, իր խախտված իրավունքները վերականգնելու, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության իրավունքից այն դեպքում, երբ ժառանգը ժառանգությունից հրաժարվել է էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո:

Պատասխանողը՝ հղում կատարելով մի շարք երկրների քաղաքացիական օրենսգրքերի կոնկրետ հոդվածների, արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթի համեմատությամբ մնամատիպ իրավակարգավորումներ են նախատեսված նաև այդ երկրների քաղաքացիական օրենսգրքերով:

Միաժամանակ, պատասխանողը՝ հղում կատարելով ՀՀ սահմանադրական դա-

տարանի 24.11.2009թ. ՍԳՌ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին եւ գտնելով, որ դիմողն օրենսգրքի վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորող փաստարկներ չի ներկայացրել, միջնորդում է սույն գործի վարույթը կարճել:

5. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը դիտարկել օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ հոդվածների հետ համադրությամբ մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու իրավական հնարավորությանը: Այս կապակցությամբ, հաշվի առնելով այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների իրականացման հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը, վտանգի տակ դրվի հասարակական հարաբերությունների կայունությունը: Հետեւաբար՝ իրավունքների իրականացման հայեցողությունը չի ենթադրում իրավունքների չկարգավորված, անկանոն իրականացում: Այն ենթադրում է տվյալ իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու իրավական հնարավորությունների միջեւ ընտրություն կատարելու իրավունք, որի իրականացումը կարող է տեղի ունենալ բացառապես օրենքով սահմանված կարգի շրջանակներում: Ընդհակառակը, իրավունքների՝ օրենքով սահմանված կարգից դուրս ցանկացած իրականացման հնարավորություն կխաթարի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը՝ միաժամանակ վտանգի տակ դնելով հասարակական հարաբերությունների կայունությունը: Այդ է պատճառը, որ, առաջնորդվելով վերը նշված իրավաչափ նպատակներով, այն է՝ այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի երաշխավորումը, հասարակական հարաբերությունների կայունության ապահովումը, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել է բացառություն՝ թույլատրելով սուբյեկտիվ իրավունքներից հրաժարվելու հետեւանքով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքների **դադարում**: Տվյալ դեպքում, ի թիվս այլնի, որպես վերը նշված դեպք է հանդիսանում օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված դեպքը՝ ժառանգությունից հրաժարվելը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ժառանգության ընդունումը կամ ժառանգությունից հրաժարվելն առնչվում են մյուս ժառանգների կամ ժառանգություն ստանալու իրավունքի օրինական ակնկալիք ունեցող այլ անձանց իրավունքներին եւ պարտականություններին, հետեւաբար, վերը նշված իրավաչափ նպատակներից ելնելով, օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել է բացառություն՝ արգելելով ժառանգությունից հրաժարվելը վերացնելու կամ հետ կանչելու հնարավորությունը՝ միաժամանակ **դադարած** համարելով տվյալ անձի՝ ժառանգություն ստանալու սուբյեկտիվ իրավունքը:

Նշված տրամաբանության վրա են հիմնված նաեւ օրենսգրքի 1225-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 1230-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք արգելում են համապատասխանաբար՝ ժառանգության ընդունումը եւ ժառանգությունից հրաժարվելը վերապահումներով կամ պայմանով, կամ օրենսգրքի 1227-րդ հոդվածը, որը կարգավորում է այն ժառանգների ժառանգության իրավունքի իրականացման հետ կապված հարաբերությունները, որոնք ծա-

գում են համապատասխանաբար՝ ժառանգությունից այլ ժառանգի հրաժարման կամ այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքերում: Նշված տրամաբանության վրա է հիմնված նաև օրենսգրքի 291-րդ հոդվածը, որը, որպես բացառություն, թույլատրում է, որ **օրենքով նախատեսված դեպքերում** միակողմ գործարքներն այլ անձանց համար եւս պարտականություններ ստեղծեն: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում, ի թիվս այլնի, որպես վերը նշված դեպք է հանդիսանում նաև օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված դեպքը՝ ժառանգությունից հրաժարվելը, ինչը համապատասխան պարտականություններ է ստեղծում նաև մյուս ժառանգների կամ ժառանգություն ստանալու իրավունքի օրինական ակնկալիք ունեցող այլ անձանց համար, քանի որ առնչվում է վերջիններիս ժառանգության սուբյեկտիվ իրավունքին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ, 1230-րդ հոդվածների վերաբերյալ տրված մեկնաբանությունները, եւ գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմի սահմանադրականությամբ:

6. Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթը գրկում է իրավունքի սուբյեկտին վերականգնելու իր խախտված իրավունքներն այն դեպքում, երբ ժառանգը ժառանգությունից հրաժարվել է էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո՝ ՀՀ օրենսդրության, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312, 313 եւ 317-րդ հոդվածների ուսումնասիրության արդյունքներով՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը չի բացառել էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանցանքների բերումով գործարքների կնքման դեպքերի հնարավորությունը: Տվյալ դեպքերի համար նախատեսելով գործարքն անվավեր ճանաչելու ինստիտուտ՝ ՀՀ օրենսդրությունը վերը նշված դեպքերում երաշխավորում է գործարքի տվյալ կողմի իրավունքների, ներառյալ՝ ժառանգության իրավունքի իրականացումը եւ խախտված իրավունքների վերականգնումը: Հետեւաբար, սահմանադրական դատարանն այս խնդրում իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակում չի արձանագրում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**21 հունիսի 2011 թվականի  
ՍԳ-Ո-980**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԱԿՔԱ-ԿՐԵԳԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ», «ԱՐՅԱԽԲԱՆԿ»,  
«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՎ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ  
ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ՕՐԵՆՍՊՐՔԻ 55-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 հուլիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչներ Ռ. Մարգարյանի, Ա. Գալստյանի, Հ. Հարությունյանի, Կ. Պետրոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ակրա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» եւ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ակրա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» եւ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ների՝ 2011թ. մարտի 2-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածում փոփոխություն է կատարվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2006թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 04.01.2007 թվականին: Այդ փոփոխությունների արդյունքում օրենսգրքի 55-րդ հոդվածը շարադրվել է ներկայիս խմբագրությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Գույքի բռնագրավումը» վերտառությամբ 55-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասը սահմանում է. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»:

Դիմողների կողմից սկզբնապես վիճարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերի սահմանադրականությունը: ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն իր՝ 2011թ. մարտի 18-ի ՍԳԴԿՈ/1-9 որոշմամբ գործը քննության է ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության որոշման մասով՝ մերժելով գործի քննության ընդունումը նույն հոդվածի 7-րդ մասի առումով:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԿԴ-0094/01/09 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Կռռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իր՝ 12.10.2009թ. դատավճռով Կռռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուին մեղավոր է ճանաչել վերը նշված հոդվածներով նախատեսված արարքները կատարելու համար եւ վերջինիս նկատմամբ պատիժ է նշանակել 12 տարի ժամկետով ազատազրկում՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 64.142.000 ՀՀ դրամից, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ:

Դատարանը դիմողների քաղաքացիական հայցերը բավարարել է՝ որոշելով դատապարտյալից հօգուտ նրանց բռնագանձել ընդհանուր առմամբ 25.457.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

Բացի դրանից, դատարանը վճռել է Կռռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուի մոտ հայտնաբերված գումարների եւ գույքի վրա 11.10.2008թ. որոշմամբ դրված կալանքը թողնել անփոփոխ՝ մինչեւ նրա նկատմամբ գույքային պարտավորությունների մասով կայացված դատավճռի կատարումը:

Քննարկելով իրեղեն ապացույցների հարցը՝ դատարանը վճռել է 24.12.2008թ. եւ 30.03.2009թ. որոշումներով իրեղեն ապացույցներ ճանաչված 25.200 եվրոն եւ 4.040.000

ՀՀ դրամ գումարները՝ որպես ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույք, բռնագրավել:

Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո դիմողներն իրենց ներկայացրած քաղաքացիական հայցերի բավարարման մասով դատավճռի հարկադիր կատարման համար ստացել են կատարողական թերթեր եւ ներկայացրել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն:

ԴԱՀԿ ծառայությունից դիմողները տեղեկացել են, որ ՀՀ դատախազությունն առաջինն է տվյալ գործով ներկայացրել կատարողական թերթ՝ դատապարտյալի ամբողջ գույքի, բայց ոչ ավելի, քան 64.142.000 ՀՀ դրամի բռնագրավումն ապահովելու համար:

Դիմողները դիմել են դատավճիռը կայացրած դատարան՝ դատավճռի անհստակությունը մեկնաբանելու պահանջով: 03.06.2010թ. դատարանը ներկայացված դիմումների քննարկման արդյունքում որոշում է կայացրել, ըստ որի՝ կայացված դատավճռի անհստակությունը մեկնաբանել է հետեւյալ կերպ. «Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իրեղեն ապացույցներ ճանաչված 25.200 Եվրո եւ 4.040.000 ՀՀ դրամ գումարները, բջջային հեռախոսները եւ ակնոցը, որպես ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույք, ենթակա են բռնագրավման՝ անկախ դատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալուց կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից: Այս գումարները կամ առարկաները հոգուտ քաղաքացիական հայցվորների բռնագանձվել չեն կարող, տուժողներին եւ քաղաքացիական հայցվորներին պատճառված վնասները փոխհատուցելուն ուղղվել չեն կարող: Բավարարված քաղաքացիական հայցերի մասով դատավճիռը կատարելիս՝ բռնագանձումը պետք է տարածվի ոչ թե իրեղեն ապացույց ճանաչված 25.200 Եվրո, 4.040.000 ՀՀ դրամ գումարների, բջջային հեռախոսների եւ ակնոցի, այլ Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուին պատկանող այլ դրամական միջոցների եւ գույքի վրա»:

Նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Վերջինս իր՝ 15.07.2010թ. որոշմամբ հանգել է այն հետետուքյանը, որ Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը հիմնավորված եւ պատճառաբանված է, այն վերացնելու, փոփոխելու կամ բեկանելու հիմքեր չկան: Ուստի դատարանը որոշել է Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.10.2009թ. դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին նույն դատարանի 2010 թվականի հունիսի 3-ի որոշման դեմ դիմողների ներկայացուցիչների բերած վերաքննիչ բողոքները մերժել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 15.07.2010թ. որոշման դեմ դիմողների ներկայացուցիչների կողմից բերվել են վճռաբեկ բողոքներ, որոնք, սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանի 02.09.2010թ. որոշմամբ վերադարձվել են:

3. Վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 7-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմողները գտնում են, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 8-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 31-րդ հոդվածներին այնքանով, որքանով այդ նորմերը նեղ, սպառիչ սահմանում են տալիս «բարեխիղճ երրորդ անձ» եզրույթին, եւ նախատեսում են բարեխիղճ երրորդ անձանց /տուժողների/ կամքից անկախ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավում՝ առանց բարեխիղճ

երրորդ անձանց այդ գույքի առաջնահերթ վերադարձման կամ պետության կողմից համարժեք հատուցման տրամադրման երաշխիքների:

Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված դրույթներին, ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերի՝ դիմողները մատնանշում են, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է ստեղծել անհրաժեշտ օրենսդրական միջոցներ՝ բռնագրավելու համար փողերի լվացումից կամ նախորդող հանցագործություններից ստացված եկամուտները, այդ հանցագործությունների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները կամ համարժեք այլ գույք՝ միեւնույն ժամանակ վնաս չհասցնելով բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին:

Այս համատեքստում դիմողները մատնանշում են, որ այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանել է, որ բարեխիղճ երրորդ անձի գույքը ենթակա չէ բռնագրավման, նույն հոդվածի 7-րդ մասը նեղ, սպառիչ սահմանում է տվել «բարեխիղճ երրորդ անձ» եզրույթին: Դիմողները եզրակացնում են, որ օրենքի տրամաբանությամբ բարեխիղճ կարող է համարվել միայն այն անձը, որը գույքն այլ անձի է հանձնել կամովին: Արդյունքում, ըստ դիմողների՝ տվյալ սահմանումից բխում է, որ եթե գույքը հանցանք կատարած անձին անցել է օրինական տիրապետողի կամքից անկախ, ապա այդ անձը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել բարեխիղճ երրորդ անձ եւ, հետեւաբար, բռնագրավման գործընթացում տուժողի իրավունքների պաշտպանությունը երաշխավորված է:

4. Պատասխանող կողմը վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ ըստ էության հիմնավորում չի ներկայացրել: Պատճառաբանելով, որ դիմողները չեն սպառել ընդհանուր իրավասության դատարաններում դատական պաշտպանության միջոցները՝ պատասխանողը միջնորդել է գործի վարույթը կարճել:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ **գործը լուծող վերջնական դատական ակտով** կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Քննության առարկա գործում գործը լուծող վերջնական դատական ակտ է հանդիսանում Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.10.2009թ. դատավճիռը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածը՝ որպես լրացուցիչ պաշտպանության միջոց նախատեսում է դատական որոշման վերաբերյալ կասկածների ու անհստակությունների լուծումը: Այդ հոդվածին համապատասխան ընդունվող դատական ակտը, տվյալ դեպքում՝ դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին որոշումը, գործը լուծող ըստ էության ակտի՝ դատավճռի հետ կազմում է համակարգային ամբողջություն: Հետեւաբար, դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին որոշման բողոքարկման՝ օրենքով նախատեսված հնարավորություններն օգտագործելով՝ դիմողներն սպառել են պաշտպանության միջոցներն ընդդեմ գործը լուծող ըստ էության դատական ակտի:



Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ պատասխանողի միջնորդությունը՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ, բավարարելու հիմքեր առկա չեն:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության լրացուցիչ միջոցը կիրառելու համար որեւէ ժամկետային սահմանափակում նախատեսված չէ, ինչը գործնականում կարող է հանգեցնել պաշտպանության այդ միջոցից օգտվելու իրավունքի չարաշահման:

6. Սույն գործի շրջանակներում բարձրացված սահմանադրաիրավական վեճը սահմանադրական դատարանը հարկ է համարում քննության առնել պետության՝ մասնավոր անձանց սեփականությունն այլոց ապօրինի գործողություններից պաշտպանելու պոզիտիվ պարտականության, ինչպես նաև հանցագործությունից տուժած անձանց իրավունքների եւ օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխավորման տեսանկյունից: Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև վիճարկվող իրավակարգավորումը եւ նշված խնդիրները դիտարկել Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում: Ըստ այդմ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

- արդյո՞ք դիմողների սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի այն կարգավորմամբ, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրա կողմից տիրապետելու հանգամանքից,

- արդյո՞ք ՀՀ օրենսդրությունը նախատեսում է տուժողներին հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման հնարավորություն երաշխավորող համապատասխան արդյունավետ կառուցակարգ:

7. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հստակեցնելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պետության պարտականությունների շրջանակը, զարգացրել է պետության պոզիտիվ պարտականությունների գաղափարը: Վերջինս, մասնավորապես, արտահայտվում է նրանում, որ սեփականության իրավունքի իրական եւ արդյունավետ իրականացումը կախված չէ լոկ պետության՝ չմիջամտելու պարտականությունից, այլ պահանջում է նաև պաշտպանության որոշակի պոզիտիվ միջոցառումներ, մասնավորապես, երբ առկա է անմիջական կապ անձի գույքային իրավունքներն արդյունավետորեն իրացնելու եւ այն միջոցառումների միջեւ, որոնք անձը կարող է իրավաչափորեն ակնկալել իշխանություններից (Օներյիլդիզ ընդդեմ Թուրքիայի, *Oneryildiz v. Turkey* գործով Մեծ պալատի 2004թ. նոյեմբերի 30-ի վճիռը, կետ 134): Ըստ Եվրոպական դատարանի՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պետության պոզիտիվ պարտականությունը կարող է, ի թիվս այլնի, ներառել փոխհատուցում տրամադրելու պարտականությունը:

Հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանու-

թյան խնդիրը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության եւ կրած վնասի վերականգնման համար:

8. Մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ընդունված՝ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. սեպտեմբերի 29-ից), Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված՝ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազգրավման եւ բռնագրավման մասին Ստրասբուրգի կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004թ. մարտի 1-ից), Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Վարշավայի կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2008թ. հոկտեմբերի 1-ից), նախատեսում են դրույթներ, որոնց համաձայն՝ դրանցով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է պարտադիր բռնագրավման: Այս միջազգային իրավական փաստաթղթերով մասնակից պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ստանձնում են այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցառումներ ձեռնարկելու պարտավորություն, որոնք հնարավորություն կտան ապահովել այդ կոնվենցիաներով նախատեսված հանցագործություններից ստացված գույքի բռնագրավումը:

Սիաժամանակ, նշված միջազգային իրավական փաստաթղթերն ամրագրում են որոշակի իրավական երաշխիքներ՝ ի պաշտպանություն համապատասխան հանցագործությունների գոհերի օրինական շահերի: Մասնավորապես, ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 14-րդ հոդվածի, ինչպես նաև Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված Վարշավայի կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն առաջնահերթության կարգով քննում են հանցագործություններից ստացված՝ բռնագրավված գույքը հայցող մասնակից պետությանը վերադարձնելու հարցը՝ **այն հաշվով, որ նա կարողանա փոխհատուցում տրամադրել հանցագործության գոհերին կամ հանցագործություններից ստացված այդպիսի գույքը վերադարձնի դրա օրինական սեփականատերերին:** ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի՝ «Տուժողների օգնությունն ու պաշտպանությունը» վերտառությամբ 25-րդ հոդվածը մասնակից պետություններին պարտավորեցնում է սահմանել անհրաժեշտ ընթացակարգեր կոնվենցիայով նախատեսված հանցագործության գոհերի համար վնասի փոխհատուցման եւ հատուցման մատչելիություն ապահովելու համար:

9. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հատկապես կարեւորում է, մի կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի, ինստիտուտի, մյուս կողմից՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժ» վերտառությամբ Բաժին 3-ի՝ «Պատժի հասկացությունը, նպատակները եւ տեսակները» վերտառությամբ Գլուխ 9-ի՝ «Պատժի տեսակները» վերտառությամբ 49-րդ հոդվածը սահմանում է պատժի տեսակները՝ դրանց մեջ նշելով նաեւ գույքի բռնագրավումը (5-րդ կետ): ՀՀ քրեական օրենսգրքի 51-61-րդ հոդվածները բացահայտում են 49-րդ հոդվածում նշված պատժատեսակներից յուրաքանչյուրի բովանդակությունը. բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի բովանդակությունը բացահայտված է օրենսգրքի 55-րդ հոդվածում:

ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ գույքի բռնագրավումը հանդիսանում է լրացուցիչ պատժատեսակ, որը կարող է նշանակվել միայն ծանր եւ առանձնապես ծանր հանցանքների համար՝ օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում գույքի բռնագրավումը նախատեսված է կա՛մ որպես պարտադիր լրացուցիչ, կա՛մ որպես ոչ պարտադիր լրացուցիչ պատժիժ: Քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասում տրված է գույքի բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի, սահմանումը: Ըստ այդ սահմանման՝ գույքի բռնագրավումը **դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը** կամ դրա մի մասը հարկադրաբար եւ անհատույց վերցնելն է՝ **ի սեփականություն պետության:**

ՀՀ քրեական օրենսգրքի 50 եւ 55-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի 55-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումը՝ իր բնույթով, խնդիրներով ու նպատակներով, համարժեք չէ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավմանը: ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը տարանջատում է կատարում գույքի բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի, եւ 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման օբյեկտների միջեւ: Եթե 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի դեպքում բռնագրավման օբյեկտը բացառապես դատապարտյալի **օրինական** գույքն է, ապա նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված բռնագրավման օբյեկտն այլ է, քան դատապարտյալի օրինական գույքը, այսինքն՝ այն գույքը, որը ձեռք է բերվել հանցագործությունը կատարելու արդյունքում եւ, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով նախատեսված բռնագրավման երկու ինստիտուտների միջեւ առկա հաջորդ էական տարբերությունը կայանում է նրանում, որ եթե դատապարտյալի գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, կարող է կիրառվել բացառապես ծանր եւ առանձնապես ծանր հանցանքների դեպքում, դրա կիրառումը կարող է թողնվել դատարանի հայեցողությանը եւ կրել ոչ պարտադիր բնույթ, ապա հանցավոր ճանապարհով ստացված գույքի պարագայում բռնագրավումը պարտադիր է եւ կիրառվում է անկախ հանցագործության ծանրությունից:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, կանոնակարգելով գույքի բռնագրավման հետ կապված հարաբերությունները եւ բռնագրավման կարգի առնչությամբ հղում կատարելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 39-րդ հոդված), նկատի ունի բացառապես

գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ: Մասնավորապես, այդ օրենսգրքի 40-րդ հոդվածը, ճշգրտելով բռնագրավման ենթակա գույքի շրջանակները, ամրագրում է, որ բռնագրավման ենթակա գույքը ներառում է դատապարտված **անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի, եւ նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները միմյանցից էապես տարբերվում են եւ դրանց շրջանակներում բռնագրավման ենթակա գույքը հստակ տարանջատված է՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս երկու ինստիտուտների գույքահեռաբար կիրառման դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավման եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պահանջների բավարարման կապակցությամբ օբյեկտիվորեն չի կարող իրավական բախում («կոլիզիա») կամ իրավակիրառման առաջնահերթության խնդիր առաջանալ, քանզի մի դեպքում բռնագրավման օբյեկտը դատապարտյալի գույքն է, մյուս դեպքում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն իրենց սահմանադրաիրավական բովանդակությամբ տարբեր ինստիտուտներ են՝ տարբեր խնդիրներով եւ նպատակներով: Բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի ինստիտուտը, որն անմիջականորեն ուղղված է դատապարտյալի սեփականության իրավունքի դեմ, բխում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասից, քանզի **այս դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավումը հանդես է գալիս որպես պատասխանատվությունից բխող հարկադրանքի միջոց՝ իրավաչափորեն սահմանափակելով դատապարտյալի սեփականության իրավունքը:** Մինչդեռ, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը դատապարտյալից հետ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չի ունենում: Հետեւաբար, հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության՝ առանց տուժողի սեփականության իրավունքի վերականգնման, անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման եւ խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը:**

10. Մույն գործի շրջանակներում առանցքային նշանակություն ունի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման վերաբերյալ վիճարկվող նորմերի կիրառման գործընթացում տուժողներին հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման երաշխավորման խնդիրը, որպես նաեւ ՀՀ Սահմանադրության մասնավորապես՝ 3-րդ, 20-րդ /5-րդ մաս/, 43-րդ /2-րդ մաս/ հոդվածներում ամրագրված պետության սահմանադրաիրավական պարտականություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել, հանդիսանում են իրեղեն ապացույցներ: Նույն օրենսգրքի 119-րդ հոդվածը սահմանում է դատարանի դատավճռում, ինչպես նաեւ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծման կանոնները: Նշված հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս առարկաները, **որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության հետեւանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին**: Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, **հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը**, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը: Միաժամանակ, այս դրույթներին համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում եւ 61-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ամրագրված են համապատասխանաբար՝ տուժողի եւ քաղաքացիական հայցվորի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց վերցված գույքը հետ ստանալու իրավունքը:

Վերոհիշյալ վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման գործընթացում երաշխավորում է տուժողներին հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման հնարավորություն, եւ ըստ վերոհիշյալ իրավակարգավորման՝ ապահովվում է հանցավոր ճանապարհով ստացված՝ բռնագրավված գույքի հաշվին առաջնահերթ կարգով տուժողների կրած վնասի վերականգնում՝ այդ թվում դատական կարգով, որն ուղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներում ամրագրված նորմերից: Ըստ այդմ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառումը կարող է իրավաչափ համարվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին հանձնելու դեպքում:

Ավելին, եթե նույնիսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքը բավարար չէ տուժողների օրինական տիրապետումից հանցագործության արդյունքում դուրս եկած գույքը վերադարձնելու համար, ապա ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաեւ որպես լրացուցիչ պատժատեսակ՝ դատապարտյալի գույքի բռնագրավման դեպքում այդ գույքի հաշվին տուժողների շահերի բավարարման հնարավորություն: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ բռնագրավման ենթակա՝ դատապարտյալի գույքի արժեքից ստացված գումարների հաշվին չորրորդ հերթին հատուցվում է հանցագործության կատարմամբ պատճառված վնասը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, որպես պայման չի նախատեսում տուժողի սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտ-

պանություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան: Նման իրավիճակում ոչ միայն առաջացել են ներհամակարգային հակասություններ, այլև նույնացվել են դատապարտյալի գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի, եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները: Վիճարկվող իրավակարգավորումն իրավակիրառական պրակտիկայում ստացել է այնպիսի մեկնաբանություն, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման դեպքում այդ գույքն ամբողջությամբ անհատույց անցնում է ի սեփականություն պետության՝ առանց տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի ու սեփականության իրավունքի պաշտպանության:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի եւ սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 հուլիսի 2011 թվականի  
ՍԳՈ-983**



## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒՔԻՆՅԱՆԻ,  
ՍԵՐԻՆԵ ՅԼՁՅԱՆԻ, ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵՉՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԵՎ ԱԳՆԵՍԱ  
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐԻ, ՍՎԵՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈՔՅԱՆԻ  
ԵՎ ԳԱՅԱՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՈՒ «ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍՈՒՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՒՐՔԻ  
204.33-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 204.38-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**15 հուլիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Չեյնալյանի, Ա. Ղազարյանի, Կ. Մեժլումյանի, Գ. Թոթոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի, Մերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների, Սվետա Հարությունյանի, Սերգեյ Հակոբյանի եւ Գայանե Կիրակոսյանի ու «Մելտեքս» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի, 204.38-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռու-

քինյանի՝ 14.01.2011թ., Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բադդասարյանների՝ 14.02.2011թ., Սերինե Ֆլջյանի՝ 14.02.2011թ., «Մելտեքս» ՍՊԸ-ի՝ 15.02.2011թ., Սվետա Հարությունյանի՝ 06.05.2011թ., Սերգեյ Հակոբյանի եւ Գայանե Կիրակոսյանի՝ 16.06.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի հիմքով սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 6-ի ՍԳԱՌ-56 որոշմամբ վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են՝ դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողների գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ակտերի վերանայումը» վերտառությամբ 426.9-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող 204.33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշմամբ ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 204.38-րդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 204.38. Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման կանոնները

Եթե սույն բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 28.11.2007թ. ՀՕ-270-Ն օրենքով լրացվել է 12.1-րդ բաժնով, որը վերնագրված է. «Դատական ակտերի վերանայումը նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով»: Սույն բաժնի 49.1-րդ գլխում է ամրագրվել 426.9-րդ հոդվածը, որի 1-ին մասը հետագա փոփոխության չի ենթարկվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 204.38-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրվել է 20.05.2010թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՕ-94-Ն ՀՀ օրենքով: Վերջինիս 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.1 եւ 3.2-րդ



բաժինները ճանաչվել են ուժը կորցրած: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգիրքը լրացվել է 3.3-րդ բաժնով, որը ներառում է վիճարկվող նորմը:

2. Քննության առարկա միավորված գործով դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

Դիմողներ Կ. Ռուբինյանը եւ Ա. Սարգսյանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 07.12.2009թ. ՍԳՈ-844 եւ 30.03.2010թ. ՍԳՈ-871 որոշումները, 01.05.2010թ. բողոք են ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ վերջինիս կողմից համապատասխանաբար թիվ ԵԿԴ/0007/11/09 եւ թիվ ԵԿԴ/0008/11/09 քրեական գործերով 03.07.2009թ. եւ 27.05.2009թ. կայացված՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայելու պահանջով: Ներկայացված բողոքների հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 04.06.2010թ. կայացրել է «Նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին» որոշումներ:

Դիմողներ Ի. Օգանեզովան, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանները ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23.02.2010թ. ՍԳՈ-866 որոշման հիման վրա 08.04.2010թ. բողոք են ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումները: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 19.05.2010թ. որոշմամբ ներկայացված բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 13.08.2010թ. թիվ 3-7(ՎԳ) որոշմամբ՝ ներկայացված բողոքը բավարարվել է մասնակիորեն եւ վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի՝ 13.03.2009թ. որոշումը: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի՝ 05.02.2007թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է ուժի մեջ, իսկ Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների բողոքը՝ առանց բավարարման:

Դիմող Սերինե Ֆլջյանը ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23.02.2010թ. ՍԳՈ-866 որոշման հիման վրա 16.03.2010թ. բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումները: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 14.04.2010թ. որոշմամբ ներկայացված բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 13.08.2010թ. թիվ 3-123(ՎԳ) որոշմամբ՝ ներկայացված բողոքը բավարարվել է մասնակիորեն եւ վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի՝ 24.07.2009թ. որոշումը: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի՝ 30.11.2007թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է ուժի մեջ, իսկ Ս. Ֆլջյանի բողոքը՝ առանց բավարարման:

Դիմող Սվետա Հարությունյանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 18.09.2010թ. ՍԳՈ-917 որոշումը, 28.10.2010թ. բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ վերջինիս՝ ՎԳ4426/05/08 վարչական գործով 08.07.2009թ. կայացրած՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը» նոր հանգամանքի հիմքով վերանայելու եւ ՀՀ վարչական դատարանի կողմից 23.04.2009թ. ՎԳ 4426/05/08 վարչական գործով կայացված վճիռն ամբողջությամբ բեկանելու ու փոփոխելու պահանջներով:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 10.11.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ՝ ներկայացված բողոքը վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Դիմող «Մելտեքս» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23.02.2010թ. ՍԳՈ-866 որոշումը, 09.03.2010թ. բողոքներ է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի՝ 19.02.2009թ. թիվ 3-10 (ՏԳ) եւ 19.02.2009թ. թիվ 3-11(ՏԳ) քաղաքացիական գործերով կայացված որոշումները նոր հանգամանքով կամ նոր երեսան եկած հանգամանքով վերանայելու պահանջով: «Մելտեքս» ՍՊԸ-ի կողմից 09.03.2010թ. ներկայացված բողոքների հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 24.03.2010թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումներ:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԳ 3-10(ՏԳ)2009թ. եւ թիվ ԵԿԳ 3-11(ՏԳ)2009թ. գործերով 13.08.2010թ. կայացված որոշումներով՝ ներկայացված բողոքները բավարարվել են մասնակիորեն, ըստ որի՝ վերանայվել են ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի 19.02.2009թ. թիվ 3-10(ՏԳ) եւ 3-11(ՏԳ) քաղաքացիական գործերով կայացված որոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերի պալատի՝ 23.04.2004թ. թիվ 3-748(ՏԳ) եւ 27.02.2004թ. թիվ 3-397(ՏԳ) քաղաքացիական գործերով կայացված որոշումները թողնվել են օրինական ուժի մեջ, իսկ «Մելտեքս» ՍՊԸ-ի բողոքները՝ առանց բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 18.06.2008թ. «Մելտեքս» ՍՊԸ-ն եւ Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 32283/04) կայացված վճիռը չի դիտել որպես իր կողմից՝ 23.04.2004թ. թիվ 3-748(ՏԳ) եւ 27.02.2004թ. թիվ 3-397(ՏԳ) քաղաքացիական գործերով կայացված որոշումները վերանայելու հիմք:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. ապրիլի 13-ի ՍԳՈ-873 որոշումը, որով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, դիմողներ Ս. Հակոբյանը եւ Գ. Կիրակոսյանը դիմել են ՀՀ վճռաբեկ դատարան՝ նշված որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 07.04.2010թ. որոշումը վերանայելու պահանջով: Վճռաբեկ դատարանը 2010թ. դեկտեմբերի 29-ի իր որոշմամբ մերժել է վերանայման վարույթ հարուցելու պահանջը՝ իր որոշումը պատճառաբանելով նրանով, որ սահմանադրական դատարանի նշված որոշումը խնդրո առարկա դատական ակտի համար վերանայման հիմք հանդիսանալ չի կարող, քանի որ սահմանադրական դատարանն այդ որոշմամբ տարածածկեց է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը:

3. Դիմողներ Ա. Մարգարյանի, Կ. Ռուբինյանի եւ «Մելտեքս» ՍՊԸ-ի պնդմամբ՝ ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի վիճարկվող իրավակարգավորումներն առաջին հերթին խախտում են ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մաս կազմող՝ սահմանադրական արդարադատության իրավունքը՝ հնարավորություն չտալով սահմանադրական դատարանի՝ նոր հանգամանք հանդիսացող որոշումների հիման վրա վերականգնել իրենց խախտված սահմանադրական իրավունքները: Այդ խախտումը, ըստ նրանց, մասնավորապես, դրսևորվում է նրանում, որ վիճարկվող դրույթում «ընդհանուր կարգ» կամ «ընդհանուր կանոն» ձեւակերպումը նշանակում է, որ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում իրականացնում է այն նույն լիազորությունները, որոնք իրականացնում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունն ստուգելիս, ինչն իր հերթին նշանակում է, որ դատական ակտը վերանայող դատարանն իրավասու է մերժել

բողոքը՝ վերանայվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այսինքն, ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը դրսևտրվում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս օրինական ուժի մեջ թողնել վերանայման ենթակա այն դատական ակտը, որը կայացվել է սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրինադրույթի կիրառմամբ կամ ընդունվել է ի խախտումն Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի պահանջների:

Վերոհիշյալ փաստարկմամբ՝ դիմողները խնդրել են ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 101-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը այնքանով, որքանով նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով դատարաններին լիազորում է գործի քննության արդյունքում կայացնել դատական ակտ՝ դատավարական օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով, այդ թվում՝ մերժելով բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Դիմողներ Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների եւ Սերինե Ֆլջյանի պնդմամբ՝ եթե նախկինում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու վարույթը կարգավորող դրույթները հստակ սահմանում էին նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ապա ներկայիս իրավական կարգավորմամբ այդ որոշումների շրջանակը որոշակիացված չէ: Նրանց պնդմամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթում՝ «նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները» արտահայտությունն իրավական որոշակիության տեսանկյունից հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 6-րդ հոդվածներին: Նման անորոշությունը հիմք է հանդիսացել, որպեսզի ՀՀ վճռաբեկ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը, նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու արդյունքում կայացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշում՝ ուժի մեջ թողնելով վերանայվող դատական ակտը:

Ըստ դիմողների՝ նման անորոշության պատճառով ՀՀ վճռաբեկ դատարանը հնարավորություն է ստանում կամ պարտադրված է կիրառել գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման գործերով իր լիազորությունները: Մինչդեռ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը չի կարող ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածով սահմանված լիազորություններն ամբողջ ծավալով, այլ կաշկանդված է նոր հանգամանք համարվող՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ եւ չի կարող Սահմանադրությանը հակասող նորմ պարունակող դատական ակտը թողնել ուժի մեջ:

Դիմող Ս. Հարությունյանի փաստարկները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի հակասահմանադրականության վերաբերյալ, ըստ էության կրկնում են դիմողներ Բ. Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների եւ Ս. Ֆլջյանի կողմից ներկայացված փաստարկները:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասին, ապա այս առնչությամբ դիմողը նշում է, որ վերջինս որպես դատական ակտը նոր հանգամանքի ուժով վերանայելու հիմք չի դիտարկում այն դեպքը, երբ վիճարկվող օրենքի դրույթն անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հետ չհամընկնող

մեկնաբանությամբ: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 18 և 19-րդ հոդվածների պահանջներին: Դիմողի գնահատմամբ՝ այն դեպքում, երբ ակնհայտ է անձի սահմանադրական իրավունքի խախտման փաստի առկայությունը, վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու վերաբերյալ՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը չի դառնում անձի իրավունքի դատական պաշտպանության միջոց, քանի որ հիմք չի հանդիսանում նոր հանգամանքի ուժով դատական ակտի վերանայման համար, ինչի արդյունքում խախտված իրավունքը չի վերականգնվում:

Ըստ դիմողներ Ս. Հակոբյանի եւ Գ. Կիրակոսյանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, հնարավորություն չի ընձեռում նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով ապահովել անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն այն դեպքերում, երբ վիճարկվող օրինադրույթն անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ: Բացի դրանից, իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող նորմում «հակասահմանադրական է ճանաչվել» բառակապակցության ներքո ընկալվում են միայն հակասահմանադրական ճանաչելու այն դեպքերը, երբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթն իր ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահից:

4. Պատասխանողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ իր բացատրության մեջ առարկելով դիմողների փաստարկները՝ նշում է, որ ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերը նախատեսում են սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման լիարժեք օրենսդրական կարգավորում՝ հնարավորություն տալով նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայող դատարանին ընդունելու քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նախատեսված որոշումները, այդ թվում՝ մերժել վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այսինքն՝ դատական ակտի վերանայումը ոչ միշտ է ենթադրում դրա փոփոխում կամ բեկանում: Նման կարգավորումը, ըստ պատասխանողի, լիովին տեղավորվում է նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման լիարժեք կառուցակարգի շրջանակներում:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության խնդրին՝ պատասխանողը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. փետրվարի 25-ի ՍԳ-Ո-943 որոշումը՝ նշելով, որ այդ որոշմամբ սահմանադրական դատարանն արտահայտել է վիճարկվող իրավակարգավորման վերաբերյալ իր իրավական դիրքորոշումը:

Պատասխանողը նշված բացատրությունը ներկայացնելով՝ միաժամանակ միջնորդում է նաեւ գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի մասով, կարճել այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող դրույթները դիմողների նկատմամբ՝ այդ դրույթի սահմանադրականության հարցի բարձրացման տեսանկյունից չեն կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

5. Սահմանադրական դատարանը, անդրադառնալով պատասխանողի՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդությանը, գտնում է, որ դիմողների փաստարկները բավարար հիմք են գործն ըստ էության քննելու, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները հաշվի առնելով վիճարկվող նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու եւ գործով ըստ էության որոշում կայացնելու համար:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, պարզել, թե.

- վիճարկվող իրավակարգավորումները որքանով են հնարավորություն տալիս ապահովել անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը եւ վերականգնել նրա՝ խախտված սահմանադրական իրավունքները՝ երաշխավորելով սահմանադրական դատարանի որոշումների կատարումը,

- արդյո՞ք նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման գործընթացում իրավասու դատարանի լիազորությունները ենթակա են առանձնահատուկ իրավակարգավորման,

- որքանով է իրավաչափ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման արդյունքում վերանայվող ակտն ուժի մեջ թողնելը,

- որքանով են վիճարկվող իրավակարգավորումները եւ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան համապատասխանում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի նախկին որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԳՈ-701, ՍԳՈ-751, ՍԳՈ-758, ՍԳՈ-767, ՍԳՈ-833, ՍԳՈ-935 եւ ՍԳՈ-943) արտահայտել է սկզբունքային իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության ու կենսունակության չափանիշների, այդ ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների վերաբերյալ: Ուստի ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում բարձրացված սահմանադրաիրավական վեճը քննության առնել իր այդ իրավական դիրքորոշումների համատեքստում եւ մարդու սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նախադրյալների տեսանկյունից:

Վիճարկվող իրավակարգավորումների ազդեցությունը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետության ու կենսունակության, ինչպես նաեւ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորության վրա գնահատելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ բացահայտել «դատական ակտի վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը, ինչպես նաեւ «դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու» եւ «դատական ակտը վերանայելու» դատավարական փուլերից յուրաքանչյուրի խնդիրները, ճշգրտել դրանց շրջանակներում առաջադրվող եւ լուծման ենթակա հարցերի շրջանակը՝ կարեւորելով դատական պրակտիկայում ոչ միայն «նոր հանգամանքներ» հասկացության, այլեւ այդ հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, այսինքն՝ անձի խախտված իրավունքների վերականգնման ընթացակարգային կանոնների միակերպ ընկալման անհրաժեշտությունը:

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը որոշելիս կարելի է նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ **իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում:**

Սույն գործով ՀՀ դատական դեպարտամենտի կողմից սահմանադրական դատարանին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վերաբերյալ, 2006 թվականի հոկտեմբերի 4-ից մինչև 2011 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ դատարաններում 48 սուբյեկտներից ստացվել է 68 բողոք: Այդ թվում՝ 1 բողոք ստացվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, որը թողնվել է առանց քննության, իսկ 67 բողոք ստացվել է ՀՀ վճռաբեկ դատարանում: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատում նշված հիմքով ստացվել է 46 բողոք, որից վերադարձվել է 37-ը, իսկ 9-ը՝ վերանայման պահանջի մասով բավարարվել է: Վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացվել է 21 բողոք, որից 10-ը վերադարձվել է, 7-ով՝ վերանայման վարույթի հարուցումը մերժվել է, 4-ով՝ վերանայման մասով բողոքը բավարարվել է գործերն ուղարկվել են համապատասխան դատարաններ՝ նոր քննության:

Հաշվի առնելով, որ վերոհիշյալ ժամանակահատվածում ՀՀ սահմանադրական դատարանը թվով 96 անհատական դիմումների հիման վրա 31 գործով օրենքների դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 96 իրավասու սուբյեկտից միայն 48-ն է դիմել նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման պահանջով:

Սահմանադրական դատարանի կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են նաեւ, որ այն դեպքերում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով տարածամեկտեղ է Սահմանադրությանը հակասող նորմի ուժը կորցնելը, դատական պրակտիկայում նոր հանգամանքների հիմքով քաղաքացիների դիմումները, որպես կանոն, քննության չեն ընդունվել /արձանագրվել է նման 26 բողոք եւ դրանք, մասնավորապես, վերաբերում են ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-753, 758, 780, 782, 873, 930 եւ 943 որոշումներին/:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման եւ վերանայման վարույթի առնչությամբ ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ընթացակարգային առումով այդ վարույթին բնորոշ են հետեւյալ հիմնական տարրերը.

- վերանայման բողոքի հիման վրա, **առկա համարելով նոր հանգամանքի փաստը**, իրավասու դատարանը հարուցում է վերանայման վարույթ: Եթե դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը տվյալ անձի առնչությամբ չի հանդիսանում նոր հանգամանք, ապա վերանայման վարույթի հարուցման պահանջը մերժում է,

- հարուցված վերանայման վարույթի շրջանակներում համապատասխան դատական ակտը վերանայելիս ըստ էության գնահատվում է հակասահմանադրական ճա-

նաչված նորմի կիրառման փաստի ազդեցությունն այդ նորմը կիրառած դատական ակտի եւ/կամ տվյալ գործի ելքի վրա,

- այն դեպքում, երբ հարուցված վերանայման վարույթի շրջանակներում վերոհիշյալ հանգամանքը գնահատելիս իրավասու դատարանը գտնում է, որ հակասահմանադրական ճանաչված նորմի կիրառման փաստը գործի ելքի եւ/կամ տվյալ դատական ակտի վրա ազդեցություն չի ունեցել, **օրինական ուժի մեջ է թողնում հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտը:** Դրա համար իրավական հիմք են ծառայում ՀՀ քրեական դատավարության եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխանաբար 426.9-րդ հոդվածի 1-ին մասի եւ 204.38-րդ հոդվածի վիճարկվող դրույթները, որոնցում ամրագրված «ընդհանուր կարգ» ձեւակերպումը, ըստ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության, թույլ է տալիս դատական ակտը վերանայելիս դեկլարվել համապատասխանաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածներով եւ, ըստ այդմ, օրինական ուժի մեջ թողնել համապատասխան դատական ակտը,

- որպես կանոն՝ վերանայման վարույթի հարուցումը մերժվում է բոլոր այն դեպքերում, երբ հակասահմանադրական ճանաչված իրավանորմի ուժը կորցնելը տարածակետով է սահմանադրական դատարանի որոշմամբ,

- նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման գործառույթի իրականացման արդյունքում վճռաբեկ դատարանն իրացնում է այն նույն լիազորությունները, որոնք սահմանված են վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման գործառույթի իրականացման արդյունքում:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով պալատի կողմից՝ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման պրակտիկայում առկա չէ որեւէ դեպք, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմ կիրառած դատական ակտը թողնվել է օրինական ուժի մեջ: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի կողմից հարուցված վերանայման վարույթների արդյունքում թվով հինգ դեպքում օրինական ուժի մեջ են թողնվել ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմ բովանդակող դատական ակտեր:

Գնահատելով վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջին պարագայում հաշվի չի առնվել ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳ-Ո-758 որոշման 13-րդ կետում արտահայտված եւ 2010թ. փետրվարի 23-ի ՍԳ-Ո-866 որոշման մեջ վերահաստատված այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ այն դեպքում, երբ դատական ակտի վերանայման համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը, **ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետեւ արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ մնան իրավակիրառական պրակտիկայի արդյունքում, վերանայման պահանջների բավարարման նույնիսկ վերոհիշյալ սակավաթիվ գործերի, առանձին դեպքերում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմերի կիրառմամբ ընդունված դատական ակտերը շարունակում

են մնալ օրինական ուժի մեջ եւ դիմողների համար իրենց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից վերանայման արդյունքում որեւէ իրավական հետեւանք չի առաջանում: Ընդ որում, առկա են դեպքեր, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի վերանայման պահանջի առնչությամբ նույնիսկ մերժվում է վերանայման վարույթ հարուցելու պահանջը եւ կայացվում վերանայման վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշում: Ընդ որում, դեպքերի գերակշիռ մասում այդ պահանջը, ինչպես նշվեց, մերժվում է այն պատճառաբանությամբ, որ սահմանադրական դատարանը, դատարանների կողմից կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով՝ տարածամկետել է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը, եւ բողոք բերող անձը նման պայմաններում չի ապացուցել եւ հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը: Ավելին, այն դեպքում, երբ բողոքը ներկայացվում է տարածամկետման ավարտից հետո, բողոքը վերադարձվում է այն պատճառաբանությամբ, որ բաց է թողնված բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը:

Այս առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական պրակտիկան զարգացել է հակառակ սահմանադրական դատարանի 2007թ. մայիսի 11-ի ՍԳՌ-701 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների: Այդ որոշման մեջ սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է. «Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի եւ ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին եւ ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարածամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր եւ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւանքները: Հետեւաբար, հակասահմանադրական ճանաչված եւ տարածամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարածամկետման հիմքում ընկած եւ օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաեւ հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում»:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով միաժամանակ գտնում է, որ այդ պրակտիկան արդ-



յունք է «վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների ոչ ճիշտ ընկալման ու կիրառման:

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «վերանայման վարույթ», «դատական ակտերի վերանայում» հասկացությունների սահմանադրավական բովանդակությունը բացահայտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ բաժնի նորմերի համակարգային վերլուծության արդյունքում՝ **հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի իրավական բովանդակությունը:**

Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետեւանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն՝ խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու դեպքում: Հետեւաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժը կորցնելուն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջազգային իրավունքի հանրաճանաչ *restitutio in integrum* սկզբունքի բովանդակությունը բացահայտել է իր Պապամիկալոպոսոս *v. Greece*), որի 34-րդ կետում դատարանը, մասնավորապես, նշել է. «Վճիռը, որով Դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, Պատասխանող պետությանը պարտավորեցնում է վերջ տալ իրավախախտմանը եւ դրա հետեւանքների դիմաց հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը»: Եվրոպական դատարանի այս վճռում արտահայտված *restitutio in integrum* սկզբունքը հետագայում իր արտացոլումը գտավ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին R (2000)2 հանձնարարականում: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիշյալ հանձնարարականում որպես *restitutio in integrum* սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոց մատնանշվում է **գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես գործի վերաքննության հատուկ միջոց է դիտարկվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույթի վերաբացումը:** Եվրոպական դատարանի վճիռների կատարման վերաբերյալ Նախարարների կոմիտեի բանաձեռերի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական գործերի պարագայում Եվրոպական դատարանի վճիռի հիման վրա քրեական գործի նոր քննությունը, որպես կանոն, հանդիսանում է *restitutio in integrum* սկզբունքի ապահովման միակ միջոցը:

Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, որպես անձի խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ իր նախորդ մի շարք որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին եւ վերահաստատելով դրանք՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

- նոր հանգամանքների առկայության պարագայում, այսինքն, երբ առկա է իրավունքի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հավաստված փաստով, ապա «դատական ակտի վերանայման վարույթի» հարուցումը, դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելն իրավասու դատարանի կողմից իրավաբանական անհրաժեշտություն է, այդ դատարանի սահմանադրական պարտականությունը, որի նպատակն անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումն է,

- օրինական ուժի մեջ մտած դատական համապատասխան ակտը **նոր հանգամանքների հիմքով վերանայելու ծավալը, շրջանակները պայմանավորված են հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կարգավորման առարկայով, հարաբերությունների բնույթով ու առանձնահատկություններով, կիրառման շրջանակներով եւ դրանցով պայմանավորված՝ նաեւ անձի կոնկրետ իրավունքների խախտման փաստով:**

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաեւ, որ պատահական չէ, որ թեւէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլուխը վերագրված է «Դատական ակտերի վերանայումը նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով» եւ գլխի դրույթներում հիմնականում կիրառվում է «**դատական ակտի վերանայում**» ձեւակերպումը, այնուամենայնիվ, նշված գլխի 426.4-րդ հոդվածը վերագրված է «**Գործերի վերանայման** հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետեւանքով»:

Հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը, ինչպես նաեւ *restitutio in integrum* սկզբունքի բովանդակությունն ու այդ սկզբունքի երաշխավորմանն ուղղված՝ Նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ ըստ էության համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, եւ դատական ակտի վերանայում հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, ծավալը, շրջանակները, խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը: Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտության դեպքում կապահովեն նաեւ գործի վերաքննություն այն ծավալով, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանման եւ անձի խախտված իրավունքով պայմանավորված՝ դատական ակտի՝ համապատասխան մասով (կամ ամբողջությամբ) վերանայման պայմաններում: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նորոգում՝ կիրառված կոնկրետ նորմի հակասահմանադրականության կոնկրետ փաստի ճանաչման պայմաններում եւ շրջանակներում: Հաշվի առնելով միջազգային իրավական մոտեցումները՝ սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ չնայած գործի նորոգման

ինստիտուտը քրեական եւ քաղաքացիական վարույթներում ունի իր առանձնահատկությունները, այսուհանդերձ, դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը մեկ նպատակ է հետապնդում՝ անձի սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության երաշխավորում:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ **տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը:**

Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայումն այն բացառիկ դեպքերից է, երբ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու եւ սահմանադրական դատարանի որոշումների ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարման նպատակները գերակայում են *res judicata* դոկտրինայի հիմքում ընկած սկզբունքների, մասնավորապես՝ իրավական որոշակիության սկզբունքի, նկատմամբ: Այս հազվադեպ շեշտադրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում: Մասնավորապես, այս խնդրի առնչությամբ Եվրոպական դատարանը նշում է, որ «...իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական եւ անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Քրեական գործի վարույթը նորոգելու հնարավորությունն ինքնին համատեղելի է Կոնվենցիայի հետ, ներառյալ՝ 6-րդ հոդվածի երաշխիքները: 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է նոր փաստերի կամ նախորդ վարություն տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը» (Քսերածն ընդդեմ Ալբանիայի *Xheraj v. Albania* գործով 2008թ. հուլիսի 29-ի վճռի 52-53-րդ կետեր):

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման պահանջի մերժումը չի կարող հիմնավորվել *res judicata* դոկտրինայի, մասնավորապես, դրա հիմքում ընկած իրավական որոշակիության սկզբունքի պահպանման նկատառումներով եւ անհրաժեշտությանը:

8. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճը դիտարկել նաեւ գործառույթ - ինստիտուտ - իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության ապահովման տեսանկյունից:

Այսպես. նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի շրջանակներում իրականացվում է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում խախտված իրավունքի վերականգնման

գործառույթ, որն ունի իր ուրույն խնդիրներն ու նպատակները: Այս գործառույթի արդյունավետ իրականացումը կարող է ապահովվել հաշվի առնելով դրա բովանդակությամբ, խնդիրներով ու նպատակներով պայմանավորված առանձնահատկությունները, բացառելով հակասահմանադրական նորմ բովանդակող վերանայվող դատական ակտն ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը վերանայման արդյունքում ուժի մեջ թողնելը չի երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաեւ դատական ակտերի վերանայման նպատակի ու խնդիրների իրացում, եւ միաժամանակ արգելափակելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Տվյալ իրավիճակում չի ապահովվում նաեւ իրավունքի գերակայության, հետեւաբար՝ եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմում «դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով» դրույթն առաջին հերթին վերաբերում է նոր հանգամանքի հիման վրա գործի նորոգման արդյունքում կազմակերպված **գործի քննությանը**: Գործի քննության ընդհանուր կարգը կարող է կիրառվել միայն հակասահմանադրական ճանաչված նորմ կիրառած համապատասխան դատական ակտերի բեկանմանը հաջորդող՝ գործի նոր քննության առնչությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.7-րդ հոդվածի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.36-րդ հոդվածի համաձայն՝ դատական ակտերի վերանայման բողոքները, ի թիվս այլ վավերապայմանների, պետք է բովանդակեն դատական ակտի վերանայման համար հիմք ծառայած նոր հանգամանքի շարադրանքը եւ բողոքին կցվեն նոր հանգամանքը հաստատող նյութերը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.37-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժում է, եթե դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը **հաստատող ապացույց չի ներկայացվել, եւ եթե դատարանին հայտնի չէ նման հանգամանքի առկայությունը**: Վերանայման բողոքին ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներով ներկայացված պահանջների եւ վարույթի հարուցումը մերժելու՝ խնդրո առարկա հիմքի համադրված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ եթե բողոք բերող անձն իր բողոքում պարտավոր է շարադրել վերանայման համար հիմք հանդիսացող նոր հանգամանքը՝ ներկայացնելով նոր հանգամանքը հաստատող ապացույց, ապա իրավասու դատարանը **վարույթ հարուցելու հարցը լուծելու կամ, նույնն է, թե՛ բողոքի ընդունելիության փուլում** պարտավոր է ստուգել համապատասխան ապացույցի առկայությունը եւ ոչ թե գնահատել դրա հնարավոր իրավական հետեւանքներն ու դրա հիման վրա բողոքի մերժման կամ բողոքն ընդունելու խնդիր լուծել: Միանշանակ է, որ **նոր հանգամանքի առկայությունն անհրաժեշտ ու բավարար հիմք է վերանայման վարույթ սկսելու եւ հակասահմանադրական նորմ բովանդակող դատական ակտն ուժը կորցրած ճանաչելու համար՝ հաղթահարելով հակասահմանադրական նորմի կիրառման իրավական հետեւանքները**:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումն այդ վարույթի հետեւյալ սահմանադրաիրավական բովանդակության պարագայում.

ա/ վերանայման բողոքում նոր հանգամանքի շարադրանքի եւ նոր հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներակայացվող մյուս վավերապայմանների առկայության, բավարար հիմք է վերանայման վարույթ հարուցելու համար,

բ/ վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե միայն հարուցված վերանայման վարույթի շրջանակներում բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր հանգամանք չի հանդիսանում. ընդ որում, այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը տվյալ նորմը հակասահմանադրական ճանաչելով՝ տարաժամկետով է այդ նորմի ուժը կորցնելը, սահմանադրական դատարանի 2007թ. մայիսի 11-ի ՍԳՈ-701 որոշմանը համապատասխան, տարաժամկետման հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանք չդիտարկելու համար: Այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի կողմից դրույթը հակասահմանադրական է ճանաչվել «այս կամ այն մասով», «այնքանով, որքանով», ապա տվյալ որոշումը դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք է հանդիսանում, եթե տվյալ նորմը տվյալ անձի նկատմամբ այդ մասով կիրառվել է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ,

գ/ եթե վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտերը:

10. Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, ապա այս առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել իր՝ 2011թ. փետրվարի 25-ի ՍԳՈ-943 որոշումը, որի եզրափակիչ մասի 2-րդ կետով ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն «իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավորություն չի ընձեռում»: Նշված որոշման պատճառաբանական մասի 11-րդ կետում սահմանադրական դատարանը նաեւ արձանագրել է, որ «իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների կողմից որպես նոր հանգամանք ճանաչելու հարցը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական եւ թե՛ վարչական դատավարությունում **համալիր ու անհետաձգելի** կարգավորման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները»:

Հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկ-

վող 204.33-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի բովանդակությունը համար-  
ժեք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կե-  
տում ամրագրված դրույթի բովանդակությանը եւ իրավակիրառական պրակտիկայում  
դրան տրվել է նույն բովանդակությունը, ինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգր-  
քի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված դրույթին՝ սահմանադրական  
դատարանը սույն գործի շրջանակներում հիմնվում է 2011թ. փետրվարի 25-ի ՍԳՈ-943  
որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների վրա եւ գտնում է, որ այդ իրա-  
վական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաեւ ՀՀ քաղաքացիական  
դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասին:

11. Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական դատարանն իր մի քանի  
որոշումներում արձանագրել է Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքնե-  
րի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման  
անարդյունավետությունը, այնուամենայնիվ, այդ ինստիտուտը շարունակում է մնալ  
անկատար: Նշված հանգամանքը նկատի ունենալով՝ սահմանադրական դատարանը  
սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում ընդգծել նոր հանգա-  
մանքներով դատական ակտերի վերանայման ողջ մեթոդաբանության հիմնավոր վե-  
րարժեվորման անհրաժեշտությունը՝ գտնելով, որ այդ ինստիտուտի իրավակարգավոր-  
ման մեթոդաբանությունը պետք է խարսխվի պետության՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ  
հոդվածով սահմանված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատու-  
թյունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան  
պաշտպանելու պարտավորության հենքի վրա:

Անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ  
իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: Այս նպատակի արդյու-  
նավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝  
անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնում: Միջազգային փոր-  
ձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված անհատական սահմա-  
նադրական գանգատի այս կամ այն մոդելի ընտրությամբ եւ առանձնահատ-  
կություններով՝ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների հի-  
ման վրա՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման մեխանիզմ-  
ները տարբեր են: Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտ ունեցող  
երկրներում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն իրականաց-  
վում է հենց սահմանադրական դատարանի կողմից, որը, հակասահմանադրական ճա-  
նաչելով վիճարկվող նորմը կամ նորմի կիրառումը, միաժամանակ վերացնում է նաեւ  
հակասահմանադրական նորմ կիրառած կամ անձի սահմանադրական իրավունքը  
խախտած դատական ակտը: Նման մեխանիզմի դեպքում պետությունն ինքն է ապա-  
հովում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը սահմանադրական  
արդարադատության շրջանակներում՝ կատարելով քաղաքացիների սահմանադրա-  
կան իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իր պարտավորությունը:  
Այն երկրներում, որտեղ սահմանադրական վերահսկողության օբյեկտ են հանդիսա-  
նում միայն դատական ակտերով կիրառված օրինադրույթները, խախտված սահմա-  
նադրական իրավունքների վերականգնումը երաշխավորվում է սահմանադրական  
դատարանների որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստի-  
տուտի միջոցով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի վերանայման  
արդյունավետ ինստիտուտի գոյությունը եւս պետք է հիմնվի այն տրամաբանության

վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով: Այս մեթոդաբանությունն է ընկած, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման հիմքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան նշված մեթոդաբանությունը հաշվի առնելու ուղղությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի նորմի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ անձանց իրավունքների պաշտպանության

հարցի լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011թ. նոյեմբերի 1-ը:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 հուլիսի 2011 թվականի  
ՍԳՈ-984**





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ՄԱՐԻՆԵ ՊՈԳՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՔԱԶՄԱՔՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 13-ՐԳ  
ՀՈԳՎԱԾԻ ԵՎ 11-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**4 հոկտեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Մարինե Պողոսյանի դիմումի հիման վրա՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի եւ 11-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Մ. Պողոսյանի՝ 08.06.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի մայիսի 7-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի հունիսի 20-ից:

Օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է. «Ժողովի որոշումները կարող են

ընդունվել ժողովի գումարման, հարցման (հեռակա կարգով քվեարկության), ինչպես նաև իրագեկման միջոցով»:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հարցման միջոցով որոշումների ընդունման կարգը:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացրել ընդդեմ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի, որով խնդրել է անվավեր ճանաչել ք. Երեւան, Վ. Համբարձումյան 47 շենքի բնակիչ Վոլոդյա Անթառանյանի եւ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի միջեւ 01.05.2008թ. կնքված YER-116 պայմանագիրը եւ պարտավորեցնել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին վճարել երեսուց միլիոն (30.000.000) ՀՀ դրամ՝ որպես իր եւ իր ընտանիքի անդամների առողջությանը, պատվին եւ արժանապատվությանը պատճառված վնասի հատուցում:

Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.02.2010թ. վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 30.04.2010թ. որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը՝ Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.02.2010թ. վճիռը թողնելով անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.03.2011թ. որոշմամբ մերժել է դիմողի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2010թ. որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Ըստ դիմողի՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետը եւ 13-րդ հոդվածը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 8-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ, 33.2-րդ, 43-րդ եւ 48-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ, փաստարկում է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում բազմաբնակարան շենքերում ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի իրացման ընթացակարգերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, ինչի հետեւանքով նշված օրենքի կիրառման արդյունքում խախտվել են սեփականության, առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իր իրավունքները: Մասնավորապես, դիմողը գտնում է, որ՝

- օրենքի վիճարկվող նորմերը բազմաբնակարան շենքերում ընդհանուր սեփականության կառավարման եւ պահպանման վերաբերյալ որոշումների կայացման նպատակով ընդհանուր ժողով գումարելու եւ արձանագրություն վարելու օրենսդրական պահանջ չեն նախատեսում՝ դրանով իսկ անարդյունավետ դարձնելով բազմաբնակարան շենքերում ընդհանուր սեփականության կառավարման համակարգը,

- վերը նշված հիմքով օրենքի վիճարկվող նորմերը սահմանափակում են գույքից օգտվելու իր իրավունքները, քանի որ «հնարավորություն են ստեղծում առանց բոլոր սեփականատերերի համաձայնության ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքը օգտագործել եւ ձեւափոխել»,

- օրենքի վիճարկվող նորմերով հստակ նախատեսված չեն բազմաբնակարան շենքի ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման ընթացակարգերը, այդ գույքի կառավարման բարձրագույն մարմինը, այդ մարմնի լիազորությունները, ին-

չը «շահագրգիռ կողմին հայեցողական լիազորություններ է տալիս եւ նրա համեմատ անհավասար պայմաններ ստեղծում սեփականատերերի համար՝ կամայականությունների տեղիք տալով»:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 8-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ, 33.2-րդ, 43-րդ, 48-րդ հոդվածների դրույթներին:

Առանձին-առանձին անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ պատասխանող կողմն օրենքի դրույթների համադրված վերլուծության հիման վրա գտնում է, որ սեփականատերերի ժողովը կազմված է միայն բազմաբնակարան շենքի սեփականատերերից, եւ այդ առումով օրենքը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք չի տալիս:

Պատասխանողը, վկայակոչելով օրենքի համապատասխան հոդվածները, պնդում է նաեւ, որ օրենքը հստակորեն սահմանում է սեփականատերերի ժողովի լիազորությունները, որոշումների ընդունման ընթացակարգերը, ժողով հրավիրելու ժամկետը, ժողով հրավիրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ժողովի կողմից ընդունված որոշումների իրավական ուժը, այն հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ որոշումները կարող են ընդունվել ժողովի գումարման, հարցման կամ իրազեկման միջոցով: Ընդ որում, ըստ պատասխանողի՝ օրենքի համաձայն շինության յուրաքանչյուր սեփականատեր ժողովում օժտված է իր բաժնին հավասար ձայների քանակով, ինչի միջոցով կարող է հասնել իր համար բարենպաստ որոշման կայացմանը:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված սեփականության իրավունքի, մարդու արժանապատվության, դատական պաշտպանության իրավունքի հետ, պատասխանողը գտնում է, որ շենքի սեփականատերերին օրենքով նախատեսված ընթացակարգերից ցանկացածն ընտրելու իրավունքի վերապահումը բացառում է օրենքի վիճարկվող դրույթների եւ սեփականության, մարդու արժանապատվության հարգման եւ պաշտպանության իրավունքների միջեւ հնարավոր հակասությունը, իսկ դիմողի բողոքների ընդունումը եւ քննարկումն ընդհանուր իրավասության դատարանների կողմից վկայում են այն մասին, որ օրենքի վիճարկվող դրույթներն անձին չեն գրկում իր իրավունքների պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության իրավունքից: Ըստ պատասխանողի՝ այլ խնդիր է, որ դիմողը չի կարողացել լիարժեքորեն օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրեն ընձեռված հնարավորություններից:

Պատասխանողն ընդգծում է նաեւ, որ դիմողի կողմից Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասին տրված մեկնաբանությունը չի համապատասխանում այդ հոդվածի իմաստին, քանի որ այն վերաբերում է ոչ թե սեփականության իրավունքի հարկադիր սահմանափակմանը, այլ սեփականության օտարմանը հասարակության եւ պետության կարիքների համար:

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերն ուսումնասիրել օրենքի մյուս դրույթների հետ համակարգային փոխկապվածության մեջ:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նվիրված է բազմաբնակարան շենքերում ընդհանուր սեփականության կառավարման հետ կապված իրավահարաբերություններին: Օրենքն ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմին է ճանաչում **սեփականատերերի ժողովը**, որն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում բնութագրվում է որպես **շինությունների բոլոր**

**սեփականատերերից կազմված մարմին:** Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ յուրաքանչյուր սեփականատեր ժողովում օժտված է իր բաժնին հավասար ձայների քանակով: Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ ժողովն իրավասու է, եթե դրան ներկա են այնքան սեփականատերեր կամ նրանց ներկայացուցիչներ, որոնց պատկանում է **սեփականատերերի ընդհանուր ձայների թվի կեսից ավելին:** Սեփականատերերի ժողովի իրավասությանը վերապահված է ընդհանուր բաժնային սեփականության կառավարման հետ կապված ցանկացած հարցի լուծում, բացառությամբ օրենքով նախատեսված հարցերի: Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «բ» կետով սեփականատերերի ժողովի իրավասությանն է վերապահված նաև **ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշման ընդունումը:** Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը ժողով հրավիրելու իրավունք է վերապահում **սեփականատերերից յուրաքանչյուրին:** Օրենքը նաև հստակ սահմանում է, թե սեփականատերերի ժողովի իրավասությանը վերապահված հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ սեփականատերերի ձայների ինչ քանակով է հնարավոր որոշում ընդունել:

Օրենքի 11-րդ հոդվածի մասերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշումը կարող է ընդունվել **սեփականատերերի ձայների կեսից ավելիով:** Օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող 11-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է սեփականատերերի ժողովի անցկացման՝ օրենքով թույլատրելի ընթացակարգերը եւ, մասնավորապես, սահմանում է, որ ժողովի որոշումները կարող են ընդունվել ժողովի գումարման, **հարցման (հեռակա կարգով քվեարկության),** ինչպես նաև իրագեկման միջոցով: Նշված ընթացակարգերի առանձնահատկությունների իրավական կարգավորմանը նվիրված են օրենքի առանձին հոդվածներ, սակայն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված իրավական կարգավորումներն ընդհանուր են եւ վերաբերում են բոլոր ընթացակարգերին: Ինչ վերաբերում է հարցման (հեռակա կարգով քվեարկության) միջոցով որոշումների ընդունման առանձնահատկություններին, ապա դրանք սահմանված են օրենքի վիճարկվող 13-րդ հոդվածով:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «հեռակա կարգով քվեարկություն» հասկացության բովանդակությանը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե սեփականատերերի ժողովում, որպես շինությունների բոլոր սեփականատերերից կազմված մարմնում, քվեարկությունը շինությունների սեփականատերերի որոշումների ընդունման ընթացակարգ է, որը պահանջում է որոշում ընդունելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա ներկայությունը նախապես որոշված վայրում, ապա հեռակա կարգով քվեարկությունը **սեփականատերերի ժողովի որոշումների** ընդունման ընթացակարգ է, որը չի պահանջում որոշում ընդունելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա ներկայությունը նախապես որոշված վայրում: Այդուհանդերձ, այն իր էությամբ շարունակում է մնալ քվեարկություն, այսինքն՝ մի խումբ անձանց կողմից ազատ կամահայտնության միջոցով որոշումների ընդունման ձև: Միաժամանակ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քվեարկության գլխավոր հատկանիշը հենց ազատ կամահայտնության միջոցով որոշումների ընդունումն է՝ անկախ այն բանից, թե քվեարկելու իրավունք ունեցող անձինք իրենց կամքն արտահայտել են նախապես որոշված վայրում, **այսինքն՝ սեփականատերերի՝ որոշակի վայրում գումարված ժողովում,** թե քվեարկողներից յուրաքանչյուրի՝ իր գտնվելու վայրում: Սահ-

մանադրական դատարանն արձանագրում է նաև, որ, նախ՝ քվեարկության վայրը չի հանդիսանում քվեարկության օրինականության հատկանիշը, հետևաբար՝ հեռակա կարգով քվեարկությունը՝ որպես որոշումների ընդունման ձև, ինքնին չի կարող խախտել մարդու սահմանադրական իրավունքները, երկրորդ՝ ե՛ր ժողովի գումարման, ե՛ր հարցման միջոցով առաջարկությունները բոլոր դեպքերում, համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի եւ 13-րդ հոդվածի՝ ներկայացվում են ժողովի քննարկմանը, եւ բոլոր դեպքերում որոշումն ընդունվում է ժողովի կողմից:

7. Անդրադառնալով հարցման (հեռակա կարգով քվեարկության) ինստիտուտի վերաբերյալ միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող ինստիտուտը գործում է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև այն լայնորեն տարածված է այլ պետություններում: Ընդ որում, նշված ինստիտուտը կիրառվում է ոչ միայն բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության տնօրինման հետ կապված իրավահարաբերություններում, այլ նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության բնակարանային օրենսգրքի 47-րդ հոդվածը նախատեսում է, որ սեփականատերերի ժողովը կարող է որոշումներ ընդունել նաև հարցման (հեռակա կարգով քվեարկության) միջոցով:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշումների ընդունման նշված ինստիտուտը կիրառվում է նաև բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի կողմից որոշումներ ընդունելիս: Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով (մման կարգ է գործում նաև բազմաթիվ այլ երկրներում): Ընդ որում, տարբեր ոլորտներում հարցման (հեռակա կարգով քվեարկության) միջոցով որոշումներ ընդունելու ընթացակարգերը մույնն են՝ որոշ տեխնիկական առանձնահատկություններով:

8. Դիմողը, վիճարկելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասը եւ 13-րդ հոդվածը, որեւէ հիմնավորում չի ներկայացնում հարցման (հեռակա կարգով քվեարկության)՝ որպես որոշումների ընդունման ձևի՝ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ: Դիմողի փաստարկներն ուղղված են հարցման (հեռակա կարգով քվեարկության)՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգին, որը, ըստ դիմողի՝ «անորոշ է, անհավասար պայմաններ է ստեղծում սեփականատերերի համար, գրկում է սեփականատերերին իրենց գույքն օգտագործելու հնարավորությունից, պայմաններ է ստեղծում, որ առանց սեփականատերերի համաձայնության ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքը օգտագործվի եւ ձեւափոխվի»:

Հիմք ընդունելով սույն որոշման 6-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն փաստարկը, որ օրենքով նախատեսված հարցման ընթացակարգն անորոշ է, ինչի արդյունքում խախտվում են սեփականատերերի շահերը: Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ եւ 13-րդ հոդվածները հանգամանորեն կարգավորում են ինչպես սեփականատերերի ժողովի կարգավիճակը, այնպես էլ ժողովի կողմից որոշումների ընդունման ընթացակարգերը, այդ թվում՝ հարցման միջոցով որոշումների ընդունման ընթացակարգը: Նշված հոդվածներով սահմանվում են քվեարկության կազմակերպման

կարգը, սեփականատերերին ներկայացվող փաստաթղթերը, որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը: Ընդ որում, օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարցման միջոցով որոշումների ընդունման նախաձեռնող է հանդիսանում, ի թիվս այլոց, **շինության յուրաքանչյուր սեփականատեր**, որը պարտավոր է ժողովի որոշման նախագիծը ներկայացնել ստորագրման կամ դրա պատճենն ուղարկել **շինության յուրաքանչյուր սեփականատիրոջ**:

Ավելին, կոնկրետ դեպքում, որը վերաբերում է ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշման ընդունմանը, օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «ե» ենթակետի եւ նույն հոդվածի 8-րդ մասի ուժով, նախ եւ առաջ, հարկ է որոշում ընդունել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մի մասի **առանձնացման** վերաբերյալ, որը կարող է ընդունվել բոլոր սեփականատերերի կողմից **միաձայն**, հետո միայն կարող է որոշում ընդունվել վերը նշված առանձնացված մասի՝ հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին, որն օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասի ուժով կարող է ընդունվել սեփականատերերի ձայների կեսից ավելով: Այսինքն՝ օրենքը նախատեսել է բավարար երաշխիքներ, որպեսզի ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին շինության սեփականատերերը ոչ միայն նախապես տեղեկացված լինեն, այլեւ նրանցից թեկուզեւ մեկի կողմից «դեմ» կամ «ձեռնպահ» քվեարկելու դեպքում մնան որոշում չընդունվի:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրենքով երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխան սեփականության իրավունքն իր հայեցողությամբ իրացնելու՝ սեփականատիրոջ (սեփականատերերի) իրավունքը՝ վերջինիս դրսեւորման տարբեր ձեւերի, այդ թվում՝ նաեւ սեփականությունն օգտագործելու վերաբերյալ որոշումների ընդունմանը սեփականատիրոջ կողմից անմիջական մասնակցություն ունենալու եւ իր կամաարտահայտությունը դրսեւորելու միջոցով:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաեւ դիմողի այն փաստարկը, որ օրենքով նախատեսված ընթացակարգն անհավասար պայմաններ է ստեղծում սեփականատերերի համար: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ օրենքի 11-րդ եւ 13-րդ հոդվածները հնարավորություն են ընձեռում բոլոր սեփականատերերին՝ թե՛ նախաձեռնելու հեռակա կարգով քվեարկություն, թե՛ մասնակցելու քվեարկությանը: Բացի դրանից, օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում է, թե քվեարկության հետ կապված ինչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն սեփականատերերին, եւ սահմանում, որ դրանք **պետք է ուղարկվեն բոլոր սեփականատերերին**, հետեւաբար՝ թե՛ քվեարկություն նախաձեռնելիս, թե՛ այդ քվեարկությանը մասնակցելիս բոլոր սեփականատերերը գտնվում են հավասար պայմաններում:

Հիմնավորված չէ նաեւ դիմողի այն պնդումը, թե օրենքի վիճարկվող նորմերով նախատեսված ընթացակարգը թույլ է տալիս առանց սեփականատերերի համաձայնության օգտագործել եւ ձեւափոխել ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքը: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի՝ վիճարկվող նորմերի հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող 11-րդ հոդվածի 7-րդ մասը հստակ նախատեսում է սեփականատերերի ժողովի լիազորությունները՝ ժողովին վերապահելով ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, օգտագործման եւ տիրապետման հետ կապված հարցերի լուծումը: Ավելին, օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «բ» կետը սահմանում է, որ ժողովի իրավասությանն է վերապահ-

ված ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշման ընդունումը («առանց սեփականատերերի համաձայնության գույքը օգտագործել» արտահայտության ներքո դիմողը նկատի ունի հենց վերոնշյալ լիազորությունը, քանի որ վեճը ծագել է հատուցման դիմաց ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքն այլ անձի օգտագործման իրավունքով տրամադրելու արդյունքում): Բացի դրանից, օրենքի 11-րդ հոդվածով հստակ նախատեսվում է ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, օգտագործման, տիրապետման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման համար սեփականատերերի ձայների անհրաժեշտ քանակը: Վերոհիշյալից բխում է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքն օգտագործելիս հնարավոր չէ շրջանցել սեփականատերերի կամքը:

9. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները նախատեսում են բազմաբնակարան շենքում ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով որոշումների ընդունման տարբեր ընթացակարգեր՝ թույլ տալով սեփականատերերին իրենց կամահայտությամբ ընտրել որոշումների ընդունման նախընտրելի ձեւը: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է կարգավորվող հասարակական հարաբերության բնույթով: Օրենքը, թույլ տալով կիրառել որոշումների ընդունման տարբեր ընթացակարգեր, միեւնույն ժամանակ նախատեսում է բավականին հստակ պահանջներ յուրաքանչյուր ընթացակարգի վերաբերյալ, որոնք կոչված են ապահովելու անձի իրավունքը սեփական կամահայտությամբ օգտագործելու, տիրապետելու, տնօրինելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման» մասին ՀՀ օրենքի վիճարկվող նորմերը որեւէ արտոնություն կամ սահմանափակում չեն նախատեսում բազմաբնակարան շենքի ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման առնչությամբ՝ ապահովելով հավասար պայմաններ բոլոր սեփականատերերի համար: Իսկ սեփականության սահմանադրական իրավունքի ենթադրյալ սահմանափակման առնչությամբ դիմողը կամայական մեկնաբանություն է տվել Սահմանադրության 31-րդ հոդվածի երրորդ մասով հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման վերաբերյալ սահմանված իրավակարգավորմանը եւ այն շփոթել օրենքի վիճարկվող դրույթներով նախատեսված իրավակարգավորման հետ:

10. Անդրադառնալով դիմողի մյուս փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթների եւ Սահմանադրության 14, 18, 19 եւ 48-րդ հոդվածների միջեւ ենթադրյալ հակասության հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը:

Դիմողն օրենքի վիճարկվող դրույթների եւ Սահմանադրության 14-րդ հոդվածի միջեւ ենթադրյալ հակասությունը փաստարկում է սեփականության եւ իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքների ենթադրյալ խախտման եւ Սահմանադրության 48-րդ հոդվածի համատեքստում եւ գտնում, որ օրենքի վիճարկվող դրույթների հետեւանքով սեփականության եւ իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքների խախտման արդյունքում խախտվում է նաեւ մարդու արժանապատվությունը, որն իրավունքի գերակայության բաղադրատարր է: Հիմք ընդունելով օրենքի վիճարկվող դրույթներով հարցման միջոցով որոշումների ընդունման արդյունքում սեփականության իրավունքի

երաշխավորվածության վերաբերյալ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի փաստարկները վեճի առարկա հողվածները ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին հակասելու առնչությամբ:

Անդրադառնալով օրենքի վիճարկվող դրույթների եւ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների միջեւ ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ առնչությամբ դիմողի ներկայացրած փաստարկները վերաբերում են ոչ թե ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորմանը, այլ դատական ակտերի օրինականության վիճարկմանը: Իսկ օրենքի վիճարկվող դրույթների իրավակարգավորման նպատակը եւ բովանդակությունը չեն բացառում դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**4 հոկտեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 990**





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՕՐԵՆՍՈՒՄԻ 113-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 114-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ  
4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

11 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գ. Մուրադյանի,

պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ս. Յուզբաշյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 4-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ կառավարության դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի եւ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ կառավարության՝ 27.04.2011թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, ուսումնասիրելով նաեւ վեճի առարկա հարցի շրջանակներում առկա միջազգային փորձը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերը «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 24.06.2010թ. ՀՕ-117-Ն օրենքի խմբագրությամբ սահմանում են.

«Հոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաեւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

...

11) աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում, եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ»:

«Հոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը

4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝

...

5) տարիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

2. Գիմող կողմն իր դիրքորոշումը հիմնավորում է հետեւյալ փաստարկներով. ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 2-րդ մասը, ի թիվս այլ հիմքերի, սահմանում է խտրականության արգելք՝ կախված տարիքից: ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է աշխատանքի ընտրության ազատություն, որը չի կարող սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43 եւ 44-րդ հոդվածներով սահմանված հիմքերով: Հետեւաբար, աշխատանք ընտրելու ազատությունը պետք է բոլորի համար երաշխավորված լինի անկախ տարիքային սահմանափակումից: Կենսաբանական այնպիսի գործոնը, ինչպիսին մարդու տարիքն է, որն ինքնին միանշանակ չի կարող ներգործել տվյալ անձի աշխատունակության եւ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների վրա, ըստ դիմող կողմի, չի կարող դիտարկվել որպես աշխատանքից ազատելու հիմք, մինչդեռ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետն աշխատողի սոսկ տարիքին հաղորդում է աշխատանքը շարունակելու հնարավորությունը վերագնահատելու չափանիշի որակ, որն անընդունելի է, քանի որ բացառում է աշխատանքային հարաբերություններն անհատապես՝ կոնկրետ դեպքում կանոնակարգելու հնարավորությունը՝ պայմանավորելով այն ոչ թե աշխատողի աշխատունակությամբ եւ մասնագիտական հմտություններով, այլ միայն նրա տարիքով: Աշխատունակությունը կարող է նվազել նաեւ տարիքային գործոնից անկախ:

Ըստ դիմող կողմի՝ վերոհիշյալ փաստարկների տրամաբանությունը տարածելի է նաեւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի վրա՝ բացառության մասով, քանի որ տարիքն առանց որեւէ բացառության չպետք է դիտարկվի որպես աշխատանքային պայմանագիրը լուծելու օրինական պատճառ: Հետեւաբար, ինչպես եզրակացնում է դիմողը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը եւ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ բացառության մասով, հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Միաժամանակ, եզրափակիչ ելույթում դիմող կողմն ընդգծեց, որ խնդիրն իրոք հայեցակարգային հստակեցման ու համակարգային լուծման անհրաժեշտություն ունի:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածում, այդ թվում՝ նաև գործատուի նախաձեռնությամբ, իսկ դրա իրականացման կոնկրետ դեպքերն ու պայմանները՝ օրենսգրքի 113-րդ հոդվածում, եւ, ի թիվս այլ դեպքերի՝ կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով: Մինչդեռ անձի տարիքը, որպես կենսաբանական գործոն, **ոչ բոլոր դեպքերում** կարող է ազդել աշխատանքի որակի վրա: Ավելին, ինչպես գտնում է պատասխանող կողմը, անձի տարիքը եւ դրա հետ մեկտեղ նաև երկար տարիների աշխատանքային փորձը **որոշ դեպքերում** կարող են միայն դրական ներգործություն ունենալ աշխատանքի որակական հատկանիշների վրա: Հետևաբար, եթե կենսաթոշակային տարիքի հասած աշխատողը շարունակում է կատարել իր աշխատանքային պարտականությունները լրիվ ծավալով, չի կորցրել գործատուի վստահությունը եւ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին ներկայացվող պահանջներին, ապա կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով **գործատուի նախաձեռնությամբ** աշխատանքային պայմանագիրը լուծելը խնդրահարույց է հենց ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված տարիքային խտրականության արգելման սկզբունքի արդյունավետ իրացման տեսանկյունից:

Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովը, 2010 թվականի հունիսի 24-ին ընդունելով «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-117-Ն), ոչ ամբողջովին է հաշվի առել ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 24-ի ՍԳ-Ռ-792 որոշման պահանջները եւ դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները: Հետևաբար, ինչպես գտնում է պատասխանող կողմը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ դրույթները վերանայելը եւ այն միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխանեցնելը կարող են նպաստել իրավակիրառ պրակտիկայի իրավաչափ զարգացմանը:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման իրավակարգավորման սահմանադրականությունը՝ ելնելով.

- ՀՀ Սահմանադրության 32-րդ եւ 37-րդ հոդվածներում ամրագրված՝ անձի իրավունքները, ինչպես նաև Սահմանադրության 14.1-րդ հոդվածում նշված տարիքային հիմքով խտրականության բացառումը երաշխավորելու անհրաժեշտությունից,

- ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունից,

- անորոշ եւ որոշակի ժամկետով աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների հաստատման գործող կարգի համակարգային ամբողջականության գնահատման անհրաժեշտությունից,

- սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ ՍԳ-Ռ-792 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հետեւողական իրացման անհրաժեշտությունից,

- կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների կարգավորման միջազգային փորձից:

5. ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 3-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը նաեւ սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպէս անմիջականորեն գործող իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրել է իրավակարգավորման այնպիսի սկզբունք, ինչպիսին օրենքի առջեւ բոլորի հավասարությունն է՝ ի թիվս այլ հանգամանքների՝ բացառելով նաեւ տարիքային հատկանիշի հիմքով խտրականության որեւէ դրսեւորում:

Քննելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի (2004թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) եւ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի (2004թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) սահմանադրականության հարցը՝ սահմանադրական դատարանն իր՝ ՄԳՈ-792 որոշմամբ բացահայտելով աշխատանքային հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման բովանդակությունն ու առանձնահատկությունները, անդրադառնալով, մասնավորապէս, անձի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով **գործատուի նախաձեռնությամբ մրցութային կարգով աշխատանքի ընդունված անձի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման իրավաչափության խնդրին**, համադրելով այդ իրավակարգավորումը համակարգային առումով փոխկապակցված ՀՀ աշխատանքային օրենսգրքի այլ նորմերի հետ, արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք իրավակարգավորիչ առանցքային նշանակություն ունեն նաեւ սույն գործով վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման եւ այդ նշանակությանը համապատասխան կիրառելու համար: Մասնավորապէս.

- Սահմանադրության 32-րդ հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու եւ իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսեւորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, եւ նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու եւ պաշտոններից ազատելու առանձնահատուկ դէպքեր, եթէ դրանք օբյեկտիվորեն արդարացված են եւ ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում: Բացի դրանից, 2010թ. մայիսի 4-ի ՄԳՈ-881 որոշման մեջ բացահայտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը նշել է, որ խտրականության արգելքի սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարվում օբյեկտիվ հիմքով եւ իրավաչափ նպատակով պայմանավորված տարբերակված մոտեցումը,

- աշխատանքային հարաբերությունների հաստատման (պահպանման) խնդրում օրենքով կամ աշխատանքային պայմանագրով առանձին աշխատողների առնչությամբ **սահմանային տարիք նախատեսելն արդարացված է, եթէ այն հետապնդում է իրավաչափ նպատակներ**, մասնավորապէս պայմանավորված է կատարվող աշխատանքի բնույթով կամ առանձնահատկությամբ: Այս առումով, սահմանադրական դատարանն արդարացի է համարում հանրային (պետական եւ համայնքային) ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրության ակտերով ծառայողի պաշտոնավարման սահմանային տարիք նախատեսելուն զուգընթաց գործատուի եւ

կենսաթոշակային տարիքի հասած ու աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի միջեւ երկկողմ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորության նախատեսումը եւ դրա հիման վրա աշխատանքային հարաբերությունների կայունությունն ապահովելը,

- աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի իրացման, այլև պարտականության կատարման անհրաժեշտություն, եւ կողմերի, տվյալ դեպքում գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը **չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ բնույթի այլ գործոնով**, այլ հետապնդի արդար, իրավաբանորեն ամրագրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան:

Վերլուծելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածում (2004թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը՝ կապված իրավաբանական այնպիսի փաստերի հետ, որոնց առկայությամբ օբյեկտիվորեն անհնարին է կամ բացահայտ անարդյունավետ է աշխատանքային հարաբերությունների շարունակումը, սահմանադրական դատարանը համարել է դրանք որպես կոնկրետ գնահատելի չափանիշներ, մինչդեռ աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու՝ հիշյալ օրենքով նախատեսված իրավունքը՝ բացառիկ հայեցողական, արձանագրելով, որ այդպիսի իրավակարգավորումը գործատուին լիազորում է աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու փաստի ուժով ընդհուպ մրցութային կարգով աշխատանքի ընդունված աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը միակողմ լուծելու հայեցողություն: Իսկ նույն օրենսգրքի 114-րդ հոդվածում (2004թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) նախատեսված արգելքը՝ կապված աշխատանքային հարաբերություններում տարիքային սահմանափակման հետ, գնահատվել է որպես իրավաչափ եւ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ եւ 32-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող:

Վերահաստատելով կենսաթոշակային տարիքի հասած աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորելու ընդհանուր սկզբունքների վերաբերյալ արտահայտված վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք կիրառելի են նաեւ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման առնչությամբ: Օրենքով կամ իրավական այլ ակտով չի կարող սահմանվել իրավակարգավորման այնպիսի կանոն, որը կհակասի սահմանադրական դատարանի որոշմանը, կամ կիրառվող նորմին տրվի վերջինիս սահմանադրաիրավական բովանդակությանը չհամապատասխանող մեկնաբանություն կամ իմաստ:

Գործնական խնդիրները, որոնք առաջանում են աշխատանքային հարաբերությունների կարգավորման պրակտիկայում, սահմանադրական դատարանի գնահատմամբ պայմանավորված են իրավակարգավորման համակարգային մոտեցման թերացումներով, որոնք առնչվում են նաեւ աշխատանքային տարիքում եւ կենսաթոշակային տարիքում անձի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները հետետողականորեն հաշվի չառնելուն:

Մասնավորապես, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ «կենսաթոշակային տարիք» հասկացությունն ունի կարեւոր սոցիալ-իրավական բովանդակություն: Վերջինս դրսևորվում է նրանում, որ որոշակի տարիքում տեղի է ունենում անձի աշխատունակության որոշա-

կի նվազում: Հետեւաբար, օրենսդիրը, հիմք ընդունելով կոնկրետ աշխատանքի առանձնահատկությունը եւ բնույթը, երաշխավորելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական իրավունքի իրացման հնարավորությունը, սահմանում է նվազագույն համապատասխան տարիք այդ իրավունքն իրացնելու համար, եւ դա ինքնանպատակ չէ: ՀՀ օրենսդրության ժամանակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը կենսաթոշակ սահմանելիս միշտ հիմք է ընդունել որոշակի տարիքային սահմանագիծ, որին հասնելով՝ տեղի է ունենում անձանց աշխատունակության ենթադրյալ էական նվազում:

Տվյալ հանգամանքը հաշվի առնելով եւ նկատի ունենալով, որ կենսաթոշակը սահմանվում է ոչ թե քաղաքացու՝ որոշակի տարիքի հասնելու հիմքով, այլ այդ տարիքով պայմանավորված՝ աշխատունակության հնարավոր սահմանափակման կամ լրիվ կորստի կապակցությամբ, ինչը չի կարող դիտարկվել որպես խտրականության արգելման սկզբունքի խախտում, օրենսդրորեն անհրաժեշտ է առավել հստակ տարբերակել **աշխատանքային պայմանագրի գործողության դադարման եւ դադարեցման** պայմաններն ու կարգը, դրան համապատասխան նախատեսել գործատուի իրավասությունն աշխատանքային պայմանագրի լուծման առնչությամբ:

6. Անորոշ եւ որոշակի ժամկետով աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների հաստատման գործող կարգի իրավաչափության գնահատման շրջանակներում, վերահաստատելով այդ խնդրի առնչությամբ 24.02.2009թ. ՄԴՈ-792 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ աշխատանքային հարաբերությունների իրավաչափ կազմակերպման համար բացառիկ կարեւոր նշանակություն ունեն նման հարաբերությունների հիմք հանդիսացող պայմանագրերի բնույթի ու սահմանադրաիրավական բովանդակության հստակ բացահայտումը եւ անհրաժեշտ նորմատիվ կարգավորումը: Որպես կանոն, այդ պայմանագրերն ունեն որոշակի ժամկետային կամ անժամկետ բնույթ: Որոշակի ժամկետով կնքված պայմանագրերը **պետք է դիտել որպես բացառության դրսևորում**՝ պայմանավորված աշխատանքի բնույթով եւ առանձնահատկություններով (ընտրովի պաշտոն, սեզոնային աշխատանք, փորձաշրջան եւ այլն): Իրավական տրամաբանությունն այն է, որ այդ առանձնահատկությունները հստակ կանոնակարգվեն օրենքով, որպեսզի հակամարտություն չառաջանա աշխատողի իրավունքների ու գործատուի հայեցողական ազատության միջեւ: Առանձին երկրներում (Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Բուլղարիա, Խորվաթիա, Շվեդիա եւ այլն) օրենսդրորեն ընդհուպ նախատեսվում է, որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է դառնալ անորոշ ժամկետով կնքված այն դեպքերում, երբ հանգամանքները, որոնց բերումով աշխատանքային պայմանագրի գործողության որոշակի ժամկետ է սահմանվել, դադարում են գոյություն ունենալ աշխատանքային հարաբերությունների ընթացքում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս հանգամանքն անհրաժեշտ խորությամբ արտացոլում չի գտել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ գլխի իրավակարգավորման շրջանակներում:

Սույն գործով վիճարկվող նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 13-րդ եւ 15-րդ գլուխների նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ անհրաժեշտ է.

- առավել հստակեցնել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքերը եւ իրավական շարժառիթները,

- որպես անորոշ ժամկետով կնքված ճանաչել մեկ կամ մի քանի անգամ երկարաձգված որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը՝ այն դեպքերում, երբ վերանում են այդպիսին կնքելու հիմքերը,

- կենսաթոշակային տարիքի հասնելու փաստը սահմանել որպես իրավական հիմք՝ այդպիսի անձանց հետ որոշակի ժամկետով հետագա աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ լրացուցիչ իրավակարգավորումներն անհրաժեշտ են աշխատանքային իրավապայմանագրային հարաբերություններում իրավահավասարությունը եւ կենսաթոշակային տարիքի հասած անձանց իրավունքները եւ օրինական շահերը երաշխավորելու նկատառումներով:

Ինչ վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում նախատեսված բացառությանը, ապա ՄԳՈ-792 որոշմամբ սահմանադրական դատարանը գտել էր իրավաչափ՝ օրենքով առանձին դեպքերում (օրինակ՝ հանրային ծառայության բնագավառում, որոշակի բնույթի եւ առանձնահատկության աշխատանքների դեպքում եւ այլն) աշխատողների համար սահմանային տարիք նախատեսելը: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վերոհիշյալ նորմի մեկնաբանումը եւ կիրառումը ՄԳՈ-792 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

7. Մույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմերի (24.06.2010թ. խմբագրությամբ) սահմանադրականության գնահատման կոնկրետ խնդրի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում սահմանված նորմը, համաձայն որի՝ գործատուն իրավունք ունի աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում նրա հետ լուծելու անորոշ, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ **եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ**, ստացել է սահմանադրաիրավական նոր բովանդակություն: Բանն այն է, որ ի տարբերություն նախկին իրավակարգավորման, այն աշխատանքային հարաբերությունների սուբյեկտներին իրավական կամընտրական հնարավորություն է ընձեռում՝ ազատ կամաարտահայտությամբ համաձայնելու վերոհիշյալ հիմքով պայմանագրային պարտավորությունները որոշակի պայմաններով (ժամկետով) շարունակելուն եւ աշխատանքային նոր պայմանագիր կնքելուն: **Դա իր հերթին նշանակում է, որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով գործատուի կողմից միակողմանի լուծվել չի կարող, եթե դա նախատեսված չէ այդ պայմանագրով:** Սահմանադրական դատարանի ՄԳՈ-792 որոշման պահանջներից ելնելով օրենսդրական այս փոփոխությունը երաշխավորում է հավասար եւ ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի եւ գործատուի միջեւ:

Իր հերթին, օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում նախատեսված տարիքային հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը կարելի է երաշխիք է վերոհիշյալ իրավապայմանի գործադրման համար:

Հետեւաբար, աշխատանքային հարաբերությունների այդպիսի իրավակարգավորումը համապատասխանում է աշխատանքի անխտրական եւ ազատ ընտրության սահմա-

նադրաիրավական այն պայմաններին, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, 32-րդ եւ 37-րդ հոդվածների պահանջներից, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ եւ 12-րդ կետերով նախատեսված՝ պետության հիմնական խնդիրներից, քանի որ.

- բացառում է տարիքային հիմքով գործատուի հայեցողական նախաձեռնությամբ միակողմ լուծել աշխատանքային պայմանագիրը,

- երաշխավորում է աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների ձեւավորման ազատությունը, երկկողմ ազատ կամաարտահայտությունը, նպաստում է.

- աշխատուժի շուկայի (զբաղվածության) եւ տնտեսական հարաբերությունների ազատ ձեւավորմանն ու զարգացմանը,

- գործատուի եւ կենսաթոշակային տարիքի հասած աշխատողների իրավունքների եւ օրինական շահերի ներդաշնակմանը,

- սոցիալական ապահովության, աշխատանքային հարաբերությունների զարգացման եւ բնակչության զբաղվածության բնագավառներում պետության կողմից նպատակային ծրագրերի իրականացմանը:

Սիւժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստից հետեւում է, որ անձի կենսաթոշակային տարիքը լրանալու փաստը հիմք է նրա հետ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման ժամկետին առնչվող պայմանի փոփոխման՝ անորոշ ժամկետով կնքված պայմանագրի գործողության դադարման եւ որոշակի ժամկետով պայմանագիր կնքելու համար (բացառությամբ ընտրովի պաշտոնների դեպքերում):

Աշխատանքային իրավահարաբերությունների նման կարգավորումը համապատասխանում է նաեւ սահմանադրական դատարանի՝ ՍԳ-Ո-792 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի կիրառումն իր սահմանադրաիրավական վերոհիշյալ բովանդակությանը համապատասխան լիարժեք երաշխավորելի է այն դեպքում, երբ օրենսգրքով նախանշվեն ընթացակարգեր, որոնք կոչված լինեն զնահատելու կենսաթոշակային տարիքի հասած անձի աշխատունակությունը (աշխատանքային պիտանիությունը), հետեւաբար՝ նաեւ աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի եւ գործատուի միջեւ երկկողմ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորություն կնախատեսեն՝ **բացառելով գործատուի սուբյեկտիվ հայեցողությունն այդ հարցում:**

Անհրաժեշտ է նաեւ նկատի ունենալ, որ կենսաթոշակը եւ աշխատանքը միտված են միեւնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը. աշխատանքը՝ որպէս կենսապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետեւաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլեւ չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ: Այսպիսով, կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ անձի հետ աշխատանքային հարաբերություններն օբյեկտիվորեն ենթակա են կարգավորման այլ սկզբունքներով եւ առաջնահերթ կարեւորվում են նրա սոցիալական ապահովման խնդրի լուծումն ու որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ



օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված՝ աշխատանքի իրավունքի եւ կենսաթոշակի իրավունքի մման փոխհարաբերակցությունը, պայմանավորված լինելով դրանց սոցիալական բովանդակությամբ եւ առաքելությամբ, իր հիմքում ունի օբյեկտիվ արդարացում: Հետեւաբար, աշխատանքային հարաբերությունների դադարման հնարավորությունը կենսաթոշակի իրավունքի ծագմամբ պայմանավորելն իրավաչափ է, քանի որ աշխատանքային հարաբերությունների դադարման հնարավորությունը հիմնվում է այնպիսի օբյեկտիվ չափանիշի վրա, ինչպիսին մարդու տարիքի փաստով պայմանավորված աշխատունակության չափանիշն է:

Սահմանադրական դատարանը նաեւ գտնում է, որ կենսաթոշակային տարիքի հասած անձի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիրը լուծելիս եւ (կամ) որոշակի ժամկետով պայմանագիր կնքելիս ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսելի կարգով անհրաժեշտաբար պետք է երաշխավորվեն ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված նրա սոցիալական ապահովության իրավունքի իրացման բավարար պայմաններ՝ **կապված սոցիալական ապահովության հնարավոր ծավալի եւ ձևերի հետ**: Սահմանադրական դատարանը կարեւոր է համարում ընդգծել, որ օրենքով աշխատողի համար սահմանային տարիք նախատեսելը նախ եւ առաջ հետապնդում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքը իրացնելու հնարավորությունը երաշխավորելու իրավաչափ նպատակ՝ կապված նրա աշխատունակության աստիճանի օբյեկտիվ փոփոխության հետ:

8. Անդրադառնալով կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ աշխատանքային հարաբերությունների կարգավորման (հաստատման, դադարման) միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված միջազգային ակտերի, ինչպես նաեւ բազմաթիվ երկրների ներպետական օրենսդրության համաձայն աշխատողի հետ հաստատված աշխատանքային հարաբերությունները չպետք է դադարեցվեն, եթե դրա համար առկա չէ աշխատողի ունակությունների կամ վարքագծի հետ կապված, ինչպես նաեւ ծառայության կամ գործունեության գործառնական պահանջների վրա հիմնված իրավաչափ պատճառ: Նման վիճակներից խուսափելու հիմնական նախադրյալն **աշխատանքային պայմանագրերի կնքման հետ կապված հարաբերությունների հստակ իրավական կարգավորումն է**: Վերջինս պահանջում է տարբերակել այդ հարաբերությունների բնույթն ու աշխատողի իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումը մինչեւ կենսաթոշակային տարիքի հասնելը եւ դրանց բնույթն ու առանձնահատկությունները **կենսաթոշակային տարիքում**: Բազմաթիվ երկրների աշխատանքային օրենսգրքերում կամ տվյալ իրավահարաբերությունները կանոնակարգող այլ ակտերում (Բուլղարիա, հոդվ. 72, Ֆինլանդիա, Աշխատանքային պայմանագրերի մասին ակտի բաժին 1/Ա(1030/2004), Խորվաթիա, հոդվ. 110, Հունգարիա, հոդվ. 87Ա, 89, Մակեդոնիա, հոդվ. 108, Ռումինիա, հոդվ. 56, Սերբիա, հոդվ. 175, Շվեդիա, Աշխատանքային իրավունքների պաշտպանության մասին ակտի բաժին 5Ա եւ այլն) հստակ սահմանվում է, որ **անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրից բխող իրավահարաբերությունները վերաբերում են մինչկենսաթոշակային տարիքին**: Այս շրջանակներում է նաեւ դիտարկվում տարիքի հետ կապված խտրականության դրսեւորման անթույլատրելիությունը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության աշխատանքային օրենսգրքի 59-րդ հոդվածը նախատեսում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքման 20-ից ավելի հնարավոր իրավիճակներ, որոնց թվում շեշտվում է, որ **կենսաթոշակային տարիքի անձանց հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխա-**

**տանքային պայմանագիր:** Իսկ, օրինակ, Բուլղարիայի համանուն օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ «**Վաթսուն տարեկանը լրացած տղամարդ եւ հիսունհինգ տարեկանը լրացած կին կենսաթոշակառուի հետ աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամկետով՝ բայց ոչ ավելի, քան մեկ տարով**»: Հունգարիայի աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածն ընդհուպ նախատեսում է, որ՝ «**Գործատուն պարտավոր չէ ազատված աշխատողին բացատրել այդ ազատման պատճառը, եթե աշխատողը 87Ա բաժնի 1-ին ենթակետի իմաստով համարվում է թոշակառու**»:

Վերոնշյալ իրավակարգավորումների պայմաններում հստակ է հայեցակարգը՝ անորոշ ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերը վերաբերում են մինչկենսաթոշակային տարիքին, եւ դրանց լուծումը տեղի է ունենում իրավունքի ուժով: Միաժամանակ, արդարացիորեն շեշտը դրվում է պայմանագրի բնույթի հստակեցման եւ կանխատեսելիության վրա, խնդիրը չի թողնվում գործատուի բացառիկ հայեցողությանը:

Միջազգային պրակտիկայում կարեւորվում է նաեւ այն հանգամանքը, որ աշխատողի կենսաթոշակային տարիքի կապակցությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը պայմանավորվում է նրա սոցիալական ապահովության իրավունքի իրացումը երաշխավորելու հանգամանքով, այսինքն՝ անհրաժեշտ աշխատանքային ստաժի կամ օրենքով նախատեսված այլ բնույթի հանգամանքների առկայությամբ: Այն իր ամրագրումն է ստացել նաեւ Լյուքսեմբուրգի Արդարադատության եվրոպական դատարանի պրակտիկայում, համաձայն որի՝ կենսաթոշակային տարիքի կապակցությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն իրավաչափ է, եթե համապատասխանում է «...սոցիալական անվտանգության օրենսդրությամբ սահմանված պայմաններին» (Case C-411/05 Felix Palacios de la Villa v. Cortefiel Servicios SA, 16 October 2007):

Վեճի առարկա նորմերի առնչությամբ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ տարբեր երկրների օրենսդրական ու իրավակիրառական փորձի ընդհանրացման արդյունքում չ՛հասնանադրական դատարանը հանգում է հետեւյալին.

- մինչկենսաթոշակային տարիքում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերի կնքումը բացառության դրսեւորում է եւ պայմանավորված է աշխատանքի բնույթի որոշ առանձնահատկություններով, ինչը պետք է օրենքով առավել հստակ նախատեսված լինի եւ չթողնվի գործատուի սուբյեկտիվ հայեցողությանը,

- մինչկենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագրի հիմնական ձեւն անորոշ ժամկետով պայմանագիրն է, որի գործողության **դադարման հիմքերն ու կարգը** պետք է նախատեսվեն օրենքով եւ որոշվեն իրավունքի ուժով, **իսկ դադարեցումը** պետք է պայմանավորված լինի միայն իրավաչափ պատճառներով, ինչը, իր հերթին, հստակ պետք է նախատեսվի օրենքով,

- կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի հետ աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների կարգավորման բնույթը եւ պայմանները փոխվում են: Եթե մինչկենսաթոշակային տարիքում ելակետն աշխատանքի ընտրության ազատության սկզբունքի երաշխավորումն է, ապա կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կարեւորվում են անձի սոցիալական ապահովության խնդրի լուծումը եւ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը:

Չ՛հասնանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ մոտեցումներն իրավաչափ են, հստակեցնում են աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման սահմանադրաիրավական բնույթը եւ համակարգային մոտեցմամբ, հստակ հայեցակարգի հիման վրա, օրենսդրական անհրաժեշտ կարգավորում պետք է ստանան: Դրանք համահունչ են նաեւ Չ՛ Սահմանադրության 1-ին, 14.1-րդ, 32-րդ, 37-րդ եւ

48-րդ հոդվածների պահանջներին: Միաժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի օրենքով նորմատիվ կարգավորում ստանա նաև այն հարցը, թե որ դեպքերում է կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, այն իրականացվի ոչ թե գործատուի սուբյեկտիվ հայեցողությամբ, այլ տվյալ աշխատանքի կատարման հարցում կենսաթոշակային տարիքի հասած անձի կարողությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**11 հոկտեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 991**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՄԵՆ ԽԱՌԱՏՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝  
«ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 14-ՐԴ ՀՈԳՎԱՏԾԻ 3-ՐԴ  
ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երևան**

**18 հոկտեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Խառատյանի, դիմողի ներկայացուցիչներ Ա. Ղազարյանի եւ Ա. Չեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արմեն Խառատյանի դիմումի հիման վրա՝ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Խառատյանի՝ 20.07.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

1. «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի

կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հուլիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի օգոստոսի 5-ին:

Օրենքի՝ «Դատական ծառայության պաշտոնի նշանակումը եւ ազատումը» վերառառությամբ 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է. «Դատական ծառայության պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է ... սույն օրենքով նախատեսված դեպքում դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում՝ դատական դեպարտամենտի ղեկավարը՝ տվյալ դատավորի ներկայացմամբ»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմող Ա. Խառատյանը 29.01.2010թ. դատական դեպարտամենտի ղեկավարի հրամանով՝ հիմնված դիմողի վերապատրաստման գնահատման արդյունքում քննական հանձնաժողովի կողմից տրված՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու վերաբերյալ եզրակացության վրա, ազատվել է ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պաշտոնից՝ առանց համապատասխան դատավորի ներկայացման: Դիմողը 01.03.2010 թ. հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի հրամանն անվավեր ճանաչելու եւ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին: Վարչական դատարանն իր՝ 21.05.2010թ. վճռով բավարարել է Ա.Խառատյանի հայցը:

Հայցը բավարարելիս դատարանն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի մեկնաբանման արդյունքում եկել է այն համոզման, որ «դատավորին կցվող դատական ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու իրավունքը վերապահված է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին, սակայն այդ իրավունքը չի կարող դիտվել որպես հայեցողական, քանի որ դրա իրականացման համար ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարը կաշկանդված է համապատասխան դատավորի ներկայացմամբ»:

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարը վճռաբեկ բողոք է ներկայացրել: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.03.2011թ. որոշմամբ բեկանել է ՀՀ վարչական դատարանի վճիռը եւ Ա. Խառատյանի հայցը մերժել:

Մերժելով հայցը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավորին կցված դատական ծառայողին զբաղեցրած պաշտոնից համապատասխան դատավորի ներկայացմամբ ազատելու կարգի սահմանումը հանդիսանում է որպես դատավորի գործունեության երաշխիք, միաժամանակ հանգել է այն եզրակացությանը, որ դատական ծառայողի որեւէ իրավունք չի խախտվել, քանի որ դատավորին կցված դատական ծառայության պաշտոնում նշանակումը կամ պաշտոնից ազատումը դատավորի ներկայացմամբ կատարելու կարգի պահպանումն էական նշանակություն կարող է ունենալ միայն դատավորի համար՝ նրա գործունեության երաշխիքների տեսանկյունից, մինչդեռ իրեն կցված դատական ծառայողին առանց իր ներկայացման պաշտոնից ազատելու հանգամանքը դատավորի կողմից չի վիճարկվել, վերապատրաստման արդյունքների գնահատման քննական հանձնաժողովի եզրակացությունը դատական ծառայողի կողմից չի վիճարկվել:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է հետեւյալին. «... հակառակ մեկնաբանման պայմաններում, այն է՝ բոլոր դեպքերում դատական ծառայողին պաշտոնից ազատումը միայն դատավորի ներկայացումից կախվածության մեջ դնելը, կարող է ստեղծել մի իրավիճակ, երբ օրինակ՝ դատական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող, կամ դատական կարգով անգործունակ, կամ սահմանափակ գործունակ, կամ անհայտ բացակայող ճանաչ-

ված ..., կամ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով ազատագրվածան դատապարտված ... դատական ծառայողի պաշտոնից ազատման հարցը կախվածությամբ մեջ կդրվի զուտ ընթացակարգային պահանջներից, այն է՝ դատավորի կողմից ազատման ներկայացումից, որն իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից խոչընդոտներ կհարուցի դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար օրենքով նախատեսված պահանջների պահպանման հարցում»:

3. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում գտնում է, որ վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, քանի որ չի բավարարում «օրենքի որակին» ներկայացվող պահանջները, հստակ չէ, ձեռակերպված է ոչ որոշակի: Նրա կարծիքով՝ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքով դատական իշխանությունում պետական ծառայության տարրեր ամրագրելով՝ օրենսդիրը միաժամանակ պետք է այդ իրավակարգավորումներով չխախտեր դատավորի անկախության երաշխիքները, քանի որ դատական համակարգն իշխանության ինքնուրույն ճյուղ է: «Ելնելով այս հիմնարար մոտեցումից՝ օրենսդիրը պետք է տարանջատեր «դատավորին կցված» եւ «դատավորին չկցված» հասկացությունները եւ առաջինի հասկացության տակ ընկնող պետական ծառայողներին աշխատանքի ընդունելու եւ աշխատանքից ազատելու հարցերում թույլատրեր դատավորի միջամտությունը, որը պետք է նպատակ հետապնդեր ապահովել, որպեսզի դատավորն իր սեփական հայեցողությամբ իր ռեսուրսները կարգավորելու որոշ ազատություն ունենա»:

Դիմողը նաեւ պնդում է, որ վիճարկվող նորմը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 94-րդ եւ 97-րդ հոդվածներին՝ հետեւյալ հիմնավորմամբ. վիճարկվող նորմը հնարավորություն չի տալիս օգտվել ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից, ինչպես նաեւ խախտում է դատավորի անկախության (տվյալ դեպքում՝ ներքին անկախության) սահմանադրական սկզբունքը:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող նորմի իրավական անորոշության հետ, պատասխանողը գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմը ձեռակերպված է բավարար հստակությամբ, քանի որ դատական ծառայության պաշտոնից ազատման հիմքերի առկայության դեպքում օրենքը պարտավորեցնում է դատավորին «ներկայացնել դատական ծառայողին պաշտոնից ազատման պահանջ»:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության շրջանակներում օրենքի վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության 18, 19, 94 եւ 97-րդ հոդվածների միջեւ հնարավոր հակասության հետ, պատասխանողը, մատնանշելով իրավակիրառ պրակտիկայի կողմից խնդրո առարկա դրույթի վերաբերյալ տրված մեկնաբանությանն անդրադառնալով՝ ՀՀ Ազգային ժողովի իրավասության բացակայությունը, գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմը որեւէ կերպ անձին չի զրկում իր իրավունքները եւ ազատությունները դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, ինչպես նաեւ արդար դատաքննության իրավունքներից: Որպես ապացույց՝ պատասխանողը մատնանշում է ՀՀ վարչական եւ ՀՀ վճռաբեկ դատարանների կողմից դիմողի բողոքները վարույթ ընդունելու հանգամանքը:

Օրենքի վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության 94 եւ 97-րդ հոդվածների միջեւ հնարավոր հակասության վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ պատասխանողը գտնում է, որ «դատավորին կցված դատական ծառայողների սահմանագատումը դատական այլ ծառայողներից եւ դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում նշանակելու կամ ազատելու՝ օրենքով սահմանված ընթացակարգի իմպերատիվ բնույթը, այն է՝ դատավորի ներկայացմամբ, ամբողջովին համապատասխանում են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատավորների անկախության սկզբունքին»:

5. Սահմանադրական դատարանը, քննության առնելով կողմերի դիրքորոշումները, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ պարզելով գործի բոլոր հանգամանքները, գտնում է, որ վեճի առարկա իրավադրույթն ընթացակարգային բնույթի դրույթ է եւ կոչված է, մի կողմից, կանոնակարգելու դատական ծառայության պաշտոնում նշանակման կարգը, մյուս կողմից՝ լրացուցիչ երաշխիք ստեղծել դատավորի անկախ ու արդյունավետ գործունեության համար: Դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում նշանակումը եւ պաշտոնից ազատումը՝ տվյալ դատավորի ներկայացմամբ, դրույթը միանշանակ է, ունի իմպերատիվ բնույթ, չի բովանդակում օրենքի բաց կամ անորոշություն, հստակ սահմանում է իրավակարգավորման պայման: Վերջինս հանգում է նրան, որ այդ նշանակումը եւ ազատումը պետք է տեղի ունենան տվյալ դատավորի ներկայացմամբ: Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները եւ չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է՝ այնպիսի հնարավոր տարբերակների միջեւ, որոնք բոլորն էլ օրինական են: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»: Հստակ սահմանված է նաեւ, որ իրավական ակտի մեկնաբանությունը չպետք է փոխի դրա իմաստը:

Նկատի ունենալով, որ վեճի առարկա նորմի իմաստը հստակ է ու միանշանակ, այն ենթադրում է, որ դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում նշանակումը եւ պաշտոնից ազատումը **պետք է տեղի ունենա տվյալ դատավորի ներկայացմամբ**, ինչպես նաեւ հաշվի առնելով, որ մման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ նպաստելու դատավորի անկախությանը եւ գործունեության արդյունավետությանը, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ նորմի իրավական բովանդակության եւ հստակության առումով առկա չէ սահմանադրաիրավական բնույթի վեճ: Ընդ որում, այդ դրույթը խելամտության կանխավարկածով կիրառելու դեպքում Սահմանադրությամբ ամրագրված որեւէ իրավունքի ոտնահարման պատճառ չի կարող դառնալ:

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ արձանագրել, օրենքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը դատավորի վճռորոշ մասնակցության սկզբունքը տարածել է նաեւ դատավորին կցված դատական ծառայության պաշտոնում նշանակման ընդհանուր կարգի վրա: Մասնավորապես, օրենսդիրն օրենքի 12 եւ 13-րդ հոդվածներում նախատեսում է համապատասխանաբար այն անձանց, ովքեր ունեն դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրա-

վունք, եւ այն անձանց, ովքեր չունեն նման իրավունք: Այդ պահանջներն ընդհանուր են բոլոր դատական ծառայողների համար: Սակայն բովանդակային առումով դրանք նույնական չեն, քանի որ պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջները կարող են տարբեր լինել: Միայն նշված պահանջները բավարարելուց հետո անձը կարող է օրենքով սահմանված կարգով նշանակվել դատական ծառայության թափուր պաշտոնում: Այդ կարգն ամրագրված է օրենքի 15-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ «Դատական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցութային կարգով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»: Վերը նշված՝ ընդհանուր կարգից բացառություն կազմող կարգն ամրագրված է օրենքի նույն հոդվածի 3-րդ մասում եւ վերաբերում է բացառապես դատավորին կցված դատական ծառայության թափուր պաշտոնում նշանակմանը: Նշված նորմի համաձայն՝ «Դատավորին կցված դատական ծառայության թափուր պաշտոնում նշանակվող անձը պետք է համապատասխանի տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջներին»: Վերջինիս հետ մեկտեղ, օրենսդիրն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրել է դատավորի եւս մեկ հայեցողական լիազորություն, համաձայն որի՝ դատավորի առաջարկությամբ իրեն կցվող դատական ծառայության թափուր պաշտոնը կարող է զբաղեցվել օրենքով նախատեսված մրցութային կարգով: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը նշանակվում է թափուր պաշտոնում՝ օրենքով նախատեսված կարգով:

Միաժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը հանդիսանում է դատավորին կցված դատական ծառայության պաշտոնում նշանակելու եւ այդ պաշտոնից ազատելու կարգ սահմանող իմպերատիվ նորմ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմի դիսպոզիցիան դատավորի համար նախատեսում է նաեւ պարտականություն՝ դատավորին կցված դատական ծառայողին պաշտոնից ազատելու համապատասխան հիմքի առկայության դեպքում տվյալ դատական ծառայողին ներկայացնել ազատման: Այլ խնդիր է՝ դատավորի կողմից նշված պարտականության կատարումից տարաբնույթ պատճառներով հնարավոր հրաժարվելու հանգամանքը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցի առավել մանրամասն իրավակարգավորման նպատակահարմարության խնդիրը կարող է քննության առարկա դառնալ օրենսդիր մարմնի իրավագործության շրջանակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում օրենքի վիճարկվող նորմի ենթադրյալ իրավական անորոշության վերաբերյալ պնդումը եւ արձանագրում է, որ օրենքի վիճարկվող նորմը ձեւակերպված է բավարար հատկությամբ՝ իրավական որոշակիության սկզբունքին համահունչ, ինչը պետք է հաշվի առնվի իրավակիրառական պրակտիկայում: Իսկ ներկայացվող վեճը ոչ թե տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանն առնչվող սահմանադրականության խնդիր է բովանդակում, այլ վերաբերում է կոնկրետ գործով դատական հայեցողության իրավաչափության գնահատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.



1. «Գատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, նկատի ունենալով, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ նպաստելու դատավորի անկախությանը եւ գործունեության արդյունավետությանը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՎ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**18 հոկտեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 996**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 1087.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝  
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՀՈԳՎԱԾԻՆ, 27-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ,  
2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻՆ ԵՎ 43-ՐԴ ՀՈԳՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երևան**

**15 նոյեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ. Անդրեասյանի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ Գ. Պետրոսյանի եւ Ն. Ադամյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերին եւ 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 13.10.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր, վիճարկվող խնդրի իրավակարգավորման վերաբերյալ միջազգային արդարադատական եւ իրավական պրակտիկան, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները» վերտառությամբ 1087.1-րդ հոդվածը սահմանում է.

«1. Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

4. Ջրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել միջնդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

6. Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաեւ այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

7. Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետեյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձեռք սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչեւ 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

8. Ջրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետեյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները եւ (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձեռք եւ պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

9. Եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

10. Անձը չի կարող օգտվել սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչեւ դատարան դիմելը «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում եւ (կամ) իր պատասխանի հրապարակում, եւ լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

11. Սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը եւ տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը:

Սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետեւանքով պատճառված գույքային վնասը:

12. Սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ զրպարտության հետեւանքով իրեն պատճառված գույքային վնասները, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը եւ խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

13. Մույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամսվա ընթացքում»:

2. Դիմող կողմը գտնում է, որ վիճարկվող հոդվածի նորմերն առաջացնում են իրավական անորոշություն եւ պայմաններ ստեղծում վիճարկվող հոդվածի կամայական եւ տարածական մեկնաբանման ու կիրառման համար, չեն բացահայտում «գրպարտություն», «վիրավորանք», «հրապարակային», «գերակա հանրային շահ», «հավասարակշռված եւ բարեխղճորեն» եւ մի շարք այլ բառակապակցությունների բովանդակությունը, ինչն իր հերթին վտանգում է իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքների իրացումը, հակասության մեջ է դնում այդ հոդվածը ՀՀ Սահմանադրության հետ՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի եւ 27-րդ հոդվածի (1-ին, 2-րդ եւ 3-րդ մասեր) նորմերը: Բացի դրանից, վիճարկվող նորմերից բխում է, որ որպեսզի կատարված արտահայտությունը համարվի «վիրավորանք», իսկ փաստացի տվյալները ներկայացնելը՝ «գրպարտություն», արտահայտությունը պետք է կատարվի հրապարակային, իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալները նույնպես պետք է ներկայացվեն հրապարակային: Այսինքն՝ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող ոչ հրապարակային կատարված արտահայտությունը, ինչպես նաեւ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող եւ նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող փաստացի տվյալները ոչ հրապարակային ներկայացնելը դիտվում են որպես որեւէ հետեւանք չառաջացնող արարքներ: Հետեւաբար, ըստ դիմող կողմի՝ վիճարկվող հոդվածն անհավասար դրության մեջ է դնում այն անձանց, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել են հրապարակային, եւ այն անձանց, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել են ոչ հրապարակային՝ դրանով իսկ խտրականություն սահմանելով նրանց նկատմամբ իրավական վերաբերմունքի մեջ, ինչպես նաեւ զրկելով անձին իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը ոչ հրապարակային արատավորելու դեպքերում իրավական պաշտպանության հնարավորությունից, եւ այս հիմքերով խախտում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի նորմերը:

Դիմող կողմը գտնում է նաեւ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածում տրված վիրավորանքի եւ գրպարտության հասկացությունների հետ համակարգային առումով փոխկապակցված է նաեւ նույն հոդվածում ամրագրված՝ վիրավորանքի եւ գրպարտության դեպքերում, ի թիվս այլ միջոցների, անձի՝ դատական կարգով փոխհատուցում եւ վիրավորանքի կամ գրպարտության հետեւանքով իրեն պատճառված գույքային վնասները պահանջելու իրավունքը: Դիմող կողմը կարծում է, որ վիճարկվող հոդվածում բավարար հստակությամբ չեն բացահայտվում փոխհատուցման նպատակը եւ փոխհատուցում կիրառելու սկզբունքները: Փոխհատուցում պահանջելու նպատակը պետք է սահմանափակվի վիրավորանքի կամ գրպարտության հետեւանքով անձի հեղինակությանը պատճառված վնասի հատուցման անհրաժեշտությամբ: Փոխհատուցումը, որը հետապնդում է ցանկացած այլ նպատակ, սահմանափակում է ազատորեն արտահայտվելու իրավունքը, ինչը չի կարող դիտարկվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Ըստ դիմողի՝ դատարանի կողմից սահմանվող փոխհատուցման գումարը պետք է համաչափ լինի անձի հեղինակությանը պատճառված վնասին, փոխհատուցման գումարի նկատմամբ դատական հսկողության շրջանակնե-

րը համարժեք եւ արդյունավետ երաշխիքներ պետք է նախատեսեն անհամաչափորեն մեծ գումարների դեմ, եւ փոխհատուցում վճարելու պահանջը, անկախ դրա չափերից, հանդիսանում է միջամտություն խոսքի ազատության իրավունքի նկատմամբ: Այն պետք է կիրառվի միայն այն դեպքերում, երբ պաշտպանության մյուս միջոցներով հնարավոր չէ վերականգնել անձի հեղինակությանը պատճառված վնասը: Փոխհատուցումը պետք է համաչափ լինի անձի հեղինակությանը պատճառված վնասին: Այն չպետք է օգտագործվի որպես ազատ խոսքը կաշկանդելու դատական լծակ: Միայն այս սկզբունքները հստակորեն ամրագրելով՝ հնարավոր է վերացնել վիճարկվող հողվածի դրույթների հնարավոր կամայական մեկնաբանությունը եւ ապահովել դրանց համաչափ ու միատեսակ կիրառությունը:

3. Պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող հողվածը նորմատիվ տեսանկյունից չի հավակնում հակասահմանադրական բնորոշմանը: Այն բավարարում է միջազգային, եվրոպական չափանիշները, մասնավորապես՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող հողվածը ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս քաղաքացիական դատավարության ընթացակարգերով հասնել իրենց պատվի եւ արժանապատվության, խախտված իրավունքի վերականգնման եւ (կամ) իր պատասխանի հրապարակման, ինչպես նաեւ դրամական հատուցման եղանակով»: Նմանապես իրավաբանական անձինք՝ նշված ընթացակարգերով եւ եղանակներով կկարողանան պաշտպանել իրենց գործարար համբավը գրպարտչական արտահայտություններից: Անձի արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանվում է ոչ միայն ֆիզիկական անձի, այլեւ զանգվածային լրատվական միջոցների կեղծ կամ վիրավորական արտահայտություններից: Ըստ պատասխանող կողմի՝ վիճարկվող հողվածը, սահմանելով քաղաքացիաիրավական պատասխանատվություն գրպարտության եւ վիրավորանքի համար, ուղղված չէ ՀՀ-ում գուտ կարծիքն ազատ արտահայտելու կամ խոսքի ազատության սահմանափակմանը, այն առաջնահերթ ուղղված է յուրաքանչյուր անձի արժանապատվությունը պաշտպանելուն, որն իբրեւ բացարձակ արժեք պահանջում է ոչ միայն արտաքին ազատություն ցանկացած տեսակի ֆիզիկական բռնությունից, այլ նաեւ որպես յուրաքանչյուրի եզակի ներքին էություն՝ նաեւ ազատություն բարոյական բռնությունից, որը չի կարող երաշխավորվել ամենաթողության պարագայում:

Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ վիճարկվող հողվածի վերը ներկայացված նպատակի մասին է վկայում այն փաստը, որ քաղաքացիաիրավական պատասխանատվություն է նախատեսվում միայն այնպիսի հրապարակային արտահայտությունների համար, որոնք նպատակաուղղված են արատավորելու անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը վիրավորանքի դեպքում եւ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակայնորեն ներկայացնելու համար, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ միաժամանակ արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Ըստ պատասխանող կողմի՝ օրենսդիրը հիմք ընդունելով լրագրողական աշխատանքների առանձնահատկությունը՝ հանրային հնչելություն ունեցող դեպքերի վերաբերյալ հայտարարություններ կատարելու ազատությունը, լուրեր հրապարակելու հրատապությունը, եթե հակառակ դեպքում դա կարող է նվազեցնել ներկայացվող տեղեկատվության հրատապությունը, հնարավորություն է տալիս ազատել պատասխանատվությունից, անգամ ոչ ճշմարիտ տեղեկատվության համար, եթե դա չի հետապնդել ակնհայտորեն չարամիտ նպատակ, անձը ձեռնարկել է բոլոր միջոցները այդ տեղեկու-

թյունների ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը պարզելու համար: Պատասխանող կողմի կարծիքով, վիճարկվող հոդվածը՝ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի համատեքստում, չի նախատեսում խտրականություն:

Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ վիճարկվող հոդվածով նախատեսված իրավակարգավորումը բացառում է փոխհատուցում պահանջել այլ նպատակներով: Դրամական փոխհատուցումը պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության գլխավոր ձեւը չէ: Այդ եղանակով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու անհնարինության դեպքում է միայն դատարանն իրավասու կիրառելու օրենքով նախատեսված պաշտպանության մյուս միջոցները: Ընդ որում, դատարանին իրավունք է վերապահված, հաշվի առնելով կոնկրետ եւ հստակ հանգամանքները, առավել մեղմ պատասխանատվություն նախատեսել հրապարակային արտահայտություններ կամ ոչ ճշմարիտ փաստացի տեղեկություններ տարածող անձանց նկատմամբ:

Անդրադառնալով վիճարկվող հոդվածում «հրապարակային», «գերակա հանրային շահ», «հավասարակշռված» եւ «բարեխղճորեն» բառակապակցությունների բովանդակությանը, պատասխանող կողմը գտնում է, որ այդ հասկացությունները հանրածանոթ են եւ չեն կարող տարատեսակ ընկալվել դատարանի կողմից: Տվյալ հասկացությունների բովանդակությունը պետք է դիտարկել տվյալ նորմի համատեքստում:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

- խոսքի ազատության եւ կարծիքի ազատ արտահայտման իրավունքի՝ որպէս ժողովրդավարության կարեւոր նախապայմանի իրացման երաշխավորումը՝ ՀՀ Սահմանադրության 14 եւ 27-րդ հոդվածների իրավակարգավորման, ինչպէս նաեւ 43-րդ եւ 47-րդ/1-ին մաս/ հոդվածների համատեքստում այդ իրավունքի հնարավոր ու իրավաչափ սահմանափակումների շրջանակներում, ելնելով նաեւ միջազգային իրավական համընդհանուր սկզբունքներից ու նորմերից,

- անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող գործողությունների (վիրավորանքի կամ գրպարտության) սահմանադրաիրավական բովանդակությունը, ելնելով վեճի առարկա հոդվածի դրույթների իրավական տրամաբանությունից, ինչպէս նաեւ միջազգային իրավական պրակտիկայում առկա դրանց ընկալումներից,

- վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող գործողությունների արդյունքում պատճառված անմիջական վնասի դիմաց դատական կարգով համաչափ փոխհատուցում ստանալու իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական բովանդակությունը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ սույն գործով վեճի առարկա հոդվածի դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման եւ սահմանադրականության գնահատման համար սկզբունքային նշանակություն ունեն նաեւ.

- ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում օրենսդրական զարգացումների հիմնական միտումների բացահայտումը,

- քննվող իրավակարգավորման բնույթի ու իրավական բովանդակության հստակեցումը՝ ՀՀ Սահմանադրության արժեքանական մոտեցումների տեսանկյունից,

- իրավակարգավորման նպատակի, միջոցի ու իրավանորմի կիրառման հետեւանքների իրավաչափ հավասարակշռվածության բացահայտումը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2007թ. հոկտեմբերի 4-ին ընդունեց թիվ 1577(2007) բանաձեռը գրպարտության ապաքրեականացման վերաբերյալ: Շեշտելով, որ գրպարտությանն առնչվող օրենքներն այլ անձանց իրավունքների եւ բարի համբավի պաշտպանության իրավաչափ նպատակ են հետապնդում՝ Վեհաժողովը, այնուամենայնիվ, պետություններին առաջարկեց այս օրենքները կիրառել մեծագույն զսպվածությամբ, **քանի որ դրանք կարող են լրջորեն վտանգել արտահայտվելու ազատությունը:**

Վեհաժողովը նաեւ հստակ մոտեցում որդեգրեց, այն է՝ գրպարտության համար ազատագրկումը **պետք է անհապաղ չեղյալ հայտարարվի:** Կոչ արվեց անդամ պետություններին՝

- անհապաղ վերացնել գրպարտության համար որպէս պատժատեսակ սահմանված ազատագրկումը,

- սահմանել **ողջամիտ առավելագույն սահման** գրպարտության գործերով վնասի փոխհատուցման գումարի չափի առումով, այնպէս, որպէսզի **պատասխանատու մասնուկի կենսունակությունը չվտանգվի.**

- ապահովել համապատասխան իրավական երաշխիքներ իրական վնասին ոչ համաչափ փոխհատուցում սահմանելու դեմ:

Հիշյալ բանաձեռում ընդգծվեց նաեւ, որ հանրային շահից բխող հայտարարությունները, եթե նույնիսկ ապացուցվում է դրանց ոչ ճշմարիտ լինելը, չպետք է լինեն պատժելի, եթե դրանք կատարվել են առանց դրանց ոչ հավաստի լինելու փաստի իմացության, առանց վնաս պատճառելու դիտավորության եւ դրանց ճշմարտացիության ստուգման համար համապատասխան ջանքեր են գործադրվել:

Այս բանաձեռի ընդունումից հետո Եվրախորհրդի անդամ շուրջ մեկ տասնյակ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը, նախաձեռնեցին համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ վիրավորանքի ու գրպարտության ապաքրեականացման ուղղությամբ (2010թ. մայիսի 18-ի ՀՕ-98-Ն օրենքով ուժը կորցրած ճանաչվեցին ՀՀ քր. օրենսգրքի 135-րդ եւ 136-րդ հոդվածները, իսկ նույն օրն ընդունված ՀՕ-97-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը լրացվեց նաեւ վեճի առարկա 1087.1-րդ հոդվածով):

Իր հերթին Եվրախորհրդի նախարարների կոմիտեն մի շարք հանձնարարականներ է ընդունել խնդրո առարկա հիմնախնդրի իրավական կարգավորման եւ շահերի ու իրավունքների ողջամիտ հավասարակշռման վերաբերյալ: Մասնավորապէս, ԵԽ Նախարարների կոմիտեի Rec(2003)13 հանձնարարականում ճանաչվում է **ուղղման կամ պատասխան ներկայացնելու իրավունքը՝** հաշվի առնելով, որ ոչ ճիշտ տեղեկատվությունը կարող է, օրինակ, վնաս հասցնել ամենեղութեան կանխավարկածին:

ԵԽ Նախարարների կոմիտեն, մի կողմից, հաշվի է առել, որ արտահայտվելու ազատության իրավունքը ներառում է տեղեկատվություն եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու իրավունքը՝ առանց հանրային իշխանությունների միջամտության եւ անկախ սահմաններից, ինչպէս դա սահմանված է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, մյուս կողմից՝ նկատի է ունեցել, որ այդ ազատության իրականացումը ներառում է պարտականություն եւ պատասխանատվություն, մասնավորապէս՝ կապված այլ անձանց իրավունքների կամ բարի համբավի հետ: Ուստի ԵԽ Նախարարների կոմիտեն գտնում է, որ ցանկալի է ապահովել անհատին պաշտպանության համապատասխան միջոցներով.



- ընդդեմ նրա վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն պարունակող հրապարակման,

- ընդդեմ նրա մասնավոր կյանքին միջամտող կամ նրա պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավն արատավորող տեղեկատվության՝ ներառյալ փաստերը եւ կարծիքները, անկախ այն հանգամանքից՝ աղբյուրի տեղեկատվության տարածումը տեղի է ունեցել տպագիր մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության կամ պարբերական բնույթ ունեցող զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Բացի դրանից, ԵԽ Նախարարների կոմիտեի՝ «Մամուլի առնչությամբ անհատի պատասխանի իրավունքի մասին» դեռես 1974թ. հուլիսի 2-ին ընդունված թիվ(74) 26 բանաձեռով անդամ պետություններին առաջարկվել է, որ անձի՝ մամուլի հետ կապված կարգավիճակը պետք է նվազագույնը համապատասխանի հետեւյալ սկզբունքներին.

- անձի վերաբերյալ զանգվածային լրատվության դրեւ միջոցում հրապարակված տեղեկատվության առնչությամբ համապատասխան անհատը պետք է ունենա իր հետ կապված ոչ ճշմարիտ փաստերի ուղղման արդյունավետ հնարավորություն, առանց անհարկի ձգձգումների, որոնց ուղղման հարցում նա ունի իրավաչափ շահ, եւ այսպիսի ուղղումները պետք է հնարավորության դեպքում կատարվեն նույն միջոցով,

- անհատը պետք է ունենա արդյունավետ պաշտպանության իրավունք՝ իր հետ կապված այն փաստերի եւ կարծիքների դեմ, որոնք.

ա/ միջամտություն են նրա մասնավոր կյանքին, բացառությամբ, երբ դա արդարացված է **գերակա հանրային շահով**, երբ անձը հստակորեն կամ լռելյայն համաձայնել է հրապարակմանը կամ երբ հրապարակումը տեղի է ունեցել ընդհանուր առմամբ ընդունված պրակտիկայի պայմաններում եւ չի հակասում օրենքին,

բ/ արատավորվել է նրա պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավը, եթե տեղեկատվությունը չի հրապարակվել տվյալ անձի հստակորեն արտահայտված կամ լռելյայն համաձայնությամբ կամ արդարացված չէ գերակա հանրային շահով եւ հանդիսանում է արդար քննադատություն՝ հիմնված ճշմարիտ փաստերի վրա:

Իրենց հերթին, Եվրախորհրդի տարբեր կառույցներ բազմիցս են շեշտել քննության առարկա խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին հետեւելու անհրաժեշտությունը: Այդ դատարանը «վիրավորանքին» եւ «գրպարտությանն» առնչվող գործերով հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել, մասնավորապես, «գրպարտության» մասին օրենքների որոշակիության, «գրպարտության» համար պատասխանատվության համաչափության, փաստերի ճշմարտացիության ապացուցման պարտականությունից ազատելու հիմքերի կամ «ողջամիտ հրատարակման» պաշտպանության հայեցակարգային մոտեցման, կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջների կատարումը երաշխավորելու վերաբերյալ:

2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) վճռում, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձեւակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետեւանքները: Այդ հետեւանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեւ օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, եւ օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետեւաբար, շատ օրենքներ **անխուսափելիորեն ձեւակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք**

**քիչ թե շատ անորոշ են եւ որոնց մեկնաբանությունը եւ կիրառումը պրակտիկայի խնդիր է:** Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի եւ արժանապատվության իրենց շեշտադրմամբ, **անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան:** Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել եւ մեկնաբանել ներպետական օրենքները:

Գնահատողական դատողությունների եւ փաստերի տարանջատման անհրաժեշտության առնչությամբ Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առաջադրել է այն պահանջը, որ **հստակ տարբերակում պետք է կատարել փաստական տվյալների եւ գնահատողական դատողությունների միջև:** Այս հանգամանքը հատուկ կարեւորվել է նաեւ Եվրախորհրդի Վեներտիկի հանձնաժողովի կողմից՝ այս հարցի առնչությամբ մի շարք երկրների օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ փորձագիտական եզրակացություններ ներկայացնելիս: Մասնավորապես, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի նախագիծը՝ հանձնաժողովն իր՝ 2009թ. հունիսի 23-ի CDL-AD(2009)037 միջանկյալ զեկույցում կարծիք է հայտնել, որ հոդվածում օգտագործված «վիրավորանք» եւ «զրպարտություն» եզրույթները հայաստանյան դատարանները պրակտիկայում կիրառելիս պետք է հաշվի առնեն Եվրոպական դատարանի՝ արտահայտվելու ազատությանը վերաբերող նախադեպային իրավունքը, մասնավորապես, դրանում ձեւակերպված այն պահանջը, որ պետք է տարբերակում կատարվի գնահատողական դատողությունների եւ փաստերի միջև:

Նշված նկատառումից ելնելով էր, որ հանձնաժողովն առաջարկեց հոդվածի նախագծում, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան, ավելի հստակ եւ ճշգրիտ տարանջատել խնդրո առարկա երկու եզրույթները՝ վիրավորանքը եւ զրպարտությունը, ինչպես նաեւ հստակեցնել դրանցից բխող ապացուցման բեռը: Այս առաջարկության հիման վրա հոդվածի նախագծում կատարվեցին որոշ փոփոխություններ:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձեւավորված վերոհիշյալ մոտեցումներից է նաեւ ելնում՝ գնահատելու համար դիմող կողմի փաստարկները վիճարկվող նորմերի **իրավական անորոշության** առնչությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատկություններով (գնահատման ենթակա հանգամանքների բազմազանությամբ) է պայմանավորված հայեցողական որոշակի այն ազատությունը, որն օրենսդիրը տրամադրել է դատարաններին՝ վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ որոշումներ կայացնելիս: Սահմանադրական դատարանը նաեւ գտնում է, որ դատական հայեցողությունը՝ մասնավորապես այնպիսի դեպքերում, երբ քննության առարկա է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սահմանափակման հարցը, **պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի նորմերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան մեկնաբանությամբ կիրառելու պահանջով, այլեւ միջազգային պրակտիկայով, եւ հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով:**

Քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ հիշյալ եւ մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթերի (այդ թվում նաեւ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 2011թ. հուլիսի 11-29-ին Ժնևում ընդունված թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, «ARTICLE 19» կազմակերպության կողմից մշակված մոտեցում-

ները եւ այլն) վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, համաձայն եվրոպական իրավական ներկա զարգացումների՝

- մամուլի դեմ անձի պատվի եւ արժանապատվության պաշտպանության նպատակով հարուցված հայցերի դեպքում առկա է արտահայտվելու ազատության իրավունքի եւ անձի արժանապատվության բախում, եւ լուծումները պետք է գտնվեն դրանց հավասարակշռման տիրույթում,

- մամուլի միջոցներով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելը **համարվում է իրավախախտում, սակայն ոչ քրեորեն պատժելի արարք.**

- այդ իրավախախտումը ենթադրում է համարժեք փոխհատուցում, որն անհրաժեշտ է անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը վերականգնելու համար,

- այդ փոխհատուցումը չպետք է շփոթել պատճառած գույքային վնասի հետ,

- այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես լրատվամիջոցի դեմ կիրառվող տույժ կամ տուգանք, հակառակ դեպքում կիմաստազրկվի գրպարտություն երեսույթի ապաքրեականացումը,

- գրպարտության վերաբերյալ գործերով պատասխանողը պետք է կրի միայն իր հրապարակած փաստերի ճշմարտացիության ապացուցման պարտականությունը,

- պետք է ապահովվի ու երաշխավորվի «ողջամիտ հրապարակման» պաշտպանությունը,

- հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում հանրությանը հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հարցում մամուլի առանցքային դերը՝ առավել լայն պաշտպանություն պետք է ապահովվի այն հրապարակումների համար, որոնք մաս են կազմում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ ծավալվող բանավեճի:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գրպարտության ապաքրեականացման վերաբերյալ թե՛ մեր երկրում եւ թե՛ եվրոպական մի շարք այլ երկրներում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների ու նոր իրավակարգավորման հիմնական տրամաբանությունը հենվում է ոչ թե մեղավորության կանխավարկածի վրա (նախատեսել պատիժ՝ արարքի համար), այլ անմեղության կանխավարկածի վրա (երաշխավորել անձի անմեղությունը՝ վերականգնելով նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը): Երբ անձի պատվի եւ արժանապատվության արատավորումը հետեւանք է դիտավորության, չարամտորեն իրականացված գործողության, ունի շարունակական բնույթ ու առնչվում է լրատվամիջոցին, ապա խնդիրը տեղափոխվում է նաեւ իրավահարաբերությունների կարգավորման այլ հարթություն, եւ հարցը կարող է քննության առարկա դառնալ ընդհուպ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման տեսանկյունից: Միջազգային իրավական մոտեցումները ելնում են այն կանխավարկածից, որ լրատվության կարեւորագույն առաքելություններից են՝ ասել միայն ճշմարտությունը եւ բարեխղճորեն ստուգել փաստերը: Անհավատարմությունն այս առաքելությանը, կեղծ փաստերով շահադիտական կամ կանխամտածված այլ նպատակներով անձին անվանարկելը, նրա՝ անմեղության կանխավարկածին վնաս հասցնելը կամ անձնական կյանքին միջամտելը պետք է համարժեք իրավական գնահատական ստանան: Իր հերթին, երաշխավորված ու պաշտպանված պետք է լինի խոսքի եւ արտահայտվելու ազատության իրավունքը, եւ պատասխանատու մամուլի կենսունակությունը չպետք է վտանգվի:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, մի կողմից, տեղեկատվություն տարածելու եւ խոսքի ազատության, մյուս կողմից՝ անձի՝ իր հեղինակության նկատմամբ հարգանքի իրավունքի միջեւ փոխհարաբերությունը պետք է քննության առնվի ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով սահմանված՝ մարդու արժանապատվության հարգման ու պաշտպանության եւ Սահմանադրության 27-րդ հոդվածով սահմանված՝ ժողովրդավարական պետությունում քաղաքական բազմակարծության անքակտելի տարր հանդիսացող՝ խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքի հետ հարաբերակցության լույսի ներքո:

Բացի դրանից, քննության առարկա հոդվածի իրավակարգավորման շրջանակներում անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ սահմանադրական մի շարք այլ հիմնարար սկզբունքների երաշխավորման անհրաժեշտությունը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է.

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Համաձայն Սահմանադրության 14-րդ հոդվածի՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից»: Իսկ Սահմանադրության 23-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը»:

Միաժամանակ, Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»:

ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածների, ինչպես նաեւ 43-րդ եւ 47-րդ (1-ին մաս) հոդվածների համադրված վերլուծությունից հետեւում է, որ մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը եւ մասնավոր կյանքը, բխող իրավունքները եւ ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը միայն իրավաչափ **շրջանակներում**: Այդ մտտեցումն է դրված նաեւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10.2-րդ, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17 եւ 19.3-րդ, Մարդու իրավունքների հանրնդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածների հիմքում:

Այս հիմնախնդրին լայնորեն անդրադարձել է նաեւ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան: Օրինակ՝ Լեհաստանի սահմանադրական տրիբունալն իր՝ 30.10.2006թ. որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Լրատվամիջոցների եւ սոցիալական հաղորդակցության այլ միջոցների ազատությունը չի կարող ըստ էության պատճառ հանդիսանալ սահմանադրական այլ

իրավունքները եւ ազատությունները սահմանափակելու համար: Իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, որոնք կարող են հանգեցնել մարդու արժանապատվության նսեմացմանը, անթույլատրելի են: Որքան մոտ է կոնկրետ իրավունքը կամ ազատությունը մարդու արժանապատվության էությանը, այնքան այն ավելի խիստ պետք է պաշտպանվի հանրային իշխանությունների կողմից: Միեւնույն ժամանակ, պետության սահմանադրական համակարգի սկզբունքները պետք է այնպես իրացվեն, որ խուսափեն մարդու արժանապատվությունը վիրավորելուց»:

Ուշադրության է արժանի նաեւ այս հիմնախնդրի առնչությամբ Մլովենիայի սահմանադրական դատարանի 10.09.2009թ. որոշման մեջ արտահայտված հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Համեմատելով արտահայտվելու ազատությունը՝ մի կողմից, եւ անձնական արժանապատվության իրավունքը՝ մյուս կողմից, դատարանները նշված իրավունքների միջեւ հարաբերությունները չեն կարգավորել այնպես, որ արտահայտվելու իրավունքն անհամաչափորեն սահմանափակվի: Իրենց աշխատանքն իրականացնելիս լրագրողներն օգտվում են արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության լայն շրջանակից, ինչը պայմանավորված է հասարակության մեջ նրանց ունեցած դերով: Եթե, այնուամենայնիվ, լրագրողները դուրս գան իրենց կողմից ներկայացվող բանավեճի կամ խնդրի շրջանակներից այնպիսի հայտարարությունների միջոցով, որոնք ներխուժում են տուժող կողմի անձնական իրավունքների մեջ այն ծավալով, որ էլ հնարավոր չէ փաստարկել, որ իրենք իրենց ներդրումն են կատարում հասարակության համար կարեւոր հարցերի բաց հանրային քննարկմանը, նրանք չեն կարող պնդել, որ հասարակության մեջ իրենց ունեցած դերը նշանակում է, որ արտահայտվելու իրենց իրավունքը գերակայում է տուժող կողմի անձնական իրավունքներին միջամտելու նկատմամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ լրագրողների արտահայտվելու ազատությունը պաշտպանվում է, եթե նրանք գործում են իրենց «առաքելության» շրջանակներում»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով նույնպես անդրադարձել է մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեք ընկալելու սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին (ՄԴ-Ո-834, ՄԴ-Ո-913 եւ այլն), ընդգծելով, որ այդ իրավունքն առաջնային նշանակություն ունի մարդու եւ քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել եւ երաշխավորված իրականացման համար, որը նաեւ ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում եւ կամաարտահայտության դրսեւորում, այնպես էլ դրանք պաշտպանելու՝ պետության համարժեք պարտականություն: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը դեռեւս իր ՄԴ-Ո-278 որոշման մեջ փաստելով, որ Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագիրը եւ միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի՝ ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կարեւոր երաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը, արձանագրել է, որ օրենքով նախատեսվող հնարավոր սահմանափակումները պետք է լինեն համաչափ եւ բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը:

Բերված մոտեցումների, ինչպես նաև եվրոպական երկրների տարբեր այլ դատա-  
րանների իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ.

ա/ սահմանադրական դատարանները խնդրին առաջին հերթին մոտենում են իրա-  
վունքների սահմանափակման թույլատրելիության տեսանկյունից: Այս առումով ՀՀ  
Սահմանադրության 14-րդ հոդվածը, ի տարբերություն 27-րդ հոդվածի, Սահմանադրու-  
թյան 43-րդ հոդվածի հիմքով ենթակա չէ սահմանափակման,

բ/ կարելու է խոսքի ու արտահայտվելու ազատության իրավունքի երաշխավոր-  
ումը ժողովրդավարական հասարակության համար, այն չի կարող անհամաչափորեն  
սահմանափակվել՝ վտանգելով սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ ու գա-  
ղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը,

գ/ արտահայտվելու ազատության իրավունքը՝ այնքանով, որքանով կապված է  
պարտավորությունների եւ պատասխանատվության հետ՝ Մարդու իրավունքների եւ  
հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի  
իմաստով, կարող է պայմանավորվել օրենքով նախատեսված սահմանափակումներով  
կամ պատժամիջոցներով, որոնք, ի մասնավորի, անհրաժեշտ են այլ անձանց հեղինա-  
կությունը կամ իրավունքները պաշտպանելու համար,

դ/ գործնական խնդիրն առավելապես ոչ թե օրենքով իրավաչափ սահմանափա-  
կումների կամ պատասխանատվության միջոցների նախատեսման մեջ է, այլ վերաբե-  
րում է դրանց համաչափության ապահովմանն ու դատական պրակտիկայում դրա  
երաշխավորմանը՝ որպես պետության անմիջական պարտականություն: Վերջինս  
պետք է հենվի այն ելակետային սկզբունքի վրա, որ հանրային շահի գերակայության  
տեսանկյունից լրատվամիջոցի կանխարգելիչ ու հակակշռող նշանակությունն ավելին  
է, քան նյութական միջոցներով սխալն ուղղելու անհրաժեշտությունը: Այս հանգաման-  
քը կոնկրետ իր արտացոլումն է գտել վեճի առարկա հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբե-  
րության եւ 5-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորման շրջանակներում եւ պետք է  
համարժեք ձևով հաշվի առնվի դատական պրակտիկայում:

Սահմանադրաիրավական այս հիմնարար դրույթները քննության առարկա իրա-  
վահարաբերությունների շրջանակներում ունեն ելակետային ու բացարձակ նշանա-  
կություն ոչ միայն օրինաստեղծի, այլև իրավակիրառողի ու այդ հարաբերությունների  
մասնակիցների համար: Այդ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ  
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակ-  
ներում դրանք հիմնականում արտացոլված են համակարգային օրգանական կապի մեջ  
եւ ապահովում են իրավաչափ հավասարակշռություն իրավունքի ու դրա պաշտպանու-  
թյան երաշխիքների, հանրային ու անհատական շահերի, իրավական ու բարոյական  
չափորոշիչների միջև: Օրենքը սահմանադրական ճիշտ չափորոշիչներ է դրել տվյալ  
հիմնախնդրի իրավական կանոնակարգման հիմքում: **Գրանց համարժեք ընկալումը,  
իրավաչափ կիրառումը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ճշմարտության  
համակարգային բացահայտումը դատական պրակտիկայի խնդիրն է:**

Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս սահ-  
մանադրական դատարանը ելնում է նաև այն իրողությունից, որ Հայաստանի Հանրա-  
պետությունում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ  
անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքա-  
ցիաիրավական կարգավորման միջոցով: Այդ բնագավառի հարաբերությունները կար-  
գավորվում են ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող  
հոդվածով, այլև տեղեկատվության ազատության, զանգվածային լրատվության իրա-  
վակարգավորման բնագավառի օրենսդրության ակտերով («Տեղեկատվության ազա-

տության մասին» 2003թ. սեպտեմբերի 23-ին, «Ձանգվածային լրատվության մասին» 2003թ. դեկտեմբերի 13-ին ընդունված օրենքներով եւ այլն):

Միաժամանակ, քննության առարկա դարձնելով վերոհիշյալ ազատությունների եւ օրենքով պաշտպանվող այլ շահերի միջեւ հավասարակշռության խնդիրը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ եւ տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի եւ անձանց:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի քննության համար ելակետային նշանակություն ունի «գրպարտություն» եւ «վիրավորանք» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը դեռեւս 2005 թվականին անդրադառնալով այդ հասկացությունների մեկնաբանմանը, առանձնացրել է երեք արտահայտություն՝ անվանարկում (defamation), գրավոր արտահայտություն, որը վնասում է անձին (libel), ինչպես նաեւ հայտարարություն կամ գործողություն, որ ասվել կամ արվել է այլ անձի **վիրավորելու նպատակով** (insult): Անվանարկումը լինելով երեւոյթի ընդհանրական բնութագրում՝ իրավական հստակության տեսանկյունից պահանջում է որոշակիացնել դրա դրսեւորումները՝ անցողիկ կամ մնայուն բնույթը, արտահայտման ձեւը, դիտավորության ու կեղծ փաստի առկայությունը եւ այլն, ինչը կարեւոր է փոխհատուցման կանոնակարգման առումով:

Միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս հարցում ՀՀ օրենսդրական փոփոխություններն ընթացել են գոյություն ունեցող հնարավոր ամբողջական ձեւակերպումներ ամրագրելու տրամաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ մասից հետեւում է, որ «**գրպարտությունն**» **անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:** Այս ձեւակերպումից բխում է, որ գրպարտությանը բնորոշ հատկանիշներն են.

ա/ խոսքը վերաբերում է **փաստացի տվյալներին,**

բ/ դրանք **չեն համապատասխանում իրականությանը,**

գ/ **ներկայացվել են հրապարակայնորեն,**

դ/ **արատավորում են** անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը,

ե/ դրանք **չեն վերաբերում միայն լրատվամիջոցներով ներկայացված փաստացի տվյալներին:**

**տվյալներին:**

Հստակ է, որ խոսքը վերաբերում է փաստի, որոշակի կոնկրետ տվյալների, որոնք չեն կարող լինել վերացական, ենթադրական, այլ ունեն կոնկրետ առարկայական դրսեւորում: Նման փաստացի տվյալների բացակայության դեպքում քննության առարկա հոդվածի իմաստով «գրպարտությունը»՝ որպես այդպիսին, գոյություն չունի:

Տարբեր երկրների իրավական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այդ հասկացության բնորոշ գծերից է նաեւ **դիտավորությամբ, գիտակցաբար** ոչ հավաստի ու անձի արժանապատվությունը վիրավորող փաստի (կամ փաստական տվյալների) տարածումը: Սա ավելի է որոշակիացնում տվյալ հասկացությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ նման տրամաբանությունը դրված է նաեւ այս հոդվածի իրավակարգավորման հիմքում: Մասնավորապես, վիճարկվող հոդվածի 5-րդ մասի

2-րդ կետով սահմանված է, որ այդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը **չի համարվում զրպարտություն**, եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն **ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը**, ինչպես նաեւ հավասարակշռված ու բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները: Այլ կերպ՝ **առկա չէ դիտավորության կանխավարկածը**:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա հոդվածի նշված դրույթն արտացոլում է միջազգային պրակտիկայում ձեռավորված՝ «ողջամիտ հրապարակումների» պաշտպանության սկզբունքը, որի համաձայն՝ անձն ազատվում է զրպարտություն համարվող տեղեկատվություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն՝ **առանց տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու դիտավորության**:

Նույն տրամաբանության վրա է կառուցված նաեւ 1087.1-րդ հոդվածի 10-րդ մասը, որն անձին ընդհուպ **զրկում է** նյութական փոխհատուցում պահանջելու հնարավորությունից, եթե նա մինչեւ դատարան դիմելը «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում եւ (կամ) իր պատասխանի հրապարակում, եւ լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

Քննության առարկա հոդվածի 2-րդ մասում վիրավորանքը բնորոշվում է որպես «... խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտություն»:

Միջազգային իրավական պրակտիկայում «վիրավորանք» եւ «զրպարտություն» որակումների հիմնական տարբերությունն այն է, որ զրպարտության պարագայում խոսքը վերաբերում է **դիտավորությամբ** կեղծ, իրականությանը չհամապատասխանող փաստերի, փաստացի տվյալների տարածման միջոցով անձի արժանապատվությունն արատավորելուն, նրան հանցանքի կամ զանցանքի մեջ իրականությանը չհամապատասխանող փաստերի հիման վրա մեղադրելուն, իսկ վիրավորանքը **ենթադրում է անձի՝ դիտավորությամբ, կանխամտածված նվաստացում**: Այս տրամաբանությունն է դրված նաեւ քննության առարկա հոդվածում հասկացությունների բնորոշման հիմքում:

Վիրավորանքի առկա սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք **կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն** պաշտպանված չէ օրենքով: Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի արտահայտումը՝ այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա եւ արված է արդար մտադրություններով: **Ընդ որում, գնահատող դատողություն արտահայտելու համար ապացույցներ չեն պահանջվում**: Քննադատությունը, որն ուղղված է անձի գործունեությանը քաղաքականության, բիզնեսի, գիտության, արվեստի կամ այլ հանրային բնագավառներում, ինչպես նաեւ հանրային պաշտոնի, հասարակական դիրքի առնչությամբ եւ ակնհայտորեն չի գերազանցում իրավաչափության սահմանները, չի կարող համարվել վիրավորանք վեճի առարկա հոդվածի իմաստով:

Քննության առարկա հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ արտահայտությունը չի կարող որպես վիրավորանք որակվել, եթե այն ունի որոշակի փաստական հիմք: Այսինքն, ոչ թե պետք է վիրավորանք համարել գնահատողական դատողությունը, այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն **արատավորելու նպատակով** կատարված հրապարակային արտահայտությունը: Այստեղ կարելի է նաեւ «արատավորելու նպատակով» արտահայտության իրավա-



կան իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համատեքստում այն **ենթադրում է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ոսնձգություն** անձի արժանապատվության նկատմամբ: Մինչդեռ գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետետություն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլև՝ պարտականությունն է:

8. Ըստ դիմող կողմի՝ վիճարկվող նորմերում բացահայտված չէ «հրապարակային» եզրույթի բովանդակությունը, եւ որոշված չեն «ոչ հրապարակային» ձեւով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող գործողություններից բխող հնարավոր իրավական հետեւանքները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով արարքի հրապարակայնության փաստի, հանգամանքների պարզումն իրավակիրառական պրակտիկայի խնդիր է: Այն չի կարող ընկալվել խիստ տարածական, քանի որ վիճարկվող հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում օրենսդիրը հստակեցրել է անձին «վիրավորանք» հասցնելու եւ (կամ) «գրպարտելու», այսինքն՝ որոշակի նպատակային գործողություններ կատարելու նորմատիվ-նկարագրական հատկանիշները, որոնցից միանշանակ բխում է, որ այդ գործողությունները պետք է կատարվեն իրականությանը չհամապատասխանող **փաստացի տվյալները**, կամ «խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու» նպատակ հետապնդող արտահայտությունը **հրապարակայնորեն**, այդ թվում՝ նաեւ լրատվության միջոցով ներկայացնելով: Ակնհայտ է, որ վեճի առարկա հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է միայն **հանրության առջեւ, առնվազն երրորդ անձի ներկայությամբ անձին հանիրավի անվանարկելու հետեւանքների հաղթահարմանը**: Իր կարեւորությամբ հանդերձ, վիճարկվող հոդվածի իրավակարգավորման շրջանակներից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը: Այդուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դա ոչ թե օրենսգրքի տվյալ հոդվածի, այլ ընդհանուր իրավակարգավորման բաց է, եւ այն հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող հոդվածի վերոհիշյալ նորմերի սահմանադրականության գնահատման տեսանկյունից, դրանք իրենց ընդհանուր իրավակարգավորիչ բովանդակությանն ու նշանակությանը համապատասխան հետապնդում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում երաշխավորված՝ ազատ խոսքի իրավունքի իրացման ողջամիտ սահմանափակման նպատակ՝ այն շրջանակներում, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության 43 եւ 47-րդ հոդվածների պահանջներից: Սակայն իրավակիրառման խնդիրն է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այս կամ այն գործողությունը որպէս «գրպարտություն» կամ «վիրավորանք» որակել նորմատիվ-նկարագրական այն հատկանիշների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի վերոհիշյալ նորմերում եւ բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջներից:

Վեճի առարկա հոդվածի նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման եւ իրավակիրառական պրակտիկայում դրանց միատեսակ ընկալման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանադրական դատարանը կարեւորում է ոչ միայն «գրպարտությունը» եւ (կամ) «վիրավորանքը» իրենց նորմատիվ նկարագրությանը հա-

մասպատասխան մեկնաբանելը, այլևս այդպիսի գործողությունների կատարման **միջոցների եւ ձեւերի** ճշմարտացի՝ իրենց իրավական դրսեւորմանը համապատասխանող գնահատումը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերի համաձայն՝ **փաստական** (կամ՝ փաստացի) **տվյալները**, դրանք **ներկայացնելու ձեւերը** (հրապարակային կամ ոչ հրապարակային) եւ դրանց հիմնավորվածությունը գնահատելն անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության յուրաքանչյուր գործով ունի իրավական առանձնահատուկ կարեւորություն՝ որոշելու համար, թե որոշակի գործողությունների արդյունքում խախտվե՞լ են, արդյոք, ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, եւ անհրաժե՞շտ է, արդյոք, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում կիրառել վիճարկվող հոդվածում պատասխանատվություն նախատեսող նորմերը:

Այս առումով, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր պրակտիկայում **հստակ տարբերակում է կատարել փաստական տվյալների եւ գնահատողական դատողությունների միջև**: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որ գրպարտությանն առնչվող իրավակարգավորումը **պետք է հստակ տարանջատում կատարի գնահատողական դատողության եւ փաստերի միջև**, որպեսզի բացառվի Կոնվենցիայի 10-րդ հոդվածին հակասող որոշումների ընդունումը:

Ելնելով վիճարկվող նորմերում արարքի, որպես «գրպարտություն» եւ (կամ) «վիրավորանք» որակելու (գնահատելու) վերաբերյալ վերոհիշյալ միջազգային իրավական չափորոշիչների բովանդակությունից եւ դրանց ճշգրիտ կիրառման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում դատարաններն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող գործողությունների փաստը քննելու յուրաքանչյուր գործով չպետք է կիրառեն նորմատիվ մեկնաբանության հայեցողական այնպիսի ազատություն, որի արդյունքում միակերպ չտարանջատվի **փաստը** (փաստացի տվյալը) եւ **գնահատողական դատողությունը**, հակառակ դեպքում չի կարող արդար, հիմնավոր եւ սահմանադրականության տեսանկյունից իրավական համարվել վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ ազատ խոսքի ամեն մի սահմանափակում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ չնայած ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի նորմատիվ պահանջից բխող պաշտպանության իրավունքն անվերապահ կիրառելի է բոլոր, այդ թվում հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, այնուամենայնիվ, այդ անձինք, ինչպես նաեւ ՀՀ դատարանները պետք է ընդունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց անձնական իրավունքներն օբյեկտիվորեն ենթարկվում են խախտվելու ավելի մեծ ռիսկի, քան մասնավոր անձանց իրավունքները: Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նվազ սահմանափակումներ է նախատեսում քաղաքական խոսքի եւ հանրային հետաքրքրության հարցերի շուրջ բանավեճի առնչությամբ: **Հասարակական եւ քաղաքական (հանրային) գործիչների դեմ ուղղված քննադատության սահմաններն առավել լայն են**, քան մասնավոր անձանց դեպքում: Ի տարբերություն վերջինների՝ հասարակական եւ քաղաքական գործիչների գործունեությունն ավելի հրապարակային է, ուստի ավելի մեծ հանդուրժողականություն է պահանջում: Դա բխում է նաեւ ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 5-րդ հոդվածների սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունից, քանի որ ժողովրդաիշխանությունն իրականացվում է նաեւ հանրային ծառայության միջոցով, եւ

այդ ծառայությունը կրող անձանց հանրային եւ մասնավոր վարքագիծն օբյեկտիվորեն կարող է հասարակական քննարկման առարկա դառնալ:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ հանրային գործիչների առնչությամբ «գրպարտություն» պարունակող նյութի հրապարակումը չի կարող դիտարկվել որպես ողջամիտ կամ իրավաչափ, բացառությամբ այն դեպքերի, երբ.

1. ապացուցվում է, որ առկա էին ողջամիտ հիմքեր՝ վստահելու տեղեկատվության իսկությանը,

2. ապացուցվում է, որ ձեռնարկվել են տեղեկատվության իսկությունն ստուգելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները, ներկայացվել են տեղեկատվության ստուգման հնարավորության ամբողջական սահմանները,

3. գրպարտություն պարունակող նյութը հրապարակող անձը հիմք ուներ վստահելու տեղեկատվության իսկությանը:

Նման նյութի հրապարակումը չի կարող որակվել որպես ողջամիտ կամ իրավաչափ, եթե նման տեղեկատվություն տարածողը չի ստուգել դրա իսկությունը՝ շահագրգիռ անձին հարցում կատարելու միջոցով, եւ խուսափել է հրապարակել այդ անձի դիրքորոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհնարին է եղել կամ ակնհայտ է, որ դրա անհրաժեշտությունը չկա:

Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ տեղեկատվության հրապարակման դրդապատճառների ուսումնասիրությունը մեծ կարեւորություն ունի յուրաքանչյուր կոնկրետ գործով տեղեկատվության հրապարակման իրավաչափության եւ համապատասխան արարքի (գործողության) իրավաբանական որակման հարցը գնահատելիս: Չի կարող իրավաչափ համարվել այն գործողությունը, որն ի սկզբանե նպատակ է հետապնդել վնաս պատճառել անձին, կամ երբ տեղեկություններ տարածողն անվտանգություն է դրսեւորել՝ չստուգելով դրանց իսկությունը:

Վիճարկվող հոդվածի սահմանադրականության գնահատման տեսանկյունից կարեւոր է նաեւ դրանում կարգավորվող հարաբերությունների շրջանակներում բացահայտել անձի իրավական **պատասխանատվությունը բացառող հանգամանքների**, ինչպես նաեւ այդպիսի պայմանների բացակայության դեպքում՝ հնարավոր **իրավական հետևանքների** որոշակիությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերում սահմանված են այդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում քաղաքացիաիրավական պատասխանատվությունը բացառող հանգամանքները: Դրանց իրավական բովանդակության վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը «գրպարտություն» կամ «վիրավորանք» չի համարում այն փաստացի տվյալները, որոնք.

- տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտություններում կամ ապացույցներում,

- պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները,

- այն բխում է գրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

Միաժամանակ, վերոհիշյալ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվ-

յալները լրատվամիջոցով տարածած տեղեկատվության, այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթի, հեղինակային որեւէ այլ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են:

Վերոհիշյալ իրավապայմանների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ անձին գրպարտելու եւ (կամ) վիրավորելու հիմքով պատասխանատվությունը բացառվում է՝ ելնելով տվյալ գործի եւ փաստերի ներկայացման հանգամանքներից: Գրանք իրենց բնույթով սահմանադրականության խնդիր չեն հարուցում, սակայն իրավակիրառական պրակտիկայում ենթակա են հանգամանալի ուսումնասիրման եւ որպես այդպիսիք՝ գնահատման:

Անդրադառնալով «գերակա հանրային շահ», ինչպես նաեւ տվյալների «**հավասարակշռված եւ բարեխղճորեն ներկայացում**» եզրույթների իրավական որոշակիության խնդրին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյոք **հասարակության տեղեկացված լինելու շահը** գերակա է եղել տեղեկություն հայտնաձևելու անձի վրա դրված պարտականության ու պատասխանատվության համեմատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մասնուլիս թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» (“watchdog”) իր գործառույթը եւ տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ: Ըստ այդ դատարանի դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի «**անհետաձգելի հասարակական պահանջ**» առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը **հավասարակշռված եւ բարեխղճորեն**՝ առանց չարամիտ, անձին անվանարկող դիտավորության:

9. Վիրավորանքի կամ գրպարտության համար պատասխանատվությունը՝ անկախ դրա բնույթից ու չափից, **հանդիսանում է միջամտություն անձի արտահայտվելու ազատությանը**: Նման ձեռով արտահայտվելու ազատությանը միջամտության եւ այդ միջամտությամբ հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի) միջեւ արդարացի հավասարակշռությունը պայմանավորող գործոն է, ի թիվս այլնի, վիրավորանքի կամ գրպարտության համար սահմանվող պատասխանատվության համաչափությունն անձի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասին: Այս առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պահանջում է, որպեսզի վիրավորանքի կամ գրպարտության համար սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ: **Արտավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի գրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից**: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում:

Վիրավորանքի կամ գրպարտության համար սահմանվող փոխհատուցման չափի եւ անձի համբավին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջեւ համաչափության պահանջը հավասարապես ուղղված է եւ՝ օրենսդրին, եւ՝ իրավակիրառողին:

Օրենսդիրն այս պահանջն առաջադրում է համաչափության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական երաշխիքներ սահմանելու խնդիր: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հոդվածում նշված խնդրի լուծմանն են ուղղված առանձին դրույթներ: Մասնավորապես, օրենսդիրը բոլորովին այլ իրավահարաբերության հարթություն է տեղափոխել գրպարտության կամ վիրավորանքի հետևանքով պատճառված **գույքային վնասի** խնդիրը եւ դատարաններին իմպերատիվ պահանջ է ներկայացնում՝ **այն հաշվի չառնել վիճարկվող հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս (մաս 11):** Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ, մի կողմից, մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառական պրակտիկայում **չպետք է շփոթել գույքային վնասի հետ, մյուս կողմից՝ այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ:** Հակառակ պարագայում, ինչպես նշվեց, կիմաստագրկվի գրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը:

Օրենսդիրը վիճարկվող հոդվածի 11-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով իրավակիրառողից պահանջում է նաեւ փոխհատուցման չափը սահմանելիս հաշվի առնել **վիրավորանքի կամ գրպարտության եղանակը եւ տարածման շրջանակը, ինչպես նաեւ վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրությունը:** Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գույքային դրությունը հաշվի առնելու պահանջը, մասնավորապես, ենթադրում է.

- հաշվի առնել պատասխանողի եկամուտների չափը,
- թույլ չտալ պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար:

Այդ նպատակով է, որ օրենսդիր կողմից ոչ թե փոխհատուցման որեւէ որոշակի չափ է սահմանվել, այլ նախատեսվել է **մինչեւ** որոշակի մեծություն, որպեսզի գործի հանգամանքներից ելնելով դատարանը կոնկրետացնի փոխհատուցում կիրառելու ենթակա չափը:

Այսպիսով, անձի պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի դիմաց քաղաքացիաիրավական պատասխանատվությունն նախատեսելիս օրենսդիրը հստակ տարանջատել է «փոխհատուցման» եւ «գույքային վնասի» ինստիտուտները: Այն ունի սկզբունքային նշանակություն վիճարկվող իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից՝ ելնելով նաեւ դիմող կողմի համապատասխան փաստարկներից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող 1087.1-րդ հոդվածում փոխհատուցման եւ գույքային վնասի հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերի համակարգային վերլուծությունից հետեւում է, որ

- **փոխհատուցման** պահանջն անձի՝ իր պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորող գործողություններից դատական կարգով պաշտպանվելու՝ օրենքով նախատեսված միջոց է,
- **գույքային վնասը**՝ վիրավորանքի կամ գրպարտության հետեւանքով անձի կրած նյութական բնույթի գրկանքներն են, կորուստը, այդ թվում՝ դատական ծախսերը, խախտված իրավունքների վերականգնման համար կատարված ողջամիտ ծախսերը, որոնք համապատասխան փաստերով դատարանում ենթակա են հիմնավորման եւ վերականգնման,

- **փոխհատուցման չափը** որոշում է դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի առանձ-

նահատկություններից, այդ թվում՝ վիրավորանքի կամ գրպարտության եղանակից եւ տարածման շրջանակից, ինչպես նաեւ վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրույթ-  
յունից,

- **փոխհատուցման**, ինչպես եւ՝ **գույքային վնասի** հատուցման հարց դատարանը քննում է բացառապես այն անձի պահանջով, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է,

- **փոխհատուցման** չափը որոշելիս դատարանը հաշվի չի առնում վիրավորանքի կամ գրպարտության հետեւանքով անձին պատճառված գույքային վնասը:

Այսպիսով, տարբեր են փոխհատուցման եւ գույքային վնասի հետ կապված հարա-  
բերությունների իրավակարգավորման առարկան, սկզբունքներն ու նպատակները: Դրանք որոշակի են եւ իրենց իրավական բովանդակությամբ հետապնդում են իրավա-  
չափ եւ սահմանադրորեն արդարացի նպատակներ՝ պաշտպանելու ՀՀ Սահմանադրու-  
թյան 14-րդ, 27-րդ եւ 47-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի իրավունքներն ու  
ազատությունները ոչ իրավաչափ ոտնձգություններից եւ վերականգնելու դրանք:

Սահմանադրական դատարանը փոխհատուցման չափի համաչափությունն ապա-  
հովելու կարեւոր երաշխիք է համարում նաեւ վիճարկվող հոդվածում փոխհատուցման  
նվազագույն չափի օրենսդրական ամրագրման բացակայության եւ առավելագույն չա-  
փի ամրագրման առկայության հանգամանքը: Առանձնապես կարեւորվում է նաեւ այն  
հանգամանքը, որ վիճարկվող հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերը, ի լրումն փոխհատուցման  
նյութական ձեւի, նախատեսում են նաեւ փոխհատուցման ոչ նյութական ձեւեր:

Ինչ վերաբերում է փոխհատուցման՝ վիճարկվող հոդվածով սահմանված առա-  
վելագույն չափին, ապա սահմանադրական դատարանն ընդգծելով, որ կոնկրետ չա-  
փի սահմանումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է, միաժամանակ հաշվի  
առնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Ջրպարտության  
ապաքրեականացման վերաբերյալ 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1577(2007) բանա-  
ձեւի առաջարկը՝ սահմանել ողջամիտ առավելագույն սահման գրպարտության գոր-  
ծերով վնասի փոխհատուցման գումարի չափի առումով, այնպես, որպեսզի  
չվտանգվի **պատասխանատու մամուլի** կենսունակությունը, **նպատակահարմար է  
համարում օրենսդրի կողմից ընկալելու առավելագույն սահմանի վերանայումը՝  
նվազեցման միտումով, որպեսզի այն գործնականում բացառի արտահայտվելու  
ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը:** Նման եզրահանգումը  
պայմանավորված է ոչ միայն իրավակիրառական պրակտիկայում տեղ գտած մի-  
տումներով, այլեւ այն իրողությամբ, որ Հայաստանում փոխհատուցման վերին սահ-  
մանի եւ բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի  
հարաբերակցությունն ավելի մեծ է, քան Եվրախորհրդի անդամ որոշ երկրներում,  
որոնք որդեգրեցին վիրավորանքի եւ գրպարտության ապաքրեականացման մոտե-  
ցումը: Ի դեպ, այդ երկրներում մույնպես, պրակտիկ փորձից ելնելով, օրենսդրական  
նոր հստակեցումներն օրակարգի հարց են դարձել: Մասնավորապես, Բուլղարիա-  
յում փորձ է արվում փոխհատուցման չափը հարաբերակցության մեջ դնել եկամուտ-  
ների որոշակի սանդղակի հետ: Օրենսգրքի վեճի առարկա հոդվածի հետագա  
բարելավումները պետք է կարեւորեն նաեւ դատական հայեցողության շրջանակնե-  
րում փոխհատուցման չափը որոշող չափանիշների հնարավոր առավել հստակեց-  
ման անհրաժեշտությունը, նորմատիվ պահանջ առաջադրեն ոչ գույքային վնասի  
համար փոխհատուցման պահանջի չափը հիմնավորող փաստարկներ ներկայաց-  
նելուն, հաշվի առնեն այս հիմնահարցի իրավակարգավորման վերաբերյալ միջազ-  
գային զարգացումների արդի միտումները:

Անդրադառնալով վիճարկվող հողվածով կարգավորվող հարաբերությունների շրջանակներում անձին իրավական պատասխանատվության ենթարկելու եւ դրա իրավական հետեւանքների սահմանադրաիրավական որոշակիութեանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոթվարկյալ հանգամանքներն իրենց բնույթով հետապնդում են ողջամիտ եւ սահմանադրաիրավական նպատակ, քանի որ կոչված են երաշխավորելու.

- պատասխանատվության անխուսափելիությունը խոսքի ազատության անիրավաչափ չարաչափման դրսեւորումների դեպքում,

- դատական քննութեան շրջանակներում պարտավորեցնում են հաշվի առնել իրավաբանորեն գնահատման ենթակա արարքի կատարման հանգամանքները, եղանակը, մեղավոր անձի գույքային դրոշմները, ինչպէս նաեւ այդ արարքի արդյունքում հասցված վնասի բնույթն ու չափը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող հողվածի 11-րդ մասի դրույթների կիրառման խնդրում գործը քննող դատարանի հայեցողութեան շրջանակները բացարձակ չեն եւ սահմանափակված են հետեւյալ նախապայմաններով.

- եթէ անձը գրպարտվել կամ նրան վիրավորանք է հասցվել զանգվածային լրատվութեան միջոցի օգտագործմամբ, ապա խնդրի իրավական լուծումը պետք է երաշխավորվի խոսքի ազատութեան իրավունքի իրավաչափ իրացման սահմաններում,

- գրպարտութեան կամ վիրավորանքի համար սահմանված վնասի փոխհատուցումը պետք է լինի ողջամտորեն համաչափ՝ անձի պատվին, արժանապատվութեանը կամ գործարար համբավին հասցված վնասի համեմատ,

- կոնկրետ վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրոշմունից ելնելով դատական կարգով նյութական փոխհատուցման չափի սահմանման դեպքում պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ իր մեծութեամբ այն չհանգեցնի մեղավոր անձի սնանկութեան կամ էականորեն չխաթարի նրա բնականոն գործունեությունը:

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննութեան առարկա հողվածի սահմանադրաիրավական բովանդակութեան ճիշտ ընկալման ու դրանում ամրագրված նորմերի՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակութեանը եւ Հայաստանի Հանրապետութեան ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ կիրառումն ապահովելու նպատակով ՀՀ դատական պրակտիկայում պետք է առաջնորդվել նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով, համաձայն որի՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարել դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննութեան ժամանակ, բացառութեամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Այս հարցում սկզբունքային նշանակություն ունեն նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանութեան մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածի պահանջներից բխող ՀՀ միջազգային պարտավորությունները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագործութեան ճանաչման վերաբերյալ:

Նկատի ունենալով վերոնշյալը եւ կրկին կարեւորելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ծանրակշիռ պրակտիկան քննութեան առարկա հիմնախնդրի առնչութեամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանն սկզբունքային է համարում այդ դա-

տարանի, մասնավորապես, ներքոհիշյալ նախադեպային դիրքորոշումները, որոնք իրավակիրառական պրակտիկայում հետետողականորեն հաշվի առնելու դեպքում կապահովվի վեճի առարկա հողվածի դրույթների կիրառումը՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան: Դրանք են.

- «Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքն է. համաձայն 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այն կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ եւ չեզոք, այլ նաեւ նրանց, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն պատճառում: Արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, եւ ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի» (Thorgier Thorgeirson v. Iceland, 1992թ. մայիսի 28-ի վճիռ, կետ 63):

- «...թեւեւ զանգվածային լրատվամիջոցները չպետք է անցնեն այն սահմանները, որոնք դրվում են ի շահ մասնավոր անձանց հեղինակության պաշտպանության, նրանց վրա է դրված հասարակական հետաքրքրության հարցերի վերաբերյալ տեղեկատվություն եւ գաղափարներ տարածելու պարտականությունը: Մամուլը ոչ միայն ունի տեղեկատվություն եւ գաղափարներ տարածելու խնդիր, այլ նաեւ հասարակությունն ունի դրանք ստանալու իրավունք: Հետեւաբար, որոշելու համար, թե արդյոք միջամտությունը հիմնվել է այնպիսի բավարար հիմքերի վրա, որոնք միջամտությունը դարձրել են «անհրաժեշտ», հարկ է հաշվի առնել գործի հանրային նշանակության հանգամանքը» /**Bladet Tromso and Stensaas v. Norway, 1999թ. մայիսի 20-ի վճիռ, կետ 62**/:

- «Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, այնուամենայնիվ, չի երաշխավորում ամբողջովին անսահմանափակ արտահայտվելու ազատություն նույնիսկ մամուլի այն հրապարակումների առնչությամբ, որոնք վերաբերում են լուրջ հանրային հետաքրքրության խնդրի: Ըստ 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այս իրավունքի իրացումը ենթադրում է «պարտավորություններ եւ պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաեւ մամուլի նկատմամբ: Արտահայտվելու ազատությունն իրացնելիս «պարտավորությունները եւ պատասխանատվությունը» ենթադրում են, որ ընդհանուր հետաքրքրության խնդիրների մասին տեղեկություններ հայտնելու կապակցությամբ լրագրողներին 10-րդ հոդվածով տրամադրվող պաշտպանությունը ենթակա է այն նախապայմանին, որ լրագրողները գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու համար ճշգրիտ եւ վստահելի տեղեկատվություն՝ լրագրողական էթիկայի նորմերին համապատասխան» /նույն գործով, կետ 65/:

- Անհրաժեշտ է ուշադիր տարբերակում կատարել փաստերի եւ գնահատողական դատողությունների միջև: Փաստերի գոյությունը կարող է հիմնավորվել, ապացուցվել, մինչդեռ գնահատողական դատողությունների ճշմարտացիությունը ենթակա չէ ապացուցման (Lingens v. Austria, 1986թ. հուլիսի 8-ի վճիռ, կետ 46): Անհնարին է իրականացնել գնահատողական դատողությունն ապացուցելու պահանջը, եւ վերջինս ինքնին խախտում է արտահայտվելու ազատությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կարող է կախված լինել նրանից, թե արդյոք առկա է բավարար փաստական հիմք տվյալ հայտարարության համար, քանզի նույնիսկ գնահատողական դատողությունն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված լինել (**Busuioc v. Moldova, 2004թ. դեկտեմբերի 21-ի վճիռ, կետ 61**):

- Փաստերի քննադատական գնահատականը... չի կարող բարոյական վնասի փոխհատուցման պահանջի բավարարման հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բա-



րի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ արատավորող հայտարարությունը գնահատողական դատողություն է, դատարանը կարող է սահմանել ոչ նյութական վնասի փոխհատուցում (**Ukrainian Media Group v. Ukraine, 2005թ. մարտի 29-ի վճիռ, կետ 61**):

- «...Համաձայն Կոնվենցիայի՝ զրպարտության համար սահմանված փոխհատուցումը պետք է համամասնության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ (*Steel and Morris v. United Kingdom, 2005թ. փետրվարի 15-ի վճիռ, կետ 96*):

-« Զրպարտչական արտահայտությունների ճշմարտացիությունն ապացուցելու բեռը պատասխանողի վրա դնելն սկզբունքորեն անհամատեղելի չէ 10-րդ հոդվածի հետ: ...հատուկ հիմքեր են անհրաժեշտ լրատվամիջոցին, որպեսզի նա ազատվի փաստական տվյալների ստուգման պարտականությունից» (**Steel and Morris v. United Kingdom, 2005թ. փետրվարի 15-ի վճիռ, կետ 93**):

11. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 եւ 47-րդ /1-ին մաս/ հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ եւ մի շարք այլ վճիռների հիման վրա ձեւավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների, «Ձանգվածային լրատվության մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետեւում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետեւյալ սկզբունքային մոտեցումները.

- նկատի ունենալով, որ զրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին եւ լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**

- վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, եւ «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,

- «զրպարտություն» եւ «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,

- չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար եւ նպաստել հասարակության համար կարեւոր հարցերի շուրջ քննարկումներին,

- մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,

- ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,

- պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, եւ արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաեւ հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

- նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաեւ մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,

- արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձեւերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, եւ նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,

- վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,

- ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,

- փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,

- լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,

- փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստակամության բացակայությունը,

- լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

- հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

- անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնաս

սը մեղմելու համար արդյո՞ք հայցվել է օգտագործվել են արտադատական հատուցման ձեւերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,

- պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ է աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

- պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը եւ այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունից են բխում այս մոտեցումները, որոնք պետք է հետետողական ու համակարգային ընդգրկմամբ հաշվի առնվեն իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաեւ դրվեն օրենսդրական հետագա զարգացումների հիմքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխող սահմանադրաիրավական բովանդակության եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 նոյեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 997**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ՀԵՆՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 82-ՐԳ  
ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Թ» ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. երեւան**

**22 նոյեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմող Հ. Պողոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Հենրիկ Պողոսյանի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Հ. Պողոսյանի՝ 02.09.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մնանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ից: Օրենքն ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ուժը կորց-

րած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Չապահովված պահանջների բավարարման հերթականությունը» վերտառությամբ 82-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը սահմանում է. «Պարտատերերի չապահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝ ... բ) պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջները»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 23.06.2011թ. ՀՕ-235-F ՀՀ օրենքով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 82-րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասում «Պարտատերերի պահանջներ» բառակապակցությունը փոխարինվել է «Պարտատերերի չապահովված պահանջներ» բառակապակցությամբ:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ ՀՀ տնտեսական դատարանի 18.05.2007թ. վճռով «Սպիտակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ: Դիմողը, հանդիսանալով «Սպիտակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 92.3%-ի սեփականատերը, ելակետ ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 82-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, դիմել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան եւ խնդրել գրանցել իր՝ «Սպիտակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ-ում ունեցած բաժնետոմսերի չափին համապատասխան պահանջ՝ 17.537.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 11.04.2011թ. որոշմամբ ներկայացված պահանջը մերժել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 17.06.2011թ. որոշմամբ դիմողի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.04.2011թ. որոշումը թողել օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 10.08.2011թ. որոշմամբ, վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը հակասում է՝

- ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված իրավական պետության սկզբունքի կարեւորագույն տարր հանդիսացող իրավական որոշակիության սկզբունքին, ըստ որի՝ օրենքը պետք է լինի իրավական՝ բավականաչափ մատչելի, ձեւակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական եւ ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը: Սակայն օրենսդիրը, նախատեսելով «պահանջներ» եզրույթը, օրենսդրորեն որեւէ կերպ չի հստակեցրել դրանց իրավական սահմանները եւ ամրագրել այն պահանջների շրջանակը, որոնք տվյալ հերթում կարող են ներկայացվել պարտապան իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) կողմից,

- ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերին՝ այն հիմնավորմամբ, որ վիճարկվող իրավադրույթն իր իրավական անհստակությամբ խախտել է դիմողի իրավունքները՝ առկախելով դրանց իրացումը,

- ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասին՝ այն հիմնավորմամբ, որ իրավանորմն իր անորոշ իրավական բովանդակությամբ եւ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ արգելք է հանդիսանում անձի **սեփակա-**

**նության իրավունքի** անարգել իրացման համար, քանի որ օրենսդրորեն պարտապան իրավաբանական անձի բաժնետիրոջ պահանջի գրանցման իրավունքի իրականացումը պայմանավորվել է մի իրավաբանական փաստով, այն է՝ համապատասխան պարտավորության առկայությամբ, այն պարագայում, երբ դա խնդրո առարկա հերթի պայմաններում օբյեկտիվորեն անհնարին է, ինչը հանգեցրել է սեփականության իրավունքի խախտմանը,

- ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավահավասարության սկզբունքին՝ այն հիմնավորմամբ, որ վիճարկվող իրավանորմում առկա անորոշությունը եւ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը հնարավորություն չեն տալիս հստակ եւ միանշանակ հետետություն անել այն մասին, թե խնդրո առարկա հերթում պարտապան իրավաբանական անձի բաժնետերերն ինչպես կարող են իրացնել օրենսդրորեն իրենց վերապահված իրավունքը, ինչը կարող է հիմք հանդիսանալ եւ հանդիսացել է սույն գործով իրավակիրառական պրակտիկայում այդ նորմի խիստ հակասական եւ կամայական մեկնաբանության, ինչը կհանգեցնի անձանց իրավահավասարության սահմանադրական սկզբունքի խախտմանը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Անդրադառնալով դիմողի՝ իրավական անորոշության վերաբերյալ փաստարկներին՝ պատասխանողը գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ օրենքի իմաստով կարելու է ոչ թե «պահանջներ» եզրույթի սահմանումը, այլ կարելու են դրա այն տեսակների սահմանումները, որոնք օգտագործվում են կոնկրետ իմաստներով: Իր՝ վերը նշված հակափաստարկը հիմնավորելու համար պատասխանողը վկայակոչում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 44-րդ, 82-րդ եւ 83-րդ հոդվածները, որոնք վերաբերում են «ապահովված պահանջներ», «չապահովված պահանջներ», «ստորադաս չապահովված պահանջներ» բառակապակցությունների սահմանմանը եւ չապահովված պահանջների բավարարման հերթականությանը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ իր կողմից վկայակոչված հոդվածների հիման վրա պատասխանողը գտնում է, որ օրենքում հստակ սահմանված են պարտատերերի պահանջների շրջանակը, պահանջների տեսակների սահմանումները, ապահովված պահանջների բավարարման առանձնահատկությունները, ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները, պահանջների բավարարման հերթականությունը, չապահովված պահանջների առաջնահերթությունը, իսկ «պահանջներ» եզրույթի բովանդակային կողմի սահմանված չլինելու հանգամանքը, ընդհակառակը, հնարավորություն է տալիս դիմողին ներկայացնել ցանկացած պահանջ: Այլ հարց է, որ օրենքը հստակ սահմանում է, թե որ պահանջները կարող են բավարարվել սնանկության վարույթի ընթացքում եւ ինչ հերթականությամբ:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերին, 8-րդ հոդվածի 1-ին մասին եւ 14.1-րդ հոդվածի 1-ին մասին հակասության հետ, պատասխանողը գտնում է, որ դրանք եւս անհիմն են:

Արձանագրելով, որ ընկերության բաժնետերերի բաժնետոմսերը հանդիսանում են ընկերության գույքի մի մասը, ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, ընկերության մասնակիցն իր ներդրած ավանդի սահ-

մաններում կրում է ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը, այդ թվում՝ ընկերության սնանկության հետ կապված ռիսկերը, պատասխանողը գտնում է, որ իրավաբանական անձի լուծարման գործընթացում բաժնետերերն իրենց պատկանող բաժնետոմսերի անվանական արժեքը չեն կարող դիտարկել որպես իրավաբանական անձի նկատմամբ պահանջ, քանի որ դա կիմաստազրկի «իրավաբանական անձ» ինստիտուտի նշանակությունը:

Միաժամանակ, պատասխանողը, արձանագրելով հիմնադրի՝ բաժնետիրական ընկերության կապիտալում իր ռիսկով մասնակցության, ընկերության պարտավորությունների դիմաց իր մասնաբաժնի չափով գույքային պատասխանատվություն ստանձնելու եւ, հետեւաբար, անողակիտրեն պարտապան հանդիսանալու հանգամանքները, բնական է համարում այն հանգամանքը, որ ընկերության հիմնադրի պահանջները բավարարվում են ամենավերջին հերթում՝ բոլոր պարտատերերի պահանջները լրիվ բավարարելուց հետո մնացած գույքի արժեքի սահմաններում:

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական ակտերը չեն բացառում բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց՝ ընկերության հետ պարտավորական իրավահարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը եւ դրա վրա հիմնված՝ **մինչեւ լուծարման գործընթացի ավարտը** պահանջներ ներկայացնելու իրավունքը: Պարզապես տարբեր են պահանջների բնույթները. ի տարբերություն մյուս պարտատերերի, այս փուլում բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց պահանջի իրավունքը սահմանափակված է, ի թիվս այլնի, շահութաբաժիններ ստանալուն, ընկերության կողմից վնաս պատճառելուց ծագող համապատասխան պահանջի բավարարմանը, պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունք ստանալուն ուղղված, ինչպես նաեւ բաժնետիրական ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ) կողմից լուծարվող ընկերությանը վարկ կամ փոխառություն տրամադրելուց ծագող փոխադարձ իրավունքների եւ պարտականությունների շրջանակով:

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում հետեւյալ հանգամանքները.

ա/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն. «Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետեւանքով եւ սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից»,

բ/ պարտավորությունների ծագման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված «այլ հիմքերից» մեկն էլ ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն. «Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են տնտեսական ընկերակցությունները եւ ընկերությունները»,

գ/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 72-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով բաժնետիրական ընկերությունները հանդիսանում են տնտեսական ընկերություններ, այսինքն՝ բաժնետիրական ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) ունի ընկերության նկատմամբ պարտավորական իրավունքներ եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ պարբերության ուժով մինչեւ լուծարման գործընթացի ավարտը նրանք մյուս պարտատերերի հետ մեկտեղ կարող են պահանջ ներկայացնել բաժնետիրական ընկերությանը,

դ/ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով բաժնետոմսն առաջացնում է ընկերության նկատմամբ բաժնետիրոջ **պարտավորական իրավունք**, իսկ նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» եւ «ժ» ենթակետերի եւ 40-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից բխում է, որ այդ պարտավորական իրավունքը սահմանափակվում է, ի թիվս այլնի, շահութաբաժիններ ստանալուն, ընկերության կողմից վնաս պատճառելուց ծագող համապատասխան պահանջի բավարարմանը, պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունք ստանալուն ուղղված, ինչպես նաեւ բաժնետիրական ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ) կողմից լուծարվող ընկերությանը վարկ կամ փոխառություն տրամադրելուց ծագող փոխադարձ իրավունքների եւ պարտականությունների շրջանակով:

Այլ խնդիր է պահանջների բավարարման հերթականությունը: Բոլոր դեպքերում պահանջների բավարարման հերթականություն սահմանելիս օրենսդիրը որպես ելակետ է ընդունել հետեւյալ հանգամանքները.

ա/ ընկերության կանոնադրական կապիտալն ուղղված է ընկերության **պարտատերերի** շահերի երաշխավորմանը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետ), այսինքն՝ նախ եւ առաջ, բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) **չհանդիսացող անձանց** շահերի երաշխավորմանը,

բ/ ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) իր ներդրած ավանդի սահմաններում կրում է ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը, այդ թվում՝ ընկերության սնանկության հետ կապված ռիսկերը,

գ/ ընկերության մյուս պարտատերերը, ի տարբերություն ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ), չեն հանդիսանում ընկերության կազմակերպակառուցվածքային տարր եւ պարտավորված չեն կրելու ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը, այդ թվում՝ ընկերության սնանկության հետ կապված ռիսկերը:

6. Անդրադառնալով դիմողի դիրքորոշումներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության եւ դրա արդյունքում՝ սեփականության իրավունքի խախտման հետ, սահմանադրական դատարանը դրանք հիմնավոր չի համարում այն պատճառաբանությամբ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 44-րդ եւ 83-րդ հոդվածներով «ապահովված պահանջներ», «չապահովված պահանջներ» եւ «ստորադաս չապահովված պահանջներ» բառակապակցությունների սահմանումները, **պարտատիրոջ պահանջի, ինչպիսին էլ որ այն լինի, իրավունքը** եւ այդ պահանջի իրացման կարգն ամրագրված լինելու պարագայում չի առաջանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքում «պահանջներ» եզրույթի սահմանման անհրաժեշտություն, եւ դրա բացակայությունը որեւէ իրավական հետեւանք չի կարող առաջացնել:

Օրենքի վիճարկվող դրույթի հետեւանքով սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընկերության բաժնետերերի կողմից ձեռք բերված բաժնետոմսերի համար վճարված գումարները, ինչպես նաեւ ընկերության հիմնադրման գործում ներդրված ավանդները հանդիսանում են ընկերության գույքի մաս, եւ ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) այլեւս չի հանդիսանում բաժնետոմսերի հա-



մար իր վճարած գումարների կամ իր ներդրած ավանդի սեփականատեր: Դրանով, ինչպես նաև պարտատերերի շահերի երաշխավորման սկզբունքով է պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը եւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը բաժնետոմսերի համար վճարված գումարները կամ ներդրված ավանդը վերադարձնելու պահանջի իրավունքի իրացումը պայմանավորել են լուծարման գործընթացի ավարտով եւ այն էլ՝ ընկերության մնացած գույքով: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ տվյալ պարագայում առկա չէ պատճառահետեւանքային կապ օրենքի վիճարկվող դրույթի եւ դիմողի սեփականության իրավունքի խախտման միջեւ, իսկ համապատասխան հիմքերի բացակայությունը դիմողին զրկում է սեփականության իրավունքի խախտումը հիմնավորելու հնարավորությունից:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով նորմի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Դիմողը փորձել է դատական համապատասխան ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին, հետեւաբար՝ նման դիմումը՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով համարվում է սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարց չառաջադրող դիմում:

Վերահաստատելով իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԳԱՌ-21 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ կապված դիմումի հիմնավորված լինելու պահանջի հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Քաղաքացի Հենրիկ Պողոսյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**22 նոյեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 998**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 78-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ  
ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**29 նոյեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Մխիթարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19, 25 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դիմումի հիման վրա՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 3-րդ մասի 3-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 08.09.2011թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, ուսումնասիրելով նաեւ վեճի առարկա հարցի շրջանակներում առկա միջազգային փորձը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002թ. ապրիլի 3-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 31-ից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասը սահմանում է.

«Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական եւ ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչեւ դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող 3-րդ պարբերությունը սահմանում է.

«Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչեւ դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետետյալին. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 28.06.2010 թիվ 1001171 հանձնարարագրի հիման վրա «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների եւ հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում կազմվել է 04.10.2010թ. թիվ 1001171 ստուգման ակտը, որով որպես բացահայտված խախտում արձանագրվել է «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պահանջի խախտում: 2009թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի (21.08.2008թ., ՀՕ-149-Ն) 1-ին հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ 2000թ. հունիսի 5-ի ՀՕ-61 օրենքը:

«Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության՝ Հարկային տեսչության 04.10.2010թ. թիվ 1001171 ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչությունը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ «Հ.Ա.Թ.Ա.Կ» ՍՊԸ-ից հոգուտ պետական բյուջեի 12.045.100 դրամ բռնագանձելու պահանջով: ՀՀ վարչական դատարանն իր՝ 01.04.2011թ. վճռով հայցը բավարարել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարել է մասնակի: Դատարանի վճռի դեմ բողոք է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչությունը: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.05.2011թ. որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 06.09.2011թ. կայացրել է գործի վարույթը կասեցնելու եւ ՀՀ սահմանադրական դատարանն ղիմելու մասին որոշում:

3. Դիմողի պնդմամբ՝ իր վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում եւ 3-րդ մասի 3-րդ պարբերությունում ամրագրված դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին: Ըստ դիմողի՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին հակասելը դրսևտրվում է նրանում, որ օրենքի վիճարկվող նորմը նա-

խատեսում է իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացնող, մեղմացնող, անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող իրավական ակտերին հետադարձ ուժ տալու՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ընթացակարգից տարբերվող ընթացակարգ: Մասնավորապես, ըստ վիճարկվող նորմի՝ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ, եթե հակառակը նախատեսված չէ օրենքով կամ այդ իրավական ակտով, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ վերոնշյալ ակտերն ունեն հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության մեջ ամրագրված նորմի առնչությամբ դիմողը գտնում է, որ այդ նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն որոշակիորեն կապված է նույն հոդվածի՝ վիճարկվող 2-րդ մասի հետ, քանզի այն ամրագրելով «սույն օրենքին» հասկացությունը՝ կիրառելի է դարձնում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնը:

4. Պատասխանող կողմն ըստ էության չի առարկում դիմող կողմի փաստարկներին՝ ընդունելով, որ առկա է անհամապատասխանություն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի եւ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի միջեւ: Պատասխանող կողմը մնան անհամապատասխանությունը բացատրում է նրանով, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի այս նորմն ընդունվել է մինչեւ 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունները, իսկ մինչ այդ ՀՀ Սահմանադրությունն անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերի հետադարձ ուժի վերաբերյալ իրավակարգավորում չէր նախատեսում: Միեւնույն ժամանակ, պատասխանող կողմը վիճարկվող նորմը ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասին չհամապատասխանեցնելու հանգամանքը պատճառաբանում է նրանով, որ Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը թույլ է տալիս ապահովել նշված սահմանադրական նորմի անմիջական գործողությունը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ այդ նորմի՝ Սահմանադրությանը հակասելն անմիջականորեն բխում է նույն հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից: Հետեւաբար, վերջինս Սահմանադրությանը համապատասխանեցնելու դեպքում այդ խնդիրը կվերանա:

5. ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ քննության առարկա իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ վեճը՝ որպես այդպիսին, բացակայում է դիմող եւ պատասխանող կողմերի միջեւ, որոնք գրեթե նույն փաստարկներով արձանագրում են օրենքի նշված դրույթների անհամապատասխանությունը Սահմանադրությանը: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ սովյալ գործի քննությունը ոչ միայն էական նշանակություն կունենա ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու իրավական հստակության ապահովման տեսանկյունից, այլեւ դատական պրակտիկայի համար առավել մատչելի կդարձնի սահմանադրական նորմերի անմիջական կիրառման ինստիտուտի էությունը:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-6-րդ մասերի, ինչպես նաեւ 42-րդ հոդ-

վածի 3-րդ եւ 4-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից: Նշված ընդհանուր կանոնին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն արգելում են արարքի պատժելիություն սահմանող եւ պատիժը խստացնող օրենքի հետադարձ ուժով գործողությունը: Նույն հոդվածի 6-րդ մասն արգելում է պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքի հետադարձ ուժով գործողությունը: Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հետադարձ ուժ չունեն նաեւ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներն ու այլ իրավական ակտերը:

**Նշված ընդհանուր կանոնից բացառություն են Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասում եւ 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմերը:** Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ, տվյալ հոդվածի իրավակարգավորման տրամաբանության ու առարկայի շրջանակներում վերաբերելի է միայն արարքի համար պատիժ սահմանող օրենքներին, եւ շեղում է ընդհանուր կանոնից:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող հարաբերությունները կարգավորող սահմանադրական նորմերը եւ դրանցում ամրագրված մոտեցումները համահունչ են միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված դրույթներին: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որեւէ քրեական հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաեւ կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»: Միաժամանակ, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվ. 15), Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդվ. 7, մաս 1) եւ միջազգային իրավական այլ փաստաթղթերում եւս անդրադարձ է արվել խնդրո առարկա հարցերի կարգավորմանը՝ նախատեսելով, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող քրեական օրենքն ունի հետադարձ ուժ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի հանգամանքը պայմանավորված է Սահմանադրությամբ օժտված իրավունքի ուժով, ինչպես նաեւ ՀՀ միջազգային պարտավորություններով եւ օրենսդրի որեւէ հայեցողություն չի ենթադրում:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բացառությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ դա հանդես է գալիս որպես առավել ընդհանուր կանոն, չի վերաբերում Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորմանը, պայմանավորված է օրենսդրի հայեցողությամբ: Վերջինս իր հերթին կարող է դրսևորվել բացառապես միայն տվյալ ակտով կանոնակարգվող իրավահարաբերությունների շրջանակներում:

Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով հարկ է համարում ընդգծել նաև, որ վերոհիշյալ մոտեցումները համահունչ են միջազգային պրակտիկային: Վերջինիս համաձայն՝ որպես կանոն, անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին /բացառությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման առարկային առնչվող դեպքերի/ իրավասու մարմնի կողմից հետադարձ ուժ հաղորդելը թույլատրվում է բացառիկ դեպքերում, եւ տվյալ ակտն ընդունող մարմնի՝ այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու որոշումը պետք է հիմնվի հասարակության եւ պետության համար նման որոշման հնարավոր իրավական հետեւանքների բազմակողմանի վերլուծության եւ գնահատականի վրա:

6. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը փոխառնչվում է ոչ թե ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասի, այլ 42-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, հետեւյալ պատճառներով.

ա/ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասը եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ենթադրում են իրավաստեղծի հայեցողության առկայություն, ինչը բացառվում է Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասի պարագայում,

բ/ Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասում խոսքը վերաբերում է միայն **օրենքին**, այնինչ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը եւ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում են **բոլոր իրավական ակտերին**,

գ/ եթե Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում է «**պատժելիության**» վերացմանը կամ «**պատիժը**» մեղմացնելուն, ապա 42-րդ հոդվածի 4-րդ մասը եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում են անձի **իրավական վիճակին /դրությանը/, նրա պատասխանատվությանը:**

Հետեւաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է համահունչ ու ներդաշնակ լինի Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի իրավական տրամաբանությանը:

Միաժամանակ, անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը կանոնակարգող՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմն ունի անմիջական գործողություն եւ, ըստ այդմ, եթե ճյուղային օրենսդրությունը չի նախատեսում համապատասխան նորմ, որը սահմանում է տվյալ օրենսդրության՝ ժամանակի մեջ գործողության կանոնները կամ բովանդակում է նշված սահմանադրական նորմին հակասող նորմեր, ապա **կիրառվում է նշված սահմանադրական նորմը՝ իր անմիջական գործողության ուժով՝** համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը սահմանադրական մակարդակով կարգավորում է ինչպես անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքների, այնպես էլ այլ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը, եւ, ըստ այդմ՝ այդ դրույթը հասցեագրված է ինչպես օրենսդրին, այնպես էլ **այլ իրավաստեղծ մարմիններին:** Այդ նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական **ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում** անձի իրավական վիճակը բարելավող կամ

պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը /քննականաբար, հաշվի առնելով նաև Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջները/: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու **նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ**: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ եւ տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

Սահմանադրական դատարանը միեւնույն իրավահարաբերությունը կանոնակարգող սահմանադրական նորմի եւ օրենքի վիճարկվող նորմի համեմատական վերլուծության արդյունքներով գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմը, շեղվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման հիմքում ընկած՝ խնդրո առարկա իրավական ակտերի **հետադարձ ուժի բացակայության կանխավարկածից**, ամրագրել է այդ իրավական ակտերի **հետադարձ ուժի առկայության կանխավարկածը՝ բացառությունը դարձնելով ընդհանուր կանոն**:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ մինչեւ սույն հակասության օրենսդրորեն հաղթահարումն իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ որպես Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով անմիջականորեն գործող նորմ:

7. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վիճարկվող իրավակարգավորումն ընդունվել է մինչեւ 2005թ. սահմանադրական փոփոխությունները, երբ, ի տարբերություն գործող Սահմանադրության, նշված իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը կանոնակարգող սահմանադրական որեւէ դրույթ չէր նախատեսվում: Սահմանադրությամբ խնդրո առարկա իրավահարաբերության կանոնակարգման բացակայության պայմաններում օրենսդիրն ազատ էր այդ իրավահարաբերության ինքնուրույն կանոնակարգում նախատեսելու հարցում, եւ օրենսդրի հայեցողությանն էր թողնված ընտրությունը՝ նշված ակտերի հետադարձ ուժի առկայության կամ բացակայության կանխավարկածների միջեւ:

Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոնակարգումը Սահմանադրության մակարդակով կատարվեց միայն 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում: ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում, ի տարբերություն վիճարկվող նորմի, ամրագրվեց անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերի հետադարձ ուժի բացառության կանոնը: Նման սահմանադրական կարգավորման պայմաններում ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին կետի ուժով երկու տարվա ընթացքում անհրաժեշտ փոփոխություն պետք է կատարվեր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում, ինչը դեռեւս չի իրականացվել:

8. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունում ամրագրված դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ակտի ուժը կորցնելուց առաջ ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառվում է տվյալ ուժը կորցրած ակտը, եթե «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս դրույթը չի կարող մեխանիկորեն համադրվել նույն օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, որովհետև դրանց իրավակարգավորման առարկան այլ է: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության սահմանադրականությունը գնահատելիս առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել սահմանադրական այն ընդհանուր սկզբունքը, որ ուժը կորցնելուց հետո իրավական ակտի գործողությունն ընդհանրապես դադարեցվում է: Սակայն առկա է նաև մեկ այլ հանգամանք: Քանի որ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում հայեցողական իրավակարգավորման առարկա է, ապա բաց կարող են մնալ այնպիսի իրավիճակները, երբ տվյալ իրավական ակտը հետադարձություն չի նախատեսել, նախորդ իրավական ակտը ուժը կորցրել է, միաժամանակ նախկինում կատարած արարքի համար ի հայտ է եկել իրավական պատասխանատվության կոնկրետ խնդիր: Այս պարագայում է, որ օրենսդիրը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ «Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»: Այս ձեւակերպումից բխում է նաև, որ եթե ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով իրավական ակտի նորմի հետադարձման խնդիր է լուծվել, ապա կգործի հետադարձված նորմը: Նման իրավակարգավորումն իրավաչափ է, առանց որի օրենսդրական լուրջ բաց կարող է առաջանալ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը, սույն որոշման հիման վրա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի ուժը կորցնելու պայմաններում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**29 նոյեմբերի 2011 թվականի  
ՄԳ-Ո-1000**





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԵՐԵՎԱՆՇԻՆ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍՈՒՄՆԵՐԻ 208-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒՄՆԵՐԻ 873-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ  
ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**6 դեկտեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ «Երեւանշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչ Ֆ. Աբրահամյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Երեւանշին» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Երեւանշին» ԲԲԸ-ի՝ 22.08.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմ

մից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները» վերտառությամբ 208-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից»:

Վիճարկվող դրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում: Նույն օրն ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՕ-281-Ն ՀՀ օրենքով նույնաբովանդակ նորմ է ամրագրվել նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 47-րդ հոդվածի 4-րդ մասում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Առաքողի պատասխանատվությունը տրանսպորտային առաքման պայմանագրով» վերտառությամբ 873-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Եթե առաքողն ապացուցում է, որ պարտավորությունը խախտվել է փոխադրման պայմանագրերն անպատշաճ կատարելու հետեւանքով, ապա առաքողի պատասխանատվությունը հաճախորդի առջեւ որոշվում է նույն կանոններով, որոնցով համապատասխան փոխադրողը պատասխանատու է առաքողի առջեւ»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. «Երեւանչին» ԲԲԸ «Գյումրի» մասնաճյուղի եւ «Ալավեն» ՍՊԸ-ի միջեւ 30.07.2009թ. կնքվել է բեռնարկղերով միջազգային կոմբինացված տրանսպորտային առաքման կազմակերպման մասին պայմանագիր:

Դիմողը 08.02.2010թ. հայցադիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով «Ալավեն» ՍՊԸ-ից բռնագանձել 9.185.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնաս:

«Ալավեն» ՍՊԸ-ն 09.04.2010թ. հակընդդեմ հայց է ներկայացրել դատարան ընդդեմ դիմողի եւ դիմողի ներկայացուցիչ Ֆեոդոր Աբրահամյանի՝ խնդրելով նրանցից համապարտության կարգով բռնագանձել 7.533.179 ՀՀ դրամ:

Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 22.09.2010թ. թիվ ԵԱԳԳ/0098/02/10 վճռով հայցը մերժել է, հակընդդեմ հայցը բավարարել է մասնակիորեն, բեռը հանձնելու պահանջի մասով գործի վարույթը կարճել է:

Նշված վճռի դեմ դիմողի կողմից բերվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 23.12.2010թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է. Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2010թ. թիվ ԵԱԳԳ/0098/02/10 վճիռը բեկանել է՝ սկզբնական հայցի մասով եւ քաղաքացիական գործն այդ մասով ուղարկել է նոր քննության:

Ինչ վերաբերում է հակընդդեմ հայցին, ապա այդ մասով վերաքննիչ դատարանը որոշել է վճիռը փոփոխել՝ մերժելով հակընդդեմ հայցը:

«Ապավեն» ՍՊԸ-ն ներկայացրել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատն իր՝ 29.07.2011թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը քաղաքացիական եւ վարչական պալատներին: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2010թ. որոշման՝ հակընդդեմ հայցը մերժելու մասը բեկանվել է եւ այդ մասով օրինական ուժ է տրվել Երեսան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2010թ. թիվ ԵԱԴԴ/0098/02/10 վճռին: Որոշման մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ՝ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանություններով:

3. Վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի հակասահմանադրականությունը դրսևտրվում է հատկապես այն դեպքում, երբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, իրացնելով նույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված իր լիազորությունը, փոփոխում եւ բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը եւ կայացնում ստորադաս դատարանի դատական ակտից տարբերվող որոշում. մնան իրավիճակում անձը գրկվում է իր նկատմամբ կայացված դատական ակտը բողոքարկելու՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքն իրացնելու հնարավորությունից: Նույն իրավիճակում, դիմողի պնդմամբ, վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունն առավել ակնհայտ է դրսևտրվում, երբ անձի նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատական ակտը բարենպաստ է լինում, իսկ վերաքննիչ դատարանը փոփոխում է այդ դատական ակտը:

Դիմողը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վերաքննիչ դատարանի իրավասությունը ենթադրում է դատական սխալի վերացում, հետեւաբար, վերաքննիչ դատարանի իրավասությունը պետք է լինի՝ ուսումնասիրել եւ գնահատական տալ առաջին ատյանի դատարանում չուսումնասիրված հիմնավորումփաստարկներին: Այս կապակցությամբ դիմողը գտնում է, որ, ի վերջո, գործի արդարացի, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննության ընթացքում է հնարավոր կայացնել օրինական եւ հիմնավորված վճիռ, իսկ օրինական եւ հիմնավորված վճիռը պետք է հիմնված լինի բոլոր ապացույցների եւ փաստարկների բազմակողմանի եւ օբյեկտիվ ուսումնասիրության վրա:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասին՝ դիմողը նշում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, կիրառելով հիշյալ դրույթը, ըստ էության չի մեկնաբանել այն, ինչը հնարավորություն է տալու դատարաններին տարակերպ մեկնաբանել այդ դրույթը: Դիմողը մտավախություն է հայտնում, որ այդ դրույթի գործողության արդյունքում կարող է ստեղծվել դատական շրջապատույտ, որի հետեւանքով կարող են խախտվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված՝ ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքը:

4. Պատասխանողն առարկելով դիմողին՝ անդրադառնում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի առանձնահատկություններին՝ նշելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող նորմն ամրագրվել է ելնելով այդ առանձնահատկություններից, եւ նման նորմի ամրագրումն ինքնանպատակ չէ: Տարանջատելով «դիրքորոշում» եւ «հիմնավորում» եզրույթները՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածում խոսքը ոչ թե կարծիքի փոփոխության մասին է, որը կարող էր էական ազդեցություն չունենալ առաջին ատյանի դատարանում քննված գործի ելքի վրա, այլ դիրքորոշման այնպիսի փոփոխության մասին է, որը կարող է հանգեցնել հայցի կամ դրա վերաբերյալ ներկայացված պատասխանի, կամ ընդհանրապես գործի էության փոփոխության, ինչն անթույլատրելի է եւ չի բխում վերաքննիչ վարույթի առանձնահատկություններից:

Պատասխանողը վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ 4-րդ բաժնի նորմերը՝ գտնում է, որ վերջիններս բխում են վերաքննիչ վարույթի առանձնահատկություններից եւ կարող են լիարժեքորեն ապահովել անձի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը: Միաժամանակ, անդրադառնալով դատական ակտերի վերլուծությանը՝ պատասխանողը նշել է, որ օրենքը դատավարության մատչելիությունն ապահովելու նպատակով հայցվորի վրա պարտավորություն չի դնում տալ գործի իրավաբանական որակումը, նշել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող օրենքը կամ իրավական այլ ակտ: Դատարանն ինքն է որոշում կիրառման ենթակա օրենքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի՝ վիճարկվող 2-րդ մասի առնչությամբ պատասխանողը գտնում է, որ առաքումն ուղղակիորեն կապված է փոխադրման հետ, ուստի եւ օրենսդիրը նախատեսել է նույն փոխադրողի պատասխանատվության կանոններով հաճախորդի առջեւ առաքողի պատասխանատվության կանոնը, որպեսզի առաքողը փոխադրողի մեղքով չենթարկվի պատասխանատվության՝ առանց փոխադրողի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք ունենալու:

Պատասխանողն ընդգծում է, որ վիճարկվող նորմը բացառում է դատական շրջապտույտի առաջացումը, քանի որ հաճախորդը վնասի հատուցման պահանջի իրավունք է ձեռք բերում ոչ թե փոխադրողի, այլ առաքողի նկատմամբ: Հաճախորդին պատճառված վնասը հատուցելուց հետո միայն առաքողը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում փոխադրողի նկատմամբ:

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը գնահատել սահմանափակ վերաքննության ինստիտուտին բնորոշ առանձնահատկությունների համատեքստում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով, ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 28.11.2011թ. ՀՕ-281-Ն ՀՀ օրենքով՝ 1999թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ներդրված լրիվ վերաքննության ինստիտուտը փոխարինվեց սահմանափակ կամ ոչ լրիվ վերաքննության ինստիտուտով՝ նախատեսելով, որ վերաքննիչ դատարանը գործը քննում է համապատասխան բողոքի առկայության դեպքում եւ սահմանափակված է բողոքում ներկայացված հար-

ցերով: Վերջինիս ներդրումը բխում է ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով սահմանված կառուցակարգային ու գործառնական իրավակարգավորման տրամաբանությունից, պայմանավորված է արդարադատության արդյունավետության բարձրացման, գործի քննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու և այդպիսով՝ նաև գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու անհրաժեշտությամբ:

Սահմանափակ վերաքննության ինստիտուտի հիմնական առանձնահատուկ բաղադրիչն այն է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և, ըստ այդմ, դատական ակտը վերանայվում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Սահմանափակ վերաքննության բաղադրիչներից է նաև վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցներ ընդունելու և հետազոտելու հնարավորության բացակայությունը: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը սահմանում է սահմանափակ վերաքննությանը բնորոշ եւս մեկ առանձնահատկություն: Ըստ այդ դրույթով սահմանված ընդհանուր կանոնի՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը նախատեսում է բացառություններ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված ընդհանուր կանոններից: Մասնավորապես, վերաքննիչ դատարանում նոր ապացույցների ներկայացում թույլատրվում է, եթե դրանք առաջին ատյանի դատարանում չեն ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով: Վերաքննիչ դատարանը կարող է հաստատված համարել նոր փաստը կամ հաստատված չհամարել առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը, եթե վերաքննիչ բողոքում վիճարկվում է այդ փաստը և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Այս բացառությունների տրամաբանությունը վկայում է, որ դրանք երաշխիք են սահմանափակ վերաքննության համակարգում առաջին ատյանի դատարանի թույլ տված հնարավոր դատական սխալի վերացման համար:

Վիճարկվող նորմը դիտարկելով վերաքննության գործող ինստիտուտի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմով սահմանված իրավակարգավորումն իրավաչափ է, երաշխավորում է վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի վերանայումը միայն վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում, բխում է վերաքննության ինստիտուտի՝ որպես բողոքը քննող օղակի, սահմանադրաիրավական բովանդակությունից:

6. Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը դիտարկել նույն օրենսգրքով սահմանված՝ կողմերի դատավարական պարտականությունների, ինչպես նաև վերաքննիչ բողոքի հիմքերի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված՝ «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության համատեքստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորը պարտավոր է, ի թիվս այլնի, հայցադիմումում նշել իր պահանջները, այն հանգամանքները, որոնք վրա հիմնվում են հայցապահանջները, ինչպես նաև հայցապահանջները հաստատող ապացույցները: Օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է հայցադիմումի պատասխանին ներկայացվող պահանջները, այն է՝ հայցադիմումի պատասխանը, ի թիվս այլնի, պետք է պարունակի հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջն ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումը: Ընդ որում, առարկելու դեպքում պատասխանում, մասնավորապես, պետք է անդրադարձ կատարվի հայցի հիմքում ընկած փաստերին, որոնք նա չի ընդունում, այն փաստերին, որոնք ընկած են առարկությունների հիմքում, եւ այն ապացույցներին, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված, ինչպես նաև պետք է անդրադարձ կատարվի այն հարցին, թե արդյոք հայցվորի ներկայացրած փաստերն էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունում մրցակցության սկզբունքին համապատասխան հայցվորն ու պատասխանողը կրում են իրենց վկայակոչած փաստերն ապացուցելու պարտականություն: Մրցակցության սկզբունքի համատեքստում նշված դատավարական նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ կողմերը կրում են **հայցի առարկայի եւ դրա փաստական հիմքերի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու պարտականություն**: Ինչ վերաբերում է հայցի իրավական հիմքին, վիճելի իրավահարաբերության որակմանը եւ դրա նկատմամբ կիրառելի նորմերի ընտրությանը, ապա դատավարության կողմերի համար՝ հայցի իրավական հիմքը մատնանշելու եւ այդ կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու պարտականություն օրենսգրքով սահմանված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս, ի թիվս այլնի, գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել եւ որոնք չեն պարզվել, **որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները եւ այլ իրավական ակտերը**: Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված՝ գործի հանգամանքները, ապացույցները, որոնք վրա հիմնված են դատարանի հետետությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս: Օրենսդիրը դատարանից պահանջում է կայացնել օրինական եւ հիմնավորված վճիռ, իսկ դրա համար դատարանին անհրաժեշտ է ճիշտ ընտրել եւ կիրառել օրենքը՝ անկախ նրանից, թե կողմերն ինչ դիրքորոշում են արտահայտել կիրառելի նորմերի վերաբերյալ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի՝ վիճելի իրավահարաբերության որակման եւ դրա նկատմամբ կիրառելի նորմերի վերաբերյալ դիրքորոշումներով: Հայցվորի դատավարական պարտականությունն է հստակ ներկայացնել իր պահանջները, իր պահանջի հիմքում ընկած փաստերը, այդ փաստերը հիմնավորող ապացույցները, պատասխանողի պարտականությունն է հստակ դիրքորոշում արտահայտել հայցվորի ներկայացրած պահանջներից յուրաքանչյուրի, հայցապահանջի/ների հիմքում ընկած փաստերի վերաբերյալ, այդ փաստերի դեմ առարկելու դեպքում ներկայացնել դրանք հերքող ապացույցներ: Մինչդեռ դատարանի խնդիրն ու գործառույթն է գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ ապացույցման ենթակա փաստերը, կողմերի ներկայացրած ապացույցների հիման վրա հաստատված կամ չհաստատված համա-

րել այս կամ այն փաստը եւ ըստ այդմ որոշել վիճելի իրավահարաբերության բնույթը եւ դրա նկատմամբ կիրառելի իրավանորմը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածով հստակեցված են վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող նորմատիվ պահանջները, որոնք համահունչ են դատավարության կողմի դատավարական իրավունքներին ու պարտականություններին: Իսկ 219-րդ հոդվածը հստակ սահմանում է վերաքննության սահմանները եւ կողմերի համար որոշակի ու կանխատեսելի է դարձնում իրենց իրավունքների իրացման հնարավորությունները:

Բացի դրանից, «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության բովանդակությունը բացահայտող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածը որպես նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում է դիտում դատարանի կողմից այն օրենքը կամ ՀՀ միջազգային պայմանագիրը կամ այլ իրավական ակտ չկիրառելը, որը պետք է կիրառեր, կամ այն օրենքի կամ ՀՀ միջազգային պայմանագրի կամ այլ իրավական ակտի կիրառումը, որը չպետք է կիրառեր, կամ օրենքի կամ ՀՀ միջազգային պայմանագրի կամ այլ իրավական ակտի սխալ մեկնաբանումը:

Օրենսդրական մասն իրավակարգավորման պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմը որեւէ կերպ չի խոչընդոտում դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը՝ գործի նկատմամբ կիրառելի իրավանորմի սխալ ընտրությունը, վերաքննիչ դատարանում օրենքով սահմանված կարգով եւ սահմաններում վիճարկելուն՝ երաշխավորելով անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների իրացումը:

7. Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա այս դրույթի առնչությամբ դիմողի ներկայացրած փաստարկները հանգում են միայն նրան, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, կիրառելով այդ դրույթը, ըստ էության չի մեկնաբանել այն՝ կանխելու համար այդ դրույթի տարակերպ մեկնաբանությունները, ինչպես նաեւ, որ դրա կիրառումը կարող է դատական շրջապատույթի առիթ հանդիսանալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող նորմի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաեւ այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Գլխումում ներկայացված վերոհիշյալ փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրականությունը փորձում է վիճարկել ոչ թե խնդրո առարկա նորմի ենթադրյալ հակասահմանադրականության պատճառով իր սահմանադրական իրավունքների խախտման կոնկրետ փաստով, այլ այդ դրույթով սահմանված իրավակարգավորման աննպատակահարմարության արդյունքում հնարավոր բացասական հետեւանքներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 102-րդ հոդվածի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի 2-րդ մասով գործի վարույթը կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**6 դեկտեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 1004**





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՕԼԻՄՊ» ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
28-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ, փաստաբան Տ. Աբանեսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Օլիմպ» արտադրական կոոպերատիվի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերության վերջին նախադասության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Օլիմպ» արտադրական կոոպերատիվի՝ 26.09.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997թ. ապրիլի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997թ. մայիսի 30-ին:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերությունը սահմանում է. «Չձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, այսինքն՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները, ինչպես նաև կատարվող աշխատանքները եւ մատուցվող ծառայությունները (այսուհետ մինչեւ հոդվածի վերջը՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաներ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողներից գանձվում է՝

տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25 տոկոսի չափով, այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ երեսուրյա ժամկետում: **Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է»:**

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը՝ վեճի առարկա հոդվածի կիրառման առումով, հանգում է նրան, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի՝ 06.10.2008թ. թիվ 1100432 հանձնարարագրի հիման վրա Սպանդարյանի 1 հարկային տեսչության աշխատակիցների կողմից «Օլիմպ» արտադրական կոոպերատիվում կատարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների) գրանցման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով 28.11.2008 թվականին կազմվել է թիվ 1100432 ստուգման ակտը, որով արձանագրվել է ՀՀ կառավարության 31.07.1997թ. թիվ 315 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ եւ 14-րդ կետերի խախտում:

11.08.2010 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Օլիմպ» արտադրական կոոպերատիվի, ի թիվս այլնի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերության ուժով արտադրական կոոպերատիվին առաջադրված տուգանքի գումարի կրկնապատիկը հանդիսացող՝ 17.026.800 ՀՀ դրամ տուգանքի գումարը բռնագանձելու պահանջով:

ՀՀ վարչական դատարանի 11.03.2011թ. թիվ ՎԳ/2907/05/10 վճռով հայցը մասնակիորեն՝ 17.026.700 ՀՀ դրամի մասով բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.06.2011թ. որոշմամբ դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է, եւ ՀՀ վարչական դատարանի 11.03.2011թ. թիվ ՎԳ/2907/05/10 վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 10.08.2011թ. որոշմամբ դիմողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, հղում կատարելով ««Մելտեքս» ՍՊԸ-ն եւ Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 32283/04)» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում արտահայտված համապատասխան իրավական դիրքորոշմանը, ի թիվս այլնի, վերահաստատել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.06.2011թ. որոշման մեջ արտահայտված հետեյալ իրավական դիրքորոշումը. «տվյալ դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը պատասխանողի համար որեւէ անորոշություն չէր կարող առաջացնել, քանի որ թիվ 1100432 ակտը կազմվել է 28.11.2008թ., որից հետո երեսուրյա ժամկետում չվճարելով դրանով առաջադրված տուգանքը՝ «Օլիմպ» արտադրական կոոպերատիվը դիմել է ՀՀ

վարչական դատարան միայն 20.01.2009թ.: Այսինքն՝ պատասխանողը, դիմելով դատարան «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երեսուօրյա ժամկետի լրանալուց հետո, պետք է հստակ ակնկալեր, որ իր հայցի մերժման պարագայում վերջինիս առաջադրված տուգանքը կհամարվի կրկնապատկված: Վերոգրյալից հետեւում է, որ ՀՀ վարչական դատարանը, պատասխանողից բռնագանձելով թիվ 1100432 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված գումարը, ոչ թե խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ պատասխանող կողմի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ միջոցների իրավունքը, այլ գործել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համահունչ»:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է մասնավորապես նրանով, որ վարչական ակտին համաձայն չլինելու դեպքում դրա դեմ վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը սահմանում է երկամսյա ժամկետ՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Մինչդեռ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթը նախատեսում է, որ վարչական ակտով սահմանված տուգանքը ենթակա է վճարման երեսուօրյա ժամկետում, իսկ չվճարելու դեպքում այն կրկնապատկվում է: Արդյունքում, ըստ դիմողի, անձը գրկվում է իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից, քանի որ հնարավոր չէ կանխատեսել դատական քննության արդյունքները հայց հարուցելու պահին, եւ առկա է վտանգ, որ անձը «դատարան դիմելով ոչ թե ձեռնարկում է իրեն պաշտպանելու որեւէ քայլ, այլ ընդհակառակը՝ պարտվելու դեպքում կրում է կրկնակի տուգանքի վճարման պարտականություն»:

Օրենքի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ իր դիրքորոշումը դիմողը դարձյալ հիմնավորում է գործի դատական քննության արդյունքների անկանխատեսելիությամբ եւ պնդում, որ մնան իրավիճակում անձի համար պարզ չէ, թե նա վճարելու է տուգանքի սահմանված գումարը, թե դրա կրկնապատկելը, ինչը, ըստ դիմողի, չի կարող համարվել արդարության բոլոր պահանջների պահպանում:

Բացի վերոնշյալից, դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթը զուրկ է նաեւ իրավական որոշակիությունից, քանի որ պարզ չէ, թե ինչպիսի եղանակով պետք է կրկնապատկվի տուգանքի գումարը, քանի որ գումարի կրկնապատկման առնչությամբ որեւէ առանձին վարչական ակտ չի ընդունվում: Օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության վերաբերյալ իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է նաեւ նրանով, որ վարչական գործի քննության ընթացքում վարչական մարմնի ներկայացուցիչն իր հայցադիմումում եւ դատարանում տված բացատրության մեջ տուգանքի կրկնապատկման իրավական հիմքի առնչությամբ օգտագործել է «օրենքի ուժով» եզրույթը, մինչդեռ, ըստ դիմողի, ՀՀ օրենսդրության մեջ մնան եզրույթ նախատեսված չէ:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը չէ հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Պատասխանողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ տուգանքի վճարումը որեւէ կերպ չի կարող խոչընդոտել կամ սահմանափակել տվյալ կամ որեւէ այլ հարցով սուբյեկտի՝ դատարան դիմելու գործընթացին:

Բացի դրանից, պատասխանողը՝ հղում կատարելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մաս հանդիսացող 1-ին հավելվածին, արձանագրում է, որ դատարանի կողմից դիմողի օգտին վճիռ կայացվելու դեպքում մուծված գումարը վերադարձվում է կամ հաշվանցվում է նրա հարկային այլ պարտավորությունների հաշվին:

5. Քննության առարկա սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարելի է համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական մակարդակով երաշխավորելով տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը /հոդված 8/, միաժամանակ սահմանադրական պահանջ է առաջադրում, որ՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով եւ չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ» /հոդված 45/: Սահմանադրական նման իրավակարգավորումը երաշխիք է հանրային եւ մասնավոր շահերի ներդաշնակման, համապետական խնդիրների լուծման անհրաժեշտ նախադրյալների ստեղծման համար:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածն այն կարելի է օրենսդրական երաշխիքներից մեկն է, որը կոչված է ապահովելու սահմանադրական նշված հավասարակշռությունն իրավունքի ու պարտականության միջեւ, բացառելու ակնհայտ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը, արդյունավետ ու իրավաչափ պայքար մղելու սովորային տնտեսության դեմ: Այդ մասին է վկայում նաեւ հիշյալ հոդվածի այն իրավադրույթը, համաձայն որի՝ «Սույն հոդվածով նախատեսված տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումները կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանում, որի համար սահմանված կարգով հարկ վճարողի կողմից ներկայացված են հաշվապահական հաշվետվություններ /հայտարարագրեր/ կամ իրացման շրջանառությունից /համախառն եկամտից/ բխող հարկային պարտավորություններն արտացոլող՝ հարկային օրենսդրությամբ եւ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերը»: Միանշանակ է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով տուգանք նախատեսվում է բացառապես ակնհայտ իրավախախտման համար, երբ ոչ միայն ձեռնարկատիրական գործունեության առարկաները չեն գրանցվել, այլև դրա հետ կապված գործարքների հետքերն առկա չեն հաշվապահական ու հաշվետվական որեւէ փաստաթղթում: Նման իրավակարգավորումը վերաբերում է ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների կայացման համար առավել վտանգավոր նշանակություն ունեցող իրավախախտմանը: Վեճի առարկա հոդվածի դրույթներն առաջին հերթին ունեն կանխարգելիչ բնույթ եւ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի համար միանգամայն կանխատեսելի են դարձնում ապօրինի գործունեության հետեւանքները: Իսկ տուգանքի սահմանված չափը՝ իրավախախտման բնույթից ու վտանգավորության աստիճանից ելնելով, հաշվի առնելով նաեւ սովորայնության դեմ առավել արդյունավետ պայքարի հրատապությունը, կարող էր ավելի մեծ լինել: Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում նման տուգանքի չափը ճանաչվել է անհամաչափ ու Սահմանադրությանը հակասող այն դեպքում, երբ դրա մեծությունը սահմանվել է ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների ամբողջ արժեքի ու նույն մեծության տուգանքի գումարային չափով:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ քննության առարկա հոդվածով նախատեսված իրավակարգավորումը Հայաստանի Հանրապետությունում գործում է 1998 թվականից, հոդվածի իրավադրույթների հետագա փոփոխությունները իրավակարգավորման բնույթի ու բովանդակության էական վերանայումներ չեն նա-

խատեսել: Քննության առարկա հիմնախնդրի շրջանակներում, թերեւս, կարելի է առանձնացնել 2001թ. դեկտեմբերի 14-ի ՀՕ-289 օրենքով կատարված փոփոխությունը, որով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում «տասնօրյա» բառը փոխարինվեց «երեսօրյա» բառով՝ առավել նպաստավոր դարձնելով ձեռնարկատիրոջ համար իր պարտականությունների կատարումը:

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր դիմումում հիմնական շեշտադրումը կատարում է հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտերի կատարման կասեցման խնդրի վրա, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում օրենքի 28-րդ հոդվածի վիճարկվող դրույթը դիտարկել օրենքի նույն հոդվածի մյուս դրույթների համատեքստում՝ հաշվի առնելով հարկային իրավահարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները:

Հարկային իրավահարաբերությունների հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ դիտարկվող իրավահարաբերությունները գտնվում են հանրային շահերի տիրույթում այնքանով, որքանով որ հարկերը, առանձին բացառություններով, ընդգրկված են պետական բյուջեի եկամուտների մասում եւ ուղղված են պետության գործառույթների բնականոն իրականացմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը հանդիսանում է օրենսդրական երաշխիք ապօրինի ձեռնարկատիրական գործունեության կանխման, հարկային արդյունավետ վարչարարության իրականացման, ինչպես նաեւ տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների բարեխիղճ կատարման ապահովելու համար: Ընդ որում, հարկային պարտավորությունները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածին համապատասխան, ներառում են ինչպես հարկերի, այնպես ցլ հարկային օրենսդրությունը եւ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված **տույժերի եւ տուգանքների գումարների վճարումը:**

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի վիճարկվող դրույթն իր հերթին ստեղծում է իրավական երաշխիք այդ հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը ողջամիտ ժամկետում ապահովելու համար:

Այդ, ինչպես նաեւ հարկային իրավահարաբերությունները հանրային շահերով պայմանավորված լինելու հանգամանքն են պատճառը, որ վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման դեպքում օրենսդիրը հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտերի կատարման կասեցումը թողել է **վարչական մարմնի հայեցողությանը** («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)՝ հիմք ընդունելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը: Այս տրամաբանությունն է դրված նաեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի իրավակարգավորման հիմքում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե օրենսդիրը վարչական ակտերի կատարումը կասեցնելու ինչպիսի ինստիտուտ է նախատեսել՝ պարտադիր, թե հայեցողական կասեցման ինստիտուտ, ոչ օրենքի վիճարկվող դրույթը, ոչ էլ օրենքի ողջ 28-րդ հոդվածը չեն խոչընդոտում եւ չեն կարող խոչընդոտել անձին վարչական ակտի իրավաչափության վիճարկման կապակցությամբ դիմել դատական պաշտպանության, եւ որեւէ անմիջական առնչություն չունեն դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքների հետ, քանի որ վեր-

ջիններս վերաբերում են դատավարական գործընթացներին, այլ ոչ թե անձին տուգանելու գործընթացին, իսկ օրենքի 28-րդ հոդվածը, ընդհակառակը, ամբողջությամբ վերաբերում է արարքը որպես հարկային իրավախախտում որակելուն եւ դրա հետեւանքով տուգանք սահմանելուն: Օրենքի վիճարկվող դրույթի եւ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքների միջեւ պատճառահետեւանքային կապի բացակայության մասին է վկայում նաեւ այն, որ դիմողը փաստացիորեն իրացրել է իր դատական պաշտպանության իրավունքը: Ի դեպ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալներով վերջին երկու տարում գրանցվել է 2 հազարից ավելի նման իրավախախտում, որից մոտ երկու տոկոսի դեպքում խախտումն արձանագրող ստուգման ակտերը վարչական կամ դատական կարգով բողոքարկվել են, իսկ դրանց արդյունքում՝ անվավեր է ճանաչվել բողոքարկված ստուգման ակտերի ավելի քան 51 տոկոսը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ գործող իրավակարգավորման պայմաններում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման կարեւոր երաշխիքներ են սահմանված «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95, 96 եւ 97-րդ հոդվածներով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով: Վերջիններս վերաբերում են վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետեւանքով անձանց պատճառված վնասի հատուցմանը: Այսինքն՝ բոլոր դեպքերում պետությունը երաշխավորում է անօրինական վարչական ակտի հետեւանքներով անձին պատճառված բացասական հետեւանքների ամբողջական վերացման հնարավորությունը: Նույնը վերաբերում է նաեւ վարչական ակտի՝ դատական կարգով բողոքարկման ոլորտին՝ հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մաս հանդիսացող 1-ին հավելվածը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մաս հանդիսացող 1-ին հավելվածով սահմանված կարգի 2.1. կետի երկրորդ պարբերությունը սահմանում է «գերավճար» հասկացության հետեւյալ սահմանումը. «գերավճար՝ սահմանված կարգով հաշվարկվող որեւէ հարկային պարտավորության գումարից ավելի վճարված գումար, կամ պարտավորության բացակայության պայմաններում (ներառյալ՝ օրենքով չնախատեսված դեպքերում)՝ տվյալ հարկատեսակի համապատասխան գանձապետական հաշվին հարկ վճարողի կամ հարկ վճարողի անումից այլ անձի կողմից փաստացի փոխանցված (վճարված) գումար, կամ դատարանի վճռով (կամ վճռի կատարման արդյունքում) հարկ վճարողին վերադարձման ենթակա գումար, կամ հարկատեսակի պարտավորությանը գերազանցող գումարով այլ հարկատեսակից տվյալ հարկատեսակին հարկային մարմնի կողմից հաշվանցված գումար»:

Հաշվի առնելով վերոգրյալը եւ հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տուգանք նշանակելու մասին վարչական ակտը դատական կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում, գանձված տուգանքի գումարը, որպես գերավճար, ենթակա է վերադարձման հարկ վճարողին:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաեւ դիմողի դիրքորոշումը՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետ, քանի որ, նախ՝ օրենքը հստակ սահմանել է տուգանքի գումարը երեսնօրյա ժամկետում չմոծելու դեպքում նշված գումարի կրկնապատկման կարգը, երկրորդ՝ նշված կարգը սահմանված է օրենքով, որպես համապատասխան վիճակը վրա հասնելու դեպքում ինքնաբերաբար, իրավունքի ուժով գործող կանոն եւ դրա համար լրացուցիչ չի պահանջվում համապատասխան վարչական ակտի ընդունում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54, 78, 82, 84 եւ 85-րդ հոդվածները վերաբերում են համապատասխանաբար՝ վարչական ակտերի տեսակներին՝ գրավոր, բանավոր, այլ ձեւի, վարչական ակտը հարկադրաբար ի կատար ածելու համար հարկադրանքի միջոցներին՝ փոխարինող գործողություն, տուգանք, անմիջական հարկադրանք, հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին գրավոր նախագուշակ-նելուն՝ նշելով տուգանքի որոշակի չափը եւ հարկադրանքի միջոցները՝ միայն այդ միջոցների կիրառման մասին նախագուշակամբ սահմանված ժամկետում պարտավոր անձի կողմից համապատասխան պարտականությունը չկատարվելու դեպքում նշանակելուն: Այսինքն՝ պարտավոր անձի կողմից համապատասխան պարտականությունը չկատարվելու դեպքում հարկադրանքի միջոցներ նշանակելու համար օրենսդիրը սահմանել է դատավարական նորմեր՝ նախատեսելով որոշակի ընթացակարգ:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով իշխանության ճյուղերի համակարգում օրենսդիր իշխանության տեղը եւ դերը, նրա իրավասու-թյունները, գտնում է, որ օրենսդիրն ազատ է վարչական իրավահարաբերությունների շրջանակներում սահմանելու պարտավոր անձի կողմից համապատասխան պարտականությունը չկատարվելու դեպքում հարկադրանքի միջոցներ նշանակելու վերաբեր-յալ ցանկացած իրավակարգավորում՝ կա՛մ նախատեսելով հարկադրանքի միջոցներ նշանակելու հատուկ ընթացակարգ, կա՛մ **անմիջականորեն** սահմանելով համապատասխան հարկադրանքի միջոցը՝ նախատեսելով այդպիսի միջոցի կիրառման դեպքը: Վերջին դեպքում հարկադրանքի միջոցը կիրառվում է օրենքի ուժով՝ առանց դրա հա-մար որոշում կայացնելու հատուկ ընթացակարգերի:

Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իրավախախտի նկատմամբ տուգանքի նշանակումը եւ նշանակված տուգանքը սահմանված ժամկե-տում չվճարելու դեպքում համապատասխան տուգանքի նշանակումը գտնվում են փոխ-կապակցվածության մեջ, արձանագրելով, որ՝ **ա/ օրենսդրությամբ տվյալ դեպքի համար նախատեսված է դատական պաշտպանության իրավունք**, բ/ օրենսդրությամբ նախատեսված է տուգանք նշանակելու վերաբերյալ վարչական ակտի իրավաչափու-թյունը վիճարկելիս եւ տվյալ անձի համար ցանկալի արդյունքի հասնելիս (երբ վարչա-կան ակտը ճանաչվում է ոչ իրավաչափ) տվյալ անձի՝ տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու համար նախատեսված **կրկնապատկված տուգանքը վճարելու պարտականությունից ազատվելու իրավական հնարավորությունը**, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթով **անմիջականորեն** տուգանքի չափ սահմանելը՝ առանց հատուկ ընթացակարգ նախատեսելու, չի խոչընդոտում ան-ձի դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքների իրակա-նացմանը:

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել վարչական մարմինների հնարավոր կամայականությունների տե-սանկյունից՝ հիմք ընդունելով վարչական ակտի օրինականության իրավաբանորեն հերքելիության կանխավարկածը, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ ան-հիմն կերպով պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը: Այս կապակցությամբ, հիմք ընդունելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է հա-մարում անդրադառնալ վարչական ակտերի **դատական կարգով** բողոքարկման դեպ-քում հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտի

կատարումը կասեցնելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման դեպքում օրենսդիրը հստակորեն հայեցողություն է վերապահում վարչական բողոքը քննող վարչական մարմնին՝ վարչական մարմնի գործողությունը կասեցնելու հարցում, ապա վարչական ակտերի դատական բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը կարող է ապահովվել հայցի ապահովման միջոցի ինստիտուտի կիրառմամբ:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Հայցի ապահովումը» վերտառությամբ 14-րդ գլխի՝ «Հայցի ապահովման հիմքերը եւ կարգը» վերտառությամբ 88-րդ հոդվածի համաձայն՝ ~արչական դատարանում գործերի քննության ընթացքում հայցի ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով եւ կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցի ապահովումը» վերտառությամբ 14-րդ գլխի՝ «Հայցի ապահովման հիմքերը» վերտառությամբ 97-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ ժատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նույն գլխի՝ «Հայցի ապահովման միջոցները» վերտառությամբ 98-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետա, է, ի թիվս հայցի ապահովման այլ միջոցների, նախատեսված ց պատասխանողին որոշակի գործողություններ կատարա, tv արգելելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, **իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝** նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ կիրառելի են („mutatis mutandis“) վարչական դատավարության նկատմամբ եւ չեն հակասում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին եւ վարչական դատավարության էությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ եւ 88-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա իրավիճակում բողոքարկվող վարչական ակտի կատարումը հնարավոր է կասեցնել mutatis mutandis սկզբունքով հայցի ապահովման միջոցները կիրառելով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **իրավակիրառական պրակտիկան պետք է զարգանա այս ուղղությամբ**, եւ հայցի ապահովման միջոցների կիրառման իրավակարգավորման շրջանակներում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է կասեցնել վիճարկվող վարչական ակտի կատարումը:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով բողոքարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում անձի խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված վերոհիշյալ համապատասխան օրենսդրական երաշխիքների առկայությունը, ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով բողոքարկման դեպքում վարչա-



կան ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը՝ գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ եւ համապատասխան երաշխիքների միջոցով ապահովում է հավասարակշռություն հարկային պարտավորության բարեխիղճ կատարումն ապահովելու նպատակի եւ անձի իրավական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման միջեւ:

Սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածն էական փոփոխություն է կրել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011թ. դեկտեմբերի 6-ին ընդունված նոր օրենքով, որի հավելված 4-ում նախատեսվում է նաեւ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման եւ գրանցման /հաշվառման/ նոր կարգ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերության վերջին նախադասությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**20 դեկտեմբերի 2011 թվականի  
ՍԳՈ- 1007**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓԱՏՄԱՅԻՒՆ ԳՆԱԿԵՐԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ	3
ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2011թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	53
ՔԱՂԱՔԱՅԻ ՈՒՔԵՐՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 20-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	53
ՔԱՂԱՔԱՅԻ ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 427-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ, 429-ՐԴ ԵՎ 430-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	62
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	68
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	80
ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՇԱՎԱՐՇ, ՌԱՅԱ ՄԿՐՏՉՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎՐԱՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 141-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	87
«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 68-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	95
ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՍԱՄԱՐՅԱՆԻ ԵՎ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.3-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 426.4-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, «ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 69-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 12-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	102
ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ՕՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 302-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	118
ՔԱՂԱՔԱՅԻ ՊԵՐԸ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 13.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	125
«ԲՋՆԻ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 92-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	135

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱԶՈՒՆՅԱԿ ԵՎ ԳԱՎՈՐԱՇՆՆԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	140
ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՊՈՒՅՑ ԳԱՆՍՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 19-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	146
ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 207-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	152
«ՇՈՐՔԵԾ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՇԱՀՆՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 57-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ (ՄԻՆՉԵՎ 09.01.2009Թ. ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	161
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1003-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ (2007թ. ԱՊՐԻԼԻ 9-Ի ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	168
ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԳԻԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1230-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	176
«ԱԿՔԱ-ԿՐԵՂԻՏ-ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ», «ԱՐՅԱԽԲԱՆԿ», «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՎ «ՎՏՔ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	181
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԻՆՅԱՆԻ, ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ, ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԵՎ ԱԳՆԵՍԱ ԲԱԳՎԱՍՏԱՆՆԵՐԻ, ՍՎԵՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈՒՅԱՆԻ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՈՒ «ՄԵՆՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.33-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 204.38-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	191
ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ԲԱԶՄԱԲԱԿԱՐԱՆ ՇՆՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 13-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՎ 11-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	209
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆԵ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 114-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	217
ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ԽԱՌԱՅՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 14-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	228
ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՀՈԳՎԱԾԻՆ, 27-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ, 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻՆ ԵՎ 43-ՐԴ ՀՈԳՎԱԾԻՆ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	234

<p>ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՆՐԻԿ ՊՈԳՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»          ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 82-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Թ» ԿԵՏԻ՝          ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ          ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ          ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....</p>	260
<p>ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝          «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 78-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ          ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ          ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ          ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	266
<p>«ԵՐԵՎԱՆՇԻՆ» ԲԲԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ          ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 208-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ          ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 873-ՐԴ          ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ          ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	273
<p>«ՕԼԻՄՊ» ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ»          ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 28-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ          ՎԵՐԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ          ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ          ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	281